



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ատեղծագործական համայնքերը
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևացափով կամ կրիչով


ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material









ԳԱՐՍ

ՄՈՆԹԵ-ՔՐԻՍԹՈՅՑ

ՍԱԱԾ
ՅՈՒՆԻԿ. ՀՈՅՅՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Թ. ԱԽԵՐԱԿԱՆԻ ՀԱՅ

ԿՈՄՄ

ՄՈՒԹԵ · ՔՐԻՍԹՈՅ

ՅԱՆԵՑՄԱՆԴՐ ՏԻՄԱՅԵ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ՅԻԳՐԱՆ ՅԱՐԱԿՈՒԻՆ ԸՆՅԵԱՆ

Մանի ըորրորդ



ԶԱՐԱԲԵՐԵ

ՅՊԵԴՐԱԽՈՒԻՆ ՑԵՑԵԵՆ

1867

55899 մ.



ԿՈՄՍ

ՄՕՆԹԵ-ՔՐԻՍԹՈՅ

ՄԱՍՆ ԶՈՐՌՈՐԴ

ԳԼՈՒԽ ԱՓառակ

ՀԵԹԱԴԻՌԸ

ՊԱՐՈՆ և տիկին Վիլֆօր՝ Նուարթիէի սե-
նեկէն գուրս ելած ժամանակ իմա-
ցան որ Մօնթէ-Քրիսթոյ կոմսը իրենց
այցելութեան դալով սրահը հրաւիրուեր էր,
ուր իրենց կ'ըսպասէր . տիկին Վիլֆօրի սիրաը
խիստ յուզեալ ըլլալուն՝ իսկոյն սրահը մտնել չուզեց , այլ
պառկելու խուցը մտաւ , ինչ ատեն թագաւորի գործակալը
վստահութեամբ ուղղակի դէպ 'ի սրահը յառաջացաւ :

Բայց Պ. Վիլֆօր որչափ և կարող ըլլար իւր սրահին յուզ
մունքը զսպելու և դիմաց այլայլութիւնը ծածկելու , սակայն
և այնպէս չէր կրցեր իւր Ճակտին վրայէն բոլորովին ցրուել
ախրութեան և մատախորհութեան այն ամպը , որ կօմսին աչ-
քէն չէր փախած :

— Ի՞նչ ունիք , Պ. Վիլֆօր , ըստ Մօնթէ-Քրիսթօ՝ ա-
ռաջին ողջոյններէն ետե . արդեօք ծանր ամբաստանութիւն
մը հաստատած ժամանակնիդ եկայ — :

Վիլքօր ժպտելու ջանաց :

— Աչ, պարոն կոմս, ըստ, միայն ես զոհ եղած եմ. քանզի ես դատս կորսնցուցի, և բաղդը, յամառութիւնը և յիմարութիւնը դատավճիռը կնքեցին:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, հարցուց Մօնթէ-Քրիսթօ կատարեալ կեղծ ցաւակցութեամբ մը, արդեօք իրօք մեծ գյրաղդութիւն մը պատաշեցաւ ձեզ :

— Ա՛չ, պարոն կոմս, ըստ Վիլքօր դառնութեամբ լիսրտի հանդարտութեամբ մը, խօսքը անգամ ընելը չարժեք, դընթէ ոչինչ բան մ'է, ստակի պարզ կորուստ մը :

— Իրօք, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ, ստակի կորուստը բան մը ըսել չէ ձեր հարստութիւնը և ձեր իմաստասիրական հանձարը ունեցողի մը :

— Զիս անհանդիստ ընողը ստակի կորուստը չէ, թէև վերջապէս ինը հարիւր հազար ֆրանքի կորուստը կրնայ վեշտ մը կամ դոնէ դայրոյթ մը պատճառել: Ա.Յ. սիրտս նիղացընտղը բաղդին, գիպուածին, ճակատագրին տնօրէնութիւնն է. չեմ զիտեր թէ ինչ անուն տամ այն զօրութեան, որ զիս կը հարուածէ, հարստութեան յոյսերս կը ջնջէ և զուցէ աղջկանս ապագան կը կործանէ՝ 'ի մանկութիւն վերադառն ծերի մը մասային հաճոյքավը :

— Ե՛չ, պարոն, ինչ կ'ըսէք, ինը հարիւր հազար ֆրանքի կորուստը ստուգիւ կը իրնայ վեշտ մը պատճառել իմաստասիրի մը անգամ: Եւ ովկէ այդ հարուածը ձեզ տուողը :

— Հայրս, որուն վրայ աշդէն խօսեցայ ձեզ :

— Սաոյդ կ'ըսէք, ո! ։ Նուարթիէն: բայց կարծեմ բակը թէ կատարեալ կաթուածահար է, և թէ իւր տմնն կարողութիւնները կորուստ է:

— Իւր Փիլիքական կարողութիւնները, միայն, վասն զի չկընար շարժիլ և ոչ խօսիլ: բայց ասոնց հակառակ՝ ինչոյէս որ կը անսնէք՝ կը խորհի, կ'ուզէ և կը զործէ: Հաղիւ հինդ վայրիեան կայ որ անոր քովէն բաժնուեցայ, և այս միջոցիս

զբաղած է երկու նօտարներու իւր կտակը դրել տալու :
— Ուրեմն խօսեցաւ :
— Խօսելէն աւելի աղեկ դործ տեսաւ . իւր միտքը հաս-
կըցուց :
— Ի՞նչ կերպով :
— Նայուածքով . իւր աչքը կենդանի մնացած են , և ինչ
պէս որ կը տեսնեք՝ մահ կը պատճառեն :
— Սիրելիս , ըսաւ տիկին Ակլոֆօր ներս մտնելով , կա-
ցութեանդ վրայ գուցե չափաղանցօրէն կը խօսիս :
— Տիկին . . . — , ըսաւ կոմսը խոնարհութիւն մը ընելով :
Տիկին Ակլոֆօր իւր ամենէն շնորհալի ժպիտով բարե-
ւեց զան :
— Ի՞նչ կը լսեմ Պ . Ակլոֆօրէն , հարցուց Մոնթէ-Քրիս-
թո , և ի՞նչ անիմանալի դիպուած մ'է այս . . . :
— Երօք անիմանալի է , կրկնեց թագաւորի դործակալը
ուսերը բարձրացընելով , ծերի մտային հաճոյք մը :
— Եւ անոր այս որոշման դէմ գնելու միջոց մը չկա՞յ :
— Այս , ըսաւ տիկին Ակլոֆօր , և իմ ամուսինէս կախեալ
է այն կտակին՝ փոխանակ 'ի վես Վալանթինի ըլլալու՝
'ի շնորհս անոր ըլլալը — :
Կոմսը տեսնելով որ երկու ամուսինները այլաբանօրէն խօ-
սելու կ'ըսկսէին , զուարթերես կերպարանք մը ցուցուց , և
խորին ուշադրութեամբ ու խիստ յայտնի հաճութեամբ ե-
տուառը կը դիտէր , որ թռչնոց ընպարանին մէջ թանաք կը
լցցնէր :
— Սիրելիս , ըսաւ Ակլոֆօր իւր կնոջը պատասխանելով ,
դիտես որ տանս մէջ իշխանութիւն բանեցընելը չեմ ախոր-
ւեր , և երբէք կարծած չեմ թէ տիեզերաց բաղդը դլսիս
մէկ նշանէն կախեալ է : Այսու ամենայնիւ պէտք է որ իմ
որոշումներս ընտանեացս մէջ յարգուին , և ծերի մը յիմա-
րութիւնը ու մանկան մը մտային հաճոյքը երկար տարիներէ
'ի վեր իմ որոշած խորհուրդս չխափանեն :

Ակուհի ա՛ երի-

նէն իմ բարեկամն էր, զիտես, խիստ պատշաճ էր որ իւր որդւոյն հետ խնամութիւն մը ընէի:

— Կը կարծես որ Ալալանթին ալ անոր հետ համամիտ ըլլայ, ըստ տիկին Ալիլքֆօր . . . Բայց իրօք ան ալ այս ամուսնութեան միշտ դէմ դրաւ, և պիտի չզարմանայի եթէ ամեն տեսածնիս և լսածնիս իրենց մէջ գաշնակեալ խորհրդոյ մը գործադրութիւնն ըլլար:

— Տիկին, ըստ Ալիլքֆօր, հաւատա ինձ, ինը հարիւր հաղար Փրանքի հարստութենէ մը այսպէս դիւրութեամբ չհրաժարիր մարդ:

— Տարի մը կայ որ Ալալանթին աշխարհէս հրաժարիլ և վանք մը մտնել կ'ուղէր:

— Հոգ չէ, կրկնեց Ալիլքֆօր, ես քեզի կ'ըսեմ թէ այս ամուսնութիւնը պէտք է որ կատարուի, տիկին:

— Հօրդ կամացը հակառակ, ըստ տիկին Ալիլքֆօր ուրիշ պատճառ մը մէջ բերելով, ծանր խնդիր մ'է այդ — :

Մօնթէ-Քրիսթօ անոնց մտիկ չընել կը ձեւացընէր, սակայն անոնց խոռքերէն բառ մը անդամ չկորանցուց:

— Տիկին, կրկնեց Ալիլքֆօր, կրնամ ըսել թէ հայրս միշտ յարդեցի, վասն զի սրտիս մէջ որդւոյ մը բնական զգացման հետ իւր բարոյական մեծութիւնն ալ միացած էր. վասն զի վերջապէս հայր մը երկու պատճառաց համար նուիրական է, առաջին՝ իրը մեր ծնողը, երկրորդ՝ իրը մեր տէրը. բայց այսօր կ'ըստիպուիմ չյարդել ծերին այն խելքը, որ հօր մը դէմ ունեցած ատելութեան համար որդւոյն խեթիւ աչօք նայի. Ստուդիւ ծաղքելի պիտի ըլլամ եթէ անոր մարային հաճոյիցը համակերպիմ. Պ. Կուարթիէի համար միշտ իմ յարդանքս պիտի պահեմ, և ինձ սահմանած դրահական պատիմը առանց արանջելու պիտի կրեմ. բայց իմ կամացս մէջ անփոփոխ պիտի պեսնէ: Հետեւաբար աղջիկս սեպուհ Ֆրանզ տ'է բինէին հետ պիտի ամուսնացընեմ, վասն զի այս ամուսնու.

թիւնը իմ կարծեօքս բարի և պատուաւոր է, և հուսկ յետոյ կ'ուղեմ աղջիկս ուղած անձիս հետ ամուսնացընել:

— Ի՞նչ կ'ըսէք, ըսաւ կոմսը, որմէ թաղաւորի զործակալը յաճախակի նայուածքովս իւր ըսածին հաստատութիւնը կը խնդրէր, օրիորդ Աւալանթին սեպուհ Ֆրանզ տ' Երինէին հետ ամուսնանալուն համար զան ժառանդութենէ պիտի զրկէ կ'ըսէք:

— Ե՛չ, այս՝ պարօն, այս է պատճառը, ըսաւ Ա.իլլֆօր ուսերը բարձրացընելով:

— Գոնէ երեցած պատճառը այս է, յաւելցուց տիկին Ա.իլլֆօր:

— Բո՛ւն պատճառը այս է, տիկին, հաւատա ինձ, ես հայրս կը Ճանչնամ:

— Եւ ի՞նչպէս կը հասկընաս այդպէս ըլլալը, պատասխանեց տիկինը. կը հարցընեմ, ի՞նչ բանի մէջ Պ. տ' Երինէն ուրիշէ մը աւելի տհաճելի պիտի ըլլայ Պ. Նուարթիէին:

— Երօք, ըսաւ կոմսը, ես Պ. Ֆրանզ տ' Երինէն կը Ճանչնամ. Քէսնէլ զօրապետին որդին չէ, որ Շարլ Ֆ թաղաւորէն սեպուհ տ' Երինէ կոչուեցաւ:

— Ճիշդ ան է, կը կնեց Ա.իլլֆօր:

— Բայց կարծեմ՝ աղնիւ երիտասարդ մ'է ան:

— Գուցէ անոր աղնուաւթիւնն է պատճառը, հաւատի եմ, ըսաւ տիկին Ա.իլլֆօր, ծերերը իրենց սիրոյն մէջ բըռնաւոր են. Պ. Նուարթիէ չուզեր որ իւր աղջիկ թոռը ամուսնանայ:

— Բայց, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, արդեօք այդ ատելութիւնը պատճառ մը ունի:

— Ե՛չ, ո՞վ կրնայ դիտնալ:

— Քաղաքական հակակրութիւն մը կայ արդեօք:

— Երօք, հայրս և Պ. տ' Երինէին հայրը աղմկալի ժամանակներ անցուցին, որոց վերջին օրերը միայն տեսայ ես, ըսաւ Ա.իլլֆօր:

— Զեր հայրը Պոնաբարդական չէր, հարցուց Մօնթէ-Քրիսթօ: Կարծեմ թէ ասոր նման բան մը ըսկք:

— Հայրս ամեն բանէ առաջ Ժազոպէն էր, պարզն, ըստ Ակլըֆօր՝ իւր սրտի յուղմանքէն խոչեմութեան սահմանէն դռւրս ելնելով, և Ֆերակուաի անդամի այն զգեստը, որ Կարոլին անոր ուսոյցը վրայ ձգեր էր, առանց հին մարդը փօխելու զան ծպտելէն ուրիշ բանի չէր ծառայեր: Երբ հայրս կը դաւակցէր, կայսեր համար չէր, այլ Պուրպոններուն դէմ. վասն զի հայրս այն կէտին մէջ սոսկալի էր որ մտացածին անիրական բաներու դէմ չէր կռուեր, այլ կարելի, և այն կարելի բաներուն յաջողութեանը լա Մօնթանեի սոսկալի վարդապետութիւնը կը յարեր, որ կը սորվեցընէր որ և է արդելքի մը առջեն ընկրկիլ:

— Կը տեսնէք, ըստ Մօնթէ-Քրիսթօ, Պ. Կուարթիէ և Պ. տ'Էրինէ քաղաքականութեան դաշտին մէջ իրարու հանգիստի պիտի ըլլան: Տ' Էրինէ զօրապետը թէև Կարոլինի ժամանակ պաշտօն կը վարեր, բայց իւր սրտին խորը թադառորական կողմանակցութեան զգացումներ պահած չէր արդեօք, և այն նոյն անձը չէ որ իրիկուն մը նաբոլէնեան ժողովարանէ մը դուրս ելած ժամանակը սպաննուեցաւ, ուր հրաւիրեր էին զինքը եղբայր մը դանելու յուսով — :

Վիլըֆօր զրեթէ սաբսափով մը կոմսին կը նայէր:

— Երդեօք կը սխալի՞մ, ըստ Մօնթէ-Քրիսթօ:

— Ըս, պարզն, ըստ տիկին Ակլըֆօր, ընդ հակառակն ըսածնիդ շատ սապյդ է. Ճիշդ սյդ պատճառաւ է որ հին ատելութիւնները մոսցուելու համար Պ. Վիլըֆօր ուզեց սիրով միացընել երկու զաւակները, ոբանց հայրերը զիբար ատած էին:

— Վսիմ դաղափար մ'է այդ, ըստ Մօնթէ-Քրիսթօ ընկերսիրութեան այնդիսի դաղափար մը, որուն վրայ ամեն մարդ դովութեամբ պիտի խօսի. իբօք բաղձալի է որ օրիորդ Կուարթիէ տը Վիլըֆօրը տիկին Ֆրանզ տ'Էրինէ կոչուի — :

Ավելի Փօր սարսոաց և Մօնթէ-Քրիսթոյի երեսը կը նայէր ,
որպէս զի այս խօսքերը ի՞նչ դիտաւորութեամբ ըսելը անոր
սրտին մէջ կարգայ :

Բայց կոմին շրմանց վրայ տպաւորեալ շնորհալի ժղիուը
անփոփոխ մնաց , և այս անդամ իսկ թաղաւորի դործակալը
իւր խորազնին նայուածքովը չերցեր էր անոր սրտին մէջ թա-
փանցել :

— Թէե մեծ դժբաղդութիւն մ'է Վալանթինի համար ,
կրկնեց Ավելի Փօր , որ իւր հաւին հարստութիւնները կորսն-
ցընէ , սակայն չեմ կարծեր որ Պ . ա'կրինէն դրամային այս
կորստեան համար ամուսնութիւնը մերժէ . պիտի աեսնէ որ
ես զուցէ այս զումարէն ալ աւելի կ'արծեմ , վասն զի աղ-
ջիկս խօսքիս վրայ կենալու բաղձանացս կը զոհեմ . բայց յայս-
մանէ՝ հաշիւ պիտի ընէ որ Վալանթին մօրը կողմանէ հա-
րուստէ , քանզի Պ . և տիկին Աէն-Մէրան իւր մօրը ծնողքը
դինքը խանդաղատանօք կը սիրեն և իրենց հարստութիւնը ա-
նոր պիտի թողուն :

— Եւ անոնք իսկ արժանի են սիրուելու և Վալանթինի
Պ . նուարթիէին ըրած կերպով խնամուելու , բսաւ տիկին
Ավելի Փօր . ամենէն ուշ ամիսէ մը Քարիզ պիտի դան , և Վա-
լանթին իւր հաւէն այսպիսի նախատինք մը ընդունելէն ետեւ
պիտի մերժէ Պ . Նուարթիէի քովը զողցես թաղուելու , ինչ-
պէս որ մինչև հիմա ըրաւ — :

Ասաւը այն վերաւորեալ ինքնասիրութեան և հարուածեալ
շահասիրութեան անփարան ձայնը հաճութեամբ մափկ կ'ընէր :

— Բայց ինձ այնպէս կ'երեի , բսաւ Մօնթէ-Քրիսթո վայր-
կեան մը լուսիթենէ ետեւ , և կանխաւ ներումն կը խնդրեմ
ըսածիս , ինձ այնպէս կ'երեի որ եթէ Պ . Նուարթիէ օրի-
որդ Ավելի Փօրը ժառանդութենէ կը զրկէ այնպիսի երիտա-
սարդի մը հետ ամուսնանալ ուզելովը յահցաւոր դանուե-
լուն համար , որուն հայրը ինքը ասած է , սիրելի փոքրիկ
կառարին յանցանքը ի՞նչ է :

— Այնպէս չէ, պարոն, ըստ տիկին Ա. իլլֆօր աննկարադրելի ձայնիւ մը, անիրաւութիւն մը չէ այս, և զգուելի անիրաւութիւն։ Փոքրիկ էտուարը Վալանթինի պէս Պ. Նուարթիէի թռուն է։ սակայն եթէ Վալանթին Պ. Փրանզին հետ շամսւմնանար, Պ. Նուարթիէ իւր բոլոր հարստութիւնը անոր պիտի թողուր. միթէ էտուար ալ ընտանիքին անունը չը կրեր, և ենթադրելով իսկ որ Վալանթին իրօք իւր հաւին ժառանդութենէն պիտի զրկուի, միթէ իրաւունք է որ էտուարէն երեք անգամ աւելի հարուստ ըլլայ —։

Կոմսը սոյն գրգիռը տալէն ետեւ մտիկ ըրաւ և ուրիշ խօսք չըսաւ։

— Կ'աղաջեմ, պարոն կոմս, ըստ Ա. իլլֆօր, դադրեցըննենք ընտանեկան գժրաղղութեանց այս խօսքերը։ Այո՛, ըստոյդ է որ իմ հարստութիւնս պիտի ստուարացընէ աղքատաց եկամուտը, որոնք այսօր Ճշմարիտ հարուստներն են. այո՛, հայրս օրինաւոր յոյսէ մը պիտի զրկէ զիս, և այն՝ առանց իրաւունքի. բայց ես ալ իբր խելացի մարդ մը, իբր զզացումի տէր մարդ մը զործս պիտի աեսնեմ։ Պ. ա'էրինէն, որուն այն դումարին եկամուտը խստացած էի, պիտի ընդունի զայն՝ եթէ զինքս զրկել իսկ պէտք ըլլայ։

— Սակայն, կրկնեց տիկին Ա. իլլֆօր՝ անդադար իւր սրտին մէջ մրմիջող միակ խնդրոյն գառնալով, զուցէ լաւադոյն է որ այս տարագէպ եղելութիւնը Պ. ա'էրինէին պատմնք։ և զուցէ ան ալ ինքնին իւր խօսքը ետ առնոււ։

— Ո՛չ, այն ժամանակ մեծ գժրաղղութիւն մը պիտի ըւլլայ, ըստ Ա. իլլֆօր։

— Մեծ գժրաղղութիւն մը, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ։

— Անտարակոյս, կրկնեց Ա. իլլֆօր ձայնը մեղմացընելով, ամուսնութիւն մը ետ ընելը, եթէ ստակի պատճառաւ իսկ ըլլայ, ծաղկահաս աղջկան մը համար անպատութիւնն է. տակէ զատ՝ հին տարաձայնութիւնները, որոնք ես խափանել կ'ուզէի, աւելի հաստատութիւն պիտի դանեն։ Բայց ոչ,

բան մը փոխել չեմ ուզեր . Պ . տ'էքինէ , եթէ պատռուց տէր մարդ է , Վաղանթինի ժառանգութենէ զրկուիլը տեսնելով աւելի պիտի կապուի անոր հետ , եթէ ոչ՝ ադահութեան պարզ նպատակ մը ունենալը պիտի յայտնէ . ոչ , անկարելի է :

— Ես ալ Պ . Վիլլֆօրի հետ համամիտ եմ , ըստ Մօնթէ-Քրիսթօ՝ իւր նայուածքը տիկին Վիլլֆօրի վրայ յարելով , և եթէ Պ . տ'էքինէնին խրատ տալու չափ բարեկամը ըւըյի , պիտի յորդորէի զան (ըստ որում՝ ինչպէս որ կը հաստատեն՝ Պ . տ'էքինէ մօտերս պիտի վերադառնայ) , որ այս դործը այնպիսի կերպով կապէ որ անքակտելի մնայ . վերջապէս այնպիսի դործ մը պիտի կատարէի , որուն վախճանը Պ . Վիլլֆօրի այնչափ պատիւ կը բերէ — :

Թագաւորի դործակալը յայտնի ուրախութեամբ լցուած ոտք ելաւ , իսկ իւր կինը թեթև կերպով կը տժզունէր :

— Ահա իմ խնդրածս այս է , և ձեզի պէս խրատուի մը կարծ իբր կ'ուզէի ստանալ , ըստ Վիլլֆօր՝ իւր ձեռքը Մօնթէ-Քրիսթոյի երկնցընելով : Այս կերպով ամեն մարդ այս օրուան պատահածը թող չեղածի պէս համարի . ես իմ խորհուրդներս ամենենին փոխած չեմ :

— Պարոն , ըստ կոմսը , մարդիկ որշափ և անիրաւ ըւլան , կ'ապահովեմ զձեղ որ ձեր որոշումը պիտի յարգեն : Ձեր բարեկամները պիտի պարծին , և Պ . տ'էքինէ , եթէ օրիորդ տը Վիլլֆօրը առանց օժտի առնելու իսկ ըլլայ , որ անկարելի է , երջանիկ պիտի ըլլայ այնպիսի ընտանիքի մը մէջ մանելու , որ ըրած խոստումը պահելու և իւր պարտքը կատարելու համար այնպիսի զոհողութիւններ ընելու կը հաջի — :

Կոմսը այս խօսքերէն ետև ոտք ելեր էր և կը պատրաստուէր մեկնիլ :

— Կը մեկնիք , պարոն կոմս , ըստ տիկին Վիլլֆօր :

— Ստիպուած եմ , տիկին , շաբաթ օրուան համար ձեր

Խոստումը միայն յիշեցնելու եկայ:

— Կը վախնաք որ պիտի մոռնա՞նք :

— Խիստ աղնիւ էք, տիկին . բայց Պ. տը Ակլոֆօր այնչափ ծանր և երբեմն այնչափ կարեռը զքաղումներ ունի, որ . . . :

— Եմուսինս իւր խօսքը տուած է, պարոն . հիմա յայտնի տեսաք որ խոստմանը վրայ կը կենաց եթէ կորուստ մը իսկ ունենայ, որչափ ևս առաւել երբ ամենեին կորուստ մը պիտի չընէ :

— Այդ ակումբը Շանդ-Էլիդէի ձեր տանը մէջ տեղի պիտի ունենայ, հարցուց Ակլոֆօր :

— Ոչ, ըստ Ֆօնթէ-Քրիսթօ, այլ գիւղը, որով ձեր ըրած զոհողութիւնը աւելի մեծ արժանաւորութիւն պիտի գտնէ :

— Գիւղը :

— Այո՛ :

— Ո՞ր գիւղը, բարիզի մօտ, այնպէս չէ :

— Բարիզի գոներուն քովը, պարիսպէն կէս մզոն չեռու, Օթէցյլ :

— Օթէօյլ, պոռաց Ակլոֆօր . ո՞չ, այո՛, սոսյդ է . տիկին Ակլոֆօր ըստ ինձ թէ Օթէօյլ կը բնակիք . ըստ որում ձեր տունը եկեր է կառաձիերուն խենթեցած օրը : Օթէօյլի ո՞ր կողմը :

— Ֆօնթէն փողոցը :

— Ֆօնթէն փողոցը, կրկնեց Ակլոֆօր հեղձեալ ձայնիւմը, և ո՞ր թիւը :

— Թիւ 28 :

— Ուրեմն Պ. Սէն-Մէրանի տունը ձեզի՞ վաճառուեցաւ, ըստ Ակլոֆօր :

— Պ. Սէն-Մէրանի՞, հարցուց Ֆօնթէ-Քրիսթօ : Այն տունը Պ. Սէն-Մէրանի՞ն է :

— Այո՛, կրկնեց տիկին Ակլոֆօր, և կը հաւատա՞ք, պարոն կոմք :

- Ի՞նչ բանի:
 — Այն տունը շատ հաւած էք, այնպէս չէ:
 — Աքանչելի է:
 — Կը հաւատամք որ ամուսինս ամենեին ուղած չէ այն
տունը բնակելու:
 — Ստուդիւ, պարոն, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ, նախապա-
շարում մ'է այդ, որուն պատճառը չեմ հասկընար:
 — Օթէօյլ գիւղը չեմ սիրեր, պարոն, պատասխանեց թա-
դաւորի զործակալը ինքունքը զսպելով:
 — Բայց կը յուսամ թէ այնչափ անբաղդ պիտի շըլլամ,
ըստ Մօնթէ-Քրիսթօ անհանդսութեամբ մը, որ այդ հա-
կակրութիւնը զձեզ հոն ընդունելու երջանկութենէն զրկէ զիա-
 — Ոչ, պարոն կոմս . . . կը յուսամ . . . հաւատացէք որ
կրցածս պիտի ընեւմ դալու համար, կակազեց Վ.իլլֆօր:
 — Ո՛չ, ամենեին պատճառ չեմ ընդունիր, պատասխա-
նեց Մօնթէ-Քրիսթօ: Շաբաթ օրը, ժամը վեցին կ'ըսպա-
սեմ ձեզ, և եթէ չգաք, ինչ զիտնամ, պիտի կարծեմ թէ
այն քսան տարիէ 'ի վեր անբնակ մնացած տան վրայ աղէ-
տալի աւանդութիւն մը կամ արիւնալի պատմութիւն մը կայ:
 — Պիտի գամ, պարոն կոմս, պիտի գամ, ըստ աշխու-
ժիւ Վ.իլլֆօր:
 — Շնորհակալ եմ, ըստ Մօնթէ-Քրիսթօ: Հիմա հրա-
ման տուէք ինձ որ մեկնիմ:
 — Իրօք, քիչ մը առաջ ըսկը թէ սախուած էք մեկնե-
լու, պարոն կոմս, ըստ տիկին Վ.իլլֆօր, և կարծեմ պատ-
ճառը պիտի ըսէիք, երբ ուրիշ խօսք բացուելով ընդմիջեցիք:
 — Իրօք, տիկին, չեմ զիտեր թէ ուր երթալս պիտի հա-
մարձակիմ ձեզ ըսել:
 — Ինչո՞ւ կը քաշուիք, ըսէք:
 — Երբ Զշմարիտ ապուշ մարդ մը, ինչպէս որ եմ, պիտի
երթամ բան մը աչքէ անցընել, որուն վրայ շատ անդամ
ամբողջ ժամեր մտածած եմ:

— Ի՞նչ բան։
 — Հեռաղիրը։
 — Հեռաղիրը, կրկնեց տիկին Վիլլաֆօր։
 — Այո՛, շատ անդամ պայծառ օքեր ճամբու մը ծայրը
 բլուրի մը վրայ, պատենաթե յաղթ միջատի մը թաթերուն
 նման դիւրաթեք և սե թերու բարձրանալը տեսած եմ, և
 ճշմարիտ՝ ամեն անդամ զարմանքս տարած է։ վասն զի կը
 մտածէի թէ այն այլանդակ նշանները ուղղութեամբ օդը
 պատուելով և սեղանի մը առջեւ նստող մարդու մը անծանօթ
 կամքը՝ գծին ծայրը ուրիշ սեղանի մը առջեւ նստող մարդու
 մը տանելով, միայն այն զօրութեանց կը հաւատայի, և կը ծի-
 ծաղէի։ Երբէք բաղձանք մը չունեցեր էի այն սպիտակ փո-
 րով, նիշար և սե թաթերով յաղթ միջատները մօտէն
 տեսնելու, ըստ որում կը վախնայի որ անոնց քարէ թերուն
 տակը այն լաւ կրթեալ, քաջ վարժուած, դիտութեամբ,
 դաղտնի աւանդութեամբ և կախարդութեամբ զարդացեալ
 մարդկային փոքրիկ ողի մը չտեսնեմ։ Բայց երբ առտու մը
 իմացայ որ իւրաքանչիւր հեռաղրին շարժիչը տարին հաղար
 երկու հարիւր ֆրանք վարձք առնող թշուառ մարդ մ'է,
 որուն պաշտօնն է գիտել չէ թէ աստղագէտի մը պէս եր-
 կինքը, ձկնորսի մը պէս ջուրը կամ պակասամխակ մը պէս
 մարդագետինը, այլ իրմէ չորս կամ հինգ հարիւր մղոն հե-
 ռի եղող այն սպիտակ փորավ և սե թաթերով միջատը, որ
 իւր հաղորդակիցն է, այն ատեն հետաքրքրական փափաք մը
 ունեցայ այն պատենաւոր միջատը մօտէն տեսնելու և այն
 խաղին մօտ զանուելու, որ իւր պատեանին մէջէն իրարու ե-
 տեւ առասանի ծայրերը քաշելով միւս միջատին կը ներկա-
 յացընէ։
 — Եւ հիմա հան կ'երթաք։

— Այս :

— Ա՞ր հեռաղեին . արտաքին զործաց պաշտօնէին թէ Դիւտանոցին :

— Ա'չ , ոչ , այն տեղերը այնպիսի մարդեր պիտի գտնեմ , որոնք պիտի ստիպեն զիս իմ զիտակ չուզած բաներս հասկընալու , և իրենց չճանչցած դաշտնիքը իմ կամացս հակառակ պիտի բացատրեն ինձ : Ոչ , այն միջաւաներուն վրայ կ'ուզեմ միշտ խարուած մնալ , բաւական է որչափ որ մարդոց զաղանիքը ճանչցայ : Աւտի ոչ արտաքին զործոց պաշտօնէին և ոչ Դիւտանոցի հեռաղերին պիտի երթամ , այլ դաշտի մէջ դանուազ հեռաղերի մը , սրակես զի իւր աշտարակին մէջ քարացեալ պարզամիտ մարդ մը դանեմ :

— Դուք եղական մեծ մարդ մ'էք , պարոն , ըստ Վիլլֆօր :

— Ա՞ր զիծը քննելու կը խրատէք զիս :

— Այսօրուան ամենէն շատ զբաղածը :

— Ուրեմն Սպանից զիծը ըսել կ'ուզէք :

— Այս , պաշտօնեայէն նամակ մը կ'ուզէք որ ձեզ բացատրութիւններ տան :

— Ոչ , ըստ Մօնթէ-Քրիսթօ . ըստ որում ինչպէս ըսի՝ ընդ հակառակն բան մը չեմ ուզեր հասկընալ : Եթէ ես անոնց զաղանիքը իմանամ , այնուհետեւ հեռաղեր պիտի չըլլայ :

— Գացէք ուրեմն . երկու ժամէն զիէք պիտի ըլլայ , և այն ատեն բան մը պիտի չտեսնէք :

— Ի՞նչ կ'ըսէք , կը վախցընէք զիս . ո՞րն է ամենէն մօտը :

— Պայտոնի՛ Ճամբուն վրայ :

— Այսո՛ , թող ան ըլլայ :

— Ճաթիլեօնինը ամենէն մօտն է :

— Ճաթիլեօնէն ետքը :

— Մօնէրիի աշտարակինը կարծեմ :

— Ճնորհակալ եմ , նորէն տեսնուինք . շաբաթ օրը հետադրին ինձ պատճառած ազդեցութիւնը կը պատմեմ ձեզ — :

Դրան առջին կոմսը այն երկու նօտարները տեսաւ , որոնք



Վալանթինը ժառանգութենէ զրկեր էին, և իրենց պատիւ բերող այնպիսի կտակագիր մը ընելնուն վրայ ուրախանալով կը մեկնէին:



ՊԼՈՒՐ Բ.

ԳԵՐՑԻԶՊԵՆԻ ՄԷ ԳԵՂՉԵՐԸ ՈՒՏՈՂ ԸՄՆԵՑՆԵՐԸ
ՃՆՉԵԼՈՒ ՀՆԵՐԳՅ

ՄօՆԹԻ-ՔՐԻՍՏՈՆ կոմսը՝ չէ թէ այս իւրիկունը ինչպէս որ ըսեր էր, այլ հետեւալ առտու Անֆերի դռնէն դուրս ելաւ, Օրլէանի Ճամբան զարկաւ, և Աինայի գիւղին առջեկն անցաւ՝ առանց անոր հեռագրին կենալու, որ Ճիշդ կոմսին անկէ անցած ժամանակը իւր մերկ երկար թները կը շարժէր, և Մոնլէրիի աշտարակը հասաւ, որ ինչպէս ամեն մարդ գիտէ՝ այս անունով դաշտին բարձրագոյն վրայ շինուած է:

Բլրին վարի կողմը կոմսը կառքէն իջաւ, և տասն և ութ քթաշափ լայնութեամբ շրջանաւոր փոքրիկ Ճամբայէ մը օկսաւ լեռին վրայ ելնել:



Գուղաթը հասնելով, իւր առջեր պարտիզի յանկ մը ելու և արուն վրայ վարդադսին և սպիտակ ծաղիկներու կանաչ պտուղներ յաջորդեր էին:

Մօնթէ-Քրիսթօ պարտիզին դուռը փնտուելով շուտով գտաւ զայն, որ ուռիի մը ծինիներուն վրայ դարձող և դամով մը ու առասանով դոյցուող փայտեայ վանդակներով շինուած էր:

Խրկար ժամանակի պէտք չեղաւ կոմին դուռը բանալու կերպը զանելու:

Այն ատեն քսան ոտք երկայնութեամբ և տասներկու ոտք լայնութեամբ պարտիզակի մը մէջ դանուեցաւ, որ մէկ կողմէն փակուած էր այն ցանկով, որուն դուռ անունով Ճարտար չէնքը արգէն նկարագրեցինք, և միւս կողմէն հին աշտարակով մը, որ շահպրակներով և ուրիշ ծաղիկներով խառնուած բաղեղներով ծածկուած էր:

Այն հին աշտարակը այնպէս ծաղիկներով զարդարուած տեսնելով այնպիսի ծերունիի մը պէս, որուն թոռները անոր տօնախմբութիւնը կատարելու կու զան, անկարելի էր ըսել թէ սոսկալի դործողութիւններ պատմելու կարող էր, եթէ ձայն մը յարեր այն սպառնալց ականչներուն, զորոնք հին առակ մը պատերուն կու տայ:

Պարտէվլին մէջ կարմիր աւազով յատակուած ծառուղի մը կար, որուն վրայ երկու կողմը եղած բազմամեայ հաստ տոսախները այնպիսի կերպով մը կը ձգտէին, որ Տըլաքը ային աշքը կրնային զուարձացընել:

Ծառուղին 8ի ձե մը ունէր և յառաջանալով կը դառնար, այնպէս որ քսան ոտք պարտիզի մը մէջ վաթսուն ոտք ըրջադայութիւն կ'ըլլար:

Ճռումայեցի բարի պարտիզանաց ծիծաղադէմ և կայտառ դիցուհի Փլորային երբէք այնչափ մանրամասն և անրիծ պաշտօն մատուցուած չէր, որչափ այն պարտիզակին մէջ:

Իրօք՝ պարտիզակը կազմով քսան վարդենիներուն մէջ տերեւ մը չկար որ Ճանձի մը հետքը ունենար, կամ սղկուղի

նուրբ թել մը՝ կանաչ տղակներ, որոնք խոնաւ հողի վրայ աճող տունկերը կը կրծեն և կ'ըսպառեն:

Այսու ամենայնիւ խոնաւութիւնը պահաս չէր այս սլարտէղէն. մուրի պէս սե հողը և ծառոց անթափանց տերեները ըսածնիս կ'ապացուցանեն. մանաւանդ որ արուեստական խոնաւութիւնը բնական խոնաւութեան թերութիւնը կը չեցըներ, փառք այն տակառին, որ մօրացեալ ջրով լեցուած՝ պարտիզին մէկ անկիւնը զետեղուած էր, և որուն մէջ կանաչ մկանանց վրայ դորա մը և արջնադորա մը կային, որոնք անտարակոյս հակակրութեամբ կոնակնին իրարու դարձուցած՝ միշտ շրջանակին երկու հակառակ կէտերուն վրայ կը կենային:

Ոչ ծառուղիներուն վրայ խոս մը կար և ոչ ծառի մը վրայ պատաստող բողբոջ մը:

Զարդասէր աիկին մը իւր ծաղկամանին մէջի կոնկենիները և մրտավարդերը այնշափ խնամքով շմաքեր և շնուամնը, որշափ այն պարտիզակին տէրը, որ մինչեւ այն միջոցին երեան ելած չէր:

Մօնթէ-Քրիսթօ դրան առասանը իւր դամին անցընելով դայն գոցելէն ետե՛ վայրկեան մը կեցաւ և մէկ նայուածքով բոլորտիքը քննեց:

— Կ'երեկի թէ, ըստու, հեռաղբին մարդը վարձակալ սլարտիզաներ ունի, կամ թէ ինքզինքը աարփանօք երկրադործութեան տուած է — :

Յանկարծ ոտքը տերեներով բեռնաւորեալ սայլակի մը ետին կծկուած բանի մը դարկաւ:

Այն կծկուած բանը ոտք ելաւ այնպիսի ճիչ մը հանելով, որ իւր զարմանքը կը յայտնէր, և Մօնթէ-Քրիսթօ յիսուն տարեկան մարդու մը դիմացը զտնուեցաւ, որ ելադներ ժողվելով որթի աերեներուն վրայ կը դնէր:

Տասն երկու տերեկի վրայ տասն երկու ելադ գրած էր:

Մարդը ոտք ելած ժամանակը քիչ մեաց որ ձեռքի պնակը, ելադները և տերեները դետինը պիտի իյնային:

— Պարոն, պարտիզիդ պառողները կը ժողվես, ըստ Մօնթե-Քրիստո մատելու:

— Ներեւ, պարոն, պատասխանեց մարդը ձեռքը դիսանոցին տանելով. իրաւ է որ վերը չեմ, բայց հիմա գեռ իջայ: — Անհանդիստ չընեմ քեզի, բարեկամ, ելազներդ ժողվը եթե ուրիշ ալ ունիս ժողվելու:

— Տասը հատ ևս ունիմ ժողվելու, պարոն, տասն ու մէկ հատ ժողված եմ, ամենը քառն ու մէկ կ'ընէ, անցեալ տարուանէ հինգ հատ աւելի: Բայց չում դարմանար, վասն զի այս տարի դարունը տաք էր, և ելազներուն պէտք եղածը տաքութիւնն է: Ահա այս պատճառաւ է որ այս տարի հինգ հատ աւելի ունեցայ. տասն ու մէկ հատ արդէն ժողված եմ, ահա մէկ մ'ալ տասն երկու, տասն երեք, տասն ու չորս, տասն ու հինգ, տասն ու վեց, տասն ու եօթը, տասն եւ ութ՝ ԱՌ Աստուած, երկուքը պակսեր են, տակաւին երեկէ հոս էին, պարոն, այո, երեկի, համբեցի զանոնք: Անշուշտ մայր Սիմոնին սրդին դողցած պիտի ըլլայ. այս առտու անոր այս կողմերը թափառիլը տեսայ: ԱՌ, պղտիկ զող, պարտէզի մը մէջէ դողութիւն ընել, ը՞ զիտեր արդեօք թէ ասոր ծայրը ուր կ'երբէայ:

— Երօք ծանր դործ մ'է այդ, ըստ կոմսը. բայց յանցաւորին երիտասարդութեանը և որիորստութեանը տուր:

— Անշուշտ. սակայն հաճելի դործ մ'ալ չէ այս. բայց երկորդ անդամ ներումն կը խնդրեմ, պարոն, արդեօք հեռազրի տեսանը մը այսպէս կ'ըսպասեցընեմ—:

Եւ երկիւղալինայուածքով կոմսը և անորդզեսմները դիտեր:

— Անհոգ եղիք, բարեկամ, ըստ կոմսը այն ժպիտով, զորիւր կամաց համաձայն ստոկալի և սիրալիր կ'երեցընէր, բայց այս անդամ իւր ժպիտը սիրալիր էր. զքեզ քննելու եկող տեսուչ մը չեմ ես, այլ պարզ հետաքրքիր ճանապարհորդ մը, որ կ'ըսկսի ինքինոք մեղադրել ժամանակի կորսնցընելու պատճառ ըլլալուն համար:

— Ժամանակս ոյնչափ սուղ չէ , սրարոն , սրատասխանեց մարդը տիսուր ժպիտով մը : Այսու ամենայնիւ իմ ժամանակս կառավարութեանն է , և պէտք չեմ կորսնցընել զայն . սա կայն նշան ստացայ որ կրնամ ժամ մը հանդստանալ (և իւր աչքը արեգակնային ժամացոյցի մը վրայ տարաւ , քանզի Մոնթէրիի աշտարակին պարտէզին մէջ ամեն բան կար , արեգակնային ժամացոյց մը անզամ) , կը տեսնէք , տակաւին տասը վայրիեան ունիմ . ինչ ընեմ , ելադներս հասունցեր են , և եթէ օր մը ևս թողուի . . . : Մանաւանդ որ կը հաւատաք , պարսն , առնէտներն ալ կ'ուտեն :

— Աչ , ստուգիւ չէի կարծեր , սրատասխանեց Մօնթէ-Քրիմօ ծանրութեամբ մը . մնք որ Հոռայեցւոց պէս առնէտները մեղրով եփած չենք ուտեր , անսնց դրացիութենէն ալ չենք ախորժեր :

— Հոռայեցիները առնէտները կ'ուտէին :

— Բէթրոնիոյի մէջ կարդացած եմ , ըստ կոմսը :

— Կրա՞ւ , բայց ախորժելի պիտի չըլլայ , թէե Առնէտի մը պէս դեր կ'ըսեն : Առնէտներուն զեր ըլլալը զարմանալի բան չէ , ըստ որում բոլոր օրը կը քնանան , և բոլոր դիշերը կըրծելու համար կ'արթնան : Վնցեալ տարի չըրս ծիրան ունեի , մէկը կերան . լերկ դեղձ մը ունեի , միայն մէկ հատ , քանզի հազուազիւտ պառուղ մ'է , ինչ կ'ըսես , պատին կողմէն կեսը կերան . զեղեցիկ և ընտիր դեղձ մ'էր , որմէ աւելի աղէկը երբէք կերած չէի :

— Կերար զայն , հարցուց Մօնթէ-Քրիմօ :

— Այսինքն մնացած կեսը կերայ . սրանչելի էր շխտակը . բայց միթէ այն պարոնները ամենէն զէշ պատառները կ'ընտրեն : Մայր Սիօնին որդին ալ այնպէս է ըցեր , ամենէն ընտիր ելազները ընտրեր է : Բայց այս տարի այնպէս պիտի չըլլայ , անհոգ եղիր , շարունակեց պարախպահնը . այսուշետեալյս բանս պիտի չպատահէ . երբ պառուղները հասունիալու մօտենան , դիշերը դանոնք դահնանել իսկ պէտք ըլլայ՝ պիտի ընեմ — :

Մօնթէ - Քրիսթօ այսպիսի մարդեր բաւական տեսեր էր :
Ամեն մարդ իւր միտումը ունի որ իւր սրտին խորշը կը կըս-
ծէ , ինչպէս ամեն թրթուր իւր պառւղը . հեռազրի մարդուն
միտումը մշակութիւնն էր :

Կոմմը արե շաե սնող խաղողի ողկոյզներուն քանի մը տերեւ-
ները սկսաւ ժողվել , և ասով պարտիզպանին սիրտը շահեցաւ :
— Պարոն , հեռադիրը տեսնել կ'ուզէիր , ըսաւ մարդը :
— Այո , պարոն , եթէ ձեր կանոններէն արդիլուած չէ :
— Ամենեին արդիլուած չէ , ըսաւ պարտիզպանը , քանզի
վտանդաւոր բան մը չկայ . ըստ որում մարդ չդիմեր և չկըր-
նար դիանալ թէ ինչ կ'ըսենք :

— Իրօք ինձ այնպէս ըսին թէ ձեզի եղած նշանները առանց
հասկընալու կը կրկնէք :

— Անշուշտ , պարոն , իմ ուզածս ալ այս է , ըսաւ հե-
ռադրին մարդը ծիծաղելով :

— Ի՞նչո՞ւ :

— Ի՞նչու որ այս կերպով պատասխանատուսւթենէ ազատ
կ'ըլլամ , պարզ դորձիք մ'եմ ես և ոչ ուրիշ բան . բաւա-
կան է որ իմ պաշտօնս ազէկ կատարեմ , ինձմէ ուրիշ բան
չեն պահանջեր :

— Զարմանալի բան , ըսաւ ինքնիրեն Մօնթէ - Քրիսթօ ,
արդեօք փառասիրութիւն չունեցող մարդ մ'է գիմացինս . ըս-
տուդիւ դժբաղդութիւն մ'է այս :

— Պարոն , ըսաւ պարտիզպանը արե զակնային ժամացոյցին
նայելով , տասը վայրիեանը լրանալու վրայ է , ես իմ տեղս
կը վերադառնամ . կը հաճիս հետո վեր ելնելու :

— Այո — :

Եւ Մօնթէ - Քրիսթօ անոր ետևէն աշտարակը մտաւ , որ ե-
րեք դստիկոն ունէր , առաջին դստիկոնը մշակութեան քանի
մը դորձիներ կը պարունակէր , ինչպէս էին բահեր , հողի
սանտրեր , ցնցուղներ , որոնք պատէն կախուած էին և ա-
ռաջին դստիկոնին կարասիքը կը կազմէին :

Երկրորդը պաշտօնեային սովորական կամ դիչերային բնակութիւնն էր . որ տան քանի մը խեղձ անօթներ , անկողին մը , սեղան մը , երկու տթոռ և հողէ աղբիւր մը կը պարունակէր . ասոնցմէ զատ առաստաղէն չորցած խռտեր կախուած էին , որոնք էին ոլուն և Սպանիոյ լուրիայ , և պարտիղպանը անոնց սերմերը իրենց պատեանին մէջ պահած էր , և անոնց անունները ժարտէն աէ բլոնթի տնկադէտի մը խնամքովը վրանին նշանակեր էր :

— Հեռաղրի ուսումը սորվելու համար շատ ժամանակի կարօտ է , պարոն , հարցուց Մօնթէ-Քրիսթօ :

— Աւսումը երկար չէ , պարոն , բայց անվարձ ծառ այսուիլ :

— Եւ ի՞նչ տարեկան վարձք կ'ընդունիս :

— Հաղար ֆրանք , պարոն :

— Քիչ է :

— Այս , բայց ի՞նչպէս կը տեսնէք՝ տան վարձ չեմ տար — :

Մօնթէ-Քրիսթօ սենե ակը քննեց :

— Միայն թէ իւր բնակութիւնը պատճառ չբռնէ — , մըրմիջեց կամսը :

Երրորդ դստիկոնը ելան , որ հեռաղրի սենեակն էր :

Մօնթէ-Քրիսթօ փոփոխակի երկաթեայ այն երկու բոնատեղերը կը գիտէր , որոնց օղնութեամբը պաշտօնեայն մեքենան կը շարժէր :

— Այս , 'ի սկզբան մարդուս պարանոցը կը կարկամի երբ երկար ժամանակ մէկ կողմ նայելու կը պարտաւորի , բայց տարի մը կամ երկու տարի ետքը կը սովորի մարդ . ասկէ զատ հանդսութեան ժամերն ու աղատութեան օրերը ունինք :

— Աղատութեան օրեր :

— Այս :

— Ուսոնք են :

— Մառախուղ եղած օրերը :

— Այս , իբաւունք ունիս :

— Միդապատ օրերը իմ տօն օրերս են . այն օրերը իմ

պարտէզս կ'իջնեմ, կը անկեմ, կը յապաւեմ, չոր ոստերը
 կը կարեմ, կը թրթրատեմ, վերջապէս ժամանակը կ'անցնի:
 — Ա՞րշափ ժամանակ է որ հոս ես:
 — Տասը տարի, հինգ տարի ալ անվարձ աշխատեցայ,
 տաճն և հինգ տարի:
 — Քանի՞ տարեկան ես:
 — Յիսուն և հինգ:
 — Քանի՞ տարի պիտի ծառայես որ ոռձիկ ընդունիս:
 — Քսան և հինգ տարի, պարոն:
 — Եւ ո՞րչափ է այդ ոռձիկը:
 — Հարիւր թալես:
 — Թշուառ մարդասիրութիւն, մրմիջեց Պօնթէ-Քրիսթօ:
 — Ի՞նչ ըսիր, պարսն . . . , հարցաց պաշտօնեան:
 — Կ'ըսեմ թէ շատ հետոքքրական են:
 — Արտնիք:
 — Ինձ ցուցընելիքներդ . . . : Ստուդիւ ըրած նշաններէդ
 ամեննեին բան մը չե՞ս հասկընար:
 — Ամեննեին:
 — Երբէք չաշխատեցա՞ր հասկընալու:
 — Երբէք . ի՞նչ պիտի ընեմ:
 — Այսու ամենայնիւ երբեմն այնպիսի նշաններ կ'ըլլան,
 որոնք ուղղակի քեզ կը նկատեն:
 — Անապակոյս:
 — Եւ այն նշանները կը հասկընա՞ս:
 — Միշտ մի և նոյն նշաններն են:
 — Եւ ի՞նչ կ'ըսեն . . .:
 — Կոր բան մը չե՞ս . . . ժամ մը ո՞ւնիս . . . կամ վաղը:
 — Բոլորովին անտարբեր պարագաներ են ասոնք, ըստ
 կոմսը . բայց հօն չե՞ս նայիր, հաղորդակիցդ նշաններ կ'ընէ
 կարծեմ:
 — Այս, սողոյդ է, շնորհակալ եմ, պարոն:
 — Ի՞նչ կ'ըսէ . բան մը հասկըցա՞ր ոյս նշանէն:

- Այս, կը հարցընէ թէ պատրաստ եմ:
- Եւ ինչ կը պատասխանես:
- Այս նշանով աջ կողմի հաղորդակցիս խմացընելով որ պատրաստ կը դանուիմ, միանդամայն ձախ կողմն եղողն ալ կը հրաւիբեմ որ պատրաստուի:
- Ի՞նչ հանձարավի հարգք մ'է այդ:
- Հիմա կը տեսնէք, ովարոն, կրկնեց մարդը պարծենալով, հինգ վայրկենէն սիխի խօսի:
- Աւրեմ հինգ վայրկեան ունիմ, ըսաւ Թօնթէ-Քրիստօ, իմ ուզածս ալ այս է: Սիրելի պարոն, ներէ ինձ որ հարցում մը ընեմ:
- Ըրէ, պարոն:
- Պարտէղ մշակելը կը սիրե՞ս:
- Խիստ շատ:
- Քսան ոտք մեծութեամբ երկրի տեղ՝ կ'ուզէիր երկու արտավար տեղ ունենալ:
- Երկրային արքայութիւն մը կ'ընէի զայն:
- Առած հաղար ֆրանքովդ աղէկ կ'ապրիս:
- Ոչ այնչափ աղէկ, բայց վերջապէս կ'ապրիմ:
- Այս, բայց խեղճ պարտէղ մը ունիս:
- Ո՛չ, տառյդ է, պարտէղս մեծ չէ:
- Ատէկ զատ՝ առնէտներով լեցուն է, որոնք ամեն բան կ'ըսպառեն:
- Իմ պատիժս են անոնք:
- Ըսէ ինձի, աջ կողմի հաղորդակցիդ նշան ըրած ատեն եթէ դժբաղդաբար գուներեսդ միւս կողմը դարձուցած ըլլայիր:
- Այն ատեն զան պիտի չտեսնէի:
- Բայց ինչ պիտի ըլլար այն ատեն:
- Իւր նշանները պիտի չկարենայի կրկնել:
- Եւ ետքը:
- Նշանները անհող ութեամբ չկրկնելուս համար տուղանքի պիտի դատապարտուէի:

- Ո՞րչափի :
- Հարիւր ֆրանքի :
- Եկամուտիդ տասանորդը , դէշ չէ այդ :
- Ա՛չ :
- Երբեք պատահեցաւ քեզի , ըստ Մօնթէ-Քրիսթո :
- Անդամ մը , պարոն , երբ կաղնաձեւ վարդենի մը կը պատուաստէի :
- Աղէկ . բայց եթէ նշանէն բան մը փոխել ուղէիր կամ ուրիշ նշան մը ընէիր :
- Այն ատեն զործը տարրեր է , զիս կը ճամբեն և ոռա չիկս կը կորսնցընեմ :
- Երեք հարիւր ֆրանք :
- Հարիւր թալեռ . կը հասկընաս անշուշտ որ պիտի ըզգուշանամ այդպէս բան մը ընելէ :
- Բայց եթէ տասն և հինգ տարուան վարձքդ ընդունիս գարձեալ պիտի մերժե՞ս . ի՞նչ կ'ըսես , մաածէ քիչ մը :
- Տասն և հինգ հազար ֆրանք :
- Այս :
- Պարոն , կը վախցընես զիս այդ դումարալ :
- Ամենէին :
- Ուրեմն զիս փորձել կ'ուղես :
- Ճիշդ այդպէս : Տասն և հինգ հազար ֆրանք ունիմ , կը հասկընաս :
- Պարոն , թող որ աջ կողմի հաղորդակցիս նայիմ :
- Ընդ հակառակն՝ մի նայիր անոր և ասոնց նայէ :
- Ի՞նչ են ատոնք :
- Ի՞նչպէս , այս փոքրիկ թղթերը չեն ճանչնար :
- Լումայազիրել են :
- Եյլ' , քառակուսի են և տասն և հինգ հատ :
- Եւ որո՞ն են ատոնք :
- Քուկդ , եթէ ուղես :
- Ի՞մս , պառաց պաշտօնեայն հեղձեալ ձայնիւ :

— ԵՇ, այո՛, քուկիդ են ըսի, բոլորովին քուկիդ։
 — Պարո՞ն, աչա աշ կաղմի հաղորդակիցս որ նշաններ կ'ընէ։
 — Թող որ ուզած ը ընէ։
 — Պարո՞ն, ժամանակ անցընել կու տառ և ես տուզանքի
 պիտի դատապարտուիմ։

— Հարիւր ֆրանք պիտի կորսնցընես, կը տեսնես որ իմ
 տասն և հինգ լումայադիրերուս տէրն եղած ես։

— Պարո՞ն, աջ կողմի հաղորդակիցս համբերութիւնը կը
 կորսնցընէ, և իւր նշանները կը կրկնէ։

— Թող ուզած ը ընէ, դուն ասոնք առ։

Կոմնը լումայադիրերը սաշտօնեային ձեռքը դրաւ։

— Այս բաւական չէ, ըսաւ, տասն և հինգ հաղար ֆրան-
 քով չես կրնար ապրիլ։

— Պաշտօնս ալ պիտի ունենամ։

— Ոչ, պիտի կորսնցընես զայն . վասն զի հաղորդակիցիդ
 ըրածէն տարբեր նշան մը պիտի ընես հիմա։

— ԱՇ, պարո՞ն, այդ ինչ առաջարկութիւն է։

— Տղայական խաղ մը։

— Միայն թէ չստիպուիմ . . .

— Իրօք և ես կ'ուզեմ ստիպել զքեզ — .

Եւ Մօնթէ - Քրիսթօ իւր ծոցէն ուրիշ լումայադիրեր հանեց։

— Աչա տասն հաղար ֆրանք ևս, ըսաւ, ծոցիդ տասն և
 հինգ հաղարով քսան և հինգ հաղար կ'ընէ։ Հինգ հաղար
 ֆրանքով երկու արաւալար երկիր ունեցող զեղեցիկ տնակ
 մը ծախու կ'առնոււս, և քսան հաղար ֆրանքը շահու դնե-
 լով հաղար ֆրանք եկամուտ կ'ընդունիս։

— Երկու արաւալար պարտէզ մը։

— Այս, և հաղար ֆրանք եկամուտ։

— ԱՌ Աստուած, ով Աստուած իմ։

— Բայց ինչո՞ւ չես առնուր — .

Եւ կոմնը տասը հաղար ֆրանքը բռնի անոր ձեռքը դրաւ։

— Ի՞նչ պիտի ընեմ հիմա։

— Ծատ դիւրին բան մը :

— Բայց ի՞նչ :

— Աչա այս նշանները ըրեւ — :

Մօնթէ-Քրիսթօ իւր գրադանէն թուղթ մը հանեց , քրուն վրայ երեք նշաններ գծուած կայիին :

— Ինչպէս որ կը տեսնես , երկար պիտի չտեսէ :

— Այո՛ , բայց . . . :

— Այս զործողութեամբ լերկ գեղձեր և ուրիշ ծառեր և տունկեր պիտի ստանաս — :

Ասոնց մասծութիւնը ամեն բանի յաղթեց , և մարդը չերա մային կարմրութեամբ և քրտինքով ծածկուելով կոմսին ներա կայացուցած նշանները հետզետէ 'ի զործ դրաւ՝ ամեննին միտ չդնելով աջ կողմի հաղորդակցին սոսկալի նշաններուն , որ այս փոփոխութենէն բան մը չհասկընալով , կարծեր էր թէ լերկ գեղձեր ունեցող մարդը խենթեցեր է :

Իսկ ձախ կողմի հաղորդակցիցը խղճի մաօք նոյն նշանները կրկնեց , որոնք չշդիւ արտաքին զործոց պաշտօնաառւնը հասան:

— Հիմա հարուստ ես ալ , ըստ Մօնթէ-Քրիսթօ :

— Այո՛ , բայց ի՞նչ զնոլ ստացայ այդ հարստութիւնը :

— Մտիկ ըրեւ , բարեկամ . չեմ ուզեր որ խղճի տագնապ մը ունենաս . հաւատա ինձի , վասն զի կ'երդնում որ մէ կուզէցութիւն չըրիր —

Պաշտօնեայն լումայազիրերուն կը նայէր , կը չօշափէր և կը համբէր զանոնք :

Դունատեալ և կարմրած էր :

Վերջապէս բաժակ մը ջուր խմելու համար իւր սենեակը վաղեց . բայց աղբիւրին քովը չասած նուաղեցաւ :

Այս հեռագրական լուրը պաշտօնաառւնը հասնելէն հինդ վայրիեան եաքը՝ Տըպրէ իւր ձիերը կառքին Ծել տուաւ և Տանկլարի տունը վաղեց :

— Ամուսինդ Սպանիոյ արժէթղթեր ունի , հարցուց ամկին Տանկլարին :

- Անշուշտ . վեց միլիոն ֆրանքի ունի :
- Ո՞ր և է դնով թող ծախէ զանոնք :
- Խնչու համար :
- Ըստ որում Տնի Գարլօն Պուրժէն փախչեր Սպանիստ մատը է :
- Ո՞րկից իմացար այդ լուրը :
- Զարմանալի բան , ըստ Տըպրէ ուսերը բարձրացըն եւ լով , լուրերը ինչպէս կ'իմանամ — :

Տիկինը խօսքը կրկնել չառւաւ , իսկոյն իւր ամուսնոյն քովը վաղեց , և Պ . Տանկլար գնաց իւր միջնորդը դտաւ և պատուիրեց որ իւր արժէթղթերը ո՛ր և է դնով ծախէ :

Պ . Տանկլարի այս ընթացքին վրայ Սպանիական արժէ թղթոց գինը իսկոյն իջաւ :

Տանկլար հինգ հարիւր հազար ֆրանք կորսնցուց , բայց իւր բոլոր արժէթղթերը ձեռքէ հանեց :

Կրիկունը Մեսուն օրադրին մէջ հետեւալը կարդացուեցաւ :

« ՀԵՌԵԳՐԱԿԱՆ ԼԱԲԻ

« Տոն Գարլօ թագաւորը իւր սլահապաններուն ձեռքէն Պուրժէն փախչելով՝ Գաթալոնի սահմանադլսէն Սպանիա մատը է :

« Պարչէլոնա քաղաքը 'ի շնորհա անոր ոտք ելեր է » ,

Բոլոր իրիկունը Պ . Տանկլարի նախազդուշութեան խօսքը կ'ըլլար , թէ ինչպէս իւր արժէթղթերը ծախելով և այսպիսի սլարադայի մէջ միայն հինգ հարիւր հազար ֆրանք կորսնցընելով ազատեր էր :

Կրենց արժէթղթերը պահողները կամ Պ . Տանկլարինները գնողները իրենց հարստութիւնը կորսնցուցած կը համարէին և իսկամ հոգատանջ դիշեր մը անցուցին :

Հետեւալ օրը Մանէնէք օրադրին մէջ հետեւալը կարդացուեցաւ .

« Տոն Գարլոյի փախչելուն և Պարչէլոնայի ապստամբութեան վրայ երէկուան Մէսոմէէին տուած լուրը անչիմն է :

« Տոն Գարլօ թազաւորը Պուրժէն մնինած չէ , և թերակղջին կատարեալ հանդարտութեան մէջ կը զտնուի :

« Մառախուղին պատճառաւ դէշ բացատրուած հեռագրական նշան մը այս սխալման տեղի տուած է » :

Երժէթղթերը իրենց առջի դինէն կրկինը բարձրացան :

Եյս հեռագրական լուրը Տանկլարի մէկ միլիոն կորսնցը նելու պատճառ եղեր էր թէ իւր ըրած կորուսովը և թէ ընելու շահէն ետ մնալովը :

— Աղէկ , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ Մորէլին , որ անոր տունը կը զտնուէր երբ եկան այս գրամային զարմանալի փոփոխութեան լուրը իմացուցին , որուն Տանկլար դո՛ս եղեր էր . Հիմա քսան և հինգ հազար ֆրանք վճարելով այնպիսի հնարք մը զտայ , որուն հարիւր հազար ֆրանք յօժարութեամբ կը վճարէի :

— Ի՞նչ հնարք է զտածնիդ , հարցուց Մաքսիմիլիէն :

— Պարտիզանի մը պառուղները ուսող առնետները ջնջելու հնարքը — :



Գ Լ Ո Ւ Բ Ք Գ .

ԹԻՐԻՒԵԿԸՆՆԵՐԸ

Օրէօթի տան արտաքին ելեոյթը Մօն
 թէ-Քրիսթոյ մնծափառ կոմսին հա-
 մար սահմանուած այն բնակութենէն
 ակնկալեալ շքեղութիւնը և փառա-
 ւորութիւնը չէր ընծայեր . բայց այն պարզութիւնը տիրոջը
 կամքէն կախեալ էր , որ Ճշդիւ պատուիրած էր ամենեին բան
 մը չփոխել արտաքին կողմէն . և ասոր համոզուելու համար
 պէտք էր ներքին կողմը թափանցել :

Երօք գուոը բացուելուն պէս տեսարանը կը փոխուէր :
 Պ . Պէրթուչիօ կարասեաց ընտրութեանը և զործ արքութեան
 արագութեանը մէջ այս անդամ գերազանցեր էր :

Ինչպէս որ ժամանակաւ տ'Անթէն գուքը Նուի ԺԴին ա-
 չաց նեղութիւն տուող ամբողջ ծառուղի մը մէկ գեշերուան
 մէջ ջնջել առւեր էր , նոյնպէս և Պ . Պէրթուչիօ երեք օր-
 ուան մէջ բոլորովին թափուր զաւիթ մը ծառերով զարդա-
 րեր էր , և գեղատեսիլ կաղամախիներ ու իրենց խորունկ ար-
 մատովը բերուած ժանտաթղենիներ տան զլաւոր Ճակատը
 կը հովանաւորէին , որուն առջեւ կիսով չափ խոտով ծած-
 կուած քարայատակին աեղը նուրբ և կարճ խոտերու մար-
 դագետին մը կը տարածուէր , որոնք նոյն առտու տեղաւոր-
 ուած էին , և ոռոգուած ջուրին կաթիլները տակաւին մար-
 դարտանան կ'երեէին :

Այս հրամանները կոմսին կողմէն եղած էին . Մօնթէ - Քրիսթօ պ . ու բլժուշիոյին յատակագիծ մը յանձներ էր , ու բուն մէջ նշանակուած էին տնկուելու ծառերուն քանակութիւնը և տեղը , և քարայտակին տեղը դրուելու խոտերուն ձեւը և տարածութիւնը :

Այս կերպով տան երեսյթը փոխուեր էր , և նոյն ինքն պէրթուչիօ կը հաստատէր որ այն կանաչեղինաց մէջ տունը անձանաչէլի եղեր էր :

Գործակատարը կ'ուզէր պարտէզին մէջ ալ փոփոխութիւն ներ ընել , սակայն կոմսը յատկապէս արգիլեր էր որ անոր չդպչէ :

Ու բլժուշիօ այս պակասութեան թերութիւնը լեցուց նախասենեակները , սանդուիները և կրակարանները ծաղիկներով զարդարելով :

Գործակատարին ծառ այելու համար ունեցած վերջին աստիճանի յաջողակութիւնը և կոմսին հրամայելու խորին հանձարը ցուցընողը այն էր թէ ինչպէս այն տունը , (որ քսան տարիէ 'ի վեր ամայի մնացած էր , տակաւին առջի իրիկունը տխուր երեսյթ մը ունէր և այն անախորժ հոտով վարակեալ էր , որ ճամանակին հոտը կրնանք ըսել) , մէկ օրուան մէջ կենդանութեան երեսյթ մը առնելով , տիրոջը սիրելի եղած հոտերը ստացեր էր . թէ ինչպէս կոմսը եկած առնը բան կատարեալ գտեր էր , իւր գրքերը , զէնքերը և իրեն սիրելի նկարները տեղաւորուած էին . նախասենեկայ մէջ այն շուներն ու թոշիւնները կը դանուեէին , որոց քծնութիւնն ու երգերը կը սիրէր . թէ ինչպէս այս տունը մեռեալ անտառին մէջ եղած Գեղեցիւհերյն պալտափին ովէս իւր երկար քունէն արթննալով կենդանացեր էր , կ'երգէր և կը զուարձանայր այն տուներուն պէս , որոնք երկար ճամանակէ 'ի վեր մեզ սիրելի եղած են , և երբ դժբաղդաբար կը բաժնուինք անոնց ի- , մեր սրտին մէկ մասը ակամայ անոնց մէջ կը թողունք :

Այն զեղեցիկ դաւիթին մէջ ծառաները ուրախ և զուարժ
կ'երթային ու կու զային :

Ոմանք խոչակերպցի սպասաւորներն էին, որոնք երկար ժա-
մանակէ ՚ի վեր այս տաճը մէջ բնակածի պէս՝ առջի իրիկու-
նէն զարդարուած տանդուխներէն արագութեամբ կ'ելնէին ու
կ'իջնէին. ոմանք կառակայանները լցուած էին, ուր կառ-
քերուն սպասները թուաչամարով կը զետեղէին, և կարծես
յիսուն տարիէ ՚ի վեր նոյն պաշտօնին մէջ հաստատուած
էին. ախոռներուն մէջ ձիերը վրնջելով ձիադարմաններուն
կը պատասխանէին, որոնք ծառայի մը իւր տիրոջը խօսեցած
կ'երպէն շատ աւելի մեծ յարդանօք անոնց հետ կը խօսէին :

Գրքատունը երկու մասի բաժնուած էր սենեկի մը երկու
կողմերը, և գրեթէ երկու հաղար հատոր կը պարունակէր:

Նոր վիպասանութեանց համար մասնաւոր խորշ մը սահմա-
նուած էր, և առջի իրիկունը մամուլէ ելածն անդամ իւր
տեղը դրուած էր. ամենքն ալ կարմիր պատեանով և ոսկե-
զօծեալ փառաւոր կազմով կը փայլէին :

Տան միւս կողմը գրքատան քովը ծաղկանց ջերմանոցը կը
դանուէր, որ Ճարտնական մեծ ամաններով հաղուագիւտ բոյ-
սերով զարդարուած էր, և այն ջերմանոցին մէջ տեղը, որ
միանդամյն մարդուս տեսութիւնը և հստառութիւնը կը զու-
արճացընէր, գնդախաղ մը կար, որ կարծես թէ առ առա-
ւելն ժամ մը առաջ խաղացողներէ թողուած էր՝ գնտակները
կանաչ ասուիին վրայ ցրուած :

Պէրթուչիօ այն տանը մէջ միայն սենեկի մը ձեռք չէր
դպցուցած :

Ծառաները հետաքրքրութեամբ և Պէրթուչիօ երկիւղով
այն սենեկիին առջեւէն կ'անցնէին, որ առաջին դստիկոնին ձախ
անկիւնը կը դտնուէր, և ուր մեծ սանդուխէն կ'ելնուէր ու
դաղոնի սանդուխէն անկէ վար կ'իջնուէր:

Ժամը Ճիշդ հինդին կոմոը Ալիին հետ կառքով Օթէօյլի
տան առջեւ հասաւ:

Պէլթուչիօ անհանդստութեամբ խառն անհամբերութեամբ
մը անոր գալստեան կ'ըսպասէր . իւր ըրածներուն վրայ անոր
զոհունակութիւնը ընդունիլ յուսալու ժամանակը կը վախ-
նար միանգամայն անոր յօնքերուն դժղոհութեան կնճիռէն :

Մօնթէ - Քրիսթօ զաւիթը իջաւ , բոլոր տան մէջ շրջեցաւ ,
և պարախզին մէջ պասյում մը ըրաւ բայց առանց խօսք մը խօ-
սելու , և առանց զոհունակութեան կամ դժղոհութեան փոք-
րիկ նշան մը յայտնելու :

Միայն իւր պառկելու խուցը մանելով , որ այն զոց սենե-
կին գիմացը կը դառնուէր , ձեռքը դէպ 'ի վարդափայտէ փոքր
պահանոցի մը զգոցցը երկնցուց ըսելով .

— Այս զգոցը ձեռնոց գնելու կը ծառայէ :

— Բայց ք , աէր իմ , պատասխանեց Պէլթուչիօ ու բախու-
թեամբ , և ուղածնիդ պիտի զտնէք — :

Ուրիշ պահանոցներու մէջ ալ կոմսը իւր յուսացածները
դտաւ , այսինքն սրուակիներ , զլանիկներ և ականակապ դարդեր :

— Աղէկ — , ըստ :

Եւ Պ . Պէլթուչիօ սիրաը ուրախութեամբ լցուած հեռա-
ցաւ անոր առնեէն , այնչափ այս մարդուն ազդեցութիւնը
զինքը շրջապատողներուն վրայ մեծ , զօրաւոր և իրական էր :

Ժամը վեցին՝ տան դրան առնել ձիռւ մը ունաձայնը լսուեցաւ :

Հեծելազօրաց մեր հարիւրապեան էր ան , որ իւր Մերքուրի
եկեր էր :

Մօնթէ - Քրիսթօ ժպիտ 'ի դէմօ դրան սանդուխին վրայ
անոր կ'ըսպասէր :

— Ասրահով եմ որ ամենէն առաջ ես եկած եմ , ըստ
Մորէլ . զիտմամբ այսպէս ըրի որ ամենէն առաջ վայրիկան
մը ձեզի հետ առանձին զանուելու կարսղ ըլլամ : Ա՛հ , բայց
այս ի՞նչ զեղեցիկ տեղ է հսու . ըսէք ի՞նձ , կոմս , ձեր ծա-
ռաները հագ պիտի տանի՞ն ձիոյս :

— Անհոգ եղիք , սիրելիդ իմ Վաքսիմիլիկն . ձիադարմա-
նութիւնը քաջ կը հանչնան :

— Ըսել կ'ուզեմ թէ պէտք է որ յարդով շփեն զան :
Գիտնայիք, պարոն, թէ ինչ արշաւանքով եկաւ . Ճշմարիտ
թաթառ մ'է ձիս :

— Հինդ հաղար ֆրանքնոց ձին անշուշտ այնպէս կ'ըլլայ ,
ըսաւ Մօնթէ-Քրիսթօ հայրական ձայնիւ :

— Կը ցաւիք դումարին վրայ , ըսաւ Մորէլ իւր համար ~
ձակ ժպիտովու :

— Ե՞ս, ամենեին . ընդ հակառակն շատ պիտի ցաւէի եթէ
ձեր ձին աղէկ ըլլար :

— Զիս այնչափ ընտափ է , սիրելիդ իմ կոմս , որ պարոն
Շաթօ-Ռլիո՝ Գաղղիոյ ամենէն քաջ ձիավարը և ու . Տըպրէ՝
որ տէրութեան պաշտօնէից արարացի ձիերը կը հեծնայ , այս
միջոցիս ետեէս կը վազեն , և ինչպէս կը տեսնէք՝ քիչ մը
ետ մնացած են , թէե տիկին Տանկլարի ձիերը ունին , որոնք
այնպիսի արշաւանօք կը քալեն որ վեց մղոնը ժամուան մը
մէջ առնելու կարող են :

— Ուրեմն ձեր ետեէն անոնք ալ կու դան :

— Այո , աշա եկան — :

Իրօք, նոյն վայրկենին երկու ծխաշունչ կառաձիերէ լը ~
ծեալ կառք մը և երկու շնչասպառ . հեծեալ ձիեր տան վան ~
դակաց առջել հասան , որոնք անմիջապէս բացուեցան :

Կառքը ինչպէս նաև երկու ձիաւորները իսկոյն ներս մըտ ~
նելով ներքին գրան սանդուխին առջել կեցան :

Անմիջապէս Տըպրէ ձին իջաւ , և կառքին դոնակին առ ~
ջին վազեց . ձեռքը տիկին Տանկլարին նուիրեց , որ կառքէն
իջնելու ժամանակը հշան մը ըրաւ անոր , զոր Մօնթէ-Քրիս ~
թոյէն զատ մէ կը չնշմարեց :

Բայց կոմսին աչքէն բան մը չեր փախչեր , և այն նշանին
հետ սպիտակ փոքրիկ տոմսակի մը փայլիլը տեսաւ , որ նշա ~
նին պէս աննշմարելի եղաւ , և այնպիսի դիւրութեամբ տի ~
կին Տանկլարի ձեռքէն դիւանադպրին ձեռաց մէջ սահեցաւ ,
որ այնպիսի պարագ աներու մէջ իրենց ընթացքին սովորու ~
թիւնը կը յայտնէր :

Տիկինէն ետեւ սեղանաւորը իջաւ, որ կառքէն դուրս ել-նելու տեղ զերեզմանէն ելածի չափ դունամեալ էր:

Տիկին Տանկլար իւր բոլորտիքը հարեւանցի և հետազօտիչ նայուածք մը շրջեց, որուն նովատակը միայն Մօնթէ-Քրիսթօ հասկըցաւ, և դաւիթը, սիւնաբակը ու տան Ճակատը գիտելէն ետեւ՝ իւր սրտին թեթև յուզմունքը զսպելով, որ անտարակոյս իւր դիմաց վրայ պիտի երեւէր եթէ իւր դիմաց ներելի ըլլար գեղնելու, սանդուխէն վեր ելաւ Մորէլին ըսելով.

— Պարոն, եթէ բարեկամն ըլլայիք, պիտի հարցընէի թէ կրնաք ձեր ձին ինձ ծախէլ — :

Մորէլ այնազիսի կերպով ժպտեցաւ որ իւր դժկամութիւնը կը ցուցընէր, և Մօնթէ-Քրիսթոյի երեսը նայեցաւ որպէս զի իւր շփոթութենէն ազատէ զինքը:

Կոմսը անոր միտքը հատկըցաւ:

— Տիկին, պատասխանեց, այդ հարցումը ինձի չէք ուղղեր:

— Զեղմէ բան մը խնդրել կարելի չէ, պարոն, ըստ տիկինը, ըստ որում ապահով է մարդ որ պիտի ընդունի Ռւսակի պարոն Մորէլին էր խօսք:

— Դժբաղդաբար, կրկնեց կոմսը, ես քաջ դիմեմ որ ու Մորէլ չկրնար իւր ձին ձեզի տալ, ըստ որում իրեն անպատճութիւն մը պիտի ըլլայ:

— Ի՞նչ կերպով:

— Մերեւն վեց շաբաթուան մէջ նուածելու դրաւ գրածէ: Անշուշու կը հասկընաք, տիկին, որ եթէ դրաւ գրուած ժամանակէն առաջ իւր ձեռքէն հանէ զան, ոչ միայն զրաւը պիտի կորսնցընէ, այլ և պիտի ըսեն թէ վախցաւ. և այս պիտի տարաձայնութեան երբէք չկրնար համբերել հեծելազորաց հարիւրապետ մը, եթէ զեղանի կնոջ մը մտային հաճոյքը կատարելու համար իսկ ըլլայ, որ ըստ իս աշխարհիս ամենէն աւելի նուիրական բաներէն մէկն է:

— Կը տեսնէք, տիկին . . . , ըստ Մորէլ միանդամայն եւ բախտաղէտ ժպիտ մը ուղղելով կամսին:

— Ինձ այնպէս կ'երեի , ըստ Տանկլար շարամիտ ժողիտի մը տակ կեղծեալ նեզսիրա ձայնով մը , թէ ունեցած ձիերդ բաւական են — :

Տիկին Տանկլար սովորութիւն չունէր այսպիսի յարձակում ները անպատասխանի թողուլ , սակայն 'ի մեծ զարմանս երիտասարդաց՝ շլսել ձեւցուց և չըատասխանեց անոր :

Տիկնօջ անսովոր նուաստութիւնը յայտնող այս լոռութեան վրայ Մօնթէ-Քրիսթօ ժպակելով՝ 2ինաստանի երկու յաղասարակեայ . խիստ մեծ թաղարհներ կը ցուցընէր անսր , որոնց վրայ այնպիսի հաստութեամբ և այնպիսի աշխատութեամբ ծովային կանաչեղէններ օձագտոյտ պատած էին , որ միայն քնական երկրի վրայ կարելի է տեսնել այն բեղդնաւորութիւնը , ոյժը և հանձարը :

Տիկինը զմայլեր էր :

— Այս թաղարներուն մէջ Թիվյլերի պարտիզնին շաղանակենի մը կարելի է տնկել . ի՞նչովէս այս մեծութեամբ աշմաններ եփել կարող եղեր են :

— Պէտք չէ որ այդ բանը մեզի հարցընէք , տիկին , ըստ Մօնթէ-Քրիսթօ , մենք որ փոքրիկ արձաններ և դիւրարեկ ապրուիններ կը շինենք , ուրիշ դարու աշխատութիւն մ'է այս , երկրի և ծովու ողիներէ շինուածի պէս զործ մը :

— Ի՞նչովէս և ո՞ր դարու մէջ եղած է այդ բանը :

— Զեմ զիտեր . միայն լսած եմ թէ 2ինու կայսր մը մասնաւոր բուռ մը շինել տուած էր , որուն մէջ այս ամաններ բուն նման տասն երկու հատ մի առ մի եփել տուեր էր : Երկուրը կրակին սաստկութենէն խորտակուեցան , և մնացեալ ները երեք հարիւր գրկաչսփ խորութեամբ ծովուն մէջ իջեցուցին : Ծովը զիտնալով անոնց ինչ նպատակաւ իւր ծոցը յանձնուիլը , իւր պատաղիչ տունկերը անոնց վրայ նետեց , իւր բուստերովը շրջանակեց և իւր խեցիներովը գրուալեց զանանք . այս ամենը երկու հարիւր տարի ծովուն անլուր խորութեանց տակը անոնց վրայ ծեփուած և պնդացած մնացին ,

ըստ որում յեղափոխութիւն մը պատահէ լով՝ այս փորձը ընկէ ուզող կայսրը կարուսեցաւ, և միայն այս ամաններուն եփուելուն և ծովաւն խորութեանցը մէջ դանուելուն արձանագրութիւնը մնաց: Երկու հարիւր տարի ետքը՝ այն արձանագրութիւնը դառան, և խորհեցան այն ամանները ծովուն մէջն հանել, Աւստի զանոնիք դանելու համար յատուկ շինուած մեքենաներով այն խորշը զրկուեցան, որու մէջ ամանները նետուած էին. բայց տասնէն միայն երեքը դառան, մեացեալները ալիբներէն խորտակուած և ցրուած էին: Սիրելի են ինծի այս ամանները, քանզի շատ անգամ այնպէս կ'երեակայեմ թէ այլանդակ, սոսկալի, և միայն սուղակներէ տեսնուած դաղանի հրէշներ իրենց մուժ և պաղ նայուածքը ապշութեամբ ասոնց վրայ յարած են, և անհամար ձուկեր իրենց թշնամիին հալածանքէն փախչելու համար ասոնց մէջ պատասանած են — :

Այն միջոցին Տանկլար, որ հետաքրքրական բանները այնշափ սիրող չէր, գեղատեսիլ նարնջենիի մը ծաղիկները մեքենապէս մի առ մի կը փետակէր. երբ նարնջենիէն ձանձրացաւ կողենիի մը մօտեցաւ, սակայն կողենին, որ նարնջենիէն նուազ համբերող էր, նախատահօք վիրաւորեց զան:

Այն ատեն սեպուհէ սարգուաց և երազէ մը սթափածի պէս աշքը շիեց:

—Պարոն, ըստ անոր Մօնթէ-Քրիսթօ ժպաելով, դուք որ նկարները կը սիրէք և այնշափ ընտիր նկարներ ունիք, խմբներս դիտելու չեմ առաջարկեր ձեզ: Այսու ամենայնիւ հոս քանի մը պատկերներ ունիմ, որոնք ձեզ ներկայացուելու արժանի են, ինչպէս են Հոսպէմայի երկու նկարները, մէկ Բոլ Բոթէրի, մէկ Միէրիսի, երկու Ժէրար Տովի, մէկ Բաֆայէլի, մէկ Վան Տիքի, մէկ Զուբալարնի և Մուրիլյի երկու կամ երեք զործերը:

—Տեսէք, ըստ Տըպրէ, աչա Հոսպէմայի մէկ զործը, զոր ես կը ճանչնամ:

- Ատոյդի կ'ըսէք :
- Այս , Մուսարանին մէջ դրուելու առաջարկութիւնը ըրին առողջապահութեան համար :
- Քայլց կարծեմ Մուսարանը չունի այս նկարը , համարակակեցաւ ըսել Մօնթէ-Քրիսթօ :
- Ոչ , ըստ որում շուղեց դնել դայն :
- Ի՞նչ է պատճառը , հարցուց Շաթօ-Ռունօ :
- Վասն զի կառավարութիւնը բաւական ստակ չունի :
- Ա՛յ , ներեցէք , պարոն , ըստ Շաթօ-Ռունօ , ուժ տարիէ ՚ի վեր ամեն օր այս խօսքերը կը լսեմ , և տակաւին չեմ կրնար սովորելու :
- Գուք ալ կը սովորեք , ըստ Տըպրէ :
- Չեմ կարծեք , պատասխանեց Շաթօ-Ռունօ :
- Պ . Պաթըոլոմէօ Գավալլանթի դնդապետը և Պ . Անտրէա Գավալլանթի դերակոմունը եկան — , պոռաց Պաթիսթէն :
- Տարաղադրոթի մը ձեռքէ նոր ելած սև սնդուսէ փողակառ մը կապուած , մօրուքը նորցուցած , մոխրագոյն ընչացքով , անվրէտ աչքով , երեք շքանշաններով և հինգ խաչով զարդարուած դնդապեաի թիկնոցով մը , վերջապէս հին զինուորականի մը անստղիւտ հագուստով ներկայացաւ Պաթըոլոմէօ Գավալլանթի դնդապետը , այն խանդակաթ հայրը , զոր արդէն կը ճանշնանք :
- Անոր հետ՝ կը յառաջանար բոլորովին նոր զգեստներով զարդարուած Անտրէա Գավալլանթի դերակոմունը , այն յարագելի զաւակը , զոր նոյնպէս արդէն կը ճանշնանք :
- Երեք երիտասարդները իրարու հետ կը խօսակցէին . իրենց նայուածքը մերժ հօր և մերժ որպւայն վրայ կը դարձընէին , և բնականապէս վերջինը աւելի մանրամասնաբար կը դիմէին :
- Գավալլանթի , ըստ Տըպրէ :
- Ի՞նչ դեղեցիկ անուն մ'է , ըստ Մորէլ :
- Այս , ըստ Շաթօ-Ռունօ , իտալացիները զեղեցիկ անուններ կը կրին , բայց դէշ կը հաղուին :

— Ամենեին բան չես հաւնիր, Շախո-Ռընօ, կըկնեց Տըլրէ . երիտասարդին զգեստները վարպետ գերձակի զործ և բոլորովին նոր են :

— Աչա այս պատճառաւ է որ ես աւ չեմ հաւնիր . այս պարոնը այնպիսի կերպարանք մը ունի որ կարծես թէ այս օր առաջին անգամն է որ զգեստ կը հազնի :

— Ավ են այս պարոնները, հարցուց Տանկլար Մօնթէ-Քրիսթոյ կոմիին :

— Գավալլանթիներու անունը չլսեցիք :

— Միայն անոնց անունը լսեցի և ոչ ուրիշ բան :

— Ո՛չ, ստոյդ է, Խտալիոյ մեր աղջուականութեանց վրայ աեղեկութիւն չունիք . Գավալլանթի ըսելը իշխաններու ցեղէ ըսել է :

— Հարստութիւննին ի՞նչալէս է, հարցուց սեղանաւորը :

— Անհաւատալի կերպով հարուստ են :

— Ի՞նչ զործ կ'ընեն :

— Առանց յաջողելու հարստութիւննին սպառելու փորձեր ի՞լրնեն : Անցեալ օր զիս աեմնելու դալով՝ ձեր վրայ վարկ ունենալին խմացուցին ինձ, և ես ձեզի համար զանոնք չոս հրաւիրեցի ու հիմա պիտի ներկայացընեմ ձեզ :

— Ինձ այնուհետ կ'երեկի թէ խիստ մաքուր Գաղղիարէն կը իսուին, ըսաւ Տանկլար :

— Որդին կարծեմ Գաղղիոյ հարաւային կողմը, Վարսի լիոյ մէջ կամ անոր չըջակաները վարժարանի մը մէջ կրթութիւնը սահցած է : Քիչ մը եռանդոստ պիտի դանէք զան :

— Ի՞նչ բանի, հարցուց տիկին Տանկլար :

— Գաղղիացի կանանց համար, տիկին . կ'ուզէ անշուշտ Քարիզէն կին մասնութ :

— Ի՞նչ աղւոր սրոշում մ'է ըրեր —, ըսաւ Տանկլար ու մերը բարձրացընելով :

Տիկին Տանկլար խը էրկան երեսը նայեցաւ այնպիսի նայուածքով մը, որ ուրիշ որ և է ժամանակ մըրկի մը զուշակութիւնն էր . բայց երկրորդ անգամ լոեց :

— Սեպուհը խիստ ախուր կ'երե այսօր, ըստ Մօնթէ-Քրիսթօ տիկին Տանկլարին, արդեօք զինքը աէրութեան պաշտօնեալ ընել կ'ուղեն:

— Աչ, չեմ դիտեր, բայց դիացածս սա է որ արժէթղթոց խաղը խաղալով անշուշո մեծ զումար մը կորսնցուցած է և չդիտեր թէ որու հետ կոռի ի:

— Պ. և տիկին աը Վ.իլքֆօրը եկան —, պոռաց Պաթիսթէն, Այս երկու անձերը ներս մտան:

Պ. մը Վ.իլքֆօր թէե ինքզինքը զսպելու համար մեծ ջանք մը կ'ընէր, սական յայտնի այլայլած էր. Մօնթէ-Քրիսթօ անոր ձեռքը բոնած ատենը զգաց որ կը դռղար:

— Առողիւ միայն կիները ինքզինքնին զսպելու կերպը զիտեն —, ըստ ինքնիրեն Մօնթէ-Քրիսթօ՝ տիկին Տանկլարի նայելով, որ թագաւորի զործակալն կը մպտէր և անոր կինը կը համբուրէր:

Ըստջին ողջուններէն ետե՝ կոմսը Պէրթուչիօն տեսաւ, որ մինչեւ այն ատենը իւր զործոց զբաղած ըլլալով, հիւրերը զանուած սրահին քովի փոքրիկ դահլիճը կը մտնէր:

Կոմսը անոր մօտեցաւ:

— Ի՞նչ կ'ուղես, Պ. Պէրթուչիօ, ըստ:

— Զեր Վ.սեմաթինը հիւրերուն թիւը չըստ ինձ:

— Այս, ստոյդ է:

— Քանի՞ հողւոյ համար սեղան պիտի դրուի:

— Եկու, գուն անձամբ համրէ:

— Ամն մարդ եկած է, տէր իմ:

— Այս — :

Պէրթուչիօ կիսաբաց դոնէն իւր նայուածքը ներս շըջեց:

Մօնթէ-Քրիսթօ ուշադրութեամբ անոր նայեցաւ:

— Ավ Աստուած իմ, պոռաց զործակատարը:

— Ի՞նչ կայ, հարցուց կոմսը:

— Այն կինը . . . այն կինը . . . :

— Ա՞ր կինը :

- Աս խարտեաշ կինը , որ սպիտակ շրջադղեստ և այն շափ ադամանդներ կը կըէ . . . :
- Տիկին Տանկլարը :
- Ընունը չեմ զիտեր , բայց ան է և սկարոն , այն կինն է :
- Ա՞ր կինը :
- Պարտէղին կինը , այն որ յղի էր , և սպառակլով կ'ըստասէր . . . — :
- Պէրթուչիօ բերանը բաց , դոյնը նետած և մազերը քըստմած մնաց :
- Արմէ կ'ըստասէր — :
- Պէրթուչիօ առանց սրատասիսաննելու , մատովը Ախլօֆօրը ցուցուց դողցէս այն շարժումով , որով Մաքութիթ գանձոն ցուցուց :
- Ո՛չո . . . , մըմնջեց վերջապէս , իը տեսնէք :
- Զով :
- Զան :
- Թաղաւորի դործալաւ ու . աը Ախլօֆօրը , անշուշտ կը տեսնէմք :
- Բայց ես չմոցուցի՞ զան :
- Կարծեմ թէ խենթութիւնդ կը բռնէ , սիրելիդ իմ ու . Պէրթուչիօ :
- Երգեօք չմոան :
- Աը տեսնես որ մեռած չէ . փոխանակ քու հայրենակ ցացդ սովորութեան համեմատ վեցերորդ և եօթներորդ ձախ կուշախն մէ ջ տեղը զարնելու , աւելի վեր կամ աւելի վար դարձած ես . կառավարութեան մարդոց հոգին իրենց մարմուն չետ դամուած է , և կամ սպամածներուդ մէկն ալ ճշմարիս չէ . երեակայութեանդ մէկ երազը , մասցդ մէկ ցնորքն է , անշուշտ վրէժինդրութիւնդ աղէկ չմարսելով քնացած պիտի ըլլաս . ստամոքսիդ վրայ ծանրացած պիտի ըլլայ այն , և ցնորք մը ունեցած ես և ոչ ուրիշ բան : Հանդարտէ ու քեմն և սկսէ համրել . ու . և տիկին Ախլօֆօր՝ երկու , ու .

Ե տիկին Տանկլար՝ չորս, Պ. Շաթօ-Ռընօ, Պ. Տըսլրէ, Պ. Մորէ և եօթը, Պ. Պարմուլոմէօ Գավաղանթի զնդապետը՝ ութը:

— Ութը ուրեմն, կրինեց Պէրթուչիօ:

— Կեցիր, կեցիր, ո՞րշափ կ'արտօրաս երթալու, ի՞նչ զարմանալի մարդ ես . սեղանակիցներէս մէկը մոռցար: Քիչ մը ձախ կողմը նայէ . . . : Պ. Ընտրէա Գավաղանթին, սե թիկ նոցով երխոտասարդը չամրեցիր, որ Մուրիլոյի նկարը կը դիմէ, ահա գարձաւ — :

Այս անդամ Պէրթուչիօ ուղեց ձայն մը հանել, բայց Մօնթէ-Քրիսթոյի նայուածքը անոր շրթանց վրայ լուցուց զայն:

— Պէնէտէթթօ, մըմջեց զործակատարը հեղձեալ ձայնիւ, ով աղէտիս:

— Ժամը վեց ու կէս կը զարնէ, Պ. Պէրթուչիօ, ըստ կոմու խստութեամբ մը . սեղան նստելու համար հրաման ըրած ժամս հասած է . դիտես որ սպասելը չեմ սիրեր — :

Եւ Մօնթէ-Քրիսթօ սրահը մտաւ, ուր իւր հիւրերը իրեն կ'ըսպասէին, ի՞նչ առեն և Պէրթուչիօ պատերոն կոթընելով սեղանատունը վաղեց:


Հինգ վայրկեան ետքը սրահին երկու դռները բացուեցան:

Պէրթուչիօ ներկայացաւ, և Շանթիլի Վաթէլի ոլէս վերընին և դիւցազնական ջանք մը ընելով, — Սեղանը պատրաստէ — , ըստ:

Մօնթէ-Քրիսթօ իւր թեր տիկին Ակաֆօրի ներկայացուց:


— Պ. տը Ակաֆօր, ըստ, կ'աղաչեմ շնորհք ըրէք թեւ ւերնիդ տիկին Տանկլարի ներկայացընելու — :

Ակաֆօր հնագանդեցաւ, և ամեն մարդ սեղանատունը անցաւ:



ԳԼՈՒԽ Գ.

ՃԵՅՔ


Յազար էր որ կերակուրի սենեակին անցնե-
լով մի և նոյն զգացումը ամեն սե-

զանակցաց սիրտը կը շարժէր :

Կը հարցընէին թէ ինչ
 դարմանալի ազդեցութիւն մը զիրենք ամնքնին այն տանը
 մէջ միացուցեր էր . սակայն իրենցմէ ոմանք որչափ և այս
 պատահման վրայ զարդացած էին և անհանդիստ կ'ըլլային ,
 սակայն աւելի կը բազձային հօն չգտնուիլ :

Այսու ամնայնիւ կոմսին հետ նոր ստացուած յարաբերու-
 թիւնները , անոր տարօրինակ և մնացեալ կացութիւնը , և
 անծանօթ ու զողցես առասպելական հարստութիւնը տղարսք
 կը գնէին մարդոց զգուշաւոր ըլլալ , և կանանց՝ օրէնք մը որ
 իրենց ընդունելութիւն տուող կին չեղած այն տունը բնաւ
 չմանեն . բայց սակայն մարդիկ իրենց զգուշութիւնը և կա-
 նայք իրենց պատշաճութիւնը զանց ըրեր էին , և հետաքըր-
 քրութիւնը իւր անդիմադրելի խթանովը զանոնք դրդելով ,
 ամեն բանի յաղթեր էր :

Գավարլանթիները անզամ , հայր և որդի , մէ կը իւր խստու-
 թեան և միւսը իւր անհոգութեան հակառակ՝ զարմանքի մէջ
 կ'երեէին թէ ինչպէս այնպիսի մարդու մը տան մէջ , որուն
 նպատակը չէին կրնար հասկընալ , այնպիսի մարդոց հետ կը
 դանուէին , զորոնք առաջին անդամ կը տեսնէին :

Տիկին Տանելլար իւր օրուն մէջ շաբժում մը զգաց տիրունելով որ Պ. Ա.իլլոֆօր Թօնթէ-Քրիսլոյի առաջարկութեան վրայ իրեն կը մօտենամք իւր թեր ներկայացընելու , և պարոն Ա.իլլոֆօր իւր թերին վրայ տիկնոջ թերին հանդչիլը զգալով սակի ակնոցներուն տակ իւր աշաց այլայլութիւնը զգաց :

Այս երկու շարժումներէն մէկն ալ կոմին աչքէն փախած չէր , և այս աեսարանը դիտող մը անձանց այս միաւորութեան մէջ մեծ յարաբերութիւն մը պիտի տեսնէր :

Պ. Ա.իլլոֆօրի աջ կողմը տիկին Տանելլար կը դանուէր և ձախ կողմը Մորէլ :

Կոմսը տիկին Ա.իլլոֆօրի և Տանելլարի մէջ տեղը նստած էր :

Սեղանին միւս մասը բոնած էին Տըգրէ երկու Գալիալ դանթիներուն մէջ տեղը , և Ծաթօ-Ռընօ՝ տիկին Ա.իլլոֆօրի և Մորէլի մէջ տեղը ,

Ճաշը խիստ փառաւոր պատրաստուած էր : Թօնթէ-Քրիսլո չանացեր էր Բարիզեան սովորութեան հակառակ ընթացք մը ունենալ , և կերակուրները աւելի իւր սեղանակիցներուն հետաքրքրութիւնը շարժելու քան թէ անոնց ախորժանաց համեմատ շինւած էին :

Գրեթէ Արեւելեան խնջյը մ'էր որ իւր հիւրերուն կ'ընծայէր , բայց աւելի Արարացի վհաւեկնելու խնջյից կը նմանէր :

Աշխարհիս չորս կողմներէն եւրոպիոյ առատութեան եղջիւրին մէջ անարատ և քաղցրահամ թափուած ամեն պտուղները Զինի և Ճաբոնի ամաններու մէջ ըրդանե կուտուած էին :

Գեղափետուր հաղուադիւտ թոշոնները , արծաթ պնակներու վրայ գրուած զարմանալի ձուկերը , իրենց տեսքովը դինիին համը աւելի ախորժելի երեցընող տարածե սրուակներու մէջ լցուած՝ Արշիպեղադոսի , Փոքր Ռսիոյ և Բարեյուսոյ ամեն անսակ դինիները՝ Արիկիոսի իւր սեղանակցաց ըրած հանգէսներուն մէկուն պէս հեաղչետէ սեղանը բերուեցան և այն Բարիզեաններուն առջելը գրուեցան , որոնք աղէկ կը հասկընային թէ առաջ անձի ճաշի մը համար կա-

րելի էր հաղար Լուի ոսկի ծախք ընել այն դաշտմբ որ ըստ Կղէսպատրի կ'ըրակուրը մարդարանայ ըլլար և ըստ Կօրան տր Մէտիսիի՝ ըմպելիքը հալած ոսկի:

Մօնթէ-Քրիսթօ ամենուն վրայ զարմանք մը նշարելով՝ սկսաւ ծիծաղիլ և բարձր ձայնիւ ծաղրել:

— Պարոններ և տիկնայք, ըսաւ, անշուշտ դուք ալ համափառ էք ինձ, որ մարդս հարստանալով աւելի անօդուս բաներու պէտք ունի: Ո՞ր բանն է որ զմեզ կը հիացընէ, եթէ ոչ այն որ չենք կրնար հասկընալ. ո՞ր բանը աւելի կ'ուղենք ստանալ. անշուշտ այն որ չե՞ք կարով ձեռք ձգել: Երդ անհասկանալի բաներ տեսնելը, և ստանալը անկարելի եղածները ձեռք ձգելը իմ բոլոր կենացս զբաղմոնքն եղած են: Երկու միջոցաւ իմ նպատակիս կը հասնիմ, սաակով և կամքով: Օրինակի համար՝ մոռյին հաճոյք մը կատարելու համար ետեկ եղած ժամանակս՝ նոյն յարատեռութիւնը 'ի դորձ կը գնեմ, զոր դուք, Պ. Տանկլար, երկաթուղայ դիմը ստեղծելու, դուք, Պ. Վիլլֆօր, մարդ մը մահուան դատապարաելու, դուք, Պ. Տըպրէ, թագաւորութիւն մը խաղաղընելու, դուք, Պ. Շաթօ-Ռընօ, կնոջ մը հաճելի բւշալու, և դուք, Մորէլ, մ. կուն հեծնել չկցած ձին նուաճելու համար 'ի դորձ կը գնէք: Աւստի օրինակի համար, նայեցէք այս երկու ձուկերը, որոց մ. կը Բէթրզպուրկէն յիսուն մղոն և միւսը Կարոլիէն հինգ մղոն հեռու ծնած են. միթէ զանոնք մէկ սեղանի վրայ միացընելը զուարձութիւն մը չէ:

— Արոնք են այդ երկու ձուկերը, հարցուց Տանկլար:

— Եհաւասիկ Պ. Շաթօ-Ռընօ, որ Առւսիա բնակած է, մէկին անունը պիտի տայ ձեզ, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ, և ահա Պ. Գավալլանթի դնդապետը, որ Կտալցի է, միւսին անունը կրնայ տալ:

— Թառափ ըսուած ձուկն է այս կարծեմ, ըսաւ Շաթօ-Ռընօ:

— Ճիշդ այն է:

— Աս ալ քարադիաց ձուկն է , եթէ չեմ սխալիր , ըստ
Գավալդանթի :

— Ճիշդ է . հիմա , ող . Տանկլար , հարցոցեք այս երկու
պարոններուն թէ այս ձուկերը ո՞ւր կ'որսացուին :

— Թառափները միայն Վաղկայի մէջ կը դանուին , ըստ
Շաթօ - Ռոբնո :

— Միայն Ֆուզարօ լիճը կը ճանչնամ , ըստ Գավալդան-
թի , որու մէջ այս մեծութեամբ քարադիաց ձուկեր դանուին :

— Եւ ստուգիւ մէկը Վաղկայէն և միւսը Ֆուզարօ լիճէն
եկած է :

— Ընկարելի է , պոռացին միաձայն ամեն սեղանակիցները :

— Եհա զիս զուարձացընողն ալ այս է , ըստ Մօնթէ-
Քրիսթօ . ես ալ ներսնի ոկէս անուբելէն իւ քնարելք , և աչա-
դուք ալ այս միջոցիս նոյնպէս կը զուարձանաք . այս պատ-
ճառաւ՝ ասոնց միսը , որ իրօք գուցէ անուշ չուրի ձուկե-
կամ կարմրամիս ձուկէն համեղ շրլայ , բայց այս միջոցիս
խիստ ախորժահամ պիտի երեխ ձեզ . զանոնք ստանալը ան-
կարելի կ'երեկ ձեզ , բայց սակայն յայտնի կը տեսնէք որ
անկարելի բան չկայ :

— Բայց այս ձուկերը ի՞նչ կերպով Բարիկ փոխադրել կա-
րելի եղաւ :

— Ա՛չ , խիստ պարզ եղանակաւ . իւրաքանչիւր ձուկը մեծ
տակառի մը մէջ դնելով մէկը զետին եղէզներովն ու խոտե-
րովը պատսպարուած , միւսը լճին կնիւններովն ու բոյսերովը ,
և վրան դոց սայլով մը Բարիկ բերուեցան . այս կերպով
թառափը տասներկու օր և քարադիացը ութ օր ապրեցան , և
երկուքն ալ կատարեալ ողջ առողջ էին երբ խոհարարիս
ձեռքը հասան , որ պարտաւորեցաւ մէկը կաթի մէջ և միւսը
զինիի մէջ սպաննել : Զէք հաւատար , ող . Տանկլար :

— Գոնէ կը տարակուսիմ , պատասխանեց Տանկլար իւր
նենդ ամիս ժղիտովը :

— Պաթիսթէն , ըստ Մօնթէ-Քրիսթօ , միւս տակառնե-

բուն մէջ դեռ կենդանի մնացած միւս թառափն ու քարագիւացը հոս բերել տուր — :

Տանկլարի ապուշ աչքերը բացուեցան, և բոլոր սեղանակիցները զանոնք տեսնելու մեծ փափաք մը ցուցուցին :

Չորս ծառաներ ծովային բոյսե բով պատսպարուած երկու տակառներ բերին, որոնց իւրաքանչիւրին մէջ սեղանին վրայ եղած ձուկերուն նմանը կ'երերային :

— Ինչո՞ւ իւրաքանչիւր տեսակէն երկերկու հատ բերել տուիք, հարցուց Տանկլար :

— Վասն զի կրնար մէկը մեռնիլ, ըստ Մօնթէ-Քրիսթօ պարզութեամբ մը :

— Ստուդիւ զարմանալի մարդ մ'էք, ըստ Տանկլար . թող իմաստասէրները ուզածնին ըսեն, հարուստ ըլլալը մեծ բան է :

— Մանաւանդ այսպիսի զաղափարներ ունենալը, ըստ տիկին Տանկլար :

— Ո՛չ, այդ պատիւը ինձ մի տաք, տիկին. Հռոմայեցիք արդէն կը Ճանչնային այս եղանակը, և Պլինիոս կը պատմէթէ գերիները զլուխնուն վրայ կրնլով Օսթիայէն Հռոմ տեսակ մը ձուկեր կը տանէին, որոնք իւր նկարադ րութեանը նայելով՝ ոսկե ձուկը պիտի ըլլան: Զանոնք կենդանի ստանալը մեծ բան մ'էր, և անոնց մեռնիլը տեսնելը զուարձալի տեսարան մը. վասն զի մեռնելու ժամանակը երեք կամ չորս դոյն կը փոխէին, և զոլորչիացող ծիածանին նման իրենց ամեն դոյները կը լուծուէին . որմէ ետե խոհարարին կը յանձնուէին: Անոնց Ճղնաժամը յարդելի էր. Հռոմայեցիք զանոնք կենդանի տեսնել չէին ուզեր, և անոնց մեռեալը կ'անարդէին :

— Բայց Օսթիայէն Հռոմ հազիւ եօթը կամ ութ մղոն կայ, ըստ Տըպիրէ :

— Ստուդիւ, ըստ Մօնթէ-Քրիսթօ, բայց Վուկուզուսէն հաղար ութ հարիւր տարի ետքը դալուն արժանաւորութիւնը ինչ պիտի ըլլար, եթէ անորմէ աղէկ զործ չընէինք — :

Երկու Գավաղլանթիները աղջեալ մնացեր էին, ուակայն խոհեմութեամբ խօսք մը չէին խօսեր:

— Ասոնք ամենը դարմանալի բաներ են, ըստ Շամօ-Ռընօ. բայց Ճշմարիտ կ'ըսեմ զիս աւելի զարմացընողը ձեր հրամանները այսպէս շուտով կատարուած տեսնելն է: Այնպէս չէ, պարոն կոմս, այս տունը գնելնիդ հինդ կամ վեց օր չէ:

— Հազիւ թէ, ըստ ՄԾՆԹԻ-Քրիսթօ:

— Հաւաստի եմ որ ութ օրուան մէջ կատարեալ կերպարանափոխ եղած է. վասն զի եթէ չեմ սխալիր՝ մտնելու դուռը ուրիշ կողմ էր, և բակը քարայատակուած ու դատարկ էր, քանի որ այսօր բակին տեղ զեղատեսիլ մարդագետին մը կը տեսնեմ, որոնց շրջանակի ժառերը կարծես հարիւր տարեկան են:

— Ի՞նչ ընեմ. կանաչեղիններն ու ստուերը կը սիրեմ, ըստ ՄԾՆԹԻ-Քրիսթօ:

— Իրօք, ըստ տիկինն Ակլըֆօր, ասկէ առաջ փողոցին վրայ բայցուղ դռնէ մը տան մէջ կը մտնուէր, և իմ հրաշքով ազատած օրս աղէկ կը յիշեմ՝ փողոցին կողմէն զիս տան մէջ մտցուցիք:

— Այս, ակիկին, ըստ ՄԾՆԹԻ-Քրիսթօ. բայց անկէ ետքը աւելի յարմար տեսայ ուրիշ դուռ մը բանալ, ուրկից կառող ըլլամ Պուլոնի անտառը տեսնելու:

— Չորս օրուան մէջ, ըստ Մորէլ, հրաշք մ'է այս:

— Ատուղիւ, ըստ Շամօ-Ռընօ, հին տունին նորութիւն տալը հրաշք մ'է. ես զիտեմ որ այս տունը խիստ հին ենիստ տիսուր էր: Քանզի ասկէ երկու կամ երեք տարի առաջ երբ Պ. Աէն-Մէրան այս տունը ծախու հանեց, մայրս զիս զրկեց որ դամ աչքէ անցընեմ:

— Պ. Աէն-Մէրան կ'ըսէք, ըստ տիկինն Ակլըֆօր, բայց այս տունը ձեր գնելէն առաջ Պ. Աէն-Մէրանին էր, պարոն կոմս:

— կարծեմ թէ անորն էր , պատասխանեց Մօնթէ - Քրիսթօ :

— Ի՞նչպէս , կը կարծէք կ'ըսէք : Այս տունը որմէ դ'նել նիդ չէք գիտեր :

— Յիրաւի չեմ գիտեր . իմ ամեն զործերուս զործակատարս կ'ըզբաղի :

— Երօք տասը տարիէ 'ի վեր այս տան մէջ մարդ բնակած չէր , ըստ Ծաթօ-Ռորնօ , և իւր զոցւած վանդակապատ պատուհաններովը և փակեալ գոներովն ու խոտերովլ լցուած բակովը տիսուր կ'երեէք : Ստուզիւ եթէ թագաւորի զործակալի մը աներին տունը չըլլար , իրնար այնպիսի անիծեալ տուներէն մէ կը համարուիլ , որու մէջ մնձ մեղք մը զործուած է — :

Վիլլֆօր , որ մինչեւ այն միջոցին իւր առջել գրուած երեք կամ չորս բաժակ տարօրինակ զինիներուն ձեռք գպցուցած չէր , ըստ պատահման մէկը առաւ և 'ի մի ումազ պարագեց զայն :

Մօնթէ - Քրիսթօ վայրիեան մը սպասեց . և Ծաթօ-Ռունոյի խօսքերէն ետեւ տիրած լոռւթիւնը խղելով ,

— Զարմանալի բան , ըստ , պարոն սեպուհ , առաջին անդամ այս տունը մտած ժամանակս ես ալ նոյն կարծիքը ըրի , և այս տունը ինձ այն աստիճան տիսուր երեցաւ , որ եթէ զործակատարս զնած չըլլար՝ ամենեին պիտի չզայի բնակելու : Հաւանականաբար նենդաւորը պարզե մը ընդունած է նօտարէն :

— Հաւանական է , կակաղեց Վիլլֆօր ժպտելու փորձ փորձելով . բայց հաւատացէք որ տան ոյսպէս աւերիալ մնալուն յանցանքը խման չէ . ու . տը Աէն-Մէրան ուղից որ այս տունը ծախուի , քանզի իւր թոռան օժտին մէկ մասը կը կաղմէր , և եթէ տակաւին երեք կամ չորս տարի անբնակելի մնար , բոլորովին պիտի փլուէր — :

Այս անդամ Մորէլի զոյնն ալ նետեց :

— Այս տանը մէջ մասնաւորաբար սենեակ մը կար , շա-

բունակեց Մօնթէ-Քրիսթօ, ոչ, Տէր Աստուած, որ ըստ եւ քեռւթից խիստ պարզ սենեակ մ'էր, և միւս սենեկաց պէս դամասկեան կարմիր կերպասով զարդարուած, բայց չեմ զիշտեր ինչու ինձի խիստ աղէաալի սենեակ մը երեցաւ:

— Ինչո՞ւ, հարցուց Տըպրէ:

— Միթէ բնազգմանց պատճառը կրնայ դիացուիլ, ըստ Մօնթէ-Քրիսթօ. միթէ այնպիսի տեղեր չկան, ուր մեզ այն պէս կ'երեսի թէ բնականաբար տիրութեան օդ մը կը շընչենք. ինչո՞ւ, չենք դիտեր. միայն թէ մեր մասց մէջ զանազան կարծիքներ և յիշատակներ կը շլթայուին, որոնք զմեզ ուրիշ տեղեր և ուրիշ ժամանակներու կը տանին, բայց ուրիշէ անոնք մեր զանուած ժամանակներուն և տեղերուն հետ ամենելին յարաբերութիւն չունին: Այն սենեակը կանձ մարդէզուհւոյն կամ Տէտրմոնային սենեակը կը յիշեցընէր ինձ՝ Եկէք, տեսնէք, քանի որ Ճաշը լմնցուցինք, այն սենեակը ցուցընեմ ձեզ, և ետքը պարտէզը կ'իջնենք սուրճը խմելու. Ճաշէն ետե՛ տեսաբան մը պէտք է — :

Մօնթէ-Քրիսթօ իւր սեղանակցաց կամքը հարցընելու համար նշան մը ըրաւ:

Տիկին տը Ափլքֆօր ոտք ելաւ, Մօնթէ-Քրիսթօ նոյնը ընելու չսպասեց, և ամեն մարդ անոնց օրինակին հետեւցան: Ափլքֆօր և տիկին Տանկլար վայրկեան մը իրենց տեղը բեենեալ մնացին:

Պաղ, անձայն և ուսաած աչօք իրարու կամքը կը հարցընէին: — Լսեցիք, ըստ տիկին Տանկլար:

— Պէտք ենք երթալ — , պատասխանեց Ափլքֆօր ոտք ելնելով և իւր թեր անոր ներկայացնելով:

Ամեն մարդ հետաքրքրութենէ շարժեալ արդէն տան մէջ ցըռուեր էին. վասն զի անշուշտ կը մտածէին որ միայն այն սենեակը տեսնելու համար ոտք ելած չեն, և բնակարանին ամեն կողմը կը պտըտէին, զոր Մօնթէ-Քրիսթօ պալատ մը ձեացուցեր էր:

Վոնթէ - Քրիսթօ երկու ետ մատցողներուն սպասեց:

Երբ անոնք ալ սեղանտունէն դուրս ելան, կոսոը անոնց առջել անցաւ այսպիսի ժպիտով մը, որուն պատճառը եթէ հասկընային, իրենց մտնելու սենեկէն աւելի պիտի սոսկային անկէ:

Քրօք սկսան Արեելեան բազմոցներով և անկողնոյ տեղ խշտիներով ու կարասնեաց տեղ ծխափողերով և զէնքերով զարդարուած սենեակները, հին վարպետներու խիստ ընտիր պատկերներով ծած կուած սրահները, կամածին դոյներով, այլանդակ նկարներով, և հիանալի հիւսուածքով Զինու կերպասներէ կահուած գահլիճները պտըտիլ:

Վերջապէս այն համբաւեալ սենեակը հասան:

Նորանշան բան մը չկար հոն. միայն թէ սենեակը մութէ էր, թէ իրիկուն էր, և հին կ'երեւէր, ինչ ատեն միւս բոլոր սենեակները նորագուեր էին:

Այս երկու պատճառները իրօք բաւական էին սենելին տիսուր կերպարանք մը տալու:

— Ա՛յ, ըսաւ տիկին Վկիլքֆօր, իրօք վախնալու տեղ է եղեր — :

Տիկին Տանկլար ջանաց քանի մը խօսք կակազելու, զորոնք միայն ինքը լսեց:

Ամեն մարդ զանազան դիտողութիւններ ըրին, և վերջապէս հետեցուցին որ դամասկեան կարմիր կերպասով սենեակը իրօք տիսուր երեսյթ մը ունէր:

— Այսպէս չէ, ըսաւ Մոնթէ - Քրիսթօ, տեսէք սա անկողինը ինչ այլանդակ կերպով զետեղուած է, ինչ տիսուր և արիւներանդ վարպայրիներ ունի, և այս ներկախառն երկու նկարները, որոնք խոնաւութենէ գեղներ են, կարծես թէ իրենց զունատեալ շուրթերովն ու զարհուրեալ աշօքը կ'ըսեն. Տեսանք — :

Վկիլքֆօրի դոյնը կապարի դարձաւ, և տիկին Տանկլար կրակարանին քովը գրուած աթոռի մը վրայ ինկաւ:

— Ո՛չ, ըսաւ տիկին Ակլըֆօր ժամելով, ի՞նչպէս կը համարձակիք այդ աթոռին վրայ նստիլ, ուր գուցէ ոճիրը դորձուած է — :

Տիկին Տանկլար աշխուժիւ ոտք ելաւ :

— Ամեն բան չտեսաք տակաւին, ըսաւ Մօնթե-Քրիսթո :

— Ուրիշ ի՞նչ կայ, հարցուց Տըպրէ, որուն աչքէն փախած չէր տիկին Տանկլարի այլայլութիւնը :

— Այո, ուրիշ ի՞նչ կայ, հարցուց Տանկլար, վասն զի ըստուզիւ մինչև հիմա երեելի բան մը չտեսայ, ի՞նչ կ'ըսէք դուք, Պ. Գավալլանթի :

— Ո՛չ, մենք Բիղայի մէջ Ուկողինի աշտարակը ունինք, Ֆէրրարայի մէջ Թասսոյի բանտը և Ռիմինիի մէջ Ֆրանչէսքոյի և Բաօլոյի սենեակը :

— Այո, բայց այս փոքր սանդուխը չունիք, ըսաւ Մօնթե-Քրիսթո վարադոյրին ետին պահուած դուռը բանալով. տեսէք, և ձեր կարծիքը ըսէք ինձ :

— Այս ի՞նչ կամարաձեւ տիսուր սանդուխ մ'է, ըսաւ Շաթօ-Ռինո ծիծաղելով :

— Երօք, ըսաւ Տըպրէ, չեմ դիտեր թէ արդեօք Քիոսի դինին է որ ամեն բան այսպէս տիսուր կ'երեցընէ մեզ — :

Իսկ Մորէլ Վալանթինի օժտին խօսքը լսելէն 'ի վեր տըրտում կ'երեէր և ամենելին խօսք չէր խօսեր :

— Երեակայենք, ըսաւ Մօնթե-Քրիսթո, թէ Օթէլլօ մը կամ Կանժի ո՛ր և է աբրայ մը չարազուշակ և մըրկալի զիշեր մը այս սանդուխէն վար ի՞նած է ոճրալի բեռով մը, զոր եթէ ոչ Ասոուծոյ՝ դոնէ մարդոց աչքէն պահել ջանացեր է — :

Տիկին Տանկլար Ակլըֆօրի թեին վրայ կէս մը նուաղած երեցաւ, իսկ թաղաւորի դործակալը պատին կոթընելու ըստիսուեցաւ :

— Ո՛չ, տիկին, ըսաւ Տըպրէ, ի՞նչ ունիք, ի՞նչո՞ւ այդպէս կը դունատիք :

— Պատճառը յայտնի է, ըստ տիկին Վիլֆօր. պարոն կոմսը այնպիսի աշուղը պատմութիւններ կ'ընէ, որ անտարակոյս դմբու սոսկումէն մեոցընել կ'ուղէ:

— Այս, կոմս, ըստ Վիլֆօր, իրօք այս տիկինները կը վախցընէք:

— Ե՞նչ ունիք, տիկին, կրկնեց ցած ձայնիւ Տըղրէ տիկին Տանկլարին:

— Ոչինչ, ըստ տիկինը ինքը ինքը զսպելով, քիչ մը օդառնել կ'ուղեմ:

— Կ'ուղեմ պարտէզը իջնել, հարցուց Տըղրէ իւր թեր տիկին Տանկլարի ներկայացընելով և դէպ 'ի դաղտնի սանդուխը յառաջանալով:

— Ոչ, ոչ, ըստ տիկինը, աւելի կ'ուղեմ՝ հոս մնալ:

— Ստուգիւ, տիկին, ըստ Մօնթէ-Քրիսթօ առանց կատակի կը վախնա՞ք:

— Ոչ, պարոն, ըստ տիկին Տանկլար. բայց այնպիսի են թագութիւններ կ'ընէք, որ մոտացածին կարծեաց՝ ճշմարտութեան երկայի մը կու տաք:

— Ե՛չ, այս, տիկին, ըստ Մօնթէ-Քրիսթօ ժպտելով, պատմածս երեակայութիւն մ'է. վասն զի այս սենեակը ինչո՞ւ ընտանիքի բարի և պարկեցած մօր մը սենեակը չներկայացընենք, ինչո՞ւ այս ծիրանեղոյն վարադոյրներով անկողինը՝ Լիւսին յաւերժահարսին անկողինը չըլլայ, և այս դաղտնի սանդուխը կրնայ երկնող կնոջ հանդստարար քունը չխանդարելու նպատակաւ շնուրած ըլլալ, որպէս զի բժիշկը կամ ստնոտոն և կամ նոյն ինքն հայրը քնացող զաւակը գրկելով առանց ձայն հանելու անկէ անցնի . . . — :

Այս անդամ տիկին Տանկլար փոխանակ այս մեզմ նկարագրութեան վրայ հանդարտելու՝ հեծութեան ձայն մը հանեց և բոլորովին նուաղեցաւ:

— Տիկին Տանկլար անհանդիստ կը դանուի. կակաղեց Վիլֆօր. արդեօք զինքը իւր կառքը տառնել հարկ պիտի ըլլայ:

— Ո՞վ Աստուած, ըստ Մօնթէ-Քրիսթօ, ես ալ սրբակո
վրաս առնելու մոցեր եմ :

— Եմս քովս է —, ըստ տիկին Ախլոֆօր և Մօնթէ-
Քրիսթօյի սրուակ մը ներկայացուց, որ լցուն էր այն կար-
միք հեղուկէն, որով կոմու Էտուարին վրայ այն մարդասի-
րական ազգեցութիւնը՝ի գործ դրեր էր :

— Ա՛հ, ըստ ըրբիք, ըստ Մօնթէ-Քրիսթօ սրուակը
տիկին Ախլոֆօրի ձեռքէն առնելով :

— Այո՛, մրմնջեց տիկին Ախլոֆօր, ձեր տուած տեղեկու-
թեան համեմատ փորձեցի :

— Յաջողեցաք :

— Կարծեմ — :

Տիկին Տանկլարը մօտակայ սենեակը փոխադրեր էին :

Մօնթէ-Քրիսթօ կարմիք հեղուկէն կաթիլ մը անոր ըր-
թանց վրայ կաթեցուց, և անդիջապէս տիկին Տանկլար սթա-
փեցաւ :

— Ա՛հ, ըստ, այս ինչ սօսկալի երազ է — :

Ախլոֆօր անոր դաստակը սեղմեց իմացընելու համար որ
ամենելին երազ տեսած չէր :

Պ. Տանկլար երեակայական ազգեցութիւններ մտիկ ընե-
լու ժամանակ չունենալով արդէն պարտէզը իջեր էր, և Պ.
Գավալդանթիի հետ Լիվունյէն Փիորէնցա բացուելու եր-
կաթուղւոյ մը վրայ կը խօսէր :

Մօնթէ-Քրիսթօ յուսահատած կ'երեէր :

Տիկին Տանկլարը իւր թեր առաւ և պարտէզը տարաւ, ուր
Պ. Տանկլարը տեսան որ Գավալդանթիներուն չետ սուրճ
կը խմէր :

— Սաոյդ ըսէք, տիկին, ըստ կոմու. իրօք զձեզ խիստ
վախցուցի :

— Ոչ, պարոն, բայց դիտէք որ պատմութիւնները մարդոց
յարմարութեան համեմատ ազգեցութիւն կ'ընեն — :

Ախլոֆօր ժօտելու ջանաց :

— Կը հասկընաք անշուշտ , ըսաւ , որ ենթադրութիւն մը կամ մտացածին պատմութիւն մը բաւական է . . . :

— Եթէ կ'ուրէք՝ մի՛ հաւատաք , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ . ես այնպէս համոզուած եմ որ այս տան մէջ ոճրագործութիւն մը եղած է :

— Զդուշացէք , ըսաւ տիկին Վ.իլքֆօր , թաղաւորի զործակալ մը ունինք հոս :

— Ուրեմն քանի որ այսպէս յարմար եկաւ , առիթը պիտի չփախցընեմ իմ յայտարարութիւնս ընելու :

— Չեր յայտարարութիւնը , ըսաւ Վ.իլքֆօր :

— Այո՛ , և վկաներու առջև :

— Խիստ չետաքրբական է ուրեմն , ըսաւ Տըպրէ , և եթէ իրօք ոճրագործութիւն մը կայ , աղէկ պիտի մարսնիք կերածնիս :

— Այո՛ , ոճրագործութիւն մը , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ : Այս կողմը եկէք , պարոններ , դուք ալ , Պ. տը Վ.իլքֆօր . և որպէս զի ըրած յայտարարութիւնս վաւերական ըլւայ , պէտք է որ տէրութեան օրինաւոր պաշտօնեաներու առջեւ ընեմ — :

Մօնթէ-Քրիսթօ Վ.իլքֆօրի թեր մտաւ առանց տիկին Տանկլարի թեր թողելու , և թագաւորի զործակալը մինչեւ այն խիստ ստուերաւոր սօսիին տակը տարաւ :

Քոլոր սեղանակիցները իլենց ետևէն կու դային :

— Ահա , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ , հոս , այս նոյն տեղը (և իւր ոտքովը զետինը կը զարնէք) , ծերացած ծառերը մատաղացընելու համար զետինը փոքել և ընտիր հող թափել տուի . բայց աշխատաւորներս փոքելու ժամանակ արկդ մը կամ թէ ըսենիք արկդի երկաթները դուրս հաներ են , ուրուն մէջ նորածին մանկան մը կմախքը կայ եղեր . յնորք մը չէ այս կարծեմ — :

Մօնթէ-Քրիսթօ տիկին Տանկլարի թերն ցկաիլը և Վ.իլքֆօրի դաստակին սարսաւոլը զդաց :

— Կորածին մահուկ մը , կրկնեց Տըպրէ , ի՞նչ կ'ըսէք .
զործը ծանր կերպարանք մը կ'առնու կարծեմ :

— Աւրեմն , ըստ Շաթօ-Ռընօ , ամեննին չսխալեր եմ երբ
քիչ մը առաջ կը պնդէի թէ տուները մարդոց պէս հողի և
դէմք ունին , և իրենց փորոտիքին նկարը իրենց գիմացը վրայ
կը կրեն : Այս տունը տիտոր կ'երեէր , ըստ որում ոճիրը
պահած ըլլալուն՝ խղճի խայթեր ունէր :

— Բայց ով կրնայ ըսել թէ ոճիր մ'է այս , կրկնեց Ակ-
լըֆօր իւր վերջին ոյժը ամփոփելով :

— Ի՞նչ կ'ըսէք , կենդանի մահուկ մը պարտէզի մը մէջ
թաղելը ոճիր մը չէ , ըստ Մօնթէ-Քրիսթօ : Այս զործին
ի՞նչ անուն կու տաք , պարոն թագաւորի զործակալ :

— Բայց ուրիշ յայտնի է որ կենդանի թաղուած է :

— Եթէ մեռած ըլլար , ինչո՞ւ հաս պիտի թաղուէր . այս
պարտէզը զերեզմանատուն չէ :

— Այս երկրին մէջ մանկապաններուն պատիմը ի՞նչ է ,
հարցուց Գավալլանթի դնդապետը պարզմառնթեամբ մը :

— Պարզապէս անոնց պարանոցը կը կրեն , պատասխա-
նեց Տանկլար :

— Իրա՞ւ , անոնց պարանոցը կը կտրեն , ըստ Գավալլանթի :

— Կարծեմ . . . : Այսպէս չէ , պարոն աը Ակլըֆօր , հար-
ցուց Մօնթէ-Քրիսթօ :

— Այս , պարոն կոմս — , պատասխանեց թագաւորի զոր-
ծակալը այսպիսի ձայնով մը , որ իւր շփոթութիւնը կը
յայտնէր :

Մօնթէ-Քրիսթօ բաւական համարելով երկու անձանց կրած
նեղութիւնները , որոնց համար այս աեսարանը պատրաստեր
էր , չուզեց աւելի երկարել :

— Բայց մեր սուրճը երբ պիտի խմինք , ըստ , բոլորու-
վին մասցանք — :

Եւ հիւրերը դալարավայրին մէջ տեղը դըռւած սեղանին
քովը տարաւ :

— Ստուդիւ, պարօն կոմս, ըստ տիկին Տանկլար, կ'աւ մշնամ տկարութիւնս խոստովանելու. վասն զի ձեր պատմած սոսկալի պատմութիւնները ինձ մեծ անչանգստութիւն պատճառեցին, կ'աղաւեմ, ներեցէք որ նստիմ — :

Եւ աթոռի մը վրայ ինկաւ :

Մօնթէ-Քրիսթօ խոնարհութիւն մը ըրաւ և տիկին Ակլը Փօրի մօտեցաւ :

— Կարծեմ թէ տիկին Տանկլար ձեր սրուակին պէտք ունի տակաւին —, ըստ :

Քայլց տիկին Ակլը Փօր իւր բարեկամուհւոյն շմօտեցած՝ թաղաւորի զործակալը տիկին Տանկլարի ականջին ըսեր էր.

— Կ'ուզեմ հետդ խօսիլ :

— Ե՞րբ :

— Վաղը :

— Ո՞ւր :

— Գրատունս, բայց աւելի խորհրդատան սրահը, եթէ կը հաճիս, չո՞ն աւելի ասլահով կ'ըլլանք :

— Շատ աղէկ — :

Այս միջոցիս տիկին Ակլը Փօր անոր մօտեցաւ :

— Ընորհակալ եմ, սիրելի բարեկամուհիս, ըստ տիկին Տանկլար ժպտելու փորձ փորձելով, բան չունիմ, և կատարեալ հանգիստ եմ — :



ՊԼՈԴՐ Ե.

ՄՅԻՌԵՑԿԱՆՆԸ

Առաջին բարեկան՝ յառաջացեր էր . տի-
 գին Վիլֆօր Բարիզ վերադառնալու
 բաղձանքը յայտներ էր . բայց տիկին
 Տանկլար իւր զգացած յայտնի անհանդստու-
 թեան հակառակ՝ չհամարձակեր էր նոյն բաղ-
 ձանքը յայտնելու :

Պ. Վիլֆօր իւր կնոջ խնդրանաց վրայ ամենէն առաջ
 մեկնելու նշանը տուաւ :

Իւր կառքին մէջ տիկին Տանկլարի տեղ մը շնորհեց , որ-
 պէս զի իւր կինը խնամէ զան :

Խոկ Տանկլար Պ. Գալվալզանթիի հետ արուեստաց խա-
 կան խիստ կարեռը խօսակցութեան մը մէջ ընկղմած ըլլա-
 լով , եղածներուն ամենեին ուշադրութիւն չէր ըներ :

Մօնթէ-Քրիսթօ տիկին Վիլֆօրէն սրուակը ուզած ժա-
 մանակը դիմեր էր որ Պ. Վիլֆօր տիկին Տանկլարի մօնե-
 ցեր էր . և կոմը անոր ըսած խօսքը դուշակեր էր , թէ Պ. Վիլֆօր այնչափ կամաց խօսեր էր , որ տիկին Տանկլար հա-
 զիւ թէ անոր ձայնը լսեր էր :

Կոմոր առանց ընդդիմանալու թողուց որ Մորէլ , Տըպրէ և
 Շաթօ-Ռունօ ձիերը հեծնեն , և երկու տիկինները Պ. Վի-
 լֆօրի կառքը մանեն :

Տանկլար ևս քան զես Պարթուլոմէո Գավալլաղանթիեն դոչ
ըլլալով իւր կառքը հրաւիրեց դան :

Իսկ Անտրէա Գավալլանթի իւր անդղիաձե կառքին մօտեցաւ, որ գրան առջև իրեն կ'ըսպասէր, և որուն սպասաւորը անդղիական նորաձեռւթեան շափաղանց դարդերով սպածուձեալ և կոշիկներուն ծայրին վրայ բարձրանալով Ճարտուել յաղթ ձին բռներ էր :

Անտրէա Ճաշին ժամանակ շատ շխօսեր էր . ոչ միայն խեցի երիտասարդ մը ըլլալուն համար, այլ և բնականաբար իւր զզացած վախուն, որ ըլլայ թէ անխոչեմ խօսքեր ընէայն հարուստ և զօրաւոր սեղանակցաց հետ, որոնց մէջ զուցէ աներկիւղ չէր տեսներ թագաւորի դործակալ մը :

Ամէ զատ՝ Տանկլար զինքը առանձին թողուցած չէր . քան զի սեղանաւորը ծանրաբարոյ ծեր զնդապետին և անոր քիչ մը երկշուռ որդւոյն հարևանցի նայուածք մը շրջելով ու Մօնթէ-Քրիսթոյի անոնց ըրած հիւրընկալութիւնը տեսնելով, կարծեր էր թէ Պ. Պարթուլոմէոն Նապատ մ'է որ Բարիդեկած է իւր միակ որդին ընկերային կենաց մէջ զարդացընկու :

Ուստի անպատճելի ուրախութեամբ զնդապետին փոքր մատին վրայ փայլող խիստ մեծ ադամանդը գիտեր էր . քանզի զնդապետը խոչեմ և փորձառու մարդ մը ըլլալով, իւր լումայազիրերուն վտանգ մը պատահելու վախէն՝ անմիջապէս ծանրադին դոչարի մը հետ փոխեր էր զանոնք :

Ճաշին ետքն ալ Տանկլար միշտ արուեստից և Ճամբորդութեանց առ թիւ հայրը և որդին իրենց կենցաղավարութեանց մասին հարցուփորձ ըրեր էր, և երկու Գավալլանթիները, որոնք արդէն դիտէին թէ Տանկլարի վրայ բացուած էր իրենց վարկը՝ մէկուն քառասուն և ութ հազար ֆրանքի մէկ անդամ՝ տրուած, և միւսին տարեկան յիսուն հազար ֆրանքի, սեղանաւորին հետ խիստ քաղաքավարութեամբ և սիրով անցան, և այնչափ երախտադիտութիւն մը կ'ըզդային որ եթէ իրենց ներելի ըլլար՝ անոր ծառաներուն ձեռքը պիտի սեղմէին :

Գլխաւորաբար մէկ պարագայ մը Տանկլարին Գավալղան թիի վրայ ունեցած համարումը , կրնանք իսկ ըստ յարդանքը աւելցուց :

Գնդասկետը ընտիր քարագիաց ձուկերը ո՞ր լիճէն հանուիլը յայտնելով՝ իւր զիտութեան փորձը տուեր էր . ետքը անոնցին կերած ժամանակը խօսք մը չխօսեր էր :

Տանկլար ասկէ մակարերեր էր որ այս մեծասպաս փառաւոր սեղանները Գավալղանթիի ընտանի էին , որ հաւանականարար Զուիցերիի կարմրախայտ ձուկեր և Պրըթաննի խառնիճներ կ'ուտէր , որոնք Ճիշդ այն հնարքով բերել կուտար , ինչպէս որ կոմսը Ֆուզարօ լիճէն քարագիացները և Առլիս գետէն թառափները բերել տուեր էր :

Աւստի մեծ մարդասիրութեամբ Գավալղանթիի այս խօսքերը ընդունեց :

— Վաղը , պարսն , դործի համար ձեզ այցելութիւն ընելու պատիւը պիտի ունենամ :

— Եւ ես , պատասխաներ էր Տանկլար , զձեզ ընդունելու երջանիկ պիտի ըլլամ — :

Ասոր վրայ առաջարկեր էր Գավալղանթիին որ զինքը իւր կառքովը Խշանաց պահողոկը տանի ձեւ , եթէ սակայն իւր որդիէն բաժնուիլը արգելք մը չըլլար իրեն :

Գավալղանթի պատասխաներ էր թէ երկար ժամանակէ ՚ի վեր իւր որդիին սովորութիւն ունէր անկախ կեանք մը վարելու , հետեւաբար իւր ձիերն ու սպասաւորներն ունէր , և անոր հետ եկած չըլլալովը գժուարութիւն մը չէր տեսներ առանձին երթալուն :

Այսպէս զնդապետը Տանկլարի կառքը հեծեր էր , և սեղանաւորը անոր քովը նստելով կ'ըզմայլէր այն մարդուն խոչնեմութեան և խնայողութեանը վրայ , թէե տարին յիսուն հաղար ֆրանք կու տար իւր որդւոյն . որով ենթադրել կու տար թէ հինդ կամ վեց հարիւր հաղար ֆրանք եկամուտ ունի :

Իսկ Անտրէա սկսեր էր մեծութիւն ձեսցընել , իւր սպա-

պաւորը յանդիմանել թէ ինչու զինքը առնելու համար փոխանակ ներքին սանդուխին առջել դալու, արտաքին դրան առջել կ'ըսպառէր, որով մինչեւ իւր կառքին մօտենալու համար երեսուն քայլ սոնելու պարտաւորեր էր:

Սպասաւորը այս յանդիմանութիւնը ընդունեց, և ուն համբեր ձին կեցընելու համար, որ ոտքով զետինը կը զարնէր, ձախ ձեռքով դանդանաւանդը բռնեց, ու աջ ձեռօքը սանձը Անտրէային երկնցուց, որ զայն առնելով՝ իւր ապիկեալ կոշիկը թեթեռութեամբ կառքին ոտքին վրայ կոխեց:

Նոյն միջացին ձեռք մը անոր ուսին կոթընեցաւ:

Երիտասարդը երեսը դարձուց կարծելով թէ Տանկլար կամ Մօնթէ-Քրիսթօ բան մը մոռցեր էին, և իւր մեկնելու ժամանակը եկեր էին ըսելու:

Սակայն անոնց տեղը այլանդակ գէմք մը տեսաւ արեւէն ոյրած, ստուար մօրուքով շրջանակեալ, կարկէ հանի նման փայլուն աչօք, և կատակախառն ժպիտով մը, որ իւր բերանը բանալով՝ գայլի կամ ձիու մը ակռաներուն պէս երեսուն և երկու սպիտակ, ուուր և նօթի ատամեերը կ'երեցընէր, որոնց և ոչ մէ կը պակսէր:

Կարմիր քառեակներով մաշկինակ մը իւր մախրաղայն և փոշոտեալ մազերով դլուխը փաթթած էր, խիստ աղտեղի և պատառուած բաճկռնակ մը իւր նիշար և ուկրոտ մարմինը կը ծածկէր, որուն կմախքի նման ոսկրները կարծես թէ քալու ատեն իրարու զարնելով ձայն կը հանէին:

Աերջապէս Անտրէային ուսին գպած ձեռքը, զոր նախ երիտասարդը զլուխը դարձընելով տեսեր էր, աարապայման մեծ երեցեր էր իրեն:

Թէ արդեօք երիտասարդը իւր կառքին լուսովը այս գէմքը ձանցցեր էր, և կամ այս խօսակցին սոսկալի երեսյթէն վախցեր էր, չենք կրնար ըսել. բայց սա ստոյդ է որ զան տեսնելով Անտրէա սարսուաց և աշխուժիւ ետ քաշուեցաւ:

— Ե՞նչ կ'ուղէք, ըսաւ անոր,

— Կերեցէք, ընկեր, պատասխանեց մարդը՝ ձեռքը իւր կարմիր թաշկինակին տանելով, զուցէ շփոթութիւն կը պատճառեմ ձեզ. բայց պատճառը այն է որ ձեզ ըսելիք ունիմ:

— Այս ժամաս չեն մուրար, ըսաւ սպասաւորը իւր տէրը այն դատարկասունէն աղատելու համար շարժում մը ընելով,

— Ես չեմ մուրար, բարեկամ, ըսաւ անծանօթ մարդը ծառային հեղնական ժպիտով մը. բայց այս ժպիտը այնպէս սոսկալի էր որ ծառան անոր քովէն հեռացաւ. կ'ուզեմ երկու խօսք խօսիլ տիրոջդ. որ ասկէ տասն ու հինգ օր առաջ ինձ յանձնարարութիւն մը ըրած է:

— Ըսէք ուրեմն, կրկնեց Անտրէա իւր շփոթութիւնը ծառային չցուցընելու համար ինքլնքը զսպելով. ի՞նչ կ'ուզէք, ըսէք շուտով, բարեկամ:

— Կ'ուզէի . . . կ'ուզէի . . . ըսաւ կարմիր թաշկինակով մարդը, որ ուքով Բարիզ վերադառնալու նեղութենէն ազատես դիս: Խիստ յոդնած եմ, և որովհետեւ քեզի պէս աղէկ ճաշ մը ըրած չեմ, հազիւ ոտքի վրայ կենալու ոյժ ունիմ — :

Երիտասարդը այս զարմանալի ընտանութեան վրայ սարսուաց:

— Բայց վերջապէս ըսէք, ըսաւ, ի՞նչ կ'ուզէք:

— Թողլ որ ընակիր կառքդ հեծնեմ որ զիս Բարիզ տանիս — :

Անտրէայի զոյնը նետեց, բայց պատասխան չսոււաւ:

— Ե՛չ, այո՛, ըսաւ կարմիր թաշկինակով մարդը իւր ձեռքերը զրադաններուն մէջ խօթելով և կորիւ փնտուող աչքով երիտասարդին նայելով, այսպէս կ'ուզեմ որ ընես, կը լսես, իմ փոքրիկ ունետէթթօս — :

Այս անունը լսելով երիտասարդը անտարակոյս մտածեց քիչ մը, քանզի իւր ծառային մօտենալով ըսաւ.

— Այս մարդուն իրօք յանձնարարութիւն մը ըրած եմ, որուն վրայ խօսելիք ունի: Մինչեւ պարիսպները ոտքով զնա՛, հոն կառք մը վարձէ որպէս զի չուշանաս — :

‘Ծառան զարմանքով հեռացաւ:

— Գոնէ թողուցեք որ ստուերին մէջ երթամ, ըստ Անտրէտ:

— Ասոր ըսելիք չունիմ. կեցիր, ես ձեռքովս քեզի աղէկ տեղ մը տանիմ —, ըստ կարմիր թաշկինակով մարդը:

Եւ ձին գանդանաւանդէն քաշելով կառքը այնպիսի տեղ մը տարաւ, ուր իրօք Անտրէայի իրեն տուած պատիւը անկարելի էր որ մէկը տեսնէր:

— Գեղեցիկ կառք մը հեծնելու համար չէ որ կառքդ մը նել կ'ուզեմ, ըստ մարդը • ոչ, այլ միայն խոնջեցած եմ, տսիէ զատ՝ հետդ դործի վրայ խօսիլ կ'ուզեմ:

— Վեր ելիք ուրեմն —, ըստ երիտասարդը:

Դժբաղդաբար մութ էր, եթէ ոչ հետաքրքրական տեսարան մը պիտի ընծայէր այն գատարկասունը, որ կառքը կառավարող վայելու երիտասարդին քսվը ոսկեկուռ բարձերուն վրայ նստեր էր:

Անտրէա իւր կառքը դիւղին մինչև վերջին տունը յառաջցուց առանց իւր ընկերին խօսք մը խօսելու, որ նոյնակէս լուս կեցեր էր և կը ժատէր գողցիս այնպիսի արագաշարժ մէքենայի մը մէջ դանուելու ուրախութենէն:

Օթէօյլէն գուրս ելնելով՝ Անտրէա իւր բոլորտիքը նայեցաւ անտարակոյս ապահով ըլլալու համար որ զիրենք տեսնող և իրենց խօսակցութիւնը մտիկ ընող մէկը չկայ. այն ատեն իւր ձին կեցուց և կարմիր թաշկինակով մարդուն առնել ձեռքերը խաշաճե դնելով, ըստ:

— Ի՞նչ է պատճառը որ այսպէս իմ հանդստութիւնս խանգարել կ'ուզեք:

— Բայց, տղաս, դուն ալ ինչո՞ւ կը խաբես զիս:

— Եւ ի՞նչ բանի մէջ խարեցի զձեղ:

— Կը հաբցընե՞ս. Վար կամուրջին վրայ իրաբմէ բաժնուած ժամանակնիս՝ ինձ ըսիր թէ բիեմանթէ և թոսկանա ճամբորդութիւն ընելու կ'երթաս, բայց կը տեսնեմ որ ուղղակի բարիդ եկեր ես:

— Յայտնի կը տեսնէք որ պահուած չեմ :

— Ըստ երջանիկ ես, շխակը ես ալ կ'ուզէի այդպէս ըսել, սակայն ես կը պահուիմ. ասի՞ւ զատ կը վախնայի որ զիս պիտի չճանչնաս. բայց բարեբաղդաբար ճանչցար, յաւելցուց Քատրուս իւր չարամիտ ժպիտովը. կը տեսնեմ որ աղնիւ սիրու մը ունիս եղեր :

— Ըսէք, ի՞նչ բանի պէտք ունիք :

— Ենչու հին ընկերիդ հետ քուով չես խօսիր, ունետէթ մօ, դէշ նշան է այդ. բայց զդուշացիր, այդ կերպով շատ բաներ խնդրելու պիտի ստիպես զիս — :

Այս սպառնալիքը երիտասարդին բարկութիւնը իջնցաց, բռնութեան հողմը զայն խոնարհեցուցեր էր :

Անարէա իւր ձին մտրակեց :

— Քեզի խակ դէշ կ'ընես, Քատրուս, ըսաւ, հին ընկերի մը հետ այդպէս վարուելով, ինչպէս որ հիմա կ'ըսէիր, զուն Մարսիլիացի ես, և ես . . . :

— Ուրեմն հիմա գիտես ուր տեղացի ըլլալդ :

— Աչ, բայց Քորսիայի մէջ մեծցած եմ. ծեր ես գուն և խստապարանոց, և ես երիտասարդ ով յամառ. Մեզի պէս մարդոց համար սպառնալիքը ոյժ չունի, և ամեն բան բարեկամութեամբ պէտք է որ կատարուի: Յանցանիքը ինս է երբ բաղդը միշտ քեզ գդիսեմ կ'երեկի, ընդ հակառակն ինձ կը ժպտի:

— Ուրեմն բազզդ քեզ կը ժպտի. ուրեմն կառապանդ և կառքդ փոխ առած չես. ուրեմն վրայիդ այդ զկեստները քուկդեն. աղէկ, ուրիշ ի՞նչ կ'ուզես, ըսաւ Քատրուս ցանկութեան անյաղ աչօք :

— Ա՛չ, եթէ դլախս վրայ քեզի պէս թաշկինակ մը ունենայի, ուսոցս վրայ եղոտած բաճկոնակ մը և ուգքս ծակոտած հողաթափներ, ապահով եմ որ զիս պիտի չճանչնայիր :

— Կը տեսնես որ զիս կը նտխատես, սպառիկ, և իբաւունք չունիս. հիմա որ ես զքեզ զտայ, ուրիշի մը պէս ընտիր տառեայ զդեստներ հաղնելու արգելք չունիմ, քանի որ

— Յայտնի կը տեսնէք որ պահուած չեմ :

— Ըստ երջանիկ ես, շխակը ես ալ կ'ուզէի այդպէս ըսել, սակայն ես կը պահուիմ. ասի՞ւ զատ կը վախնայի որ զիս պիտի չճանչնաս. բայց բարեբաղդաբար ճանչցար, յաւելցուց Քատրուս իւր չարամիտ ժպիտովը. կը տեսնեմ որ աղնիւ սիրու մը ունիս եղեր :

— Ըսէք, ի՞նչ բանի պէտք ունիք :

— Ենչու հին ընկերիդ հետ քուով չես խօսիր, ունետէթ մօ, զէշ նշան է այդ. բայց զդուշացիր, այդ կերպով շատ բաներ խնդրելու պիտի ստիպես զիս — :

Այս սպառնալիքը երիտասարդին բարկութիւնը իջնցաց, բռնութեան հողմը զայն խոնարհեցուցեր էր :

Անարէա իւր ձին մտրակեց :

— Քեզի խակ զէշ կ'ընես, Քատրուս, ըսաւ, հին ընկերի մը հետ այդպէս վարուելով, ինչպէս որ հիմա կ'ըսէիր, զուն Մարսիլիացի ես, և ես . . . :

— Ուրեմն հիմա գիտես ուր տեղացի ըլլալդ :

— Աչ, բայց Քորսիայի մէջ մեծցած եմ. ծեր ես գուն և խստապարանոց, և ես երիտասարդ ով յամառ. Մեզի պէս մարդոց համար սպառնալիքը ոյժ չունի, և ամեն բան բարեկամութեամբ պէտք է որ կատարուի: Յանցանիքը ինս է երբ բաղդը միշտ քեզ գդիսեմ կ'երեկի, ընդ հակառակն ինձ կը ժպտի:

— Ուրեմն բազզդ քեզ կը ժպտի. ուրեմն կառապանդ և կառքդ փոխ առած չես. ուրեմն վրայիդ այդ զկեստները քուկդեն. աղէկ, ուրիշ ի՞նչ կ'ուզես, ըսաւ Քատրուս ցանկութեան անյաղ աչօք :

— Ա՛չ, եթէ դլախս վրայ քեզի պէս թաշկինակ մը ունենայի, ուսոցս վրայ եղոտած բաճկոնակ մը և ուգքս ծակոտած հողաթափներ, ապահով եմ որ զիս պիտի չճանչնայիր :

— Կը տեսնես որ զիս կը նտխատես, սպառիկ, և իբաւունք չունիս. հիմա որ ես զքեզ զտայ, ուրիշի մը պէս ընտիր տառեայ զդեստներ հաղնելու արգելք չունիմ, քանի որ

քու բարի սիրադ կը ճանշնամ . եթէ երկու զգեստ ունիս՝
մէկը ինձ կու տաս , քանզի քու անօժի եղած ժամանակը
ես ալ իմ ապուրիս և լուրիայիս կէսը յօժարութեամբ քեզ
տուած եմ :

- Սույդ է , ըսաւ Անտրէա :
- Ի՞նչ մեծ ախորժակ ունէիր . միշտ նոյն ախորժակը ունիս :
- Եյ՛ , ըսաւ Անտրէա ծիծաղելով :
- Անշուշտ նոյն ախորժակով ճաշած ես այն իշխանին
տունը , ուրկից գույս կ'ելնէիր հիմա :
- Իշխան մը չէ ան , այլ պարզապէս կոմս մը :
- Հարուստ կոմս մը , այնպէս չէ :
- Եյ՛ , բայց անոր վրայ պէտք չէ վստահ ըլլալ . այս
պարոնին դէմքը ինձ հաճելի չերենիր :
- Ո՛չ , անչոդ եղիր , ընկեր , կոմսիդ վրայ նկատումներ
չունիմ , և բոլորովին քեզ կը թողում զան : Բայց , յաւել
ցուց Քատրուս իւր սովորական շարամիտ ժպիտովը , անշուշտ
կը հասկընաս , այսպէս ընելու համար պէտք է որ բան մը տաս :
- Ըսէ , ի՞նչ կ'ուզես :
- Կարծեմ թէ ամիսը հարիւր ֆրանքով
- Ետք՞ :
- Կրնամ՝ ապրիլ :
- Հարիւր ֆրանքով :
- Կը հասկընաս որ ոչ այնչափ աղէկ . բայց եթէ
- Ո՞րշափ :
- Հարիւր յիսուն ֆրանք ընդունիմ , շատ երջանիկ պիտի
ըլլամ :
- Աչա քեզ երկու հարիւր — , ըսաւ Անտրէա :
- Եւ Քատրուսի ձեռաց մէջ տասը Լուի ոսկի դրաւ :
- Աղէկ , ըսաւ Քատրուս :
- Ամեն ամսոյ առջի օրը դռնապահիս ներկայացիր , և նոյն
չափ կ'ընդունիս :
- Դարձեալ զիս նուաստացընել կ'ուզես :

- Ի՞նչ կերպով։
 — Կուզես որ ծառաներուդ հետ յարաբերութիւն ունեցամ. ոչ, ես միայն քեզի հետ կ'ուղեմ դործ ունենալ։
 — Ծառ աղեկ, թող այդպէս ըլլայ. ամեն ամսոյ առջի օրը եկու ինձմեն խնդրէ, միայն թէ ես ալ իմ եկամուտս ընդունած ըլլամ, և դու ալ քուկդ պիտի ընդունիս։
 — Կը տեսնեմ որ սխալած չեմ, աղնիւ տղայ մ'ես դռւն, և քեզի պէս մարդոց երջանկութիւնը Աստուծոյ մէկ շնորհքն է։ Պատմէ ինձ քու բաղդիդ պատմութիւնը։
 — Ի՞նչ օգուտ պիտի տեսնես այս պատմութիւնը լսելէ, հարցուց Գավալլպանթի։
 — Աչա, դարձեալ անվստահութիւն կը տեսնեմ։
 — Ոչ, ամենեին. ուրեմն զիտցիր որ հայրս դտայ։
 — Ճշմարիտ հայր մը։
 — Ե՛ս, որչափ ժամանակ որ ինձ վճարէ։
 — Ուրեմն որչափ ժամանակ որ վճարէ՝ պիտի ճանշնաս և պիտի յարդես զան, շատ իրաւացի է այդ. հօրդ անունը ինչ է։
 — Գավալլպանթի դնդապետ։
 — Եւ զո՞չ է քեզմէ։
 — Մինչեւ հիմա ինձ այնպէս կ'երեի։
 — Եւ այդ հայրը դանելուդ պատճառը ո՞վ է։
 — Աօնթէ-Քրիսթոյ կոմսը։
 — Որուն տունէն որ հիմա կ'ելնէ ի՞ր։
 — Այս։
 — Ուրեմն աշխատէ որ զիս անոր քովը տեղաւորես։
 — Ծառ աղեկ, կը խօսիմ անոր. բայց հիմա ինչ պիտի ընես։
 — Ե՞ս։
 — Այս, դուն։
 — Ճնորհակալ եմ որ հոգս կը տանիս, ըստ Քատրուս։
 — Եւ որովհետեւ քու հոգդ պիտի տանիմ, կրկնեց Ան-

տրէա, կարծեմ թէ և ես քու վրայօքդ տեղեկութիւններ ըստանալ պէտք եմ:

— Ստոյդ է . . . պարկեշտ տան մը մէջ սենեակ մը պիտի վարձեմ, վայելուչ զգեստներ պիտի հազնիմ, ամեն օր պիտի ածիլուիմ և սրճարանները օրադիր կարդալու պիտի երթամ: Երիկունները թատրոն պիտի յաճախեմ, ու հացադութենէ հարստացած մէկը պիտի երեխմ, աչա իմ երազս:

— Եթէ այդ ամեն խորհուրդներդ 'ի դործ դնես և խոչեմութեամբ վարուիս, ամեն բան կը յաջողի:

— Պ. Պոսիւէ մը կարեցար զլուխս . . . : Բայց դուն ինչ պիտի ըլլաս . . . Գաղղիոյ ատենակալ մը:

— Ե՛ս, ով զիտէ, ըստւ Անտրէա:

— Պ. Գավալդանթի զնդապեալ զուցէ ատենակալ մ'է . . . բայց գժբաղդարար ժառանդական յաջորդութիւնը չնջուած է:

— Քաղաքական խնդիրներ չխառնենք, Քատրուս . . . : Բայց չիմա որ ուղածդ ստացար և կառքը Բարիզի դուռը հասւ, վար ցատկէ և աներեւոյթ եղիր:

— Ամնեին, բարեկամ:

— Ի՞նչպէս:

— Բայց մոտածէ, ընկեր, զլուխս կարմիր թաշկինակ մը կայ, ոտքս զրեթէ փոպիկ է, անցաղիր չունիմ և ծոցս տասը նաբոլէոն ոսկի կայ՝ առանց հաշուի դնելու արդէն անոր մէջ եղածը, որ ամենը միատեղ Ճիշդ երկու հարիւր ֆրանք կ'ընէ . այս վիճակին մէջ զիս Բարիզի գրան առջեւ տեսնելով, անշուշտ պիտի բռնեն: Այն ատեն՝ զիս արդարացընելու համար պիտի ըսեմ թէ այն տասը նաբոլէոնները դուն ինձ տուիր, ասոր վրայ հարցուփորձ և խուզարկութիւններ ըլլալով, առանց հրամանի թուլնէն մեկնիլս պիտի իմանան, և վերստին զիս Միջերկրականին ծովեղը պիտի տանին: Այն ատեն պարզապէս 106 թիւով թիապարտը պիտի ըլլամ, և հացադութենէ հարստացած երկելու երաղուծս պիտի կորսն ցընեմ: Ա՛չ, զաւակս, ողատուով մայրաքաղաքը կենալը նախամեծաբ կ'ընտրեմ — :

Անտրէա յօնքը կնճռեց . անշուշտ կը մտածէր թէ պարոն զավալլանթի գնդապետին կարծեալ որդին համարուելուն համար պարձելուն շատ գէշ ըրեր էր :

Վայրկեան մը կեցաւ , շոյտ նայուածք մը շքեց իւր բոլորակը , և ձեռքը անմտութեամբ իւր դրանը տարաւ , ուր փոքր ատրաւանակի մը բլթակին պահպանակը կը խառնէր :

Բայց այն միջոցին Քատրուս , որ իւր ընկերին ըրածները աղէկ կը դիտէր , ձեռքը կռնակին ետին տարաւ , և որ և է դիպուածի համար իւր վրայ կրած սպանիական երկար դանակ մը առանց ձայնի կը մերկացընէր :

Ինչպէս կ'երեէր՝ երկու բարեկամները իրարու միտքը դիւրութեամբ հասկընալու կարող էին , և շուտով հասկցան . Անտրէա առանց իլասելու իւր ձեռքը ծոցէն դուրս հանեց և դէպ ՚ի իւր կարմրագոյն ընչացքը տարաւ , զոր վայրկեան մը սկսաւ շյել :

— Ուրեմն , բարի Քատրուս , այս կերպով երջանիկ պիտի ըլլաս , ըստ :

— Այո , բոլոր կըցածս պիտի ընեմ , պատասխանեց Բոնամիւ-կարի պանդոկապետը դանակը պատեանին մէջ մղելով :

— Շատ աղէկ , մտնենք ուրեմն Բարիզ . բայց ինչպէս առանց կասկածներ տալու պիտի կարենաս պարսպին դռնէն ներս մտնել . ինձ այնպէս կ'երեի թէ այդ հաղուստով աւելի վտանգաւոր է կառքով անցնիլը քան թէ ոտքով :

— Կեցիր , ըստ Քատրուս , հիմա կը տեսնես — :

Անտրէայի դլասրկը առաւ իւր դլուխը դրաւ , Ճամբուած կառապանին իւր տեղը թողուցած մեծ օձիքով վերարկուն հաղաւ , և իւր տեղը հանդիսանատաւ տան մը հաւատարիմ ծառայի մը պէս , որուն տէրը կառքը կը վարէ :

— Բայց ես ի՞նչ պիտի ընեմ , ըստ Անտրէա , դլուխս բաց պիտի մնայ :


— Ի՞նչ մնաս ունի , ըստ Քատրուս . Հողմը այնչափ սաստիկ է , որ կընայ դլասրկդ յափշտակած ըլլաւ :

— Կատակը ձգէ , ըստ Անտրէա , և վերջ տուր :
 — Խնչու կեցեր ես , ըստ Քատրուս . կարծեմ թէ զքեզ
 կեցընողը ես չեմ :
 — Լոէ — , ըստ Գավալդանթի :
 Առանց վտանդի պարսպին դուռը անցան :
 Առաջին կողմանի փողոցին առջև Անտրէա իւր ձին կեցուց
 և Քատրուս դետինը ցատկեց :
 — Բայց ծառայիս վերաբերն և զլիարկս ուր կը տանիս ,
 ըստ Անտրէա :
 — Ա՛չ , պատասխանեց Քատրուս , անշուշտ չես ուզեր որ
 ես հարրուխ ըլլամ :
 — Բայց ես :
 — Դուն երիտասարդ ես , և ես կ'ըսկսիմ ծերանալ : ոլէ-
 նէտէթթօ , նորէն տեսնուինք :
 Այս խօսքէն ետե Քատրուս փողոցին մէջ աներեսոյթ եղաւ :
 — Ափսոս , ըստ Անտրէա հառաջանք մը հանելով , ու-
 րեմ աշխարհիս մէջ մարդու կատարեալ երջանիկ պիտի չկրնայ
 ըլլալ :



ՊԱՇՆԻ 2.

ԸՄԱԲԻՇՆԵԿԵՆ ՏԵՍՔԵՆԵՐ



Անի ժեւ ըսուած հրատարակին մէջ ելեք եւ-
րիտասարդները իրարմէ բաժնուեր
էին, այսինքն Մորէլ գէպ 'ի ծա-
ռուղիները զարկեր էր, Չաթօ-Ռընօ՝
գէպ 'ի Բէվօլիւսիօնի կամուրջը և Տըպրէ՝ գէպ 'ի զետեզըր:
Հաւանականտքար Մորէլ և Չաթօ-Ռընօ իրենց բնակւարա-
նը վերադաշան, բայց Տըպրէ նայնը չըրաւ. Լուվրի գուոը
հասնելով գէպ 'ի ձախ կողմը զարկաւ, մեծ արշաւանքով Գա-
րուզէլին տակէն անցաւ, Աէն-Ռօք փողոցը մտաւ, և Միշո-
տիէր փողոցին ենելով, ո. Տանկլարի գուոը հասաւ Ճիշդ-
այն միջոցին որ ո. Վիլլֆօրի կառքը զինքը և իւր կինը
Աէնթ-Օնօրէ արուարձանը թողլէն ետե՛ տիկին Տանկլարը
իւր տունը բերելու համար հոն կանդ կ'առնուր:

Տըպրէ, իրը այն տանը ծանօթ մէկը, ամենէն առաջ բա-
կին մէջ ցատկեց, ձիւն երասանակը սղաստորի մը ձեռքը
նետեց, կառքին գոնակին առջեր վազեց տիկին Տանկլարը
ընդունելու, որուն իւր թեր ներկայացուց զան իւր սենեակը
տանելու համար:

Տան դուռը դոցուելով, երբ տիկին Տանկլար և Տըպրէ բա-
կին մէջ մինակ մնացին:

— Ե՞նչ ունիք, Զէրմին, ըստ Տըպրէ, և ինչո՞ւ կոմսին
պատմած այն պատմութեան կամ թէ ըսենք այն առաջելին
վրայ անհանդիստ եղաք:

— Ըստ որում այս իրիկուն սաստիկ յուղեալ էի, բարեկամ, ալատասխանեց տիկին Տանկլար:

— Բայց ոչ, Հերմին, այդ չեք կրնար հաւատացընել ինձ, կրկնեց Տըպրէ. ընդ հակառակն կոմսին առւնը եկած ժամանակնիդ շատ լաւ վիճակի մէջ էիք: Առոյդ է որ Պ. Տանկլար քիչ մը տիսուր էր, բայց ես աղեկ զիաեմ որ ձեր հոգը չէ անոր այսպէս ըլլալը: Միթէ մէկը ձեզ բան մը ըրաւ, ըսէք, աղեկ զիտէք որ ես չեմ կրնար երբէք համբերել որ ձեզի զէմ անպատռութիւն մը՝ ըլլայ:

— Կ'ապահովեմ զձեզ որ կը խարուիք, Լիւսիէն, կը կնեց տիկին Տանկլար, ըսածներս ստոյդ են. միայն տիսրութիւն մը կար վրաս, և այսպիսի շնչին բանի մը վրայ ձեզ խօսելու արժան չդատեցի — :

Յայտնի էր որ տիկին Տանկլար ենթակայ էր ջղային այն յուղմանց մէկուն, որոնց պատճառը կիները շատ անդամ շեն կրնար հասկընալ, և կամ, ինչպէս որ Տըպրէ գուշակեր էր, տիկինը այնպիսի դաղլանի շփոթութիւն մը զգացեր էր, զոր շէր ուղեր մէկու յայտնել:

Տանկլարծական տիսրութիւնը կանացի կենաց իրը տարբերէն մէկը ըլլալը լսու ձանշնալով Տըպրէ իւր թախանձանքը աւելի չերկարեց, այլ յարմար առ թի սպասեց կամ նոր հարցման մը և կամ իւրավի խոստովանութեան մը մէջ զինքը բռնելու:

Տիկինը իւր սենեկին դրան առջեւ օրիորդ Գորնէլիին հանգիպեցաւ:

Այս օրիորդը տիկին Տանկլարի մտերիմ սենեկապանուցին էր:

— Աղջիկս ի՞րնէ, հարցուց անոր տիկին Տանկլար:

— Բոլոր իրիկունը իւր ուսմանը պարապելէն ետե՛ պառկելու դնաց, պատասխանեց օրիորդ Գորնէլի:

— Սակայն կարծեմ թէ իւր դաշնամուրին ձայնը կը լսեմ:

— Օրիորդ Լուիզ ա'Արմիլին է, որ օրիորդին անկողնոյ մէջ եղած ժամանակը դաշնամուրը կը նուազէ:

— Ծատ աղէկ, ըսաւ տիկին Տանկլար, եկու զիս հանուեցընես — :

Տիկին Տանկլար օրիորդ Գորնէլիին հետ իւր հաղուելու դաշլիքը մոտաւ, իսկ Տըպրէ մեծ բազմոցի մը վրայ երկնցաւ :

— Սիրելիդ իմ Պ. Լիւսիէն, ըսաւ տիկին Տանկլար դաշլիքին գոնէն, միշտ կը դանդատիք որ Էօծէնի ձեզի հետ խօսելու չհաճիք :

— Տիկին, ըսաւ Լիւսիէն՝ տիկնոջ փռքը շան հետ խաղալով, որ անոր տան բարեկամն ըլլալը Ճանչնալով, հազար տեսակ քծնութիւններ ընելու սովորութիւն ունէր, անոր այս պակասութիւնը յայտնողը միայն ես չեմ, և կարծեմ անցեալ օր Մարսէրք իսկ ձեզ կը դանդատէր որ իւր նշանածին բերանէն խօսք մը ըսելու կարող չեղեր է :

— Ստոյդ է, ըսաւ տիկին Տանկլար. բոյց կը յուսամ թէ մօտերս իւր բնութիւնը բոլորովին պիտի փոխէ և Էօծէնիին ձեր սենեակը մանելը պիտի տեսնէք :

— Ի՞նչ կ'ըսէք, Բմ սենեակս :

— Պաշտօնէին սենեակը ըսել կ'ուզեմ :

— Բայց Ի՞նչ պատճառաւ :

— Օքէրայի թատրոնին համար ձեզմէ յանձնարարութիւն մը խնդրելու. Ճշմարիտն ըսելով՝ երաժշտութեան համար այսպիսի սաստիկ եռանդ մը տեսած չեմ երբէք. այս ասաւիճանի անձի մը համար ծաղքելի բան է այս — :

Տըպրէ ժպտեցաւ :

— Ծատ աղէկ, ըսաւ, սեօպուհին և ձեր հաճութեամբը թող գայ. իւր բաղձացած յանձնարարութիւնը իւր աբժանաւորութեանը համեմատ կատարելու պիտի չանանք, թէ եանոր ունեցած զեղեցիկ տաղանդը ըստ արժանույն վճարելու շափ հարուստ չե՞նք :

— Գհա, Գորնէլի, ըսաւ տիկին Տանկլար, քեզի պէտք չունիմ ալ — :

Օրիորդը աներեսոյթ եղաւ. և վայրիեան մը ետքը տիկին

Տանկլար իւր անային վայելուչ զգեսառվը դահլիճէն դուրս
ելաւ և դնաց Լիւսիէնի քովը նստաւ:

Բայց մտածութեանց մէջ ընկղմած ըլլալով՝ սկսաւ իւր
սպանիական փոքրիկ շունը սիրել:

Լիւսիէն վայրկեան մը անոր նայեցաւ առանց խօսք մը
խօսելու:

— Համարձակ ըսէք, ըսաւ Տըպրէ վայրկեան մը ետքը.
բան մը կայ անշուշտ որմէ վիրաւորուած էք, այնպէս չէ:

— Ամենեին —, կրկնեց տիկին Տանկլար:

Սակայն իւր սրտի անհանդատութենէն ոտք ելաւ, և քիչ
մը շունչ առնելու նպատակաւ հայելիի մը առջեւ դնաց և իւր
գէմքը անոր մէջ կը նացէր:

— Այս իրիկուն գէմքս սասկալի կ'եցնի —, ըսաւ:

Տըպրէ այս վերջին կէտին վրայ տիկինոջ սիրաը հանդար,
տեցընելու համար ժամտելով ոտք ելնելու վրայ էր երբ յան-
կարծ դուռը բացուեցաւ:

Պ. Տանկլար դրան առջեւ երեցաւ, և Տըպրէ վերստին իւր
տեղը նստաւ:

Տիկին Տանկլար դրան ձայնը առնելով երեսը դարձուց և
յայանի զարմացմամբ մը իւր ամուսնոյն նայեցաւ:

— Բարի իրիկուն, տիկին, ըսաւ սեղանաւորը, բարի ի
ըիկուն, Պ. Տըպրէ — :

Տիկին Տանկլար անտարակոյս կարծեց թէ սեպուհը ցորեկը
իւր բերանէն սովորած քանի մը դառն խօսքերուն հասու-
ցումը ընելու փափաքով այս անյութալի այցելութիւնը կ'ընէ:

Աւստի իւր գէմքը կախեց, և առանց ամսւսնոյն պատաս-
խանելու՝ Լիւսիէնի դառնալով,

— Քիչ մը բան կարդա ինձ, Պ. Տըպրէ — , ըսաւ անոր:

Տըպրէ որ 'ի սկզբան այս այցելութենէն քիչ մը շփոթեր
էր, տիկինոջ այս խօսքին վրայ սիրաը հանդարտեցաւ, և իւր
ձեռքը երկնցուց ուկեպատ զաղտակուրի բերնով թղթահա-
տով մը նշան դրուած դիբքը առնելու:

— Կը ներեք, ըստ սեղանաւորը. այսչափ ուշ արթուն կենալով սաստիկ պիտի յոդնիք, տիկին. ժամը տասն ու մէկն է, և Պ. Տըպրէ խիստ հեռու տեղ կը բնակի — :

Տըպրէ ապշեալ միաց՝ չէ թէ Տանկլարի ձայնը կատարեալ հանդարտ և քաղաքավար ըլլալուն, այլ այս հանդարտութեան և քաղաքավարութեան ներքեւ այն իրիկունը իւր կնոջը կամաց հակառակ վարուելու անսովոր առաջադրութիւն մը կը նշմարէր :

Տիկինն իսկ զարմացած կ'երեէր, և իւր զարմանքը նայուածքով մը յայտնեց, որ անտարակոյն իւր էրկան մտածութիւն մը պիտի պատճառէր, եթէ Տանկլար իւր նայուածքը օրագրի մը վրայ դարձուցած չուլլար, որուն մէջ արժէթղթոյ վերջին զիները կը փնտէր :

Հետեւաբար այս սէդ նայուածքը պարապ տեղը զնաց և իւր ազգեցութիւնը բոլորովին կորսնցուց :

— Պարոն Լիւսիէն, ըստ տիկին Տանկլար, ևս ամնեին քուն չունիմ, ընդ հակառակն այս իրիկուն հաղար տեսակ պատմութիւններ ունից ձեզ ընելու, և գուք բոլոր զիշերը ինձ մտիկ պիտի ընէք եթէ սաքի վրայ քնանալ իսկ հարկ ըլլայ ձեզ :

— Պատրաստ եմ ձեր հրամանները կատարելու, տիկին, պատասխանեց Լիւսիէն հանդարտութեամբ :

— Այրելիդ իմ Պ. Տըպրէ, ըստ սեղանաւորը, տիկին Տանկլարի յիշարական պատմութիւնները մտիկ ընելով՝ ինք զինքնիդ մի տանջէք այս իրիկուն, կ'աղաւեմ, վասն զի վաղն ալ կրնաք մտիկ ընել։ բայց այս իրիկունը ինձ կը սեպհականեմ, և եթէ կը ներեք ինձ՝ պիտի զոհէմ զայն կնոջ հետ ծանր խնդրոց վրայ խօսելու — :

Այս անդամ հարուածը այնպիսի ուղղութեամբ և հաստատութեամբ ուղղուած էր, որ Լիւսիէնը միանդամայն և տիկինը շփոթեց :

Երկարնին ալ իրարու երես նայեցան և այս յարձակման

դէմ իրարմէ օղնութիւն կը խնդրէին . բայց տան տիրոջ անդիմադրելի զօրութիւնը ամեն բանի յաղթեց , և Տանկլար խնդիրը շահեցաւ :

— Բայց մի կարծէք որ դձեզ կը վահանեմ , սիրելիդ իմ Տըպրէ , շարունակեց Տանկլար . ոչ ամենեին . անակնկալ պարագայ մը կ'ըստիպէ զիս որ այս իրիկուն կնոջս հետ քիչ մը խոռակցիմ : Այս բաղձանքս շատ քիչ անդամ պատահեւ լուն համար կը յուսամ թէ ինձի պիտի ներուի — :

Տըպրէ քանի մը խօսք մըմնջելով՝ բարեկց զանոնք և դուրս ելաւ զրեթէ պատերուն զարնուելով , ինչպէս Մաթման Առաջի մէջ :

— Շիտակը անհաւատալի բան է , ըստ իւրովի Աիւսիէն երբ դուռը իւր ետեւն զոյցուեցաւ . էրիկները , որսնք մնոք ծաղքելի կը համարինք , մեր վրայ մէծ առաւելութիւն մը ունին — :

Աիւսիէնի մեկնելէն ետեւ Տանկլար բազմոցին վրայ իւր տեղը նստաւ , բայց մնացած զիրքը զոյցեց , և շան հետ վերստին սկսաւ խաղալ :

Բայց որովհետեւ շունը , որ Տըպրէի վրայ ունեցած համակրութիւնը անոր վրայ չունէր , կ'ուղէր խածնել զինքը . Տանկլար շան պարանոցի մորթէն բռնեց և սենեկին միւս կողմը երկար աթոռի մը վրայ նետեց :

Վնասունը ճիչ մը հանեց . բայց իւր տեղը հասնելով , բարձի մը ետին ամփոփուեցաւ , և այսպիսի անսովոր պատիժի մը վրայ շփոթած՝ լոիկ և անշարժ հոն մնաց :

— Գիտէք , պարոն , ըստ աիկինը առանց խոժոռելու . որ քանի կ'երթայ՝ չափը կ'անցընէք : Առվորաբար տմարդի էիք միայն , բայց այս իրիկուն բիրտ էք :

— Վասն զի այս իրիկուն սովորականէն աւելի տխուր վիճակի մէջ կը զտնուիմ — , պատասխանեց Տանկլար :

Հերմին չափազանց արհամարհանօք սեղանաւորին երեսը նայեցաւ :

Սովորաբար այս տեսակ նայուածքները դռոող Տանկլարը կը զայրացընէին, սակայն այս իրիկուն հազիւ թէ անոնց ուշագրութիւնը ըրեր էր:

— Ձեր տիսուր ըլլալը իմ ի՞նչ հոգս է, պատասխանեց տիկինը իւր էրկան անփութութեան վրայ զայրանալով, և միթէ ի՞նձ կը նկատի այդ: Տիրութիւննիք ձեր դրատան համար պահցեցէք, և որովհետեւ պաշտօնաւորներ ունիք, որոնց ամս սական կը վճարեք, ձեր տիրութիւնը անոնց ցուցուցէք:

— Ոչ, տիկին, պատասխանեց Տանկլար, ձեր տուած խոր հըրդոց մէջ կը սխալիք, տիկին, և ես անոնց պիտի չչետեիմ: Գրատանս կարզը և հանդարտութիւնը խանդարել չեմ ուղեր, իմ պաշտօնաւորներս պարկեշտ մարդիկ են, ուրանիք զիս կը հարստացընեն, և եթէ իրենց աշխատութեան համեմատ զիրենք յարդեմ, դարձեալ իրենց արժանաւորութենէն նուազ վարձատրութիւն մը կու տամ անոնց, հետեւաբար անոնց բարկանալու հարկ չկայ: Այլ իմ բարկութիւնս այն անձանց համար է, որոնք հացս կ'ուտեն, ձիերս կը հեծ նեն և զանձս կը պարպեն:

— Ո՞վ են ձեր զանձը պարսող այդ անձերը, յայտնի խօսեցէք, պարոն, կ'աղաւեմ:

— Ո՛չ, անհոգ եղիք, երբ առակ մը կը խօսիմ, անոր լուծումը փնտուելու համար զնեղ չեմ յոզնեցըներ, իմ զանձս պարպող անձերը ժամուան մը մէջ եօթը հարիւր հազար ֆրանք պակսեցընողներն են:

— Ձեմ հասկընար, պարոն, ըսաւ տիկին Տանկլար ջանալով իւր ձայնին այլայլութիւնը և միանդամայն իւր երեսին կարմրութիւնը կեղծելու:

— Ընդ հակառակն շատ աղէկ կը հասկընաք, ըսաւ Տանկլար, բայց եթէ ձեր այդ ընթացքը շարունակէք, կ'ըստիսուիմ ըսել որ Սոլանիական արժէթղթոց վրայ եօթը հարիւր հազար ֆրանք կորսնցուցի:

— Հաւչ, ըսաւ տիկինը հեղնօրէն ծիծաղելով, այդ կորսաւեանդ պատասխանատուն են եմ:

— Ի՞նչո՞ւ չէ :

— Ցանցանքը իմս է որ դուք եօթը հարիւր հաղար Փրանք կորսնցուցիք :

— Ամեն կերպով . հապա իմս է :

— Ցայտանապէս ձեզ ըսած եմ, պարսն, կրինց տիկինը խստութեամբ մը որ ինձի գրամային խօսքեր չընէք, այդ լեզուէն ես չեմ հասկընար, քանզի ոչ ծնողացս տունը սորված եմ և ոչ առաջին ամուսնոյս :

— Կը հաւատամ, ըսաւ Ցանկըսր, քանզի ամենեին ստակ շունէին անոնք :

— Դրամանոցի զաղանիքը անոնց քովը չսորմէլուս յայտնի տպացոյց մ'է այդ, առաւտոէ մինչեւ իրիկուն այս տան մէջ անոնց խօսքերը լսելով ականչներս կը խռովան, դրամները համրելու ձայնը ինձ ձանձրալի եղած է, և ձեր ձայնը աւելի տհաճելի է ինձ :

— Ծիտակը ըսածնիդ զարմանքս կը գրաւէ, ըսաւ Ցանկըսր, ես կարծէի թէ իմ գործերուս աղէկի հոդ կը տանիք :

— Ես, և ովհ հաւացուց ձեզի այդպիսի յիմար խօսք մը :

— Պուք :

— Ի՞նչ կ'ըսէք :

— Անտարակոյս :

— Կ'ուզէի որ ի՞նչ պարագայի մէջ ըլլալը իմացընէիք ինձ :

— Շատ գիւրին բան է այդ, փետրուար ամսոյ մէջ ձայիթիի արժէթզոյ խօսքն ըրիք ինձ, այնպէս երազած էիք թէ Հավրի նաւահանգ ստին մէջ նաւ մը մանելով լուր բերած էր թէ վճարումները պիտի սկսին: Չեր երազին ստուգութիւնը կը Ձանչնամ, ուստի ձեզի ատակէ Հայիթիի պարագուց փոխանակագիրերը դնել տուի, և չորս հարիւր հաղար Փրանք շահեցայ, որոնց հարիւր հաղարը հաւատարմաթեամբ ձեզ յանձնուեցան: Այն դումարը ուզածնուդ պէս զործածեցիք, ինձ չնկատեր այն:

« Մարտ ամսոյ մէջ՝ երկաթուղոյ մը շնութեան առաջար-

կութիւն կ'ըլլուր, և այս դործին համար երեք ընկերութիւններ ներկայացան հաւասար երաշխաւորութիւններով։ Այն առեն ինձ ըսիք թէ բնազդմամբ այնպէս կը կարծէք թէ արտօնութիւնը Հարաւային ըսուած ընկերութիւնը պիտի ստանայ, թէ շահագիտութիւններ ընելու խորհած չէիք, սակայն քանի մը պարագաներու մէջ ձեր բնազդումը ճիշդ դտած էի։

« Անմիջապէս այն ընկերութեան երկու երբորդ մասին բաժանորդ դրուեցայ, իրօք արտօնութիւնը նոյն ընկերութեան տրուեցաւ, ձեր գուշակութեան համեմոտ՝ բաժանորդութեանց դինը եռապատճիկ աւելցաւ և ես մէկ միլիոն ֆրանք շահեցայ, որուն երկու հարիւր յիսուն հազարը իրը նուէր ձեզ տուի։ Այն երկու հարիւր յիսուն հազար ֆրանքը ինչպէս դործածեցիք, ինձ չիյնար հարցընել դայն։

— Բայց վերջապէս բնչ ըսել կ'ուղէք, պարոն, ըստ տիկինը իւր բարկութենէն ու անհամբերութենէն սարսալով։

— Համբերեցէք, տիկին, հիմա խօսքս կը վերջացընեմ։

— Ըստ բաղդատոր պիտի ըլլամ։

— Ապրիլի մէջ՝ պաշտօնէին տունը ճաշելու դացիք։ Հոն Ապանիոյ խօսքը բացուեցաւ, և զաղոնի խօսքեր լսեցիք Տոն Գարջայի փախչելուն վրայօք։ ասոր վրայ սպանիական արժեթղթեր դնեցի, և Կարոլոս Եի Պիտոսոայէն անցած օրը վեց հարիւր հազար ֆրանք շահեցայ։ Այն վեց հարիւր հազար ֆրանքին յիսուն հազար թալենը գոտք առ իր, քանզի ձեր իւրաւունքն էր, և դուք ձեր հաճոյիցը դործածեցիք զանոնք, ու ես ձեզմէ հաշիւ չինտեցի։ այսու ամենայնիւ այս տարի հինգ հարիւր հազար ֆրանք ստացաք։

— Ետքը, ետքը, պարոն։

— Ետքը, այո՛, իրաւունք ունիք, ետքը դործը բալրութիւն աւրուեցաւ։

— Խօսելու զարմանալի եղանակներ ունիք։

— Ետքը, ասկէ երեք օր առաջ ու, Տըպրէի շետ քազաւ Հ 6

քականութեան վրայ խօսեցաք և անոր խօսքերէն այնպէս կտր՝ ծեցիք թէ Տոն Գարլօն վերստին Սպանիա մտեր է . այն ա- տեն՝ ես ալ արժէթղթերս ծախեցի , նոյն լուրը տարածուե- ցաւ , ամեն կողմ երկիւղը տիրեց , և ես ծախելէ գագրեցայ . Հետեւեալ օրը այնպէս պատահեցաւ որ եկած լուրը կեղծ ըւ- լայ , և ասոր վրայ եօթը հարիւր հազար ֆրանք կորսնցուցի : — Ետքը :

— Ետքը , որովհետեւ շահած իս մէկ քառորդը դուք կ'առ- նուք , կորսնցուցած իս ալ մէկ մասը դուք ինձ պիտի պարտա- ւորիք . եօթը հարիւր հազարին քառորդը հարիւր եօթանա- սուն և հինգ հազար կ'ընէ :

— Այդ ի՞նչ այլանդակ խօսքեր կ'ընէք , և չեմ դիտեր շի- տակը թէ այդ ամեն պատմութեան մէջ Պ . Տըպրէի անոնը ինչո՞ւ կը խառնէք :

— Վասն զի եթէ օրինակի համար իմ պահանջած հարիւր եօթանասուն և հինգ հազար ֆրանքո չունիք , կրնաք ձեր բա- րեկամներէն փոխ առնուլ . և Պ . Տըպրէն ալ ձեր բարեկամ- ներէն մին է :

— Երամ կ'ըսէք , դոչեց տիկին Տանկլար :

— Ո՛չ , շարժումներ ընելու , դոչելու և թատրերդական նոր խաղեր ներկայացընելու պէտք չկայ , տիկին , եթէ ո՞չ պիտի ստիպուիմ ձեզ ըսելու թէ այս տարի ձեր ստացած հինգ հարիւր հազար ֆրանքը Պ . Տըպրէ ընդունելով կը ծիծաղի իմ վրաս ինքնիրեն ըսելով թէ վերջապէս զտած է այն մի- ջոցը , զոր ամենէն ճարտար խաղամուները երբէք կրցած չեն դանել , այսինքն բաղդին այն խաղը , որով առանց դրամ գնելու կը շահի , և ամենեին վեաս չըներ երբ մենք կը կորսն- ցընենք — :

Տիկին Տանկլար ուզեց յարձակում ընել :

— Թշուառ մարդ , միթէ կը համարձակիք ըսել թէ ան- տեղեակ էիք այն պարագայէն , որուն համար այսօր զիս մե- ղադրելու կը յանդղնիք :

— Չեմ ըսեր թէ դիտէի, ամենելին չեր դիտեր ալ չեմ ըսեր, այլ կ'ըսեմ թէ չորս տարիէ՝ ի վեր մեր ընթացքը դիտեցէք, քանզի դուք իր կինս ու ես ձեր էրիկը ըլլալէ գաղրած ենք, և պիտի տեսնէք թէ որչափ տարրեր է անցեալէն։ Մեր ամենանական հանդարտութիւնը վրդովելէն քիչ մը առաջ՝ Խտալական թատրոնին մէջ այնչափ համբաւ ստացող այն անուանի ստուարածայն երդիւն հետ երածշտութիւն սորվել ուղեցիք, ես ալ Առնտոնի մէջ այնչափ հոչակեալ կաքաւիչ աղջկան հետ սկսրել սորվել ուղեցի։ Այս ընթացքը երկուքնուս միատեղ զրեթէ հարիւր հաղար ֆրանքի նստաւ։ Բան մը չըսի այն ատեն, որովհետեւ տան մէջ ներդաշնակութիւն պահէլ պէտք է։ Մարդու մը և կնոջ մը կատարեալ պարել և երածշտութիւն սորվելու համար հարիւր հաղար ֆրանքը սուղլ չէ։ Յետ սակառուց՝ երգելէն կը ձանձրանաք, և պաշտօնէի դիւանադպրին հետ քաղաքադիտութիւն սորվելու զաղափարը ձեր մտաց մէջ կը ծնի։ Ես ալ թողուցի որ սորվիք, քանզի ինչ հարկ է ինձ, քանի որ ձեր ընդունած դասերուն համար դուք կը վճարէք։ Սակայն այսօր կը տեսնեմ որ դրամարկղս ալ կը խառնէք, և ձեր դասառութիւնը կրնայ եօթը հարիւր հաղար ֆրանքի նստիլ ինձ տմիսը։ Բաւական է ալ, տիկին, այս ընթացքը չկրնար այսպէս տեել։ կամ քաղաքադէտը կը պարտաւորի ձրի գան տալ, և ես թոյլ տուութիւն ընեմ, և կամ այսուհետեւ տունս ուր պիտի չկոխէ։ կը լսէք, տիկին։

— Ա՛հ, ալ չեմ կրնար համբերել, պարան, դուեց Հերմին հեղձեալ ձայնիւ, տմարդութեան շափը անցուցիք։

— Բայց, ըստ Տանկլար, ուրախութեամբ կը տեսնեմ որ դուք ալ ինձմէ վար չէք մնար, և դուք յօժարաւթեամբ հնականդեցաք Օրինաց այն առակին թէ՝ «Պէտք է որ կինը իւր էրկան ետեւն երթայ»։

— Ա՛հ, կը թշնամանէք իսկ։

— Իրաւունք ունիք, վերջայընենք այս խօփերը և ցուրտ

անտարբերութեամբ խորհինք : Միայն ձեր բարութեանը համար ձեր զործոցը խոռնուած եմ ես , դուք ալ ինձի պէս ըրեք : Իմ գրամարկղիս վիճակը ձեզ չնկատեք ըսիք , թողայնափէս ըլլայ . ուրեմն ձեր արկղին ուշ դրեք , և իմ լիցրնելու կամ պարզելու հողը մի տանիք : Աակայն դուցէ այս ամենը քաղաքադէտ ժարնոքի մը հարուածը ըլլայ , զուցել պաշտօնեայն իրեն հակագաղափար ըլլալուս կատղած և ժողովրեան իմ վրաս ունեցած համակրութենէն նախանձելով Պ . Տըպրէի հետ խօսքերնին մէկ ըրած են զիս կործանելու համար :

— Ո՛չ , միթէ հաւանական բան է այդ :

— Բայց անշուշտ միթէ հեռադ բական կեղծ լուր մը , այսինքն անկարելիութիւն մը , կամ զողցես իրարմէ բոլորս վին տարրեր վերջին երկու հեռադ բալուրերը լսուած բան է . . . : Ստուդիս մասնաւորապէս ինձի համար եղած են ասոնք :

— Պարոն , ըստ տիկին Տանկլար աւելի խոնարհութեամբ , կարծեմ զիտէք աղէկ թէ հեռադ բատան այն զործակալը վուընտուցաւ , ըստւեցաւ իսկ թէ զինքը դատի պիտի կանչեն , և թէ զինքը բանտարկելու հրաման եղած էր , և այս հրամանը սղիտի զործադրուէր եթէ փնտուած ժամանակնին չփախչէր , որով իւր յիմարութիւնն ու յանցանքը հաստատեց . . . : Կը տեսնէք որ սխալմունք մ'էր այն :

— Այո , այնպիսի սխալմունք մը , որ անմիտներուն ծիծաղիլ , պաշտօնէին անհանդիստ զիշեր մը անցընել , Տէրութեան գիւանադպիրներուն թուղթ մրտուլ կու տայ , բայց ինձ ալ եօթը հարիւր հազար ֆրանք կը վասէ :

— Բայց , պարոն , ըստ Հէրմին յանկարծ , քանի որ ըստ ձեր կարծեաց այս ամենը Պ . Տըպրէի կողմէն եղած են , ինչու այս ամեն խօսքերը Պ . Տըպրէի ըսելու տեղ ինձ կ'ըսէք : Ինչու մարդը կ'ամբաստանէք և կնոշ հետ կը բռնուիք :

— Միթէ ես կը ճանչնամ Պ . Տըպրէն , ըստ Տանկլար . միթէ կ'ուզեմ ճանչնալ զան , միթէ կ'ուզեմ զիտնալ թէ

խրատներ կու տայ , և միթէ անոնց հետեւլ կ'ուղեմ , ոչ
այս ամեն բաները ընողը դուք էք և ոչ ես :

— Բայց ինձ այնպէս կ'երեւի թէ քանի որ . . . — :

Տանկլար ուսերը թոթվեց և անոր խօսքերը ընդմիջեց .

— Յիշեի խիստ յիմար արարածներ են այն կիները , ու
րոնք ինքզինքնին ողիներու տեղ դրած են մէկ կամ երկու
խորամանկութիւններ յառաջ տանելնուն համար : Բայց մտա-
ծեցէք , ձեր անկարգութիւնները էրիկնէդ պահէք անդամ ,
որ ձեր արուեստին այրբենարանն է , ինչու որ էրիկները
շատ անդամ՝ աչքերնին կը խփեն , բարձր ընկերութեան կա-
նանց բրածներուն քով դուք աննշմարելի օրինակ մը պիտի
ըլլայիք : Բայց ես տեսայ և միշտ կը տեսանեմ . տասն ու վեց
տարիէ 'ի վեր դուցէ ինձմէ խորհուրդ մը պահէլ կարաղ ե-
ղած էք , բայց ձեր ամեն ընթացքը , ամեն դործը և ամեն
պակասութիւնները ինձ յայտնի են . մինչդեռ դուք ձեր հնա-
րագիտութեան վրայ ծափ կը զարնէք և հաստատ կը կար-
ծէք թէ կը խարեք զիս . ինչ հետեւցաւ ասկէ . թէ և ես
տղէտ կը ձեանամ , սակայն Պ. տը Ալիլլաֆօրէն սկսեալ մին-
չեւ Պ. Տըպրէն բարեկամ մը չունիք որ առջևս չգողաց , ա-
մենքն ալ զիս իբր տան տէր կը ճանչնան , և իմ պահան-
ջածս ալ այս է . վերջապէս անոնցմէ մէկը չկայ որ հա-
մարձակի ինձ համար ըսել այն խօսքերը , որ ես հիմա
ձեզ կ'ըսեմ , կը ներեմ ձեզ որ զիս տաելի ընէք , բայց
կ'արդիլեմ զձեզ որ զիս ծաղըրելի ընէք և մանաւանդ ամեն
բանէ տուաջ և անշուշտ կ'արդիլեմ զձեզ որ հարստութիւնս
փայլընէք — :

Մինչեւ Ալիլլաֆօրի անունը հնչուելու վայրկեանը տիկին
Տանկլար ինքզինքը անխռով կերպիւ բռնած էր . բայց այս
անունը լսելուն պէս՝ երեսը գեղնեցաւ և շեշտակի ոտքի վրայ
ելնելով՝ ողի մը տեսանելու պէս բազուկները տարածեց , և
երեք բայց առնելով դէզ 'ի իւր էրիկը յառաջացաւ , որպէս
զիս անոր բերանէն այն դաղանիքին վերը լսէ , զօր Տան-

կըսր չէր դիտեր, և կամ թերեւ իւր սովորական նողիով նկատում վը չէր ուզեր բալրովին իւր բերանէն դուրս հանել:

— Պ. աը Ակլօֆօ՛ր ըսիք, ի՞նչ կը նշանակէ այդ անունը, և ի՞նչ ըսել կ'ուզէք:

— Ըսել կ'ուզէմ, տիկին, թէ ձեր առաջին ամուսինը Պ. աը Նարկոն ոչ փիլիսոփայ էր և ոչ սեղանաւոր, և կամ դուցէ երկուքն ալ ըլլալով և տեսնելով որ թագաւորի գործակալէ մը վրէժ չէր կրնար լուծել, տրտմութենէն կամ բարկութենէն մեռած է. քանզի ինը ամիս ձեր քովէն բացակայ ըլլալէն ետեւ զձեզ վեցամսեայ յղութեան մէջ դատւ: Աչ միայն զիտեմ թէ կոսկիս եմ, այլ կը պարծիմ իսկ այնպէս ըլլալուս: իմ առետրական դործողութեանցս մէջ յաջողելու միջոցներէս մին այս է: Խնչո՞ւ համար փօխանակ սպաննելու՝ ինքզինքը սպաննեց: վասն զի ազատելու դրամարկու չունէր: Քայլ ես իմ դրամարկուս պարաւուոր եմ. Պ. Տըսրէ ընկերս եօթը հարիւր հազար ֆրանք կորսնցընել կու տայ ինձ, թողինքն ալ իւր մասին ինկած բաժինը տուժէ, այն ատեն դործերնիս կը շարունակինք, եթէ ոչ հարիւր եօթանատուն և հինգ հազար ֆրանքին համար թող սնանկանայ և սնանկացեալներուն ըրածը թողը ընէ, այսինքն թող աներեսոյթ ըւլայ: Ա՛հ, զիտեմ որ սիրուն երիտասարդ մ'է երբ իւր տուած լուրերը ճիշդ են, բայց երբ սիրալ լուրեր տայ, իրեն պէս յիսուն հողի կայ քաղաքիս մէջ, որ իրմէ աւելի արժողութիւն ունին — :

Տիկին Տանկլար յանկարծակի եկեր էր, սակայն այս վերջին յարձակման պատասխաննելու դերադոյն ջանք մը ըրաւ: Թանաթոռի մը վրայ ինկա՛ Ակլօֆօրի, Ճաշէն ետեւ տեղի ունեցած տեսարանին և հետզէտէ սպատահած այն դժբաղդութեանց վրայ մասծելով, որոնք քանի մը օրէ 'ի վեր իւր տան վրայ կը ծանրանային և իւր ընտանեկան հանդարտութիւնը դայթակղեցուցիչ վէճերու կը փօխարկէին:


Տանկլար անոր երեսը անդամ չնայեցաւ, թէ և տիկինը ամնն ջանք 'ի զործ դրաւ նուաղելու համար:

Սեղահաւորը առանց աւելի խօսք մը խօսելու՝ պառկելու խուցին դուռը քաշեց և իւր սենեակը քաշուեցաւ։ այնպէս որ տիկին Տանկլար իւր կէս նուաղումէն սթափելով կարծեց թէ զէշ երազ մ'էր տեսածք։



ԳԼՈՒԽ Է.

ԵՐԱԽՍՆՈՒԹԵԸՆ ԽՈԲՀՈՒՐԴՆԵ



ԱՅ աեսարանին հետեւել օրը, այն որոշ շեալ ժամուն որ Տըպրէ իւր դրա սենեակը երթալու ժամանակ՝ տիկին Տանկլարի փոքր այցելութիւն մը ընելու սովորութիւն ունէր, իւր կառքը դաւիթին մէջ չերեցաւ։

Նոյն ժամուն, այսինքն կէս օրը կէս ժամ անցած՝ տիկին Տանկլար իւր կառքը պատրաստել տալով դուրս ելաւ։

Տանկլար անոր այս ընթացքը դիտեր էր, քանզի անոր երթալուն կ'ըսպասէր։

Աւստի հրամայեց որ տիկնոջ վերադարձը իսկոյն իրեն է-մացընեն։ բայց ժամը երկուքին դեռ տիկինը եկած չէր։

Ժամանելուքին ձիերը կառքին լծել տուաւ, խորհրդաւատունը դնաց, և ելումնից հաշուեկշին դէմ խօսելու համար իւր անունը արձանագրել տուաւ:

Աէս օրէն մինչև ժամը երկու իւր դաշյիշին մէջ սպասած միջոցին եկած պաշտօնագիրերը բացեր էր, հաշիւ հաշուոց վրայ դիզելով իւր սիրտը կը նեղանար, և քանի մը այցելութիւններէ զատ Գավալլրանթի դնդապետին այցելութիւնը ընդուներ էր, որ սեղանաւորին հետ զործը լմնցընելու համար առջի իրիկունէն իւր ծանուցած ժամուն Տանկլարի տունը ներկայացաւ իւր սովորական պաղսթեամբն ու Ճշգութեամբը:

Տանկլար խորհրդարանին մէջ սաստիկ վրդովման նշաններ յայտնեցով և տէրութեան պաշտօնէին դէմ սովորականէն աւելի խիստ ընթացք մը բռնելէն ետե՛ իւր կառքը մտաւ և հրամայեց կառավարին որ զինքը Շանզ-Էլիզէի առջի փողոցը, թիւ Յթ տանի:

Մօնթէ-Քրիսթօ իւր տունը կը դանուէր, բայց ուրիշ հիւր մը ունենալուն՝ խնդրեց Տանկլարէն որ վայրկեան մը սրահը սպասէ:

Սեղանաւորին սպասած միջոցին սրաշին դուռը բացուեցաւ, և աբբայի զգեստով մարդ մը ներս մտնելով, փոխանակ անոր պէս սպասելու, անտարակոյս տան մէջ անորմէ աւելի ընտանի ըլլալուն՝ բարեեց զան, և մօտակայ սենեակը մտաւ:

Քիչ մը ետքը՝ աբբային մտած սենեկին դուռը նորէն բացուեցաւ և Մօնթէ-Քրիսթօ երեցաւ:

— Ներումն կը խնդրեմ, սիրելիդ իմ սեպուհ, իմ աղնիւ բարեկամներէս մին աբբայ Պիւզնին, որուն ասկէ անցնելու տեսաք, գեռ նոր Բարիկ եկաւ, երկար ժամանակէ ի վեր իրաբմէ բաժնուած էինք, ուստի չկրցայ անմիջապէս թողուլ զան: Կը յուսաւ որ այս սպատճառաւ զձեզ սպասեցընելուն ներողալիս պիտի ըլլաք:

— Ի՞նչ ըսել է, ըսաւ Տանկլար, ընդ հակառակն ես ներ-

բումն կը խնդրեմ որ անպատճէ ժամանակի մէջ ելայ ու չի մաս պիտի երթամ:

— Ամենելին . կ'աղաչեմ՝ նստեցէք ։ Բայց , Տէր Աստուած , ի՞նչ ունիք , բոլորովին տիտուր կը տեսնեմ ձեր զէմքը . բատուցիւ կը սարսափեցընէք զիս : Դրամագլայ տէր մը՝ երբ տրաւում է՝ զիստեռը աստեղաց կը նմանի , ու աշխարհիս վրայ միշտ մեծ գժբաղգութիւն մը կը դուշակէ :

— Պատճառը այն է , սիրելին իմ պարոն , որ քանի մը օրէ՝ ի վեր գժբաղգութիւնը զիս պատեր է և ձախող լուրերէ ուրիշ բան չեմ լսեր :

— Ո՛չ , Տէր Աստուած , ըստ Մօնմէ-Քրիստօ . մրգեօք պարսոյի մէջ նոր մաս մը կրեցիք :

— Ոչ , դոնէ քանի մը օրուան համար այն գործ շիտին ցի . Հիմա բացէ՝ ի բաց խօսելով՝ Թրեստի մէջ սնանկութեան վրայ է խնդիրը :

— Իրա՞ւ կ'ըսէք . սնանկացողը Ճաղօպօ Մանֆրէտին չը լլայ :

— Ճիշդ ան է , մտածեցէք , պարոն , այս մարդը ցի խտեմ որչափ ժամանակէ հետէ տարին ութ կամ ինը հարիր հաշար ֆրանքի գործ կ'ընէր հետև ։ Երբէք հաշուի մէջ սխալ մը կամ հատուցման մէջ յապաղում մը ըրած չէր . այնպիսի մարդ մը որ իշխանի մը պէս կը հատուցանէր . Աէկ միլիոն ֆրանք անցուցի վրան և ահա այն թշուառ ական Ճաղօպօն հիմա իւր վճարումները կը դադրեցնէ :

— Ճշմարիտ կ'ըսէք :

— Բաղդին անլուր մէկ հարուածն է այս . անոր վրայ վեց հարիւր հաղար ֆրանք քաշած եմ , բայց փոխանակադիրերը անլճար ետ եկան . ասկէ զատ՝ իրմէ ստորագրուած չորս հարիւր հազար ֆրանքի փոխանակադիրեր ունիմ ամսոյս վերջը իւր Բարիզի թղթակցէն վճարելի : Այսօր ամսոյս ՅՅ է , փոխանակադիրերը վճարելու դրկեցի , ի՞նչ կ'ըսէք , թղթակցն աշաներեւոյթ եղեր է : Այս և Սպանիոյ գործ սէկտեղ առնելով՝ զեղեցիկ տմասավերը մը պիտի ունենամ :

— Բայց Սպանիոյ դործերնիդ սառյգ կորուստ մ'է :

— Անշուշտ, եօթը հարիւր հազար ֆրանք ելաւ դրամարկղէս :

— Դուք որ նախատես եւ փորձառու էք, ինչպէս այդպիսի դործի մը մէջ նետուեցաք :

— Ե՞ս, յանցանքը կնոջո է, երազ տեսեր է որ Տօն Գարշոն Սպանիա մտեր է, կինս երազի կը հաւատայ, երազը մազնիսական զօրութիւն ունի, կ'ըսէ, և երբ բան մը երազէ, ինչպէս որ ինքը կ'ըստուղէ, անշուշտ պէտք է որ այն բանը կատարուի : Եւր այս համոզման համար թոյլ կու աամ որ խաղայ . ինքը իւր գրամարկղը և իւր միջնորդը ունի, ուսակ խաղաց և կորսնցուց : Ստոյգ է որ իմ ստակովս շխաղար այլ իւր ստակովը, սակայն կրնաք հասկընալ որ երբ կնոջ ծոցէն եօթը հարիւր հազար ֆրանք կ'ելնէ, միշտ քիչ մը իւր էրկանը կը դպնայ : Երաւ կ'ըսէք, այս եղածը շէիք դիտեր . բայց այս կորուստը մեծ շշուկ մը հանեց :

— Այս, ատոր վրայ խօսելնին լսեցի, բայց մանրամասն տեղեկութիւն չունէի . ասիէ զատ՝ Պորսայի վերաբերեալ զործոց վրայօք բոլորովին անտեղեակ եմ :

— Ուրեմն դուք չէք խաղար :

— Ե՞ս, և ինչպէս կրնամ խաղալ, ես որ իմ եկամուտներս կարգադրելու համար այնչափ նեղութիւն կը կըեմ : Այն ատեն պիտի սահպուիմ գործակատարէս զատ համարակալ մը և զանձապահ մը բռնել : Բայց Սպանիոյ խօսքին դառնալով, ինձ այնպէս կ'երեի թէ Տօն Գարլոյի վերադարձին պատմութիւնը բոլորովին տիկնոջ տեսած երազը չէր . օրակ իրներն ասոր վրայ բան մը ըսած չէին :

— Ուրեմն օրակ իրներաւն խօսքին կը հաւատաք դուք :

— Ե՞ս, ամենեին չեմ հաւատար . բայց կարծեմ թէ Մեսուճ օրադիրը այն կարդէն դուրս է, և միայն սառյգ և հեռազական լուրեր կ'իմացընէ :

— Ահա չհասկըցուելու կէտն ալ այս է, կրկնեց Տանկլար . Տօն Գարլոյի վերադարձին լուրը իրօք հեռագրալուր մ'էր :

— Ուրեմն, ըստ Մօնթէ-Քրիսթօ, այս աժառյ մէջ զ ըստ թէ մէկ միլիոն եօթը հարիւր հազար ֆրանք կը կորսնցընէք:

— Գրեթէ չկայ, ձիշդ հաշիւս այդ է:

— Ե՞նչ կ'ըսէք, երրորդ կարգի հարստութեան մը համար, ըստ Մօնթէ-Քրիսթօ դթութեամբ մը, սաստիկ հարուած մ'է այս :

— Երրորդ կարգի ըսէք, ըստ Տանկլար քիչ մը պղտիկ իյնալով, ինչ ըսել կ'ուզէք այդ խօսքով:

— Հարստութեանց մէջ երեք գասակարգութիւններ կան, շարունակեց Մօնթէ-Քրիսթօ, առաջին կարգի հարստութիւն, երրորդ կարգի հարստութիւն և երրորդ կարգի հարստութիւն: Առաջին կարգի կ'անուանեմ այն հարստութիւնը, որ մարդս իւր ձեռքը զանձեր ունի, այսինքն կալուածներ, հանքեր և Գաղղրիոյ, Աւատրիոյ ու Անդղիոյ պէս տէրութեանց վրայ եկամուաներ, միայն թէ այն զանձերը, հանքերը և եկամուաները հարիւր միլիոն ֆրանքի գումար մը կազմն, երբ կրորդ կարգի հարստութիւն կ'անուանեմ տարադադործական շահերը, ընկերութեամբ եղած զործերը, փոխարքայութիւնները և այն փոքր իշխանութիւնները, որոնք մէկ ու կէս միլիոն ֆրանք եկամուանեւս աւելի չունին, և ըստ ամենայնի յիսուն միլիոն ֆրանքի չափ դրամագ լուսի ունին: Վերջապէս երրորդ կարգի հարստութիւն կ'անուանեմ զանազան շահեր բերող դրամագ լուսները, ուրիշ կամքէ կամ բաղդին յաջողութենէն կախեալ շահերը, որոնց մէկ մասը սնանկութենէ մը կը կորսուի, և որոնք հեռադրական լուրէ մը կը քայլացին: պատահական շահադիտութիւնները, և վերջապէս այն զործերը, որոնք բաղդին խաղարկութեանց ենթակայ են, և ասոնք ամենքն ալ տասն և հինգ միլիոնի չափ դրամագ լուս ունենան: Չեր ունեցածն ալ զրեթէ նոյնչափ չէ, ըսէք:

— Ե՞ս, այո՛, պատասխանեց Տանկլար:

— Ճետեաբար ասոր նման վեց ամսավերջով, շարունակեց Մօնթէ-Քրիսթօ առանց շփոթելու, երրորդ կարգի վահապաւն մը կրնայ իւր հողեվարքին մէջ ըլլալ:

— Ո՞չ, ինչպէս շուտով լինցուցիք, ըստ Տանկլար տխուր ժպիառվ մը:

— Թող եօթը ըլւայ, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ նոյն ձայնիք, ըսէք, ամենեին մոքերնէդ չանցուցիք այս բանս, որ եօթը անգամ մէկ միլիոն եօթը հարիւր հազար ֆրանքը տասն երկու միլիոն, կամ զբեթէ անոր մօտ բան մը կ'ընէ. . . . Ոչ, և իրաւունք ունիք, վասն զի այս մտածութիւններով երբէք մարդ մը իւր դրամագլուխները սիսի չդարձընէր. ինչ որ է մորթը քաղաքակրթեալ մարդու մը, նոյն է դրամադ լուխը սեղանաւորի մը: Ամենքս ալ մեր վարկին համեմատ աւելի կամ նուազ փառաւոր զգեստներ կը հազնինք, բայց մեռնուլ մարդը իւր մորթէն զատ բան չունիք, ասոր նման՝ դուք ձեր դործերը կարդադրելէն ետև, առ առաւելն հինդ կամ վեց միլիոն ունիք, ըստ որում երրորդ կարդի հարստութիւնները իրենց երեցածին երրորդ կամ քառորդ մասը կը ներկայացընեն, ինչպէս որ երկաթուղույ մը շարժիչ մեքենան զայն շրջապատող և ստուարացընող ծուխին մէջ աւելի կամ նուազ ուժով լոկ մեքենայ մ'է: Արգ՝ ձեր իրական դոյրը կազմող այն հինդ միլիոնէն զբեթէ երկուքը կորսնցուցիք, որոնք ձեր ենթագրեալ հարստութիւնը կամ վարկը կը նուազեցընեն, այսինքն թէ, սիրելիդ իմ պարոն Տանկլար, ձեր մորթը երակահատութեամբ մը բացուած է, որ չորս անգամ՝ կրկնուելով կրնայ մահ պատճառել: Ե՞ս, ուշ գրէք, սիրելիդ իմ պարոն Տանկլար. ըսէք, ստակի պէտք ունիք, կ'ուղէք որ ձեզ փոխ տամ:

— Ո՞չ, ինչ անդութ հաշուարար մ'էք, դոչեց Տանկլար իւր բոլոր փիլխոփայութիւնը և դաշտնիքը ծածկելու ջանքը օղնութեան կանչելով. այս ժամաւ ուրիշ շահագիտութիւններով ստակը իմ զանձս վերագարձած է: Երակահատութենէ դուրս ելած արիւնը անունդ զանձս լով վերստին երակներուն մէջ յորդեց, Սպանիոյ մէջ պատերազմ մը կորսնցուցի, Թրեստի մէջ յաղթուեցայ, սակայն Ճնդկաստանի իմ նաւային բա-

նուկս անշնուշպ նուռ մը զերի բոնած է , Մեքսիկոյի ուահին բայ զինուուրներս հանք մը զտած են :

— Աղէկ , աղէկ , սակայն սպին կը կենայ , և նոր կորուստ մը եղած ժամանակ վէրքը վերստին կը բացուի :

— Ոչ , ըստ որում ես հստատ քայլերով կը յառաջանամ , կրկնեց Տանկլար այնպիսի զրախօսի մը հստարակ Ճոռմաբանութեամբը , որ իւր վարկը բարձրաձայն քարողել կը փափաքի , որպէս զի ես կործանիմ , պէտք է որ երեք աէրութիւն կործանի :

— Անշուշտ , յայտնի տեսանք :

— Երկիրը արդիւնք չբերէ :

— Ցիշեցէք եթէր պարաբրտ և եօթը նիշար եղերը :

— Կամ թէ ծովը քաշուի Փարաւան թագաւորին ժամանակը եղածին պէս , բայց գարձեալ ուրիշ ծովեր կան , և նաևերը կարաւանի զործը կը կատարեն :

— Շատ աղէկ , շատ աղէկ , սիրելի Պ . Տանկլար , ըստ Մօնթէ-Քրիսթօ , կը տեսնեմ որ սխալեր եմ և երկրորդ կարգի հարստութեան մէջ կը մանեք :

— Զեր ինձ ըրած այս պատույն վրայ կ'ըսկախի՞ շունչ առնուլ , ըստ Տանկլար այնպիսի ժպիտով մը , որ Մօնթէ-Քրիսթոյի վրայ պղասոր լուսնի մը ազգեցութիւնը ըրաւ . զոր անյաջաղ նկարիչները տխուր կը նկարեն . բայց որովհետեւ զօրծի վրայ կը խօսիմք , յաւելցուց սեղանաւորը՝ խօսակցութիւնը փսխելու պատճառ մը գտնելուն վրայ ուրախանալով , ըսեր ինչ ինչ կրնամ ընել Պ . Գավալդանթիին :

— Ստակ տուէք եթէ ձեր վրայ վարկ մը ունի և եթէ այն վարկը ընդունելի երեխ ձեզ :

— Աւարկին ըսելիք չունիմ . այս առառ ինձ ներկայացաւ քառասուն հազար ֆրանքի փսխանակազրով մը Պիւզոնիէն սառագրեալ ձեր վրայ ՚ի տես վճարելի և ձեզմէ իմ վրաս դարձուցած : Կը հասկընաք որ անմիջապէս իւր քառասուն հազար ֆրանքը համբեցի — :

Մօնթէ - Քրիսթօ դ լուսվը նշան մը ըրաւ + որով իւր հաճու թիւնը կը յայտնէր :

— Ասկէ զատ , շարունակեց Տանկլար , իմ վրաս իւր որ գոյն համար վարկ մը բացաւ :

— Եթէ համարձակութեանս կը ներէք , ըսէք ինձ թէ երիտասարդին որչափ ստակ կու տայ :

— Ամփոք հինգ հաղար ֆրանք :

— Տարին վաթսուն հաղար ֆրանք . միտքէս անցաւ , ըսաւ Մօնթէ - Քրիսթօ ուսերը թոթվելով : Գավալդանթիները աղահ մարդիկ են . ամփոք հինգ հաղար ֆրանքով ինչ կընայ ընել երիտասարդ մը :

— Բայց եթէ երիտասարդը քանի մը հաղար ֆրանք աւելի ուզէ , անշուշտ . . . :

— Ոչ , ոչ , չըլլայ որ տաք . հայրը ձեր հաջուին կը թողու . անդրալեռնեան ամեն միլիոնատէրերը չէք ճանչնար գուք . ստոյդ կծծիներ են անոնք : Եւ որմէ՛ բացուած է այդ վարկը :

— Ֆէնցիի վաճառատունէն , որ Փիորէնցայի ամենէն երեկոներէն մէ կն է :

— Զեմ ըսեր թէ կը կորսնցընէք . այլ լաւագոյն է որ վարկատոմսին պայմանները յարդէք :

— Գավալդանթիի վրայ արդեօք վստահութիւն չունիք :

— Ես իւր ստորագրութեանը վրայ տասը միլիոն կընայի տալ . Գավալդանթիներուն հարստութիւնը երկրորդ կարգէն է , որուն վրայ քիչ մը առաջ կը խօսէի , սիրելիդ իմ ո , Տանկլար :

— Ամենեին չերեիր որ այնչափ հարուստ է . Ճշմարիտ պարզ դնդապետ մը կը կարծէի զան և ոչ ուրիշ բան :

— Այս կերպով իրեն պատիւ ըրած կ'ըլլայիք . իրօք ամենեին չցուցըներ : Երբ ես առաջին անդամ տեսայ զինքը , իւր կէս ուսադիրներովը ծերունի տեղակալ մը կարծեցի . Բոլոր Խտալացիները այսուէս են . հինաւուրց հրեաներու կը նմանին երբ Երեւելքի մողերուն ոլէս չղարդարուին :

— Երիտասարդը աւելի աղջկէ է . ըստ Տանելլար :

— Այո , քիչ մը զուցէ երկշռութեան բայց վերջապէս աւելի վայելուչ երեցաւ ինձ : Ասկայն փոքրիկ անհանդ ստութիւն մը զգացի անոր համար :

— Ի՞նչ պատճառաւ :

— Ըստ որում ինձ այնպէս ըսին թէ զրեթէ առաջին օրն էր որ ընկերութեանց մէջ կը մանէր , և դուք նոյն օրը զանիս տունս տեսաք : Ըստ խոտարարոյ առաջնորդի մը հետձամբրորդութիւն ըրեր է , և ամենեին Բարիզ եկած չէ եղեր :

— Այս ամեն բարձրաստիձան Խոտալցիները սովորութիւնունին իրենց մէջը ամուսնանաւ , այնպէս չէ , հարցուց Տանելլար անտարբերութեամբ մը . կ'ուզեն որ հարստութիւննին իրենց մէջը մնայ :

— Սովորաբար այնպէս կ'ընեն , ստոյդ է . բայց Գավալը զանթին տարօրինակ մէկն է և ուրիշներուն պէս ընել չուզեր : Ես այնպէս համոզուած եմ որ իւր սրդւոյն կին մը դանելու համար զան Գավալին կը դրէ :

— Կը կարծէք :

— Ապահով եմ :

— Եւ անոր հարստութիւնը որչափ ըլլալը լսած էք :

— Միշտ անոր խօսքը կ'ըլլայ . միայն թէ ոմանք միլիոններ ունի կ'ըսեն , ոմանք ալ կ'ըսեն թէ ոսկի մը չունի :

— Զեր կարծիքը ի՞նչ է :

— Եմ կարծիքս այն է որ բոլոր այս հին իշխանաւորները և Հրամանատարները , (ըստ որում Գավալզանթիւները բանակներու հրամայած են) , նահանդներ կը կառավարէին . իմ կարծիքս վերջապէս այն է որ զետնի տակ միլիոններ պահած են , զորոնք միայն իրենց անդրանիկ զաւակները զիտեն , ու սերունդէ սերունդ իրենց անդրանիկ զաւակաց կը ցուցընեն .

— Ըսէք , չոդ չէ :

— Եմ կարծիքս այն է որ բոլոր այս հին իշխանաւորները և Հրամանատարները , (ըստ որում Գավալզանթիւները բանակներու հրամայած են) , նահանդներ կը կառավարէին . իմ կարծիքս վերջապէս այն է որ զետնի տակ միլիոններ պահած են , զորոնք միայն իրենց անդրանիկ զաւակները զիտեն , ու սերունդէ սերունդ իրենց անդրանիկ զաւակաց կը ցուցընեն .

և ասոր ապացոյց՝ ամենքնին ալ Յեղափոխութեան ժամանակ կէն մասցած իրենց ֆիօրիներուն պէս դեղին և վախտ են . քանզի շարունակ անոնց նայելով, անոնց ցռլացումը սուացած են :

— Ծառ Ճիշդ է, ըստ Տանկլար, և իրօք այդ ամեն մարդիկը կանգուն մը կալուած չունին :

— Գո՞նէ շատ քիչ բան է ունեցածնին, Գավալդանթին Լուքքայի մէջ իւր պալատէն զատ տեղ չունի :

— Ահ, ուրեմն պալատ ունի, ըստ Տանկլար ծիծաղելով, առ ալ մեծ բան է :

— Այս, բայց ան ալ ելեմաից պաշտօնէին վարձած է, և ինքը անակի մը մէջ կը բնակի : Ո՛չ, արդէն ըսկ ձեզ թէ կծծի է :

— Ընաշառութեամբ կը խօսիք անոր վրայ :

— Մաիկ ըրեք, ես հազիւ թէ կը ճանչնամ զան, կարծեմ կենացս մէջ երեք անգամ տեսած եմ զինքը : Եմ բոլոր զիտցածս աբբայ Պիւզոնիէն և իրմէ իմացած եմ. այս առառու իւր որդւոյն համար ըրած խորհուրդները ինձ կ'իմացընէր, և ես նշարեցի որ իւր անբաւ հարստութիւնները Խտալիոյ պէս մեռած երկրի մը մէջ ապարդիւն մնացած տեսնելըն ձանձրացած ըլլալով, կ'ուզէր կամ Գաղղիոյ և կամ Ընդզիոյ մէջ միջոց մը զտնել իւր միլիոնները արդիւնաւորելու : Բայց թէ աբբայ Պիւզոնիին վրայ մեծ վստահութիւն ունիմ, սակայն ամենեին երաշնաւոր չեմ կրնար ըլլալ :

— Հող չէ . շնորհակալ եմ ձեր ինձ ղրկած յաճախորդին համար . արձանադրքերուս մէջ նշանակելու համար իիստ զեղեցիկ անուն մ'է այս, և զանձապահս Գավալդանթիներուն ով ըլլալը իմանալով՝ պանծանօք արձանադրեց զան * Ըսէք կ'աղաչեմ, թէ ապարդ հետաքրքրութիւն մ'է այս, երբ այս մարդիկը իրենց զաւակը ամուսնացընեն, օժիտ կու տան անոնց :

— Պարագայէն կախեալ է . Թոսկանայի համբաւաւոր մար-

դոցմէ խիստ մեծահարուստ Խոտալցի իշխան մը տեսայ , որ
երբ իւր զաւակները իւր կամացը համեմատ ամուսնանային ,
միլիոններ կու տար անոնց , և երբ իւր կամացը հակառակ
ամուսնանային , ամիսը երեսուն թալեռ ոռջիկ տալով կը
բաւականանար : Համարենք թէ Անարէա իւր հօրը հաճու-
թեամբը ամուսնանայ , զնդապետը մէկ , երկու կամ երեք
միլիոն կու տայ անոր : Եթէ օրինակի համար սեղանաւորի մը
աղջկան հետ ամուսնութիւնը հաստատէ , այն ատեն զուցէ
իւր որդւոյն աներին կոնակէն շահ մը սպասէ . սակայն եթէ
ասոր հակառակ հարսը իրեն անհաճոյ ըլլայ , հայր Գավաւ-
գանթին իւր դրամարկղը կը զոցէ , փականքին կրկին դարձ
մը կու տայ , և այն ատեն մեր Անարէա բարեկամը Բարիզեան
ընտանեաց զաւեկի մը պէս կեանք վարելու կ'ըստիսուէ :

— Բայց զուցէ այդ երիտասարդը Պավարիացի կամ Բէ-
րուվիացի իշխանուչի մը դանէ . զուցէ գաղտնի պսակ մը կամ
Բոմոզէն անցած հլուրատօ մը փնտոէ :

— Ոչ . բոլոր անդրալեռնեան այս մեծ պարոնները ընդ-
հանրապէս պարզ մահկանացուաց հետ կ'ամուսնանան . Դիո-
սի կը նմանին , ամեն տոհմերու հետ խառնութիւն կը սիրեն :
Բայց այդ հարցումները ինչո՞ւ կ'ընէք ինձ , սիրելիդ իմ Պ .
Տանկլար , արդեօք Անարէան ամուսնացընել կ'ուզէք :

— Ծիտակը ըսեմ , ըսաւ Տանկլար , Կէշ շահադիտութիւն
մը չերեկիր ինձ այս բանս , և ես շահադէտ մ'եմ :

— Կը յուսամ թէ ձեր դիտաւորութիւնը օրիորդ Տան-
կլարի հետ ամուսնացընել չէ զան . անշուշտ չէք ուզեր որ
Ալպէր այն խեղճ Անարէան սպաննէ :

— Ալպէր կ'ըսէք , ըսաւ Տանկլար ուսերը թոթվելով . մի-
թէ անոր հոգն է :

— Բայց կարծեմ թէ ձեր աղջկան նշանաձն է :

— Այսինքն թէ Պ . Մորսէրֆ և ես այս ամուսնութեան
վրայ երբեմ խօսեցած ենք . բայց տիկին Մորսէրֆ և Ալ-
պէր . . . :

— Անշուշտ ըսել կ'ուզէք թէ անյարմար բան մ'է :

— Ե՛ս, օրիորդ Տանկլար Պ., աը Մորսէրֆէն աւելի արժանաւորութիւն ունի կարծեմ:

— Օրիորդ Տանկլարի օժիտը անտարակոյս փառաւոր պիտի ըլլայ, մանաւանդ եթէ հեռազիրը յիմարական լուրեր չշաղորդէ:

— Ոչ միայն օժիտը . . . : Բայց աղէկ միտքս եկաւ, ըսէք կ'աղաւեմ:

— Ի՞նչ բան :

— Ի՞նչ պատճառաւ Մորսէրֆը և իւր ընտանիքը ձեր ճաշվին չըրաւիրեցիք :

— Հրաւիրեցի, բայց բժիշկներուն հրամայած օդափոխութեան համար տիկին Մորսէրֆի հետ Տիեր ընելու ճամբորդութիւնը պատճառ բռնեց :

— Եյո՛, այո՛, ըսաւ Տանկլար ծիծաղելով, ծովային օդափոխութիւնը օդ տակար պիտի ըլլայ անոր :

— Ինչո՞ւ համար :

— Որովհեամ իւր երիտասարդութեանը մէջ շնչած օդն է . . . Մօնթէ-Քրիսթօ այս խօսքերուն այնչափ ուշադրութիւն ընել չցուցուց :

— Բայց վերջապէս, ըսաւ կոմսը, եթէ Ալպէր օրիորդ Տանկլարի չափ հարուստ չէ, չէք կրնար ուրանաւ որ զեղեցիկ անուն մը կը կըէ :

— Թող այնպէս ըլլայ, ըսաւ Տանկլար, բայց ես իմ անունս աւելի նախամեծար կ'ընտրեմ:

— Անտարակոյս, ձեր անունը ամենուն սիրելի է, և ձեր տիտղոսը կը փառաւորէ, թէ եւ անով ձեր անունը փառաւորել կարծեր են. սակայն դուք խիստ հանճարեղ մարդ մը ըլլալով անշուշտ հասկրցած էք որ մէկ քանի խորունկ արմատացեալ նախապաշարմանց համեմատ հինգ դարու ազնուականութիւնը քսան տարուան աղնուականութենէն աւելի ընտիր է:

— Այս այս է պատճառը, ըստ Տանկլար այնպիսի ժպիտով մը, որով իւր հեղնելը ցուցընելու կը ջանար. այս այս է պատճառը որ Պ. Ալբեր ու Մորսէրֆէն աւելի Անտրէա Գավալլանթին հախամեծար կ'ընտրեմ:

— Բայց ես այնպէս կարծեմ, ըստ Մօնթէ-Քրիսթօ, որ Մորսէրֆի ընտանիքը Գավալլանթիներուն չթողուր զան:

— Մորսէրֆի ընտանիքը . . . : Մտիկ ըրէք, սիրելիդ իմ կոմս, կրկնեց Տանկլար, դուք համարձակ մէկնէք, այնպէս չէ:

— Կարծեմ:

— Ասկէ զատ՝ զինանշաններն ալ կը ճանչնաք :

— Քիչ մը:

— Ուրեմն իմ զինանշանիս դոյնը նայեցէք, Մորսէրֆի կենանշանին դոյնէն աւելի հաստատ չէ:

— Ի՞նչ է պատճառը:

— Որովհետեւ եթէ ես ծննդեամբ սեպուհ չեմ, զոնէ անունս Տանկլար է:

— Ետքը:

— Սակայն անոր բուն անունը Մորսէրֆ չէ:

— Ի՞նչ կ'ըսէք, անունը Մորսէրֆ չէ:

— Ամենելին:

— Կատակ մի՛ ընէք:

— Ես սեպուհ եմ, ըստ որում նոյն տիտղոսը ուրիշէ մը ստացած եմ, բայց ան կոմս չէ, քանզի ինքնիրեն կոմս եւ զած է:

— Ենկարելի է:

— Մտիկ ըրէք, սիրելիդ իմ կոմս, շարունակեց Տանկլար, Պ. ար Մորսէրֆ բարեկամս է, զոնէ երեսուն տարիէ ՚ի վեր կը ճանչնամ զան. ես իմ զինանշաններուս մեծ յարդ չեմ ընծայեր, քանզի ուրկից յառաջ եկած ըլլալո երբէք մռացած չեմ:

— Մեծ խոնարհութեան կամ մեծ հոգածութեան ապացոյց մ'է այդ, ըստ Մօնթէ-Քրիսթօ:

- Ուրեմն երբ ես փոքր դրազիր մ'էի , Մորսէրֆ ալ
պարզ ձկնորս մ'էր :
- Անունը ի՞նչ էր այն ատեն :
- Ֆէրնան :
- Միայն ֆէրնան էր :
- Ֆէրնան Մոնտէկո էր :
- Սասոյդ դ իսլէք :
- Ի՞նչպէս չգիտնամ , ինձ այնչափ ձուկեր ծախած է :
- Ուրեմն ինչո՞ւ ձեր աղջիկը անոր կու տայիք :
- Ինչու որ ֆէրնան և Տանկլար երկուքս ալ յառաջ ե-
կած , պատուոյ հասած , ազնուականացեալ և հարստացած
ըլլալով , նորքնապէս զիրար կը յարդենք բաց 'ի քանի պա-
րագաներէ , որոնք անոր համար ըսուեցան և երբէք ինձի
համար ըսուած չեն :
- Ի՞նչ բան :
- Ոչինչ :
- Ո՛չ , այս , համկըսայ . ձեր այդ խօսքը ֆէրնան Մոն-
տէկոյի անուան վրայ լսածս կը յիշեցընէ ինձ : Յունաստանի
մէջ այդ անունը լսած եմ ես :
- Ալի փաշայի գործին նկատմամբ :
- Ճիշդ այդպէս :
- Աչա դաղսնիքն ալ այդ է , կրկնեց Տանկլար , Ճշմա-
րիտ կ'ըսեմ որ այդ դաղսնիքը իմանալու համար շատ բան
կու տայի :
- Եթէ այդչափ կը փափաքէիք , իմանալը գժուար չէր :
- Ի՞նչ կերպով :
- Անտարակոյս Յունաստանի մէջ թղթակից մը ունիք :
- Անշուշտ :
- Եանեայի մէջ :
- Ամեն կողմ ունիմ . . . :
- Ուրեմն եանեայի ձեր թղթակցին զիր մը դրեցէք ու
ֆէրէտէլէնի Ալի փաշային գործին մէջ ֆէրնան անունով

Գաղղիացւոյ մը ինչ խաղ խաղացած ըլլալը հարցուցեք :
— Խրաւունք ունիք , զոշեց Տանկլար աշխուժիւ ստք ել-
նելով , այսօր կը գրեմ :
— Համ աղէկ կ'ընէք :
— Երթամ գրելու :
— Եւ եթէ խիստ զայթակղեցուցիւ լուր մը ստանաք :
— Զեղ կը հաղորդեմ :
— Եւ ես շնորհակալ կ'ըլլամ ձեզ — :
Տանկլար սենեկէն դուրս ելաւ և գրեթէ մէկ ոստիւնով
իւր կառքին հասաւ :



Պ Ա Ռ Ա Ր Ք Ք .

ԹԵԳԵԼՈՐԻ ԳՈՐծԵՎԵԼԻՆ ԳՈՎԻՇՔ

Թուզունք սեղանառորը որ ձիերուն մեծ ար-
շաւանօքը Մօնթէ-Քրիսթոյի տունէն մկնի ,
և տիկին Տանկլարի առաւօտեան այցելու-
թեան դառնանք :

Արդէն ըսինք որ կէս օրը կէս ժամ ան-
ցած տիկին Տանկլար իւր կառքը պատրաստել տալով դուրս
ելքը էր :

Կառքը Աէր-Ժէրմէն արուարձանին կողմը ուղղեցաւ, Մազար փողոցը մտաւ, և Բօն-Նէօֆի Շամբան կանգ առաւ:

Տիկինը կառքէն իջաւ, և ոտքով նոյն փողոցը անցաւ, և Խիստ պարզ հաղուած էր, ինչպէս որ կը վայելէ առտու իւր տունէն դուրս ելնող ազնուական կնոջ մը:

Աէնէկօ փաղոցը ուրիշ կառք մը վարձեց, և Հրամայեց կառավարին որ Հէրլէ փողոցը տանի զինքը:

Կառքը մանելուն պէս՝ ծոցէն խիստ քով մը հանեց, իւր յարդեայ գլխարկին կապեց, ու գլխարկը գլուխը դնելով՝ ուրախութեամբ տեսաւ ծոցի փոքր հայելիին մէ ջ որ իւր սպիտակ մորթէն ու աչաց վառվուն բիրէն զատ բան մը չէր երեեր:

Կառքը Նէօֆ կամուրջը անցաւ և Տոֆինի Հրապարակէն Հարլէյի բակը մտաւ. տիկին Տանկլար կառաղանը վճարելով դուրս ելաւ, յուշիկ դէպ 'ի սանդուխը յառաջացաւ և իսկ կոյն Ըրդարութեան պալատին Բա-Բէրտիւ ըսուած մնձ սրա-հը հասաւ:

Առտուները պալատին մէ ջ շատ զործ և հետեաբար շատ բաղմութիւն կ'ըլլայ:

Այս զործով զբաղեալ մարդիկը կանանց երեսը նայելու շատ ժամանակ չունին:

Ուստի տիկին Տանկլար սրահէն անցաւ, բայց հոն իրենց փաստաբաններուն սպասող տասնի չափ ուրիշ կանանց վրայ եղածէն աւելի ուշադրութիւն չըրին անոր:

Պ. ոը Ա.իլթֆօրի նախասենեկին մէ ջ բաղմութիւնը խոներէր, բայց տիկին Տանկլար իւր անունը տալու անդամ պէտք չունեցաւ. սպասաւոր մը զինքը տեսնելուն պէս ոտք ելաւ, անոր մօտեցաւ, և հարցուց թէ Պ. թագաւորի զործակալին ժամադիր եղած անձը ինքն է, և իւր հաստատական պատասխանին վրայ՝ մասնաւոր նրբագաւիթէ մը Պ. ոը Ա.իլթֆօրի դահլիճը տարաւ զան:

Դաստաւորը կռնակը դրան դարձուցած և թեամսոնի մը վրայ նստած զիր կը դրէր:

ո. Ա.իլքօր դրան բացուիլը , սպասաւորին և Աերս հրամայեցէք , տիկին ո ըսելը ու դրան վերստին գոցուիլը լսեց , և ամենեին շարժում մը շրրաւ :

Բայց հեռացող սպասաւորին սանաձայնը անլսելի ըլլալուն պէս՝ աշխուժիւ մը զլուխը դարձուց , զնաց դրան պարզունակը դրաւ , վարադոյրները քաշեց և դաշլիճին ամեն անկիւնները աչքէ անցուց :

Սպահով ըլլալով որ մէկը զիրենք չէր տեսներ և չէր կըր նար իրենց խօսակցութիւնը լսել :

— Ընորհակալ եմ ձեր Ճշգումենէն , տիկին , ըսաւ ու աթոռ մը ներկայացուց անոր . տիկին Տանկլար ընդուեց զայն , քանզի իւր սիրտը այն աստիճան կը բարախէր որ կարծէր թէ կը խեղդուէր :

— Եհա , ըսաւ թագաւորի դործակալը ինքն ալ նստելով և իւր թեաթոռը կէս մը դարձնելով , վերջապէս տիկին Տանկլարի զիմացը գտնուելու կարող եղայ . որչափ ժամանակէ , տիկին , որ ձեզի հետ առանձին խօսելու բաղդաւորութենէն զրկուած եմ , և ցաւ ՚ի սիրտ կը տեսնեմ որ վշտալի խօսակցութիւն մը ընելու համար վերստին զիրար դտած ենք :

— Սակայն կը տեսնէք , պարոն , որ ձեր առաջին կոչմամբը եկայ , թէե ոյդ խօսակցութիւնը աւելի ինձ վշտալի է քան թէ ձեզ — :

Ա.իլքօր դառնադին ժպտեցաւ :

— Ստոյդ է ուրեմն , ըսաւ՝ աւելի իւր մտածութեանցը սպատասիանելով քան թէ տիկին Տանկլարի խօսքերուն , ըստոյդ է ուրեմն որ մեր դործերը մուժ կամ յայտնի կերպով իրենց հետքը կը թողուն մեր անցեալին մ.ջ. ստոյդ է ուրեմն որ մեր անցեալ կենաց քայլերը սողունի մը աւաղի վրայ սովորու կը նմանին . և հետք մը կը թողուն . ափս'ս , շատերուն համար այս հետքը իրենց արտասուաց հետքն է :

— Պարոն , ըսաւ տիկին Տանկլար , սրտիս յուզմունքը կը համերնաք , այնպէս չէ , հող տարէք ինծի , կ'աղաչեմ : Այն

սենեակը , ուր այնչափ յանցաւորներ դողալով և ամօթալից մտած են . այն թեաթոռը , որու վրայ ես ալ սարսուալով և ամօթահար նստայ . . . : Ո՛չ , հաւատացէք , պարոն , որ լաւ մը մտածելով , ինքզինքս խիստ յանցաւոր կին մը կը նկատեմ ու զձեզ սպառնալից դատաւոր մը — :

Վիլսֆօր գլուխը շարժեց և հառաչանք մը հանեց :

— Ես ալ , կրկնեց , ինքնիրենս կ'ըսեմ թէ իմ տեղս դատաւորի մը թեաթոռը չէ , այլ ամբաստանեալի մը նստարանը :

— Դո՞ւք , ըստ տիկին Տանկլար զարմանքով :

— Այո , ես :

— Կարծեմ , պարոն , թէ ձեր անտարբերութիւնը դործին վիճակը աւելի կը ծանրացընէ , ըստ տիկին Տանկլար՝ որուն աչքը անցաւոր նշայրով մը փայլեցաւ : Ամեն աշխոյժ երիտասարդները ձեր հիմա յիշած հետքը զծած են . Ամեն կրից տակը և ամեն զուարձութիւններէ ետքը սրտի մէջ փարո խայթ մը կայ , ահա այս պատճառաւ թշուառացելոց մշտնջենաւոր պաւէն Վւետարանը մեղաւոր աղջկան և պոռնիկ կնոջ հինալի առակը իբր միթթարութիւն թողուցած է մեզ թշուառ կանանց : Ուստի երիտասարդութեանս մոլութեանց վրայ խորհելով , շատ անդամ կը մտածեմ որ Աստուած պիտի ներէ ինձ անոնց համար , ըստ որում կրած նեղութիւններս եթէ ոչ ներում զոնէ հատուցում մը կրնան ըլլալ . բայց էրիկ մարդիկ ամենեին այս բաներէս երկիւղ շունին . ամեն տեղ ներդութիւն կը դանեն , և դայթակղութիւնը աւելի կ'աղնուացընէ զանոնք :

— Տիկին , պատասխանեց Վիլսֆօր , դուք կը չանչնաք զիս . ես կեղծաւոր չեմ , կամ զոնէ առանց պատճառի կեղծաւութիւն չեմ ըներ : Եթէ դէմքս խիստ երեսյթ մը ունի , պատճառը այն է որ շատ դժբաղդութիւններ զայն տիրեցուցած են . եթէ սիրսս քարացեալ է , իւր ընդունած հարստածներուն համբերելուն համար է : Երիտասարդութեանս մէջ այսպէս չէի , Մարսիլիոյ Գուր փողոցին տան մէջ հարսնախու-

սութեանս իրիկունը սեղանի մը բոլորտիքը նստած ժամանակնիս այսպէս չէի : Բայց այն ժամանակէն 'ի վեր իմ վրաս և բոլորտիքս ամեն բան փոխուած է . դժուար զործերու եւ տեսէ ըլլալով և իմ առջիս կամայ կամ ակամայ , յայանի նապատակաւ կամ դիպուածով գժուարութիւն հանողները ջախ-ջախելու համար կեանքս մաշեցաւ : Քիչ անդամ կը պատահի որ եռանդեամբ փափաքուած բան մը եռանդեամբ չարդիլուի այն մարդոցմէ , որոնցմէ մեր փափաքածը ստանալ կ'ուզենք կամ անոնց ձեռքէն զայն յափշտակելու կը ջանանք : Այսպէս մարդոց չարութեանց մեծադոյն մասը կարևորութեան երկոյ-թով իրենց առջել ներկայացած են . ասկէ զատ՝ սաստիկ եւ ռանդի , երկիւղի և յուզման ժամանակ դործուած չարութիւն մը կրնար չգործուիլ անկէ հեռանալով . ասոր միջոցը դիւրին և պարզ կ'երեի մեր աչաց , թէե մարդիկ կուրութեամբ զայն տեսած չեն . ուստի իւրովի կ'ըսենք . « Ի՞նչո՞ւ ես փոխանակ այս բանս ընելու՝ այն բանը չըրի » : Ընդ հակառակն կիները շատ քիչ անդամ խղճի խայթեր կ'ունենան , ըստ որում շատ քիչ անդամ որոշումը ձեր կողմէ կ'ըլլայ . ձեր դժբաղդու-թիւնները դրեթէ միշտ ուրիշի վրայ կ'իյնան , և ձեր պակա-սութիւնները դրեթէ միշտ ուրիշի յանցանքն են :

— Այսու ամենայնիւ , պարոն , պատասխանեց ամիկին Տան-կլար , անշուշտ ինձի համամիտ էք որ եթէ ես յանցանք մը դործեցի , և եթէ այն յանցանքը իմս ալ ըլլար , երեկ ի-րիկուն անոր խիստ պատիժն ընդունեցի :

— Խեղճ կին , ըստ Վ.իլքօր անոր ձեռքը սեղմելով . ձեր կարողութենէն վեր պատիժ մ'էր այն . ըստ որում երկու ան-դամ՝ քիչ մասց որ պիտի մեռնէ իք , սակայն . . . :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք :

— Ըսել կ'ուզեմ , տիկին , որ ձեր ոյժը ամփոփէք , քանզի տակաւին տեսնելիք ունիք :

— Տէր Աստուած , զոչեց տիկին Տանկլար երկիւղով մը , տակաւին ի՞նչ պիտի տեսնեմ արդեօք :

— Միայն անցեալը կը տեսնէք դուք, տիկին, և իրաք վշտալի է այն, սակայն աւելի ախուր ապագայ մը երեակայեցէք, այսի, սոսկալի և դուցէ, . . . արիւնալի ապագայ մը — :

Տիկին Տանկլար Ակալֆօրի սրափ հանգարտութիւնը կը չանչնար, անոր այս յուզեալ խսպերուն այնչափ զարմացաւ, որ դռչելու համար բերանը բացաւ, բայց ձայնը իւր կոկորդին մէջ մարեցաւ:

— Եյն ահաելի անցեալը ինչպէս արգեօք երեան ելաւ, դռչեց Ակալֆօր, ինչ կերպով զերեզմանին և մեր սրտերուն խորհն, ուր կը հանդշէք, ուրուականի պէս գուրս ելաւ, որպէս զի մեր այսերը դունատէ և մեր գէմքը շառագնէ:

— Ափոքս, ըստաւ Հերմին, անտարակոյս դիսուած մ'է այս:

— Դիպուած մը, կրկնեց Ակալֆօր, ոչ, ոչ, տիկին, դիպուած մը չէ այս:

— Ի՞նչպէս, միթէ այս ամենը բնողը դիպուածը չէ, միթէ Մօնթէ-Քրիսթոյ կոմսին այս տունը զնելը, պարտէզը փորել տալը, վերջապէս ծառերուն տակը հողին մէջէն այն ողարմելի զաւակը գուրս հանելը դիպուածով չէ: Խեղճ անմեղ արարած, որ ինձմէ ծնար, և քեզ համբայր մը անդամ չկրցայ աւալ, սակայն ո՛րշափ արտասուք թափեցի քեզի համար: Ե՛չ, պարան, չկրցայ սրտիս այլայլութիւնը զսպել երբ կոմսը ծաղիկներուն տակէն դանուած այն սիրելի դիակին վրայ կը խօսէք:

— Ոչ, տիկին, աշա ձեզ ըսելու սոսկալի խօսքն այս է, պատասխանեց Ակալֆօր ցած ձայնին, ոչ, ծաղիկներու տակէն դիակ մը դանուած չէ, հողին տակէն մանուկ մը հանուած չէ, պէտք չէ լալ, պէտք չէ ողբալ, այլ պէտք է դողալ:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, զուցեց տիկին Տանկլար բոլորովին դողդղալով:

— Ըսել կ'ուզէմ թէ Մօնթէ-Քրիսթոյ կոմսը այս ծառերուն քովը փորել տալով, ոչ մանկան կմախք գտած է և ոչ արկղիկի երկաթներ, ըստ սրում այն ծառերուն տակը չէին ոչ մանուկը և ոչ արկղը:

— Մանուկը և արկղը հօն չէին կ'ըսէք, կրկնեց տիկին Տանկլար՝ թագաւորի դործակալին վրայ իւր աչքը յարելով, որուն բիբը ընդարձակուելով իւր սոսկումը կը յայտնէր. մանուկը և արկղը հօն չէին կ'ըսէք, կրկնեց դարձեալ այնպիսի անչի մը պէս, որ իւր խօսքերովն ու ձայնովը կը ջանայ անոր բերանէն ելնելու պատրաստուած խորհուրդները յափշտակելու:

— Աչ, ըստաւ Ակիլլաֆօր՝ իւր դէմքը ձեռացը մէ չ պահելով, ոչ, հարիւր անդամ ոչ . . . :

— Բայց խեղջ մանուկը դուք այն տեղը չթաղեցիք, պարոն. ինչո՞ւ կը խաբէք զիս, ի՞նչ է ձեր դիտաւորութիւնը, ըսէք:

— Այն տեղը թաղեցի, բայց մտիկ բրէք, մտիկ ըրէք, տիկին, և պիտի ցաւիք իմ վրաս, ես որ առանց զձեղ մասնակից ընելու՝ քսան տարի այն վշտաց քեռը կրեցի, զոր հիմա ձեղ պիտի ըսեմ:

— Տէր Ասուուած, կը սոսկացընէք զիս, բայց հող չէ, բուք, մտիկ կ'ընեմ ձեղ:

— Գիտէք թէ ինչպէս անցաւ այն վշտակ դիշերը, որ դուք դամասկեան կերպասով զարդարուած այն սենեկին մէջ ձեր երկանց անկաղինը կը դտնուէիք, ես ալ դրեթէ ձեղի չափ ողեռապառ եղած՝ ձեր ազատութեան կ'ըսպասէի: Աեր ջապէս մանուկը աշխարհէք եկաւ, բայց անշարժ, անշունչ և անձայն ձեռքս յանձնեցին, ուստի մեռած կարծեցինք զան — :

Տիկինը յանկարծ շարժում մը ըրաւ իւր նստած ամռախն վրայէն ցատկել, ուզելու պէս:

Բայց Ակիլլաֆօր անոր ուշադրութիւնը հայցելու համար ձեռքերը միացընելով կեցուց զան:

— Մեռած կարծեցինք զան, կրկնեց Ակիլլաֆօր, ուստի արկղի մը մէջ դրի, պարտէզը իջայ, փառ մը փորեցի և շուտով թաղեցի զան:

« Հաղիւ թէ հողը անոր վրայ ձածկեր լմցուցեր էի երբ քորսիացին բազուկը ինձ ուղղուեցաւ:

« Առջես ստուերի պէս բան մը աեսայ և նշոյլի մը փայլիլը տեսայ :

« Ցու մը զդացի, ուղեցի պոռալ, պաղ սարսուռ մը բոլոր մարմինս պատեց և ձայսս կոկորդիս մէջ մարեց

« Ոգեսպառ գետինը ինչկայ և կարծեցի թէ սպաննուեցայ :

« Ամենեին պիտի չմոռնամ ձեր զերագոյն աներկիւղութիւնը, երբ սթափելով ընդ քարը մինչև սանդուխին ոտքը ողեսպառ հասած միջոցիս՝ դուք ալ ձեր ուժաթափ վիճակին մէջ իմ դիմացս ելաք :

« Անտարակոյս այն աչոելի արկածին վրայ լոռւթիւն պահել պէտք էր :

« Դուք ձեր գայեակին օղնութեամբը սենեակնիդ վերադարձաք, և իմ վէրքս մենամարտութեան մը արգիւնքը համարուեցաւ :

« Այս եղելութիւնը ակնկալութեանս հակառակ բոլորովին դաղոնի մաց :

« Զիս Աէրսայլ տարին, երեք ամիս մահուան հետ մրցեցայ :

« Աերջապէս երբ ապրելու յոյսեր տեսան վրաս, բժիշկը հարաւային օդը և արել հրամայեց ինձ :

« Զորս հոգի զիս Բարիզէն Շալոն տարին՝ օրը վեց մղոն յառաջանալով. տիկին Աիլֆօր իւր կառքովը իմ պատղարակիս ետեէն կռ դար :

« Շալոնէն զիս Սոն տարին, ետքը Ռոն դացի, ու ջուրին հոսանքով մինչև Արլ իջայ. ետքը Արլէն ալ դեսպակով համբաս շարունակեցի մինչև Մարտիլիա :

« Կատարեալ առողջանալու համար տասը ամիս անցաւ :

« Այնուչեաւ ձեր վրայ լուր մը շառի, ձեր ուր ըլլալը հարցընելու անդամ չէի համարձակեր :

« Երբ Բարիզ վերագարձայ, իմացայ որ Պ. Կարկոնէն այրի մնալով Պ. Տանկլարի հետ ամուսնացեր էք :

« Կնքդինքս գտնելէս 'ի վեր միտքս բոլորովին մէկ բանի զրաղած էր. միշտ այն մանկան դիակին վրայ կը խորհէի,

որ ամեն դիշեր երազիս մէջ զետնին տակէն դուրս կ'ելնէր ,
և փոսին վրայ կը նատէր իւր նայուածքովն ու շարժումովը
ինձ սպառնալով :

« Աւստի Բարիզ վերագառնալուս պէս հարցուցի և իմացայ
որ այն տունէն ելնելէս ՚ի վեր անոր մէջ մարդ բնակած չէր ,
տակայն ինը տարուան համար նոր վարձու տուեր եին զայն :

« Գացի վարձողը դտայ , վարձու դաշնակ իրը ջնջելու հա-
մար հատուցում մը առաջարկեցի՝ պատճառելով որ կնոջս
հօրը և մօրը ստացուածքն եղած այս տունը օտարականներու
ձեռքը անցնիլը տեսնել չէի ուզեր :

« Ինձմէ վեց հազար ֆրանք հատուցում ուզեցին . տասը
հազար , քսան հազար ալ ուզէին՝ պիտի ապյի :

« Պահանջուած զումարը վրաս ունէի , շուտով պայմանա-
դրին ջնջումը ստորագրել տալէս ետե , ձի հեծայ և արշա-
ւանօք Օթէօյլ գացի :

« Այն տունէն մեկնելէս ետե մարդ մը հոն մտած չէր :

« Կէս օրէն ետե ժամը հինգն էր , կարմիր սենեակը ելայ
և հոն սպասեցի որ դիշեր ըլլայ :

« Տարի մը անընդհատ հողեվաբիս մէջ իւրովի ըսածներս
աւելի սպասնադին մտացս մէջ վերստին ներկայացան :

« Այն Քորսիսիցին , որ իւր վրէժինդրութիւնը ինձ իմա-
ցընելով Նիմէն մինչեւ Բարիզ ետեէս եկեր էր , այն Քոր-
սիսիցին , որ պարտիզին մէջ պահուածելով զիս զարկեր էր , փո-
սը փորելս և մանուկը թաղելս անցուշա տեսած էր . կրնար
զձեղ ալ տեսած ըլլալ , զուցէ արդէն ճանցած ալ էր

« Արդեօք այն սոսկալի զործին զաղանիքը օր մը երեան
պիտի հանէր

« Արդեօք քաղցր վրէժինդրութիւն մը պիտի ըլլար իրեն
երբ իմանար թէ ես իւր դաշոյնէն մեռած չեմ :

« Աւստի ամեն բանէ առաջ և ամեն վտանգ յանձն առնե-
լով անհրաժեշտ պէտք էր որ այն անցեալին հետքը աներե-
ւոյթ ընել տամ , և անոր ամեն տարրական շաւիղը ջնջեմ .
այն տաեն ասկահով պիտի ըլլայի :

« Ահա այս էր պատճառը որ վարձու դաշնագիրը չնջեցի, ասոր համար էր որ նոյն տունը դացեր էի, և այս պատճառաւ էր որ հոն կ'ըսպասէի:

« Գիշեր եղաւ, բայց սպասեցի որ մթութիւնը աղէկ պատէ:

« Առանց Ճրագի այն սենեկին մէջ կ'ըսպասէի, հողմին շնչումը վարագոյրնելը կը գողացընէր, որոնց ետին կարծէի թէ լրտես մը պահուած է:

« Մերթ ընդ մերթ կը սարսուայի, ինձ այնպէս կ'երեէր թէ ետիս այն անկողնոյ մէջ ձեր Ճիշերը կը լսեմ: Աւստի չէի համարձակեր զլուխս դարձընելու:

« Սիրաս լոռութեան մէջ կը բարախնէր, և կ'ըզդայի որ բարախիւնը այն աստիճան սամոփիկ էր, որ կարծէի թէ վէրքս վերստին պիտի բացուի:

« Վերջապէս դաշուային այս ամեն շշուկները մի առ մի մարեցան. հասկրցայ որ վախնալու տեղի չունէի, և մէ կը չկար որ զիս տեսնէր. ուստի որոշեցի որ վար իջնեմ:

« Մտիկ ըրէք, Հէրմին, դիտէք որ ես աներկիւղ եմ, բայց երբ ծոցէս սանդուխին այն փոքր բանալին հանեցի, որ երկուքնուս ալ այնչափ սիրելի էր, և որուն ոսկի օղակ մը անցընել ուղեցիք դուք, երբ գուռը բացի և պատուհաններուն մէջն ոլորածոյ սանդուխին աստիճաններուն վրայ տժդոյն լուսնին արձակած ուրուականի նման սպիտակ լուսոյ երկար շերտը տեսայ, իսկոյն պատին քովը քաջուեցայ և քիչ մնաց որ պիտի պոռայի. կարծէի թէ պիտի խենթենամ:

« Վերջապէս խելքս դլուխս ժողվեցի և աստիճան աստիճան սանդուխին վար իջայ:

« Միայն մէկ բանի չէ կրցեր յաղթել, այն է ծնդացս տարօրինակ դողդոջիւնին:

« Իջնելու ժամանակս սանդուխին վանդակին փաթթուած էի, եթէ ոչ անշուշտ վար պիտի դլորէի:

« Երբ վարի դրան քովը հասայ, անոր դրսի կողմը պատին կոթընցուցած բահ մը տեսայ:

« Հետո զողի լաստեր մը առած էր . երբ ծառերուն քովը հասայ , վասեցի զայն և ճամբաս շարունակեցի :

« Այսեմբերի վերջերն էր . պարագալին կանաչութիւնը աներեսյթ եղեր էր . ծառերը վախտ մերկ թեերով կմախքի նման կ'երեւէին , և մոռեալ աերեները աւազին վրայ ցրուած ոտիցտ ներքե կը ճշէին :

« Սասկումը այն աստիճան սիրտս կը ճնշէր , որ խիտ ծառերուն մօսեցած ժամանակս ծոցէս ատրճանակլ մը հանեցի և զայն ալատրաստելով ձեռքա ըսնեցի :

« Ինձ այնպէս կու դար թէ ոստերուն մէջէն Քորսիացիին կերպարանքը կը աեսնեմ :

« Լապատրուլս խիտ ծառերը լուսաւորեցի և նոյեցայ որ մարդ չկար :

« Կայուածքս բոլորտիքս չըջեցի , բոլորովին առանձին էի . ամսնեին շշուկ մը անդամ զիշերուան լուութիւնը չէր խանգարեր . միայն բուի մը ձայնը կը լսուէր , որ կարծես զիշերային ուրուականները կանչելու համար սուր և ախրաղին ձայն մը կը հանէր :

« Լապատրուլս երկախւլ ոստի մը անցուցի , զոր արդէն տարի մը առաջ տեսած էի փոսը փորելու համար կեցած տեղս :

« Ամառուան մէջ այս տեղ խոտերը խառութեամբ աճեր էին , և աշնան մէջ այն տան մէջ մէկը չէր զանուեր որ զանոնք հնաձէ :

« Սալայն քիչ մը անդին խոտերը աւելի նուազ աճեր էին . այս տեղը իմ ուշադրութիւնս զբաւեց . յայսանի էր որ թաղած տեղս էր այն :

« Աւստի զործի սկսայ :

« Վերջապէս հասեր էի այն ժաման , որուն տարիէ մը աւելի ժամանակէ 'ի վեր կ'ըսպասէի :

« Սակայն ակնկալութեանս հակառակ՝ բահս հողին մէջ ընդդիմութեան մը չհանդիպեցաւ , թէև առաջինէն երկու անգամ աւելի մեծ փոս մը բացեր էի :

« Կարծեցի թէ սխալեր եմ, ամեն կողմ նայեցայ, ծառերը դիտեցի, և առջի դիրքը միտքս բերել շանացի:

« Թէ և Հիւսիսային ցուրտ և սաստիկ հողմը տերեամերկ ոստերուն մէջէն կը փչէր, սակայն քրտինքս Ճակատէս վար կը հոսէր:

« Միտքս բերի որ դաշոյնի հարուածը ընդունած միջոցիս փոսը ծածկելու համար ոտքովս հողը կը կոխէի. հողը կոխած ատենս՝ կեղծ եպենոսի ծառի մը կոթընած էի. ետիս արուեստական ժայռ մը կար, որ շրջադպողներուն նստարանի տեղ ծառ այելու համար սահմանուած էր. վասն զի իյնալու ժամանակս ձեռքս եպենոսի ծառը թողլով այն ժայռին զովութիւնը զգացեր էր:

« Եպենոսի ծառը աջ կողմս կը զանուէր, ու ժայռը ետիս:

« Նոյն զիշերը ունեցած գիրքովս կանդնելով զետինը ինկայ և վերստին ոտք ելնելով սկսայ փորել և փոսը լայնցընել. սակայն ոչինչ, բան մը չգտայ. արկղիկը հօն չէր:

— Արկղիկը հօն չէր կ'ըսէք, մըմնչեց տիկին Տանկլար՝ երկիւղէն հեղձամղձուկ ըլլալով:

— Մի կարծէք թէ այսչափ փորձով զոհ եղայ, շարունակեց Ակլոֆօր. ոչ: Խիտ ծառերուն ամեն կողմը փնտռեցի. կը մտածէի որ մարդասպանը արկղիկը հողին տակէն դուրս հանած է, և զանձ մը կարծելով՝ զայն յափշտակել և հետը տանել ուզած է. բայց իւր սխալմունքը տեսնելով՝ ուրիշ փոս մը բացած և մէջը զբած է. բայց այս անդամ ալ յոյսս պարապը ելաւ: Ետքը մտածեցի որ դուցէ ամենեին նախազդութիւն մը ըրած չէ, և պարզապէս արկղիկը պարտէղին մէկ անկիւնը նետած է: Այս խուզարկութիւնը ընելու համար պէտք էր առտուան սպասել. ուստի վեր ելայ և սենեկին մէջ սպասեցի:

— Ո՛վ Աստուած :

— Առտու վերստին պարտէղը իջայ. առաջ խիտ ծառոց քովը վաղեցի. կը յուսայի այնպիսի հետք մը զանել, որ դուցէ

մթութեան ժամանակ չէի տեսած։ Քառակուսի քսան ուաքէն տւելի խորութեամբ զետինը փորեցի։ իմ մէկ ժամուան մէջ ըրած վարձուոր մը հաղիւ օրուան մը մէջ կրնար ընել։ Բայց ոչինչ, ամենեին բան մը չդուայ։ Այն ատեն՝ ենթագրութեան համեմատ սկսայ պարաեզն մէջ ամեն կողմ պողտիւ։ Անշուշտ դուրս ելնելու փոքր դրան ճամրուն վրայ պիտի ըլլար, բայց այս խուզարկութիւնն ալ առջինին պէս անօդուտ եղաւ, և սիրտս լեցուած խիտ ծառոց քով դարձայ, ուր նոյնպէս յուսակտուր եղած էի։

— Ա՛ս, զոչեց տիկին Տանկլար, կրնար մարդ խենթենալ այնպիսի միջոցին։

— Վայրկեան մը կը յուսայի, բայց նոյն բարերազդութենէն զուրկ զտնուեցայ. այսու ամենայնիւ ոյժն և հետեւ բար խելքս ամփոփե լով՝ կը հարցընէի ինքնիրենս։ «Այն մարդը ինչ ընելու համար գիտելը իւր հետը պիտի տանէր»։

— Բայց արդէն ըսիր, կրկնեց տիկին Տանկլար, ապացոյց մը ունենալու համար։

— Աչ, տիկին, անկարելի է. դիտել մը տարի մը չկրնար պահել մարդ. դատաւորի մը կը ցուցընէ, և իւր տեղը կը յանձնէ։ Բայց այս ըսածներէս և ոչ մէ կը սյատահեցաւ։

— Ուրեմն ետքը. . . , հարցուց Հէրմին սրտի բարախմամբ։

— Ետքը, մեզի համար աւելի սոսկալի, աւելի աղետալի և աւելի սարսափելի բան մը կայ. զուցէ մանուկը իենդանի էր, և մարդասպանը աղատեց զան —։

Տիկին Տանկլար սոսկալի ձայն մը հանեց, և Ակլլֆօրի ձեռքերը բոնելով։

— Զաւակս իենդանի էր, զոչեց, զուք զաւակս իենդանի թաղեցիք, պարո՞ն։ Անոր մեռած ըլլալը սառյդ չէիք զիսել, և թաղեցիք, աչ. . . —։

Տիկին Տանկլար սոր ելեր թագաւորի զործակալին առջեկանդներ էր, և զբեթէ սպառնալեօք անոր դաստակնելը իւր քնքուշ ձեռօքը կը սեղմէր։

— Ի՞նչ դիտնամ. Ենթադրութիւն է ըրածս, պատասխանեց Ակլքֆօր այնպիսի հաստատ նպաստածքով մը, որ կը ցուցըներ թէ այն աստիճան զօրաւոր մարդ մը յուսահասութեան և յիմարութեան սահմանները անցնելու մօտեցեր էր:

— Ո՛չ, զաւակս, իմ խեղճ զաւակս —, դոչեց տիկինը վերստին իւր աթոռին վրայ նստելով և թաշկինակովը իւր հառաջանքը զսպելով:

Վիլքֆօր ինքզինքին եկաւ, և հասկըցաւ որ իւր զլիսին վրայ կուտուած մայրական փոթորիկէն աղատելու համար՝ պէտք էր իւր զգացած երկիւղը տիկին Տանկլարի ալ զգացընել:

— Աւրեմն կը հասկընաք որ եթէ այս ըսածս Ճիշդ է, ըսաւ ոտք ելնելով և տիկնոջ մօտենալով աւելի ցած ձայնով խօսելու համար, երկուքնիս ալ կորուած ենք. այս մանուկը կենդանի է, մէկը կայ որ մնոր կենդանի ըլլալը դիսէ, մէկը կայ որ մեր դաղտնիքը խմացած է. և որովհետեւ Թօնթէ-Քրիսթօ հողին տակէն հանուած մանկան մը վրայ մեր առջե կը խօսէր, ան է որ մեր զաղանիքը իմացած է:

— Ո՛վ Աստուած, ո՛վ արդար Աստուած, ո՛վ վրէժխնդիր Աստուած —, մրմնջեց տիկին Տանկլար:

Վիլքֆօր զողցես մանշելով մը անոր պատասխանեց:

— Բայց իմ զաւակս, իմ զաւակս, տարոն, կրկնեց յամառ մայրը:

— Ո՛չ, ո՛վափ փնտոեցի զան, կրկնեց Վիլքֆօր. ո՛վափ անդամ անքուն մնացած երկար դիշերներս կանչեցի զան, ո՛վափ անդամ կը փափաքէի թաղաւորական հարստութիւնն մը ունենալ, որպէս զի անոր զօրութեամբը միլիոն մը մարդոցմէ միլիոնաւոր զաղտնիք ստանամ, և անոնց զաղտնեացը միջ իմադանեմ: Վերջապէս օր մը որ դրեթէ հարիւրերորդ անդամն էր որ բահը ձեռքս առած էի, ինքնիրենս կը հարցընէի թէ Քորսիացին այն մանուկը առնելով ի՞նչ կրնար ընել, փախչողի մը համար մանուկ մը նեղութիւն է, զուցէ, ըսի ինք-

նիրենս , տեսնելով որ կենդանի է , զետը նետած է զան :

— Ո՞՛չ , անկարելի է , զոչեց տիկին Տանկլար . վրեժիքն գրութեամբ մարդ մը կ'ըսպանուի , բայց սրտի հանդարտութեան մէջ մանուկ մը շնեղուիր :

— Մտածեցի որ զուցէ որրանոցը յանձնած էր , շարունակեց Վիլլֆօր :

— Ո՞՛չ , այո՛ , այո՛ , զոչեց տիկին Տանկլար , զաւակս հոն է անշուշտ , սղարոն :

— Ես ալ որրանոցը վազեցի և խմացայ որ նոյն դիշերը , այսինքն սեստեմբերի 20են մանուկ մը բերեր էին հոն , զոր գիտմամբ պատռած բարակ կտաւով մը փաթթեր էին . կտաւին կէսին վրայ սեպուհի զինանշանին կէսը և չ զիրը կը զտնուէր :

— Ո՞՛չ , իմ զաւակս է ան , զոչեց տիկին Տանկլար . բռլոր Ճերմկեզէններս նոյն նշանները կը կրէին . քանզի պարոն առ Կարկոն սեպուհի էր և իմ անունս ալ Հերովին է : Ընորհակալ եմ , ովլ Տէր , որ զաւակս մեռած չէր :

— Ոչ , մեռած չէր :

— Եւ գուք կը համարձակի՞ք այդ խօսքը ինձ ըսել . ձեր քերնովք այդ խօսքը կ'ըսէք և չէ՞ք վախնար որ ուրախութենէս պիտի մեռցընէք զիս , պարոն . ուր է , ըսէք , ուր է իմ զաւակս — :

Վիլլֆօր ուսերը թոթվեց :

— Ես գիտեմ , ըսաւ , և կը կարծէք որ եթէ զիտնայի բռլոր այս մանրամասն պատմութիւնը կ'ընէի՞ ձեզ , ինչպէս որ թատրերդակ մը կամ վիապասն մը սովորութիւն ունի ընել . ոչ , ափսոս , չեմ զիտեր : Վեց ամսուան հասակին մէջ կին մը ներկայացեր է և կտաւին միւս կտորը ցուցընելով մանուկը ուզեր է : Այն կինը օրինաց պահանջած ամեն ապահովեւթիւնները տալով , մանուկը ընդուներ է :

— Բայց պէտք էիք այն կնոջ վրայ տեղեկանալ , պէտք էիք զանել զան :

— Եւ ինչ բանի կը կարծէք որ ես զբաղած ըլլամ՝ տիկին։ Դատաստանական ծանր քննութիւն մը պատճառելով, ոստիկանութեան ամենէն խորամանկ լրտեսները, ամենէն յաջող դործակաները զան գտնելու զբաղեցոցի։ Մինչեւ Շալոն անոր հետքը գտան, բայց Շալոնէն անդին կորսուեր է։

— Կորսուե՞ր է։

— Այո՛, յաւիտեանս չգտնուելու համար — ։

Տիկին Տանկլար այս պատմութեան ամեն մէկ պարագաները հառաջանրով մը, արտասուբով մը և զարմանրով մը մաիկ կ'ընէր։

— Ասոնցմէ զատ ուրիշ բան չըրիք, ըստ, այդչափով զո՞հ եղաք։

— Ո՛չ, ոչ, ըստ Ակիլլոֆօր զան փնտելէն, անոր վրայ տեղեկութիւն հարցընելէն և խուզարկութիւններ ընելէն երբէք չդադրեցայ։ Անկայն՝ երկու երեք տարիէ ՚ի վեր քիչ մը անհօգ կեցեր էի բայց այսօր առաջուանէ աւելի յարատեութեամբ և աւելի յամառութեամբ խուզարկութիւններս վերստին պիտի սկսիմ, և պիտի յաջողեմ։ Քանզի այսուհետեւ խիղջը չէ զիս դրդողը այլ երկիւղը։

— Բայց, կրկնեց ամիկին Տանկլար, Մօնթէ-Քրիսթոյ կոմսը մեր գործին վրայ բան մը չդիտեր, եթէ ոչ մեր ընկերութեան մէջ մանեւ պիտի չուզէր։

— Ո՛չ, մարդիկ խիստ չարամիտ են, ըստ Ակիլլոֆօր խօսեցած ժամանակը անոր աչքը դիտեցիք։

— Ոչ։

— Բայց ուրիշ անդամ աղէկ դիտած չէք։

— Այո՛, բայց միայն անհեթեթութիւն մը նշմարած եմ։ Սա միայն զարմանքս տարաւ որ մեզ տուած այն համադամ կերակուրներուն և ոչ մէկուն ձեռք դպցուց։

— Այո՛, այո՛, ես ալ դիտեցի եթէ հիմա դիտցածս առաջէն դիտցած ըլլայի, ես ալ ամենեին կերակուրի մը ձեռք պիտի չդպցընէի պիտի կարծէի թէ զմղ թունաւորել կ'ուղէ։

— Եւ պիտի սխալէիք , յայտնի տեսանք :

— Եյ՛ , անտարակոյս , բայց հաւատացէք ինձ , տիկին , այս մարդը ուրիշ դիտաւորութիւններ ունի . աչա այս է պատճառը որ ուղեցի զձեղ տեսնել , ձեզի հետ խօսիլ , զձեղ ամեն մարդոցմէ և գլխաւորաբար անորմէ զգուշացընել : Ըսէք ինձ , շարունակեց Ակլըֆօր իւր նայուածքը տիկնոջ վրայ խորունկ յարելով , մեր յարաբերութեանց վրայ ամեննեին մէկու խօսեցած չէք :

— Ամենեին :

— Միաքս կը հասկընաք անշուշտ , կրկնեց Ակլըֆօր սիրալիր կերպով . ներեցէք կրկին հարցմանս , աշխարհիս մէջ մէկը չդիտեր , այնպէս չեմ :

— Եյ՛ , այ՛ , աղէկ կը հասկընամ , ըստ տիկին Տանկլար կարմրելով . կ'երդնում որ մէկու ըստած չեմ :

— Ցորեկը ձեր ըրած զործերը իրիկունը դրի առնելու սովորութիւն չունիք . օրադիր չէք բռներ :

— Ոչ , ափառս , կեանքս ունայնութեամբ կ'անցնի . ես իսկ կը մոռնամ զայն :

— Բարձր ձայնով կ'երաղէք արդեօք :

— Քունս խիստ թեթե է . դուք չեք յիշեր — :

Տիկնոջ երեսը շառագնեցաւ , իսկ Ակլըֆօրի դէմքը դեղն նութիւնը ուղարեց :

— Ստոյդ է , ըստ Ակլըֆօր հաղիւ լսելի ձայնով մը :

— Ակլըապէս :

— Ակլըապէս ես զիտեմ ընելիքս . ութ օրէն Մօնթէ-Քրիսթոյի ովկ ըլլալը . ուրկից դալը , ուր երթալը և իւր պարտիղին մէջ հողին տակէն դուրս հանուած մանկան վրայ ինչ նպատակաւ խօսիլը պիտի իմանամ — :

Ակլըֆօր այս խօսքերը այնպիսի ձայնով մը արտասանեց , որմէ Մօնթէ-Քրիսթօ պիտի սարսար եթէ լսէր զայն :

Թաղաւորի զործակալը այս խօսքերէն ետե տիկնոջ ձեռքը սեղմաց , (իսկ Հերմին դժկամաւթեամբ անորը կը բռներ), և

յարդանոք մինչեւ դռւուը անոր ընկերացաւ :

Տիկին Տանկլար ուրիշ կառք մը բռնեց , ու մինչեւ կամուրջը գնաց , որուն միւս կողմը իւր կառքն ու կառավարը դտաւ , որ սպասելէն ձանձրանալով իւր նստաբանին վրայ հանդար տութեամբ իը քնանար :



ԳԼՈՒԽ Բ.

ԵՐԵՌՆԵՑԻՆ ՊԵՐԵՀԱՆԴԻՆ ՄԸ

Առօք օրը՝ այն ժամուն որ տիկին Տանկլար
թաղաւորի դորձակալին գահը մէջ
խորհրդի նստած էր , Ճամբորդութեան
կառք մը Հելոէր փողոցը հասնելով
և թիւ 27 տունը մտնելով՝ բակին մէջ կեցաւ :

Անմիջապէս ետքը՝ գոնակը բացուեցաւ և տիկին տը Մոր-
սէրֆի իւր որդւոյն թեկին կոթընելով կառքէն իջաւ :

Ալպէր Մէրսէտէսը իւր սենեակը տանելէն անմիջապէս
կարը՝ կառքը հեծաւ և Շանդ-հիլզէ զնաց Մօնթէ-Քրիսթոյ
կոմսին տունը :

Առմսը իւր սովորական ժպիտովը անոր ընդունելութիւն տուաւ :

Զարմանալի բան , այս մարդուն սրտին կամ մոքին մէջ ամենեին մէկը համակրութիւն ստացած չէր երեկը :

Անոնք որ անոր մտերմաւթիւնը շահելու կը ջանային , առ չենին պատ մը կը զանէին :

Մորսէրփ , որ բազուկները բացած դէպ 'ի անոր կը վազէր , զան տեսնելով իւր բազուկները իջեցուց և միայն իւր ձեռքը տալու բաւականացաւ , թէ կոմսը բարեկամական ժպիտ մը կը ձեացընէր , և անոր ձեռքը բռնեց առանց դայն սեղմելու : Էնզպէս որ միշտ իւր սովորութիւնն էր :

— Աչա եկայ , սիրելի կոմս , ըսաւ Ալպէր :

— Բարի եկաք :

— Հազիւ ժամ մը կայ Քարիդ հասնիլս :

— Տիերէն :

— Թրէբօրէն :

— Այս , սայոյդ է :

— Եւ ամենէն առաջ ձեզ այցելութիւն ընելու եկայ :

— Զեր ազնուութիւնն է , ըսաւ կոմսը անտարբերութեամբ :

— Ըսէք ուրեմն , ինչ ըուր ունիք :

— Ինծի կը հարցընէք , օտարականի մը :

— Այսինքն ըսել կ'ուզեմ թէ ինծի համար ինչ ըրիք :

— Բայց յանձնարարութիւն մը ըրած էիք ինձ , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ անհանդստութիւն ձեացընելով :

— Անտարբերութիւն մի ձեացընէք , կ'աղաշեմ , ըսաւ Ալպէր . կ'ըսեն թէ համակիր զզ ացմանց համար անջրապետ չկայ . հաւատացէք որ Թրէբօր ելեկտրական ցնցում մը զդացի , և իմացայ որ եթէ ինձ համար աշխատած ալ չէք , զոնէ զիս մոքերնիդ բերած էք :

— Կարելի է , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ , և իրօք զձեզ յիշեցի . սակայն մազնիսական հոսանքը , որուն հազորդիչն էի , իմ կամբէս կախեալ չէր :

- Պատմեցէք ուրբեմն այդ բանը , կ'աղաշեմ :
- Ծատ աղէկ . Պ. Տանկլար իմ տունս Ճաշեց :
- Դիտեմ , քանզի անոր ներկայութենէն հեռու գտնուե .
լու համար մայրս և ես Բարիղէն մնկնեցանք :
- Բայց Պ. Անտրէա Գավալդանթին ալ անոր սեղանա-
կից էր :
- Զեր Խտալացի իշխանազունը :
- Զափազանցութիւն չընենք . Պ. Անտրէա ինքոնինը միայն
գերակոմս կ'անուանէ :
- Ինքոնինը գերակոմս կ'անուանէ կ'ըսէք :
- Այս :
- Ուրեմն գերակոմս չէ :
- Է՛չ , ինչ դիտնամ . Ինը այսպէս կ'անուանէ , ես ալ
այնպէս կ'անուանեմ , ամեն մարդ ալ նոյն տիտղոսը կօւ տայ
անոր . այս կերպով ունեցած չսեպուիր :
- Ի՞նչ զարմանալի յարդ էք . ետքը :
- Ետքը , ինչ ըսել կ'ուղէք :
- Պ. Տանկլար ձեր տունը Ճաշեց ըսիք :
- Այս :
- Դերակոմս Անտրէա Գավալդանթիին հետ :
- Այս , գերակոմս Անտրէա Գավալդանթիին , իւր մար-
քէզ հօրը , տիկին Տանկլարի , Պ. և տիկին Վ. իլլուստրի հետ ,
որոնք ազնիւ անձեր են . ասոնցի դատ կային նաև Պ. Տը-
պրէ , Մաքսիմիլիէն Մորէլ . ով կար ուրիշ . . . կեցիք . . .
այս , միոքս եկաւ , և Պ. Ծամօ-Ռընօն :
- Իմ խօսքս ըրբն :
- Ամենաին :
- Իմ խօսքս չընելով աւելի դէշ ըրեր են :
- Ինչու համար . կարծեմ թէ զձեզ չիշելով ձեր բաղ-
ձանաց համեմատ վարուեցան :
- Սիրելիդ իմ կոմս , իմ վրայօքս չխօսելնուն տատէառը
դիս մաքերնէն չչանելնին է , որ աւելի կը յուսահատեցընէ զիս :

— Ինչո՞ւ հողերնիդ կ'ընէք . երբ օրիորդ Տանկլար զձեղ մտքերնէն շշանողներուն մէջ չեր գանուեր : Բայց ստոյդ է որ կրնար ան ալ իւր տան մէջ զձեղ յիշել :

— Այդ կողմանէ բոլորովին անհոգ եմ, և կամ եթէ զիս միտքը բերէ, անտարակոյս իմ զինքը միտքս բերած կերպովս պիտի ըլլայ :

— Եյդ ինչ սրտառուչ համակրութիւն է, ըստեւ կոմսը . ուրեմն դուք զիրար կ'ատէք :

— Մտիկ ըրէք, ըստեւ Մորսէրֆ . եթէ օրիորդ Տանկլար այնպիսի կին մը ըլլար, որուն համար չափազանց սէր զդայի, և մեր երկու ընտանեաց մէջ որոշեալ ամուսնական դաշտանց հասուցումը ընէր զոնէ ըստ երեսութից, ըսելու խօսք պիտի չունենայի : Կարճ ըսեմ, կարծեմ թէ օրիորդ Տանկլար կրնայ ազնիւ սիրուհի մը ըլլալ, բայց ոչ կին մը :

— Ուրեմն այդ կերպ կը մասածէք ձեր ապառնի կնոջ վրայօք, ըստեւ Մօնթէ-Քրիսթօ ծիծ աղելով :

— Ո՛չ, այո՛, կը խոստովանիմ որ քիչ մը բիրոտ բայց Ճիշտեն ըրած խորհրդածութիւններս : Եւ որովհետեւ անկարելի է այս երազէն իրողութիւն մը հանել, չեմ կարծեր որ օրիորդ Տանկլար կարենայ իմ կինս ըլլալ, այսինքն ինձի հետ ապարի, իմ տանս մէջ խորհի, քովս երդէ, ինձմէ տասը քայլ հեռու ոտանաւորներ և երած շատութիւններ յօրինէ, և այն բոլոր կենացս մէջ : Ոչ, սիրելիդ իմ կոմս, սիրուհի մը մարդս կրնայ թողուլ, բայց իւր կինը մշանջենաւորապէս պիտի պահէ՛թէ իւր քովս ըլլայ և թէ իրմէ հեռու : Ճետեաբար օրիորդ Տանկլարը մշանջենաւորապէս պահէլը սոսկալի բան մ'է, եթէ ինձմէ հեռու ալ ըլլայ :

— Ընտրովութիւննիդ դժուար է, զերակոմու:

— Եյո՛, վասն զի շատ անդամ անկարելի բանի մը կը մտածեմ :

— Ի՞նչ բանի :

— Հօրս դտած կնոջը նման ինձի կին մը զանելու — :

Մօնթէ - Քրիսթոյի դոյնը նետեց , և Ալպէրի երեսը նայեւ ցաւ՝ ընտիր առաքանակներու հետ խաղալով , որոնց զայկանակներուն ձայնը յաջախ կը հանէր :

— Աւրեմն ձեր հայրը խիստ երջանիկ եղած է , ըստ :

— Մօրս վրայ արգէն խօսեցած եմ ձեզ , պարսն կոմս . երկնային հրեշտակ մ'է ան . զեղեցիկ , հանձարեղ և աղնուասիրտ կին մ'է : Միատեղ ձամբորդութիւն ըրինք , որ և է զաւկի մը իւր մօրը հետ ընկերանալը կամ անոր հաճելի ըլլալու և կամ բռնադատեալ ըլլալուն կ'ընէ . բայց ես չորս օր անոր հետ գլուխ դրսի տուի , հաւատացէք որ աւելի զոհ եղայ անոր ընկերութենէն քան եթէ Մապ թագուհւայն կամ Տիտանիախն հետ ձամբորդութիւն ըրած ըլլայի :

— Դիակը որ այս խօսքերը լսողները կը յուսահատեցընէք , բարեկամ , և ամուրի մնալու մեծ փափաք կը ողատձառէք :

— Ահա այս է պատճառը , կրկնեց Մորսէրփ , որ հոգ չեմ ըներ օրիսորդ Տանկլարի հետ ամուսնանալ դիտնալով որ աշխարհիս մ.ջ այնպէս կատարեալ կին մը կը գտնուի : Երբեմն դիտած էք որ մեր ինքնասիրութիւնը ինչպէս բոլոր մեր ունեցածները պայծառ գոյներով կը ներկայացընէ : Մարդէի կամ Գոռսէնի խանութեները փայլող ադամանդը երբ մենք կը դնենք՝ աւելի ընտիր կ'երեսի . բայց երբ յայտնի տեսնենք որ աւելի մաքուր ադամանդ մը կը գտնուի , և մենք դատապարտուած ըլլանք այն ստորնազոյն ադամանդը մշտնջենաւորապէս պահելու , կը հասկընաք անշուշտ թէ որչափ մեծ նեղութիւն պիտի պատճառէ մեզ :

— Աւնայնութիւն , մրմթեց կոմսը :

— Այս պատճառաւ ուրախութենէս պիտի թոչիմ այն որը երբ օրիսորդ Տանկլար տեսնէ թէ ես չնչին արարած մ'եմ , և իւր միլիոններուն փոխարէն հաղիւ հարիւրական հաղար Փրանք ունիմ — :

Մօնթէ - Քրիսթօ ժպտեցաւ :

— Ես ուրիշ բան մտածեր էի , շաբունակեց Ալպէր . Ֆրանզ

տարօրինակ բաները կը սիրէ , ուզեցի որ զինքը օրիորդ Տանհայաց պատմական սիրահարեցընեմ . խիստ յանկուցիչ ոճով անոր դրած չըրս նամակներուս Ֆրանզ առանց շփոթելու այցակէս պատասխանեց ինձ :

« Ասոյդ է որ ես տարօրինակ մէկն եմ , բայց տուած խօսքս եմ առնելու չափ չեմ » :

— Քարեկամական անձնուիրութիւնն ալ այսպէս ըլլալ պէտք է որ կ'ուզէք ուրիշն տալ այն կինը , զոր զուք իրր սիրուհի կ'ընդունիք — :

Ալզէր ժպտեցաւ :

— Աղէլ միաքս եկաւ , շարունակեց երիտասարդը , պարոն Փրանզ մօտերս պիտի դայ . բայց ձեր հոգը չէ , կարծեմ չէք սիրեր դան :

— Ես , ըստ Մօնթէ-Քրիսթօ , և ինչ բանի մէջ դիտեցիք որ ես ո՛ւ . Փրանզը չեմ սիրեր , սիրելիդ իմ գերակոմա : Ես ամեն մարդ կը սիրեմ , ինչպէս որ Աստված պատուիրած է մեր ընկերը սիրելու , այսինքն իրը քրիստոնեայ . այսու ամենայնիւ կարելի է այնպիսի անձեր դանուին , որոնք ինձ առելի ըլլան : Դառնանք ո՛ւ . Փրանզ տ' էլքինէին . մօտերս պիտի դայ կ'ըսէք :

— Այս , ո՛ւ . Ակլըֆօր դինքը կը կանչէ . քանիքի ինչպէս կ'երեկ՝ օրիորդ Աւալանթինը ամուսնացընելու համար մօլեզներ է , ինչպէս և Տանկլար՝ օրիորդ Էօծէնին ամուսնացընելու : Ասուղիւ՝ կ'երեկի թէ չտփահաս աղջիկներ ունեցող հարց վիճակը խիստ անտանելի է . աղջիկնին առանց ամուսնոյ մնալը իրենց տենդ կը պատճառէ , և մինչեւ որ զանոնք ձեռքէ հանեն՝ երակնին վայրկենի մը մէջ իննսուն անդամ կը զարնէ :

— Բայց ո՛ւ . տ'էրինէն ձեզի չնմանիր . իւր դործը համբերութեամբ ՚ի դլուխ կը հանէ :

— Ոչ միայն կը համբերէ , այլ և կարեռութիւն կու տայի իւր դործին . սպիտակ փողկապներ կը կապուի , և ո՛ւ . Ակլըֆօրի ընտանեաց վրայ ակնածանօք կը խօսի :

— Արժանաւոր է, այնպէս չե՞:

— Կարծեմ, Պ. տը Ափլքֆօր խիստ բայց արդարակարով մարդ մը ճանչցուած է միշտ:

— Աչա դոնէ այս մարդուն վրայ Պ. Տանկլարի ըրածնուդ պէս դէշ չեք խօսիր:

— Պատճառը դուցէ իւր աղջկան հետ ամուսնանալու ըստիպուած չըլլալս է, պատասխանեց Ալզեր ծիծաղելով:

— Ստուդիւ, սիրելի պարոն, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, միայն ինքզինքնիդ հաւած էք:

— Ե՞ս:

— Այս, դուք, բայց դլանիկ մը առէք:

— Մեծ հաճութեամբ. բայց ըսէք ինչո՞ւ զիս անձնահաճ կը կոչէք:

— Վասն զի կը տեսնեմ որ օրիորդ Տանկլարի հետ չամուսնանալու համար ամեն ջանք՝ ի զործ կը գնէք և դուք ձեզի հետ կը մրցիք: Ե՛ս, Յողուցէք որ զարծերը ինքնին յառաջանան, զուցէ խօսքը ետ առնելը առաջ ձեր կողմէ չըլլար:

— Ե՞նչ կ'ըսէք, ըսաւ Ալզեր աչքերը բանալով:

— Ե՛ս, անսարակոյս, պարոն գերակոմս, չեն կրնար բռնի ձեր դլուխը երկու դրանց մէջ Ճղմել. առանց կատակի ըսէք ինձ, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ իւր ձայնը փոխելով, դործը աւրել կը փափաքիք:

— Սրոովս հարիւր հաղար ֆրանք կռւ տայի:

— Աւրեմն ուրախացիք, Պ. Տանկլար ալ նոյն նպատակաւ կրկինը տալու պատրաստ է:

— Արդեօք Ճշմարիտ է այդ երջանկութիւնը, ըսաւ Ալզեր, որուն Ճակտին վրայ թէեւ աննշմարելի ամպ մը պատեց: Աւրեմն, սիրելիդ իմ կոմս, Պ. Տանկլար այսպէս ընելուն պատճառներ ունի:

— Ա՛ս, դոնէ հիմա ինքնասիրութիւննիդ կը տեսնեմ, այդպէս ըլլալ պէտք է. ուրիշն ինքնասիրութիւնը տապարի հարուածով վիրաւորել կ'ուզէք, դոնէ ասեղով ձեր ինքնասիրութիւնը ծակուած ժամանակ սրուացէք:

— Աչ, բայց կարծեմ թէ ու. Տանկլար . . . :

— Ծատ դոհ պիտի ըլլար ձեզ ու, այնպէս չէ. բայց ամեն մարդ զիտէ որ ու. Տանկլար ամենե ին լաւ ընտրողութիւն չունի, և աւելի դոհ կ'ըլլայ իւր աղջիկը ուրիշի տալու:

— Որո՞ւ:

— Ձեմ դիտեր. դուք հարցուցէք, տեղեկացէք, անոր ընթացքը քննեցէք և ձեր օղտին համեմատ վարաւցէք:

— Ծատ աղէկ. հիմա մաիկ ըրէք, մայրս . . . ոչ, սխալցայ, հայրս պարահանդէս մը տալու միտք ունի:

— Այս եղանակիս մէջ պարահանդէս մը:

— Նոր սովորութիւն մ'է ամառուան մէջ պարահանդէս տալը:

— Եթէ սովորութիւն իսկ չըլլայ, կոմսուհին կրնայ ընել, բաւական է որ ուղէ:

— Այս պարահանդէսը բոլորովին աղնուագետական պիտի ըլլայ, յուշիսի մէջ Բարիղ մնացողները ճշմարիտ Բարիղեաններ են, ու. Գավալլանթիները հրաւիրելու յանձն կ'առնո՞ւք:

— Երբ տեղի պիտի ունենայ ձեր պարահանդէսը:

— Ծաբաթ օրը:

— Ու. Գավալլանթին հայրը մինչեւ շաբաթ պիտի միկնի:

— Բայց իւր որդին անշուշտ պիտի մնայ. յանձնառու կ'ըլլաք զան հետերնիդ բերելու:

— Մորիկ ըրէք, դերակոմս, ես չեմ Ճանշնար զան:

— Ձէք Ճանշնար:

— Ոչ, երեք կամ չորս օր տռաջ անդամ մը տեսած եմ զինքը, և ամենե ին երաշնաւոր չեմ կրնար ըլլալ անոր համար:

— Բայց դուք ձեր տունը ընդունեցիք զան:

— Իմ հրաւիրելը մի նայիք. բարի աբբայ մը յանձնարարութիւն ըրած էր ինձ, որ դուցէ ինքն ալ սխալած ըլլայ: Ուղղակի դուք հրաւիրեցէք, բայց ինձ մի ըսէք որ ձեզ ներկայացընեմ զինքը. եթէ այնպէս հանդիսի որ օրիորդ Տանկլարի հետ ամուսնանայ, պիտի կարծէք թէ ես ըրի նոյն

միջնորդութիւնը և պիտի ուղեք հետա կոտիլ. մանաւանդ որ
չեմ պիտեր թէ ես ալ պիտի զամ:

— Ո՞ւր:

— Պարահանդէսին:

— Ինչո՞ւ պիտի չդաք:

— Նախ որ տակաւին զիս չժրաւիրեցիք:

— Դիմումը ե'լած եմ ձեր հրաւերը ահձամբ բերելու
համար:

— Կը ճանչնամ ձեր ազնուութիւնը. բայց դուցէ արդելք
մը ունենամ:

— Եօր հիմա խօսք մը ըսեմ, կը յուսամ որ ամեն առ
դելքները զոհելու պիտի հաճիք:

— Ըսէք:

— Մայրս կ'աղաւէ որ դաք:

— Տիկին աը Մորսէրֆ կոմուհին, կրինեց Մօնթէ-Քրիս-
թօ սարսուալով:

— Ա՛յ, կոմս, կ'իմացընեմ որ տիկին աը Մորսէրֆ հա-
մարձակ հետս կը խօսի. և եթէ ձեր սրտին մէջ չէք գդար
այն համակրական զզացումները, որոց վրայ քիչ մը առաջ կը
խօսէի, պիտի ըսեմ որ այն զզացումներէն բոլորովին զըր-
կուած էք. վասն զի օր շարունակ մինակ ձեր վրայօք
խօսեցանը:

— Ի՞մ վրայօքս. Ճշմարիտ կը պարտաւորէք զիս:

— Մտիկ ըրէք, քանի որ կենդանի առակ մ'էք, հար-
կաւ ձեր վրայ միշտ պիտի խօսուի:

— Զեր մօրը համար ալ առակ մը եղած եմ. ստուգիս
զինքը իիստ մտացի ճանչնալովս չէի կարծեր որ երեակա-
յական այսպիսի խոտորմանց մէջ դանուի:

— Զէ թէ միայն մօրս այլ և ամենուն համար առակ մը ե-
ղած էք, այնպիսի հանելուկ մը, որ մէ կը չկրնար լուծել.
Մայրս միայն կը հարցընէ թէ ինչպէս կարելի է որ այդպէս
երիտասարդ մնացած ըլլաք: Կ. . . կոմուհին զձեղ լուս

Ի ի թ վ է ն ը կը կարծէր, բայց մայրս ներքնապէս զձեղ՝ Պալիսովթօն կամ Աէն-Ժէրմէն կոմու կը համարի, Երբ տիկին Մորսէրֆը տեսնելու դաք, իւր կարծեացը մէջ հաստատեցէք զինքը։ Յաջողելու գժուարութիւն չունիք, ըստ որում մէկուն փիլիսոփայական քարը և միւսին հանձարն ունիք։

— Ընորհակալ եմ այս բանը ինձ իմացընելնուդ համար, ըստ կոմու ժպտելով։ ամեն ենթադրութեանց համեմատ վարուելու պիտի ջանաւր։

— Աւրեմն շարաթ օրը պիտի դաբ։

— Քանի որ տիկին տը Մորսէրֆ կ'աղաչէ։

— Աղնիւ մարդ մ'էք։

— Պ. Տանկլար ալ պիտի դայ։

— Ա՛Հ, արդէն եռակի հրաւերներ ընդունեց ան, հայրս յանձնառու եղած է զան հրաւիրելու։ Պիաի ջանանք Պ. աը Վիլքֆօրն ալ ընդունելու, բայց չենք յուսար որ դայ։

— Ամենակին յուսահատիլ պէտք չէ, կ'ըսէ առակը,

— Կը պարէք, սիրելի կոմու։

— Ես։

— Այո՛, դուք, ինչո՞ւ կը զարմանաք։

— Ա՛Հ, քառասունը անցընելէն ետե . . . Ոչ, չե՛մ պարեր, բայց ուրիշներուն պարելու տեսնել կը սիրեմ։ Տիկին տը Մորսէրֆ ալ կը պարէ։

— Ամենակին, ուրեմն միատեղ կը խօսակցիք։ Քանզի ձեզի հետ խօսելու մեծ փափաք ունի։

— Կրա՞ւ։

— Ճշմարիս կ'ըսեմ որ առաջին անգամն է որ մայրս կ'ուզէ հետաքրքրութեամբ մարդու մը հետ խօսիլ —։

Ալզէր գլխարկը առնելով ոտք ելաւ, կոմու մինչեւ դուռը ընկերացաւ։

— Մէկ բանի համար ինքողինքս կը մեղադրեմ, ըստ կոմու սանդուխին վերի կողմը կեցընելով զան։

— Ի՞նչ բանի համար։

- Անխոհեմութիւնը ըրի , ողէաք չէի ո՛ . Տանկլարի վրայ
ձեզի այնպէս խօսիլ :
- Ընդ հակառակն ողէաք էք խօսիլ , և միշտ խօսեցէք բայց
նոյն կերպով :
- Ճատ աղէի , կը վստահացընէք զիս , ո՛ . ո՞ւ էքինէն երբ
ովհանի դայ :
- Առ առաւելն հինգ կամ վեց օրէն :
- Եւ Երբ պիտի ամուսնանոյ :
- Ո՛ . և տիկինն Սէն-Մէրանի հասնելուն պէս :
- Երբ Բարիղ հասնի՝ կը խնդրեմ որ իմ տունս բերէք
զինքը . թէե քիչ մը առաջ դուք կ'ըսէիք թէ ես չեմ սիրեք
զան , բայց ես կ'իմացընեմ ձեզ որ շատ ուրախ պիտի ըլլամ
զինքը տեսնելով :
- Ճատ աղէի , ձեր հրամանները պիտի կատարուին , պարոն :
- Նորէն աեւնուինք :
- Ճարաթ օրը , բոլորովին ապահով ըլլանք , այնպէս չէ :
- Կը հարցընէք , խօսք տուի ձեզ — :
- Կոմսը ձեռքովը բարեկելով Ալպէրի ետեւն նայեցաւ . Երբ
երիտասարդը կառքը հեծաւ , կոմսը երեսը դարձուց և իւր
ետին ոկէրթուչիոն տեսնելով :
- Ի՞նչ լուր , հարցուց անոր :
- Տիկինը պալատը դացերէ , ողատասխանեց զործակատարը :
- Երկար ասեն հոն մնացերէ :
- Մէկ ու կէս ժամ :
- Անկէ իւր տունը վերադարձերէ :
- Ուղղակի :
- Ճատ աղէի . սիրելիդ իմ ո՛ . ոկէրթուչիո + հիմա կրնաս
նորմանտիա երթալ և տեսնել թէ այն ըսած փոքր կալուածս
պիտի կրնաս զանել — :
- Ոկէրթուչիո խոնացութիւնը մը ըրաւ , և որովհետեւ կոմսին
հրամանները իւր բաղձանացը համաձայն էին , նոյն իրիկու-
նը մեկնեցաւ :

ՊԼՈՒՔ Ճ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՐԲՈ՞ւ ար Վիլլֆօր տիկին Տանկլսրի տուած
խօսքին վրայ կեցաւ . քանզի զ լիսաւու-
րաբար ինքն ալ կ'ուղէր դիտնալ թէ
Մօնթէ-Քրիսթոյ կոմսը ինչ կերպով կարող
եղեր էր Օթէօյլի տան պատմութիւնը իմանալու :
Դոյն օրը նամակ մը զրեց Պ. ար Պովիլ անուն մէկուն ,
որ ժամանակաւ բանաերու տեսուչ ըլլալէ ետե՛ ոստիկանու-
թեան բարձրագոյն պաշտօն մը կը վարէր , որպէս զի իւր ու-
ղած տեղեկութիւններն ստանայ . Պ. ար Պովիլ նոյն տեղե-
կութիւնները ճշգիւ հաղորդելու համար երկու օր խնդրեց :
Երկու օրէն ետե՛ Պ. ար Վիլլֆօր յետակայ տեղեկու-
թիւնը ստացաւ :

« Մօնթէ-Քրիսթոյ կոմս կոչուած անձը մասնաւորագէս
Ճանչցուած է լորտ Վիլմոր անուն հարուստ օտարականէ մը ,
որ երբեմն Քարիզ կու դայ , և Հիմա ալ մայրաքաղաքս կը
դանուի : Ճանչցուած է նաև արքայ Պիւղոնի անուն Սիկիլիացի
քահանայէ մը , որ Արևելքի մ.ջ մեծ համբաւ ունի հռն ը-
րած իւր բազմաթիւ բարի զրծերովլու » :

Պ. ար Վիլլֆօր ուրիշ նամակով մը հրամայեց անոր որ
այն երկու օտարականներուն վրայ խիստ շուտ և Ճիշդ տե-
ղեկութիւններ ստանայ . Հետեւ ալ առառու իւր հրամանները

դործագրուեցան, և իւր ընդունած տեղեկութիւնները ասոնք են.

«Աբրան, որ միայն ամիս մը Բարիղ պիտի կենար, Սէն-Սիւլիսի ետին կրկնայարկ փոքր տան մը մէջ կը բնակէր. տունը չորս սենեակ ունէր՝ երկերկու սենեակ իրարու վրայ շինուած և բոլոր բնակութիւնը իւր ձեռքն էր:

«Վարի երկու սենեակներէն մէ կը սեղանատուն էր, որուն մէջ ընկուզենի փայտէ սեղան մը, աթոռներ և պահանոց մը կար, և միւսը փայտաշէն սրահ մ'էր սպիտակ ներկուած, անդարդ, առանց օթոցի և առանց ժամացուցի: Յայտնի կ'երեւէր որ աբբան խիստ կարեոր կարասիներէ զատ բան չունէր:

«Աբրան դլիսաւորաբար վերի յարկին սրահին մէջ կը բնակէր:

«Այս սրահը աւելի դրաբառուն մ'էր քան թէ նստելու սրահ մը, քանզի մազաղաթեայ աստուածաբանական դրվերով լեցուած էր, որոց մէջ աբբան ամիսներով թաղուած կը մնայ, կ'ըսէր անոր սենեկապանը:

«Այս սպասաւորը եկող այցելուները դրան ծակէն կը դիտէր, և եթէ անոնց դէմքը իրեն անծանօթ կամ անհաճոյ երեւէր, կը պատասխանէր անոնց թէ աբբան Բարիղէն բացակայ է. որով շատերը դոհ ըլլալով կը մեկնէին անկէ՝ զիտնալով որ աբբան յաճախ ճամբորդութիւն կ'ընէր և երբեմն երկար ժամանակ բացակայ կ'ըլլար:

«Այսու ամենայնիւ աբբան թէ տան մէջ ըլլար թէ ոչ, թէ Բարիղ գտնուէր և թէ Գահիրէ, միշտ ողօրմութիւն կուտար, և ծառան գրան ծակէն իւր տիրոջ անունովը միշտ ողօրմութիւններ կը ցրուէր:

«Գրքատան քովի միւս սենեակը բնանալու խուց մ'էր, որուն բոլոր կարասիքն էին առանց վարագոյրի անկողին մը, չորս թեաթոռ, դեղին թաւշեայ բազմոց մը և աղօթելու ծնդարան մը:

« Խոկ լորտ Վիլբար Ֆօնթէն-Սէն-Ժօրժ փողոցը կը բնակէր :
« Այս Ճամբորդութիւն սիրուլ Անգղացիներէն մէկն էր
ան , որոնք իրենց բոլոր հարստութիւնը Ճանապարհորդելով
կը վատնեն :

« Խւր բնակած տունը կարասիքով մէկտեղ վարձած էր ,
և օրը միայն երկու կամ երեք ժամ հոն կը զանուէր , և
խիստ քիչ անդամ իւր տան մէջ կը պառկէր :

« Խւր խենթութիւններէն մէկը ամենաին Գաղղիարէն լեւ
զուն խօսիլ չուկելն է , թէն կը հաստատեն թէ բաւական
անսխալ Գաղղիարէն կը զրէ » :

Այս թանկադին տեղեկութիւնները թագաւորի պարտն գործ
ծակալին ձեռքը հասածին հետեւալ օրը՝ մարդ մը ֆերու
փողոցին անկիւնը կառքէն իջնելով , զնաց կանաչ Յիթապողի
դոյնով դուռը զարկաւ և արբայ Թիւզոնին հարցուց :

— Ո , արբան առաւտօտէն դուրս ելու , պատասխանեց
ծառան :

— Այդ խօսքը ինձի մի ըսեր , ըստ այցելուն , ես այն
պիսի անձի մը կողմանէ կու զամ , որուն այցելութիւնը ար-
քան չկրնար մերժել : Սակայն կը խնդրեմ որ . . . :

— Երդէն ըսի թէ հոս շէ , կրկնեց ծառան :

— Ուրեմն երբ վերադառնայ , այս այցատումոը և այս կըն-
քիալ տոմսակը անսր յանձնէ : Այս իրիկուն ժամը ութին
ող . արբան իւր տունը կը զանուի :

— Անտարակոյս , պարոն , միայն թէ ող . արբան աշխա-
տելու չսկսի , այն ատեն գուրս ելածի պէս է :

— Ուրեմն այս իրիկուն ժամը ութին կու զամ — , կրկնեց
այցելուն և մեկնեցաւ :

Իրօք՝ որոշեալ ժամուն , նոյն մարդը նոյն կառքով վերս-
տին եկաւ . բայց այս անդամ կառքը փոխանակ ֆերու փո-
ղոցին անկիւնը կենալու՝ կանաչ դրան առջին կեցաւ :

Դուռը զարկաւ , և երբ բացին՝ ներս մտաւ :

Ծառային իրեն մատոցած յարդանաց նշանները տեսնե-

լով հասկըցաւ որ նամակը իւր փափաքը կատարեր էր :

— Պ. աբբան հօն է, հարցուց :

— Այո՛, իւր զրքատան մէջ կ'աշխատի, բայց ձեղ կ'ըստ պասէ —, պատասխանեց ծառան :

Օտարականը սանդուխէն վեր ելաւ և սեղանի մը առջև, որուն վրայ ծածկոյթով կանթեղ մը իւր բոլոր լոյսը կենագրոնացուցեր էր, ինչ ատեն սենեկին միւս մասը մթութեան մէջ կը զտնուէր, եկեղեցական զգեստով աբբայ մը տեսաւ դլուխը այս կ'նղով ծածկուած, որ միջին դարու սովորութեան համեմատ զիտուններուն ճակատը կ'ըսփօղէր :

— Պ. Պիւղոնիին հետ խօսելու պատիւն ունիմ, հարցուց այցելուն :

— Այո՛, պարոն, պատասխանեց աբբան, և դուք այն անձն էք, որ ոստիկանութեան տեսչին կողմանէ բանտերու նախկին տեսուչ Պ. աը Պօվիլ ինձ կը դրկէ :

— Այո՛, պարոն :

— Բարիզի ապահովութեան հսկով դործակալներէն մէջին էք :

— Այո՛, պարոն —, պատասխանեց օտարականը երկմտութեամբ մը և մանաւանդ քիչ մը կարմրելով :

Աբբան իւր լայն ակնոցը վերստին ուղղվեց, որ ոչ միայն աչքերը այլ և քունքերն ալ կը ծածկէր, և իւր աեղը նըստելով՝ նշան ըրաւ այցելուին որ նստի :

— Պատրաստ եմ ձեղ մտիլ ընելու, պարոն, ըստ աբբան բուն խալական արտասանութեամբ մը :

— Ինծի յանձնուած պաշտօնը, պարոն, պատասխանեց այցելուն դժուարութեամբ խօսելու պէս իւր ամեն մէկ խօսքերսւն վրայ կենալով, կը պահանջէ որ փոփոխակի վստահութիւն ունենանք — :

Աբբան խոնարհութիւն մը ըրաւ :

— Այո՛, կրկնեց օտարականը, ոստիկանութեան տեսուչը ձեր առաքինութիւնը ճանաչելով, իբր դատաւոր կ'ուզէ ձեղը մէ այնպիսի բան մը իմանալ, որ հասարակաց ապահովու-

թեան կը նկատէ , յանուն որոյ 'ի պաշտօնէ ձեզի կը դիմեմ : Աւստի կը յուսանք , Պ. աբբայ , որ Ճշմարտութիւնը ոստիկանութեան յայտնելու համար բարեկամական կապեր կամ մարդկային նկատում մը արգելք ողիտի չկրնան ըլլալ ձեզ :

— Բաւական է , պարոն , որ ձեր զիտնալ ուզած բաները խղճիտ չդպչին : Ես քահանայ եմ , պարոն , և խոստովանութեան դադարնիքը իմ սրախ խորը կը թաղռի , ու միայն Աստուած կ'իմանայ :

— Անհոգ եղիք , պարոն աբբայ , ըստ օտարականը , ըստ ամենայնի ձեր խղճին դպչելու բան մը պիտի չառաջարկենք — :

Այս խօսքերուն վրայ՝ աբբան կանթեղին ծածկոյթը իւր կողմէն վար իջեցնելով հակառակ կողմէն վեր բարձրացուց , որով օտարականին դէմքը բռլորովին լուսաւորելով իւր դէմքը ստուերին մէջ մնաց :

— Եերեցէք , պարոն աբբայ , ըստ օտարիկանութեան տեսչին պատղամաւորը , կանթեղին լոյսը աչքերս սաստիկ կը նեղէ — :

Եբբան կանթեղին կանաչ ծածկոյթը իջեցուց :

— Հիմա , պարոն , խօսեցէք :

— Մօնթէ-Քրիսթոյ կոմսը կը Ճանշնաք :

— Կարծեմ Զազոն ըսել կ'ուզէք :

— Զազոն . . . : Միթէ անոր անունը Մօնթէ-Քրիսթօ չէ :

— Մօնթէ-Քրիսթօ երկրի մը կամ թէ ըսեմ ժայռի մը անուն է և ոչ ընտանիքի :

— Ծատ աղէկ ուրեմն . անուններու վրայ չլիճինք , և որովհետեւ Պ. Մօնթէ-Քրիսթօ և Զազոն մի և նոյն մարդն է . . . :

— Բոլորովին նոյն անձն է :

— Ուրեմն Զազոն ըսենք :

— Ծատ աղէկ :

— Կը հարցընեմ թէ կը Ճանշնաք զան :

— Աղէկ կը Ճանշնամ :

— Ա՞վ է :

— Մալթայի հարուստ նաւայրարդարի մը տղան է :

— Այս, դիտեմ, այդպէս կ'ըսեն . բայց կը հասկընաբ անշուշտ որ ոստիկանութիւնը ըսուած խօսքերով չկրնար բաւականանալ :

— Այսու ամենայնին , կրկնեց արբան խիստ քաղցր ժպիտով մը , երբ այդ ըսուած խօսքը ճշմարիտ է , սէտք է որ ամեն մարդ զա՛ բլայ , և ոստիկանութիւնն ալ ամեն մարդոց պէս բաւական համարի :

— Բայց ըսածնուդ վրայ ասկահով էք :

— Ի՞նչպէս , ասկահով էմ կ'ըսէք :

— Կը տեսնէք , պարոն , որ ես ձեր անկեղծութեան վրայ ամենեին չեմ կասկածիր , այլ կը հարցընեմ թէ ասկահով էք :

— Ամիկ ըրէք , պարոն , ես Պ . Զազոնի հայրը կը ճանչնայի :

— Ի՞նչ կ'ըսէք :

— Այս , և իմ մանկութեանս մշշ շատ անգամ անոր որ գոյն չետ խաղացած եմ :

— Սակայն կոմսի տիտղոսը ի՞նչ պիտի բլայ :

— Չէք զիաեր որ տիտղոսը տասկով ծախսու կ'առնուի :

— Խոտալիոյ մէջ :

— Ամեն կողմ:

— Բայց իւր անբաւ հարստութիւնները ո՞ւր զտած է :

— Ա՛չ , անբաւ չկրնար ըսուիլ , պատասխանեց արքան :

— Ա՛րշափի հարստութիւն կը կարծէք ող ունենայ , դուք քինքը կը ճանչնաք :

— Ա՛չ , հարիւր յիսուն կամ երկու հարիւր հազար ֆրանք եկամուտ ունի :

— Այդպէս ըսէք , ըստ ացցելուն , բայց երեք կամ չորս միլիոն կ'ըսեն :

— Երկու հարիւր հազար ֆրանք եկամուտը , պարոն , Ճիշտ չորս միլիոն դրամադըլուին կ'ընէ :

— Երեք կամ չորս միլիոն եկամուտ ունի կ'ըսէին :

— Ա՛չ , անչաւատալի է այդ :

- Իւր Մօնթէ - Քրիսթոյ կղղին կը ճանչնաք :
- Անշուշտ . Բալեբմոյէն , Նաբոլիէն կամ Հռոմէն ծովով
Գաղղիա եկողները կը ճանչնան զայն , ըստ որում անոր քո-
վէն կ'անցնին և կը տեսնեն :
- Ըստածնուն նայելով խիստ հիանալի տեղ մ'է եղեր :
- Ժայռ մ'է , պարոն :
- Ինչու ուրեմն կոմոր այն ժայռը զներ է :
- Անշուշտ կոմու ըլլալու համար . Խտալիոյ մէջ կոմու ըլլա-
լու համար կոմութիւն մը ունենալ պէտք է :
- Պ. Զագոնին երիտասարդութեան պատմութիւնը ան-
շուշտ լսած էք :
- Հօ՞րը :
- Ոչ , որդոյն :
- Աչ , այդ մասին ստոյդ տեղեկութիւն չունիմ , քանզի
երիտասարդութեանը մէջ ինձմէ բաժնուեցաւ :
- Պատերազմը ըրած է :
- Կարծեմ թէ զինուորական է :
- Ո՞ր բանակին մէջ ծառայած է :
- Շողային :
- Ըսէք , դուք անոր խոստովանահայրը չէք :
- Ոչ , պարոն , բողոքական կը կարծեմ զինքը :
- Ի՞նչպէս , բողոքական :
- Կը կարծեմ կ'ըսեմ և չեմ հաստատեք : Կարծեմ թէ
Գաղղիոյ մէջ ամեն կրօնքի աղատութիւն կայ :
- Անշուշտ . բայց այս միջոցիս իւր հաւատքը չէ փնտոած-
նիս այլ զարծը . յանուն ոստիկանութեան պարոն տեսչին կը
պահանջեմ որ զիտցածնիդ ըսէք :
- Զագոն խիստ ողորմասէր մէկը ճանչուած է . Արեւ-
եան քրիստոնէից իւր մատուցած մեծամեծ ծառայութեանցը
համար՝ մեր սրբազն պապը ասպետի պատուանունը տուաւ
անոր , որ միայն իշխաններու կը չնորհուի . հինգ կամ վեց
մեծ ժապաւէններ ունի , որոնք իշխաններու կամ տէրութեանց
իւր ըրած ծառայութեանցը փոխարէն ընդունած է :

— Եւ զանսնիք չկրեր:

— Ոչ, բայց անոնցմով կը պարծի . կ'ըսէ թէ մարդկութեան քարերաբաց շնորհուած վարձատրութիւնները բռնաւորաց տրուածներէն նախամեծար կը համարի:

— Աւրեմն այդ մարդը +***ելլուր ըստւած աղջանդաւորներէն մէկն է:

— Ճիշդ այդպէս, միայն թէ անոնց մեծ զլիսարկը և շադանակագոյն զգեստը չունի:

— Բարեկամ ունի:

— Այո, բոլոր զինքը Ճանչցողները իւր բարեկամներն են:

— Բայց վերջապէս անշուշտ թշնամի մը պիտի ունենայ:

— Միայն մէկ թշնամի ունի:

— Ի՞նչ է անոր անունը:

— Լորտ Վիլմոր:

— Ո՞ւր կը զտնուի:

— Այս միջոցիս Բարիկ կը զանուի:

— Այդ մարդը կրնայ ինձ տեղեկութիւններ տալ:

— Անտարակոյս, Զադոնի Հնդկաստան դժնուած ժամանակը ինքն ալ հօն էր:

— Գիտեք ուր կը բնակի:

— Շոսէ-ա՛Անթէնի կողմերը, բայց փողոցը և տան թիւը չեմ դիտեր:

— Այն Անդղիացիին հետ բարեկամութիւն ունիք:

— Ես Զադոնը կը սիրեմ ու ան կ'ատէ . այս պատճառաւ իրարու պաղութեամբ կը նայինք:

— Պ. աբբայ, կը կարծէք որ Մօնթէ-Քրիսթոյ կոմսը այս անդամ Բարիկ զալէն առաջ երրէք Գաղղիա եկած է:

— Այս մասին կրնամ ապահովացնել զձեզ որ երրէք եկած չէ . ըստ որում ասկէ վեց ամիս առաջ Գաղղիոյ վրայ տեղեկութիւններ սահնալու համար ինձ դիմեց, և որովհետեւ ես ալ չէի դիտեր այն առեն թէ երբ պիտի կարենամ Բարիկ վերադառնալ, Պ. Գաղղալդանթին անոր զրկեցի:

— Անտիքան :

— Ոչ, անոր հայրը, զարթուլում օն :

— Չատ աղէկ, պարոն . հիմա միայն մէկ հարցում ունիմ ընելու, և կը խնդրեմ որ յանուն ձեր պատույն, մարդկութեան և հաւատոյ՝ առանց ծածկելու պատասխանէք ինձ :

— Ըսէք, պարոն,

— Մօնթէ-Քրիսթոյ կամը ի՞նչ նպատակաւ Օթէօյլի մէջ տուն մը դնեց, զիտէք :

— Անչուշտ, ինձ ըսած է :

— Ի՞նչ նպատակաւ, պարոն :

— Բալէբմոյի մէջ Քիզանի սեպուչին հաստատածին նըման յիմարանոց մը հաստատելու նպատակաւ: Տեսած էք այն յիմարանոցը:

— Համբաւը լսած եմ, պարոն:

— Շքեղ հաստատութիւն մ'է — :

Եւ այս խօսքին վրայ արբան օտարականը բարեց այնպիսի կերպով մը, որով կ'ուղէք իմացընել թէ իւր ընդմջեալ աշխատութեան սկսելու կը փափաքէք:

Այցելուն կամ արբային կամքը հասկընալուն և կամ իւր հարցումները վերջացուցած ըլլալուն՝ ինքն ալ ոտք ելաւ:

Արբան մինչեւ դուռը անոր ընկերացաւ:

— Միշտ ողորմութիւններ կ'ընէք, ըսաւ այցելուն, և թէ պէտ հարուստ էք, կ'ըսեն, բայց աղքատաց համար ձեղ բան մը նուիրելու պիտի համարձակիմ: ըլլած նուէրս ընդունելու պիտի հաճիք:

— Շնորհակալ եմ, պարոն . աշխարհիս մէջ միայն մէկ ըանի նախանձաւոր եմ, ըլլած ողորմութիւններս իմ քսակէս կ'ուղեմ ընել:

— Սակայն . . .

— Յրոշումս անփոփոխ լի է, պարոն . բայց դուք փնտոեցէք և պիտի դոնէք: Ափսոս, հարուստ մարդոց համբուն վրայ շատ թշուառներ կրնան հանգիսկիլ — :

Աբբան դուռը բանալով վերջին անդամ բարեկց զան :

Օտարականն ալ բարեկով դուրս ելու :

Կառքը ուղղակի Պ. աը Վ.իլօֆօրի տունը տարաւ զինքը ,
Ժամ մը ետքը՝ կառքը վերստին Ճամբայ ելու , և այս
անդամ գեպ 'ի Գօնթէն-Սէն Ժէրմէն փողոցը ուղղեցաւ , և
թիւ Շ տան առջել կեցաւ :

Լորտ Վ.իլմար այս տան մէջ կը բնակէր :

Օտարականը նամակով՝ մը լորտ Վ.իլմարէն ժամադրութիւն
մը խնդրեր էր , և Խնդղիացին Ժամը տասին որոշեր էր :

Ուստի՝ ոստիկանութեանՊ. տեսչին պատզ ամաւորը ժամը տա-
սէն տասը վայրիեան տապաջ Հասնելով՝ ծառան իմացուց անորոր
լորտ Վ.իլմար Ճշկութիւնը խիստ պահող ըլլալուն գեռ եկած
չէր , բայց ժամը տասը Հնչած ժամանակ անշուշտ պիտի զար :

Այցելուն սրաչին մէջ սպասեց :

Սրահը նշանաւոր բան մը չունէր , կահեալ տան մը սրահ-
ներուն կը նմանէր :

Անոր մէջ տեսնուած երեւլի զարդերն էին Սէվրի արդի
երկու ամաններով կրակարան մը , ժամացոյց մը՝ վրան Սէրը
կանոնած , որ իւր աղեղը կը լարէ , երկու կտորէ բաղկա-
ցեալ հայելի մը , որուն երկու կողմը մէկ մէկ նկարներ կա-
յին մէկը Հոմերոսը կը ներկայացընէր իւր առաջնորդին հետ
և միւսը՝ ուկլիզէրը , որ կը մուրար :

Պատին վրայ աշխարհագրական մօխրադոյն տախտակ մը կա-
խուած էր , և սեղանին վրայ սև նկարներով կարմիր ծած-
կոյթ մը :

Սրահը ջահերով լուսաւորուած էր , բայց աղօտ ապակեայ
զունակով ծածկուած ըլլալով՝ ակար լուս մը կը տարածէին
անոնք զողցես զիտմամբ ոստիկանութեան Պ. տեսչին պատ-
զ ամաւորին յոդնած աշաց շինասելու համար :

Տասը վայրիեան ետքը ժամացոյցը տասը զարկաւ :

Հինգերորդ հարուածին՝ դուռը բացուեցաւ և լորտ Վ.իլմար
ներս մտաւ :

Յանցառ և աշխետ կիսամօրուօք, սպիտակամորթ և սպիտակալայեալ խարսեալ մաղերով միջահասակ մարդ մ'էր:

Իւր զգեստները Անդղիական բոլորովին առարօրինակ ձեւ մը սունէին . 1811 թուականին ձեռվը ոսկի կոճակներով և լայն օձիքով կապոյտ թիկնոց մը հաղած էր, սպիտակ բարակ ասուեայ բաճկոն մը և նանքինեան կերպասէ սոնաղղեստ մը, որ սովորականէն երեք բթաշափ կարճ էր, բայց նոյն կտաւէ փոկերը կը քաշէին զայն և չէին թողուր որ մինչեւ ծունկերը բարձրանայք:

Ներս մոտեն լուն պէս՝ իւր առջի խօսքը հետեւեալն եղաւ:

— Գիտէք, պարոն, որ ես Գաղղիարէն չեմ խօսիր:

— Գիտէմ, այսունքն մեր լեզուն խօսիլ չէք ախորժեր, սպատասխանեց ոստիկանութեան Պ. տեսչին պատգամաւորը:

— Բայց գուք կրնաք Գաղղիարէն խօսիլ, կրկնեց լորտ Ա.իլմոր . քանզի ես չեմ կրնար խօսիլ, բայց կը հասկրնամ:

— Ես ալ բաւական Անդղիարէն կը խօսիմ. ուստի մինեղուիք, կրնաք ձեր լեզուն խօսիլ:

— Այս —, ըստ լորտ Ա.իլմոր այսդիսի արտասանութեամբ մը, որ միայն Մեծին-Բրիտանիոյ բնակչաց յատուկ է:

Այցելուն իւր յանձնարարական նամակը անոր ներկայացուց:

Լորտ Ա.իլմոր բոլորովին անդղիական պազութեամբ զայն կարգալէն ետեւ:

— Հասկըցայ, ըստ, շատ աղէկ հասկըցայ — :

Ասոր վրայ այցելուն սկսաւ իւր հարցումները ընել, որոնք դրեթե արքայ Պիւզոնին եղած հարցումներն էին:

Բայց որովհետեւ լորտ Ա.իլմոր Մօնթէ-Քրիսթոյ կոմսին թշնամին ըլլալով՝ արքային պէս իւր ըստաներուն շափ չէր զներ, իրենց մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը աւելի երակարեցաւ:

Մօնթէ-Քրիսթոյի երիտասարդութիւնը պատմեց . իւր խօսքին նայելով՝ կամսը տասը տարեկան հասակին մէջ Անդղիացւոց հետ աղատերադմող Հնդկաստանի փոքր տէրութեանց

մի կուն կը ծառայէր, առաջին անգամ՝ Ալիլոր զան չոն տեսակը էր, և իրարու գէմ պատերազմեր էին:

Այն պատերազմին մէջ Զաղոն զէրի իշնալով՝ Անդղիս զըրկուեր էր դերիներու նաւով մը, ուրիշց ծովը նետուելով՝ ի լուղ փախչեր էր:

Այնուհետեւ սկսեր էր իւր ճամբորդութիւնները, մենամարտութիւնները և բաղձանքները կատարել:

Յունաստանի ապստամբութեան ժամանակ Յունաց դռնդերուն մէջ մտեր էր:

Անոնց ծառայութեան տակ եղած ատեն թեսազնիկէի լեռանց մէջ արծաթի հանք մը զտեր էր, բայց զզուշցեր էր իւր զիւտը մարդու յայտնելու:

Նավարինոյի պատերազմէն ետե՛ երբ Յունական տէրութիւնն ալ հաստատուեցաւ, Օթոն թագաւորէն այն հանքը փորելու առանձնաշնորհը խնդրեց և ընկալաւ:

Իւր անբաւ հարստութիւնը այն հանքէն է, որ Ալիլորի ըսածին նայելով՝ մէկ կամ երկու միլիոն ֆրանք եկամուտ կը բերէ, սակայն այս հարստութիւնը պիտի սպառէր անշուշտ երբ հանքն ալ սպառէր:

— Բայց զիտէք ի՞նչ նպատակաւ Գաղղիան եկած է, հարցուց ալցելուն:

— Երկաթուղեաց վրայ շահագիտութիւններ ընել կ'ուզէ, պատասխանեց Ալիլոր, ասկէ զատ՝ քաջ քիսիադէտ և երեւելի բնագէտ մը ըլլալով՝ հեռագրի նոր միջոց մը դտած է, որուն զործագրութեանը կը պարապի:

— Տարին որչափ ծախք կ'ընէ, հարցուց ոստիկանութեան ու, տեսչին պատղամաւորը:

— Ո՛չ, սաստիկ կծծի է, տարին հաղիւ հինգ կամ վեց հարիւր հաղար ֆրանք ծախք կ'ընէ — :

Յայտնի կ'երեւէր որ Անդղիսցին ատելութեամբ կը խօսէր, և կամսին վրայ ի՞նչ յանցանք գնելը չզիտնալով, անոր աղաչութիւնը կը մեղադրէր:

— Օթէօյլի տանը վրայօք տեղեկութիւն մը ունիք :

— Անշուշտ :

— Ի՞նչ տեղեկութիւն ունիք :

— Ի՞նչ նպատակաւ դնելը չէք հարցըներ :

— Այս :

— Կոմսը իւր շահագիտական փորձերովն ու երեակայութեամբը իւր ունեցածը պիտի վատնէ . կը հաստատէ որ Օթէօյլի իւր դնած տան շրջակաները հանքային ջուրի աղբիւր մը կայ, որ Պանեէրի, Լիւշնի և Գոթըրէի ջուրերուն հետ պիտի կընայ մրցիլ . Այս հոչակաւոր աղբիւրը դանելու համար արդէն երկու կամ երեք անգամ իւր պարաէզը տակն ու վրայ ըրաւ . բայց չդանելուն համար՝ քիչ ժամանակէն պիտի տեսնեք որ իւր տան բոլորտիքը եղող բոլոր տուները ծախու պիտի տանէ : Ես կը յուսամ որ իւր երկաթուղոյն, իւր ելեկարական հեռագրին կամ հանքախուղութեանը մէ ջիւր հարստութիւնը պիտի վատնէ . և որովհետեւ կ'ատեմ դինքը, խիստ պիտի ուրախանամ վաղ կամ անագան անոր կործանումը տեսնելով :

— Եւ ի՞նչո՞ւ կ'ատէք զինքը, հարցուց այցելուն :

— Էստ որում Անդիոյ մէջ բարեկամներէս մէ կուն կինը հրապուրեց, ողատասխանեց լորտ Անիլուր :

— Եթէ զինքը կ'ատէք, ի՞նչո՞ւ վրէժ լուծելու միջոց մը չէք փնտոեր :

— Երեք անդամ կոմսին հետ կոռւեցայ, ըստ Անդիացին, առաջին անդամ ատրճանակով, երկրորդը ոռերով և երրորդը երկսայրի մեծ սուսերով :

— Եւ այն մնամարտութեանց հետեւութիւնը ի՞նչպէս եղաւ :

— Առաջին անդամ թևս չախջախեց, երկրորդ անդամ սուրբ մինչեւ թոքս միսեց, երրորդ անդամ այս վէրքը ըրաւ — :

Անդիացին իւր շապիկին օձիքը քակեց, որ մինչեւ ականջները բարձրացած էր և սովի մը ցուցուց անոր, որուն կարմրութիւնը անոր շատ հին շըլլալը կը յայտնէր :

— Այս պատճառուաւ իմաստ կ'ատեմ զի՞նքը, կրկնեց Անդղեացին, և անտարակոյս իմ ձեռքովս պիտի մեռնի :

— Բայց կարծեմ թէ զան սպաննելու միջոցներուն չէք մտածեր:

— Ի՞նչո՞ւ, ամեն օր գնդաձդութեան զ'երթամ, և Կրիզիէ վարսեաը ամեն օր տունս կու դայ — :

Այցելուն այսչափ տեղեկութիւններէն զոհ եղեր էր, կամ զոնէ Անդղեացին անոնցմէ աւելի տեղեկութիւն չունէր:

Ռւստի պատգամաւորը ուաք ելու և լորտ Վիլմորը բարեւելէն ետեւ (որ անդղեական պաղսւթեամբ և քաղաքավարութեամբ անոր պատասխանեց) մեկնեցաւ:

Իսկ լորտ Վիլմոր փողօցին դրան զոցուելուն ձայնը առնելուն պէս՝ իւր գահէլիճը վաղեց, վոյրկենի մը մ.ջ իւր խարտեաշ մտգերը, մոխրագոյն կիսամօրուքը, կեղծ ծամելիքը և սպին հանելով, Մօնթէ-Քրիսթոյ կոմսին սև մաղերը, մուխ զոյնը և մարդարտեայ ատամները երեան ելան:

Միւս կողէն չէ թէ ոստիկանութեան Պ. տեսլին պատգամաւորը, այլ նոյն ինքն Պ. տը Վիլմորն էր, որ լորտ Վիլմորի տունէն ելնելով իւր տունը վերադարձաւ:


Թագաւորի զարծակալին սիրտը քիչ մը հանդարտած կ'երեւէր այս կրկին այցելութենէն ետեւ, թէն ստուդիւ եթէ ոչ սիրտ հանդարտեցընող, զոնէ անհանդ ստութիւն պատճառող բան մ'ալ չիմացեր էր:

Հետեարաք' Օթէօյլի ձաշէն 'ի վեր առաջին անդամն էր որ նոյն իրիկունը հանդարտութեամբ քնացաւ:



ՊԵԼՈՒՅ ԺԱ.

ՊԵՐԵՎԵՆԴԻՑԸ


ՅՈՒԱԽՈՒ ամենէն տաք օրերուն մէջ՝ զի .
 տը Մորսէրֆի պարահանդէսին հա-
 մար որոշուած շաբաթ օրը վերջապէս
 եկաւ հասաւ :

Իրիկուան ժամը տասն էր . կոմսին տանը պարտիզին մած
ծառերը լայնածաւալ ընդարձակուած էին , որոնց մէջէն ոս-
կեղոյն աստղերով զարդարուած կապոյտ երկինքը հազիւ կը
տեսնուէր :

Գեանոյարկի սրահներուն մէջ երաժշտութիւնը կը նուա-
զէր , և շրջապարն ու արշաւապարը եռանգուներ
ունէին . անհամար ճրագներուն օրուան պէս պայծառ լոյսը
պատուհաններուն վանդակապատներէն դուրս կ'անցնէին :

Եյն միջոցին տան տիկիննը , որ երթալով աւելի զուարթ
կ'երեկո . տասնի չափ ծառաներու հրամայեց որ պարտէզին
մէջ սեղանը պատրաստեն :

Մինչեւ այն վայրիեան երկմոռութեան մէջ էին թէ սեղանա-
տան մէջ պիտի ընթրեն եթէ կարձ խոտերուն վրայ կանդ-
նուած կանեփեայ կտաւէ երկար վրանին տակը :

Աստղազարդ պայծառ երկնից երեսյթը վրանին տակը ըն-
թրելու որոշումը հաստատեց :

Իտալիոյ սովորութեան համեմատ դոյնզզոյն լապտերներով
պարտիզին ծառուղիները կը լուսաւորէին , և սեղանը մոմե-

րով և ծաղիկներով կը զարդարէին, ինչպէս որ սովորութիւն է այն երկիրներուն մէջ, ուր սեղանին այս զարդարանքէն քիչ մը կը հասկընան, որ ամեն զարդարանքէ նախամեծար է երբ կատարեալ եղած ըլլայ:

Տը Մորսէրֆ կոմսուհին իւր վերջին հրամանները տալէ եւ տեւ՝ սրահը մտած ժամանակը՝ հրաւիրեալները կոմսուհոյն ազնիւ հիւրասիրութենէն և կոմսին նշանաւոր անունէն հրապուրեալ սրահները կը լեցուէին. վասն զի առաջուց դիտէին որ այս տօնսախմբութեան մէջ Մէրսէտէսի լաւ ընարողութեան շնորհիւը այնպիսի բաներ պիտի տեսնեն, որոնք պատմուելու և պէտք եղած ժամանակը օրինակ ըլլալու արժանի պիտի բլլան:

Տիկին Տանկլար քանի մը օր առաջ պատահածներէն խիստանհանդիստ եղած ըլլալով տիկին աը Մորսէրֆի պարահանդէսին երթալու կը վարանէր, երբ նոյն առաու իւր կառքը Ա.իլլոֆօրի կառքին հանդիպեր էր:

Վ.իլլոֆօր անոր նշան մը ըրաւ, և երկու կառքերը իրարում մօտեցան, և դռնակներուն մէջէն՝

— Տիկին աը Մորսէրֆին պիտի երթաք, այնպէս չէ, հարցուց թաղաւորի զործակալը:

— Ոչ, պատասխանեց տիկին Տանկլար, անհանդիստ եմ:

— Աղէկ չէք ըներ, կըկնեց Վ.իլլոֆօր, անշուշտ պէտք է որ զձեզ հոն տեսնեն:

— Կը կարծէք :

— Անշուշտ :

— Ուրեմն կ'երթամ — :

Եւ երկու կառքերը իրենց ճամբան շարունակեցին:

Ուստի տիկին Տանկլար եկեր էր և ոչ միայն իւր անձնական զեղցիութեամբը այլ և իւր զարդերովը կը փայլէր:

Սրահին մէկ դռնէն ներս մտած ժամանակը Մէրսէտէս ալ միւսէն ներս կը մտնէր:

Կոմսուհին Ա.լպէրը զրկեց որ տիկին Տանկլարը դիմաւորեւ:

Վ. Լոյկը տիկնոջ մօտեցաւ և անոր հաղուստը գովելէն ետե՞
իւր թեւը անոր ներկայացուց և պատուաւոր տեղ մը տարաւ
զի՞նքը :

Ալպէր իւր բոլորտիքը նայեցաւ :

— Աղջի՞ս կը փնտոէք , ըսաւ տիկինը ժպտելով :

— Այո՞ , ըսաւ Ալպէր . արդեօք հետերնիդ չբերելու ան-
դթութիւնն ունեցա՞ք :

— Անհոգ եղիք , օրիորդ տը Ակիլֆօրը տեսաւ և անոր
թեւը մտաւ . ահա , ետեւս կու զան , երկուքն ալ սպիտակ
շըլազգեստ հաղած են՝ մէ կը դամելայի և միւսը մկնականջի
փունջ բռնած . բայց ըսէք ինձ :

— Եւ դուք զո՞վ կը փնտոէք , հարցուց Ալպէր ժպտելով :

— Մօնթէ-Քրիսթոյ կոմնը այս իրիկուն պիտի չգա՞յ :

— Տասն ու եօթը , պատասխանեց Ալպէր :

— Ի՞նչ ըսել կ'ուղէք :

— Ըսել կ'ուղեմ թէ դուք տասն ու եօթներորդն էք այս
հարցումը ընող . կոմնը աղէկ զործ կը տեսնէ . . . կը շնոր-
հաւորեմ զի՞նքը :

— Ամենուն ալ այս նոյն պատասխանը տուիք :

— Ո՞՛չ . իրաւունք ունիք , դեռ չպատասխանեցի ձեղ . ան-
հոգ եղիք , աիկին , այն նորանշան մարդը պիտի ընդունինք .
մի՞նք առանձնաշնորհ մարդիկ ենք :

— Երէկ իրիկուն Օքէբային եկա՞ք :

— Ոչ :

— Կոմնը հոն էք :

— Նորէն տարօրինակ բան մը ըրամւ :

— Միթէ ուրիշ կերպ կրնայ ընել . Էսլէր կառապահուաց ը-
սուած պարը կը պարէր , որուն վրայ Յոյն իշխանուհին զմայ-
լած կ'երեւէր . պարէն ետե՞ կոմնը փունջի մը ծայրը շքեղ
ադամանդ մատնի մը կապեց և պարող օրիորդին նետեց , որ
երբորդ արարուածին մէջ կոմնին պատիւ ընելու համար մատ-
նին ձեռքը դրած երեցաւ : Յոյն իշխանուհին ալ պիտի զայ :

— Ոչ, այն պատիւեն զրկուած ենք :

— Ծատ աղէկ, զիս հոս թողուցէք և տիկին տը Վիլըֆօրի քովը դացէք. կը տեսնեմ որ ձեզի հետ խօսելու անհամբեա բութեան մէջ կը դանուի — :

Ալպէր տիկին Տանկլարի խոնարհութիւն մը ըրաւ և դէպ 'ի տիկին Վիլըֆօր յառաջացաւ, որ երիտասարդը դեռ իրեն շմօտեցած բերանը բացեր էր խօսելու :

— Գրաւ կը դնեմ որ ձեր ըսելիքը դիտեմ, ըսաւ Ալպէր զան ընդմիջելով :

— Ձեմ կարծեր, ըսաւ տիկին Վիլըֆօր :

— Եթէ զուշակեմ, Ճիշդը կը խոստովանիք :

— Այո՛ :

— Ձեր պատուո՞յն վրայ :

— Պատուո՞յս վրայ :

— Պիտի հարցընէք թէ Մօնթէ-Քրիսթոյ կոմսը եկած է կամ պիտի զայ :

— Ամենեին. այս միջոցիս զիս զբաղեցընողը ան չէ . պիտի հարցընէի թէ ող. Գրանզէն լուր մը ունիք :

— Այո՛, երէկ նամակ առի :

— Ի՞նչ կ'ըսէ :

— Թէ նամակին հետ ճամբայ պիտի ելնէ :

— Ծատ աղէկ . չիմա կոմսին համար ըսէք :

— Կոմսը պիտի գայ, անհոգ եղիք :

— Գիտէք որ կոմսը ուրիշ անուն մը ունի :

— Ոչ, չէի դիտեր :

— Մօնթէ-Քրիսթո կղղիկ մը անուն է, և կոմսը զերդաստանական անուն մը ունի :

— Ամենեին լսած չեմ :

— Ուրեմն ես ձեզմէ աւելի տեղեկութիւններ ունիմ. անոր անունը Զաղոն է :

— Կարելի է :

— Մալթացի մ'է :

- Առ ալ կարելի է :
- Եւ նաւայարդարի մը որդի :
- Այդ տեղեկութիւնները եթէ բարձր ձայնով պատմէիք ,
ամենուն ալ հաճելի պիտի երեկիք :
- Հնդկաստանի մէջ պատերազմի մէջ մտեր է . Թեսազո-
նիկի մէջ հանք մը դտեր է , և Բարիկ եկած է հիմա Օ-
թեզլի մէջ հանքային ջուրերու աղբիւր մը դտնելու :
- Մեծ ըուրեր են տառնք . պիտի ներէք որ ուրիշի ալ
պատմմաւ :
- Այս՝ բայց առանց ձայն հանելու և տուանց անունս տալու ,
— Ի՞նչ պատճառաւ :
- Ըստ որում զրեթէ դադանիք մ'է :
- Ո՞վ տացեր է այդ դադանիքը :
- Աստիկանութիւնը : Կոմսին անսովոր զեղխութիւնը տես-
նելով բոլոր Բարիկ յուզուած էր , և ոստիկանութիւնը ե-
րէկ իրիկուն այս տեղեկութիւնները ընդուներ է :
- Ուրեմն խիստ հարուստ ըլլալուն համար պիտի բռնէին
զան :
- Եթէ տացուած տեղեկութիւնները նպաստաւոր չըլլա-
յին , անշուշտ զլուխը զալիքը այն էր :
- Խեղձ կոմս . և իւր վտանգէն տեղեկութիւն ունի :
- Չեմ կարծեր :
- Ուրեմն բարութիւն մը պիտի ընեմ եթէ իմացընեմ :
Գալուն պէս պիտի ըսեմ անոր — :
- Այս միջոցիս՝ վառվուն աչօք , ու մազերով և փայլուն
ընչացքով զեղեցիկ երիտասարդ մը զալով յարդանօք տիկին
ոը Վիլլֆորը բարեկց :
- Տեղէր անոր ձեռքը թոթվեց :
- Տիկին , ըստ Ալպէր , պատիւ ունիմ ձեզ ներկայացը-
նել ու . Մաքսիմիլիէն Մորէլ , որ հեծելազօրաց հրամանա-
տար և մեր ամենէն ընտիր և մահաւանդ ամենէն քաջ պաշ-
տօնատարներէն մէկն է :

— Արդէն Օթէօյլ, Մօնթէ-Քրիսթոյ կոմսին տունը պարոնը տեսնելու ուրախութիւնը ունեցայ — , պատաօխանեց տիկին տը Վելքֆօր յայտնի պաղութեամբ մը երեսը գարձընելով։

Այս պատաօխանը մանաւանդ տիկնոջ ձայնը ողորմելի Մորէլին սիրաը վիրաւորեցին, բայց միւս կողմը դառնալով՝ անոր փոխարէնը ընդունեց . դրան քովը զեղանի և սպիտակէ գէմք մը տեսաւ, որուն կապոյտ քաղցր աչքերը առանց յայտնի բան մը նշանակելու իրեն յարած էին, ինչ ատեն ձեռքը բռնած փունջը մինչեւ իւր շրմանց կը մօտեցընէր։

Մորէլ այս ողջոյնը այնչափ աղէկ հասկըցաւ, որ նոյն նայուածքով անոր նայելով, ինքն ալ թաշկինակը բերանը տարաւ, և երկու կենդանի արձանները, որոնց սիրաը իրարու համար սաստիկապէս կը բարախէր, և միայն սրահին երկայնութեամբ իրարմէ բաժնուած էին, վայրկեան մը ինքզինքնին մոռցան, և կամ այս լոիկ մտածութեան մէջ վայրկեան մը սրահին բազմութիւնը չտեսան։

Երկար ատեն այսպէս յափշտակուած պիտի մնային և մէկն ալ պիտի չդիտէր իրենց կացութիւնը, եթէ Մօնթէ-Քրիսթոյ կոմսը այն միջոցին սրահը չմտնէր։

Արդէն ըսած ենք որ կոմսը ուր որ երթար՝ կամ կեղծ և կամ ընական հրապուրանօք ամենուն ուշադրութիւնը կը դրաւէր . ասոր պատճառը ոչ իւր վայելուչ կտրուած բայց պարզ և առանց շքանշանի սե թիկնոցն էր, ոչ անդարդ սպիտակ բաճկոնը և ոչ այն սոնազգեստը, որ ոսից այնպիսի քնքուշակ մը կու տար, որ ամենուն ուշադրութիւնը կը դրաւէր, այլ իւր դիմաց տժդունութիւնը, դուռը սե մազերը, երեսին հանդարտութիւնն ու մաքրութիւնը, խորին և տիսուր նպյուածքը, վերջապէս այն վայելուչ բերանն էր, որ ոըրտին մէջ խորին արհամարհանք մը ունենալը յայտնի կը ցուցընէր . ահա այս պատճառաց համար էր որ ամենուն նայուածքը անոր վրայ կը հաստատէր։

Սրահին մէջ կարելի էր անորմէ աւելի գեղեցիկ մարդ մը դանուէր, բայց անոր պէս յայտարար նշաններ ունեցող մէկը չկար, թող ներուի մեզ այսպէս ըսե լնուս . կոմսին վրայ ամեն բան նշանակութիւն մը և իւր արժանաւորութիւնը ունէր . ըստ որում օդակար բաններ մտածելու սովորութիւնը իւր դիմաց դժերուն և իւր ամեն փոքր շարժմանցը անհամեմատ վայելչութիւն մը և հաստատութիւն մը տուեր էր :

Ասկէ զատ՝ մեր Բարիղեան ժողովուրդը այնչափ զարմանալի է, որ այս ամենուն ամեննին ուշադրութիւն չէր ըներ եթէ անոնց աակը անբաւ հարստութեամբ մը ոսկեզօծեալ դադունի պատմութիւն մը չըլլար :

Ինչ և է՝ ամենուն ուշադրութեան տուարկայն ըլլալով և իւր ծանօթներուն հետ թեթե ողջոյններ փոխելով՝ մինչեւ տիկին Մորսէրֆի քովը յառաջացաւ, որ ծաղկազարդ կրակարանին առջելը կանդնած ըլլալով, դրան դիմացը դրուած հայելիին մէջ անոր գալը տեսեր և զան ընդունելու պատրաստուեր էր :

Աւստի պարկեցա ժպիտով մը անոր դարձած ժամանակը արդէն կոմսը իրեն մօտեցեր էր :

Անտարակոյս կարծեց որ կոմսը պիտի սկսի իրեն հետ խօսելու, միւս կողմէն կոմսն ալ անտարակոյս կարծեց թէ տիկինը առաջ բերանը պիտի բանայ . բայց փոփոխակի լուս կեցան, այնչափ սովորական ողջոյնները անտարակոյս անարժան կը համարէին իրարու, և զիրար բարեելէն ետե՛ Մօնթէ-Քրիսթօ Ալպէրին դարձաւ, որ ձեռքը բացած իւր քովը եկեր էր :

— Մայրս տեսաք, հարցուց Ալպէր :

— Հիմա զան ողջունելու պատիւը ունեցայ, ըստ կոմսը, բայց ձեր հայրը չըլլար :

— Ահա հոն է, տեսէք, այն երեելի մարդոց խմբեակին մէջ քաղաքական խնդիրներու վրայ կը խօսակցի :

— Ստոյդ կ'ըսէք, հոն եղողները երևելի մարդիկ են, եռ

չէի զիտեր . և ի՞նչ բանի մէջ երկելի են . զիտէք , պարոն , որ շատ տեսակ երկելի մարդիկ կը գտնուին :

— Անոնցմէ մէկը , այն բարձրահասակ նիշար մարդը զիտուն մ'է . Հոռմի դաշտին մէջ մողէղ մը դտած է , որ սովորականէն մեծ ողնայար մը ունի , և եկած է այս զիւտը գիտնոց հաղորդելու : Անոր վրայ երկար վիճաբանութիւններ տեղի ունեցան . բայց վերջապէս բարձրահասակ պարոնը շահեցաւ : Ողնայարը զիտնոց մէջ մեծ շշուկ հանեց . նիշար պարոնը լոկ Պատույ Լէկէոնի ասպետ էր , պաշտօնատար անուանեցին զան :

— Ո՛չ , կը տեսնեմ որ արժանաւորապէս վարձատրուեր է . ուրեմն եթէ ուրիշ ողնայար մ'ալ զտնէ , զինքը հրամանատար պիտի անուանեն :

— Զաւանական է , ըստ Մորսէրֆ :

— Եւ ովկ կրնայ ըլլալ միւսը որ կանաչ դոյնով բանուած կապոյտ թիկնոց մը հազեր է :

— Այս թիկնոցը Հասարակապետութիւնը հնարած է , որ ինչպէս զիտէք արհեստէ չհասկընալով և ուզելով Ակադեմեաններուն միազգեստ մը տալ , Գաւիթթ դերձակին աղաչեց որ զգեստ մը նկարէ :

— Ո՛չ , ուրեմն այս պարժնը Ակադեմեան է , ըստ Մօնթէ-Քրիսթօ :

— Այո , ութօ օրէ 'ի վեր զիտնոց ժողովին մասնակից է :

— Եւ ի՞նչ է իւր արժանաւորութիւնն ու յատկութիւնը :

— Իւր յատկութիւնն է կարծեմ Ճաղարներուն զլուխը դնդասեղներ խօժել , հաւերուն տորոն կերցընել , և շահց ողնայարի ծուծը կէտի ոսկով հանել :

— Եւ ասո՞ր համար զիտութեանց Ակադեմիային մէջ կը գտնուի :

— Գաղղիական Ակադեմիային մէջ :

— Գաղղիական Ակադեմիան ի՞նչ դործ ունի այդ բանին մէջ :

— Հիմա ըսեմ , կ'երեի թէ . . . :

— Իւր ըրած փորձերը զիտութեանց մեծ քայլ մը ընել տուին ըսել կ'ուզէք անշաւշտ :

— Ոչ, բայց խիստ ընտիր ոճով կը դրէ :

— Ռւրեմն ճագարներուն դլուխը զնդասեղներ խօթելով, հաւերուն ոսկրները կարմիր ներկելով և շուներուն ողնայարի ծուծը հանելով՝ մեծ ծառայութիւն մը կը մատուցանէ — :

Ալպէր սկսաւ ծիծաղիլ :

— Միւսը ովէ, հարցուց կոմսը :

— Միւսը :

— Այս, երրորդը :

— Ծոսպաւոր կապոյտ զգեստովը :

— Այս :

~~—~~ Կամսին պաշտօնակիցն է, այն անձը, որ Ատենակալաց միազդեստ մը հնարելու առաջարկութեան ամենէն աւելի ընդդիմացաւ և յաջողեցաւ. ազատ օրագիրները իրեն դէմ խօսեցան, բայց վերջապէս հաշտուեցան անոր հետ, և հիմա կ'ըսեն թէ դեսպան պիտի անուանեն զինքը :

— Եւ ի՞նչ արժանաւորութեամբ ատենակալ եղած է :

— Երկու կամ երեք ծիծաղաշարժ գուսանական խաղեր յօրինելով, Սիէքը օրագրին ընկերութեան չորս կամ հինգ բաժանորդութիւն առնելով, և հինգ կամ վեց տարի շարունակ պաշտօնէին համար քուէ տալով :

— Հիմա շնորհք մը պիտի ընէք ինձ :

— Ի՞նչ կը խնդրեք :

— Կը խնդրեմ որ զիս այդ մարդոց չներկայացընէք, և եւթէ անոնք ներկայացուիլ ուզեն, իմացընէք ինձ — :

Այս միջոցիս կոմը զգաց որ ձեռք մը իւր թեին կը դպչէր : Գլուխը դարձուց և Պ. Տանկլարը տեսաւ :

— Դո՞ւք էք, Պ. սեպուհ, ըսաւ :

— Ի՞նչո՞ւ զիս սեպուհ կ'անուանէք, ըսաւ Տանկլար, աղէկ զիտէք որ ես կարեռութիւն չեմ տար տիտղոսիս : Դերակոմսը չեմ ես. այնպէս չէ, Ալպէր, դուք ձեր տիտղոսին կարես բութիւն կու տաք :

— Անշուշտ, պատասխանեց Ալպէր, վասն զի եթէ դերակոմսի տիտղոսը վրայէս հանեմ, բան մը չեմ ունենար. բայց դուք եթէ ձեր սեպուհի տիտղոսն ալ զոհէք, դարձեալ միլիոնատէր մ'էք:

— Կարծեմ թէ Յուլիսի թագաւորութեան ժամանակ ամենէն ընտիր տիտղոսը այս է, կրկնեց Տանկլար:

— Դժբաղդաբար, ըստ Մօնթէ-Քրիսթօ, մարդս կրնայ սեպուհի, Գաղղիոյ ատենակալ կամ Ակադեմեան ըլլալ, բայց ցմահ միլիոնատէր՝ ոչ երբէք: Ըսածիս յայտնի ապացոյց են Ֆրանքֆորթի Ֆրանք և Քուլման, որոնք միլիոնատէր էին, բայց մնանկացան:

— Ստո՞ր կ'ըսէք, ըստ Տանկլար գոյնը նետելով:

— Եյս իրիկուն նամակէ մը այս լուրը ստացայ. անոնց վրայ գրեթէ միլիոն մը ունէի. բայց ժամանակին իմացած ըլլալով, ասկէ գրեթէ ամիս մը առաջ ստակներս անոնց քովէն պահանջնջեցի:

— Անոնք իմ վրաս երկու հարիւր հազար ֆրանք քաշած են, կրկնեց Տանկլար:

— Ուրեմն կ'իմացընեմ որ իրենց ստորադրութիւնը հարիւրին հինգ արժողութիւն ունի միայն:

— Եյս, բայց ես շատ ուշ իմացայ, ըստ Տանկլար, անոնց ստորագրութիւնը պատուած եմ:

— Աղէկ, ըստ Մօնթէ-Քրիսթօ, այս երկու հարիւր հազար ֆրանքն ալ միւսներուն քովը պիտի երթան . . . :

— Լոեցէք, այդ խօսքերը մի բանաք հիմա, մանաւանդ ու. Գավալլանթիի որդւոյն առջև —, ըստ Տանկլար Մօնթէ-Քրիսթոյի մօտենալով, և այս խօսքերը ըսելէն ետեւ ժպիտով մը երիտասարդին կողմը դառնալով:

Մորսէրք՝ կոմսին քովէն հեռանալով իւր մօրը հետ խօսելու դայեր էր:

Տանկլար ող. Գավալլանթիի որդիին բարեելու համար կոմսէն բաժնուեր էր:

Ուստի Մօնթէ - Քրիսթօ վայրկեան մը մինակ մնայ :

Արահին տաքութիւնը երթալով կը սաստիանար :

Ապասաւորները սպոռողներով և պաղպաղակներով լցուած ափոէներով սրահներուն մէջ կը շրջագայէին :

Մօնթէ - Քրիսթօ թաշկինակովը քրտնալից երեսը սրբեց . բայց ափսէն իւր առջևէն անցած ժամանակը ետ քաշուեցաւ և դովանալու համար բան մը չառաւ :

Տիկին աը Մորսէրֆ իւր աչքը Մօնթէ - Քրիսթոյի վրայէն շէր վերցուցած :

Ափսէին ձեռք չդպցընելը և ետ քաշուելու ժամանակ ըրած շարժումը գիտեր էր :

— Ալզէր , ըստ , բան մը գիտեցի՞ր :

— Ի՞նչ բան , մայր իմ :

— Կոմսը մեր տունը երբէք ճաշել չուղեց :

— Այո , բայց իմ տուած նախաճաշը ընդունեց . ըստ ուրում այն նախաճաշով սկսաւ ընկերութեանց մէջ մտնել :

— Քու նախաճաշիդ զալով կոմսին տունը ճաշեց ըստ շէ , մրմնջեց Մէրսէտէս , և այս իրիկուն իսկ կը գիտեմ որ բան մը չառաւ :

— Կոմսը շատ քիչ բան կ'ուտէ , մայր իմ — :

Մէրսէտէս տիրութեամբ ժպտեցաւ :

— Անոր քովը զնա , ըստ , և ուրիշ ափսէ մը առջևէն անցած ժամանակ ստիպէ զան որ բան մը առնու :

— Ինչու համար , մայր իմ :

— Այս շնորհքը ըրէ ինձ , Ալզէր — , ըստ Մէրսէտէս :

Ալզէր մօրը ձեռքը համբուրեց և զնաց կոմսին քովը նստաւ :

Առջիններուն պէս լեցուած ուրիշ ափսէ մը կոմսին առջեւէն անցած ժամանակ՝ Մէրսէտէս տեսաւ որ Ալզէր կ'ըստ ափսէր զան , մինչև իւր ձեռօքը պաղպաղակ մը անոր կը ներակայացընէր . բայց կոմսը յամառութեամբ մերժեց զայն :

Ալզէր մօրը քով վերադառնաւ :

Կոմսուհետին դոյնը նետեր էր :

— Կը տեսնես, Ալպէր, ըսաւ, չընդունեց:

— Այս, բայց ինչո՞ւ հոգդ կ'ընես:

— Գիտես, Ալպէր, կիները զարմանալի են, ուրախութիւն մը պիտի զգայի երբ կոմսին բան մը առնելը տեսնէի, եթէ նրան հատ մը իսկ ըլլար առածը: Բայց զուցէ Գաղղական սովորութիւններէն շախորժեր, զուցէ ուրիշ բան մը կ'ուզէ:

— Ոչ ամենեին. Խտալիոյ մէջ ամեն բան ուտելը տեսայ. անշուշտ այս իրիկուն անհանգստութիւն մը ունեցած պիտի ըլլայ:

— Ասկէ զատ, ըսաւ կոմսուհին, զուցէ միշտ տաք կլիմաներու տակ ապրելով, ուրիշներուն չափ տաքութիւնը չզգար:

— 2եմ կարծեր, ըստ որում տաքութենէն նեղուելուն վրայ դանդատելն իսկ լսեցի, և կ'ըսէր թէ ինչո՞ւ համար վանդակներն ալ չեն բանար, քանի որ պատուհանները արդէն բացեր են:

— Ստուգիւ, ըսաւ Մէրսէտէս, հիմա այս միջոցով պիտի ստուգեմ թէ այս ըրածը դիմամբ է թէ ոչ — :

Եւ սրահէն դուրս ելաւ:

Վայրիեան մը ետքը՝ վանդակապատները բացուեցան, և սրահին մէջ զտնուողները պատուհանները զարդարով յասմիկներուն և բաղեղներուն մէջէն լապտերներով լուսաւորուած պարտէզը և վրանին տակի պատրաստուած ընթրիբը տեսան:

Պարողք և պարուհիք, խաղամոլք և խօսաերք ուրախութեան ձայն մը հանեցին և ներս մտնող օդը հեշտանօք կը ծծէին:

Նոյն միջոցին Մէրսէտէս ներս մտաւ առաջուանէ աւելի քունատեալ, բայց իւր դիմաց վրայ քանի մը պարագայից մէջ նշանաւոր եղած հաստատամոռութիւնը նկարուած էր:

Ուղղակի դէալ 'ի իւր ամուսինը դնաց, որ խմբեակի մը կեդրոնը կը կաղմէր:

— Այս պարսները հոս մի՛ շղթայեր, պարոն կոմս, ըսաւ .

եթէ խաղալ չեն սիրե՛ր, դուցէ հօս խեղդուելէն աւելի պար-
տէզին օդը վայելելը նախամեծար կ'ընտրեն :

— Տիկին, պարտէզը առանձին չենք երթար, ըստ խիստ
համարձակ ծեր զօրապետ մը :

— Ծատ աղէկի, ըստ Մէրսէտէս. Հիմա ձեզ օրինակը տամ — :
Եւ Մօնթէ-Քրիսթոյի դառնալով,

— Պարոն կոմս, ըստ, հաճեցէք պատուել զիս ձեր թեր
ինձ ներկայացընելով — :

Կոմսը այս պարզ խօսքերուն վրայ զրեթէ սարսոալէն ե-
տեւ՝ վայրկեան մը Մէրսէտէսին երեսը նայեցաւ :

Այս մէկ վայրկեանը փայլակի մը արագութիւնը ունեցաւ,
բայց Մէրսէտէսի համար դարի մը շափ տեղ, այնշափ այն
մէկ նայուածքին մէջ Մօնթէ-Քրիսթոյի ունեցած մտածու-
թիւնները յայտնի կ'երևէին :

Կոմսը իւր թեր կոմսուհւոյն ներկայացուց, և մրտավար-
դերով ու զամելիաներով զարդարուած սանդուխներուն մէ-
կէն միատեղ վար իջան :

Իրենց ետեէն և միւս սանդուխէն քսանի չափ Ճեմողներ
ուրախութեան բարձր ձայներով պարտէզը իջան :



ՊԼՈՒՔ ՀԱՅ.

ՀԵՅՆ ՈՒ ԸՆԼ

Sիկին տը Մորակրք իւր ընկերին հետ զեպ
 'ի ծառուղի մը յառաջացաւ, որուն
 երկու կաղմը բարձրացած թմբի ծա-
 ռերը զիրար դրկելով կամարապատ
 ճամբայ մը կը կաղմէին, և որու մէջէն ջերմանոցը կ'երթուէր:
 — Սրաչին մէջ խիստ տաք էր, այնպէս չէ, պարոն կոմն,
 ըստ Մէրսէտէս:
 — Այս, տիկին, և շատ աղէկ մտածեցիք պատուհաններն
 ու վանդակները բանալ տալու —:
 Այս խօսքերն ըսելով կոմնը դիտեց որ Մէրսէտէսի ձեռքը
 իւր բազիին վրայ կը դողար:
 — Բայց դուք այդ բարակ շրջաղղեսալ և ձեր պարանոցը
 փաթթած այդ շղաշատեռալ դուցէ պաղեք, ըստ:
 — Գիտէք ուր կը տանիմ զձեղ, ըստ կոմնուհին՝ առանց
 Մօնթէ-Քրիսթոյի խօսքին պատասխանելու:
 — Ոչ, տիկին, բայց կը տեսնէք որ կը հնաղանդիմ ձեզ:
 — Այս ծառուղոյն ծայրը տեսնուած ջերմանոցը կ'եր-
 թանք —:
 Կոմնը հարցընելու պէս Մէրսէտէսի երեսը նայեցաւ, բայց
 կոմնուհին առանց խօսք մը խօսելու իւր ճամբան շարունա-
 կեց, կոմնն ալ ձայն չհանեց:
 Վերջապէս ջերմանոցը հասան, որուն մէջ եղած զանա-
 զան զեղեցիկ պատուղները արդէն յուլիսի սկիզբը հասունցեր

կոմնը հարցընելու պէս Մէրսէտէսի երեսը նայեցաւ, բայց
 կոմնուհին առանց խօսք մը խօսելու իւր ճամբան շարունա-
 կեց, կոմնն ալ ձայն չհանեց:
 Վերջապէս ջերմանոցը հասան, որուն մէջ եղած զանա-
 զան զեղեցիկ պատուղները արդէն յուլիսի սկիզբը հասունցեր

էին, փառք այն ջերմութեան աստիճանին, որով ջերմանոց ները կը տաքցընե՞ն՝ շատ անգամ բարիզի մէջ բացակայ եւ զած արեւուն այն տաքութեան փոխանակելու համար:

Կոմսուչին Մօնթէ-Քրիսթոյի թեր թողուց, և գնաց մշկա հու խաղողի որթէն ողկոյդ մը փրցուց :

— Ընդունեցէք այս ողկոյզը, պարոն կոմս, ըսաւ Մէրսէտէս այնպիսի տիտուր ժպիտով մը, որ իւր աշաց ծայրը փայլած արատասուքը կ'երեցընէր. զիտեմ որ մեր խաղողները Սիկիլիոյ և Կիպրոսի խաղողներուն հետ չեն բաղկատուիր, բայց կը յուսամ՝ որ մեր Հիւսիսային խեղճ արեւին համար ներողամիտ պիտի ըլլաք մեղ — :

Կոմսը խոնարհութիւն մը ըրաւ և քայլ մը ետ քաշուեցաւ :

— Կը մերժէք, ըսաւ Մէրսէտէս գողդոջուն ձայնով մը :

— Տիկին, պատասխանեց Մօնթէ-Քրիսթո, մեծ խոնարհութեամբ կ'աղաւեմ որ ներէք ինձ, այդ խաղողը ամենեին չեմ սիրեր — :

Մէրսէտէս ողկոյզը դետինը նետեց, Մօտակայ ծառի մը վրայէն ընտիր գեղձ մը կախուած էր, որ խաղողին պէս ջերմանոցին արուեստական տաքութեամբը հասունցած էր :

Մէրսէտէս թաւշանման պտղին մօտենալով փրցուց զայն :

— Ուրեմն այս գեղձը ընդունեցէք —, ըսաւ :

Բայց կոմսը նոյն շարժումը ընելով մերժեց :

— Ո՛չ, այս ալ կը մերժէք, ըսաւ այնպիսի վշտալի ձայն նով մը, որ անոր հեծկլտալը չէր կրնար ծածկել, ստուդիւ խիստ գժքաղդ եմ եղեր — :

Ասոր վրայ երկար լոռւթիւն մը տիրեց, խաղողին պէս գեղձն ալ աւաղին վրայ գլորեցաւ :

— Պարոն կոմս, կրկնեց վերջապէս Մէրսէտէս թախան ձադին նայուածքով մը Մօնթէ-Քրիսթոյի երեսը նայելով, արաբացի սրտառուչ սովորութիւն մը կայ որ մի և նոյն տանեաց տակը հացին ու աղին մասնակից եղողը մշտնջենապէս բարեկամ կ'ընէ :

— Գիտեմ, տիկին, պատասխանեց կոմսը. բայց չիմա Գաղղիա կը դտնուինք և ոչ Արարիա. և Գաղղիոյ մէջ աղին ու հացին մասնակցութենէն մշտնջենաւոր բարեկամութիւն չկայ :

— Բայց վերջապէս, ըսաւ կոմսուհին սրտի բարախմամբ իւր նայուածքը Մօնթէ-Քրիսթոյի աչաց վրայ յարելով և իւր երկու ձեռօքը գրեթէ ջղաձգութեամբ անոր թեր բռնելով, բարեկամ ենք մենք, այնպէս չե — .

Կոմսին արիւնը գեա 'ի իւր սիրտը յորդեց, և մեռելատիզ դունատեցաւ. արիւնը սրտէն կոկորդը ելնելով՝ իւր այտերը պատեց, և իւր աչքերը շացեալ մարդու մը պէս քանի մը մանրերիրորդ պղասոր կը տեսնէին :

— Անշուշտ բարեկամ ենք, տիկին, պատասխանեց կոմսը. և ինչու բարեկամ պիտի չըլանք — .

Կոմսին ձայնը տիկին աը Մորսէրֆի բաղձացած ձայնէն այնչափ հեռի էր, որ կոմսուհին երեսը դարձուց և այնպիսի հառաջանք մը հանեց, որ հեծութեան կը նմանէր :

— Շնորհակալ եմ — , ըսաւ Մէրսէտէս և իւր ճամբան շարունակեց :

Առանց խօսք մը խօսելու պարտէզին բոլորտիքը շրջեցան :

— Պարոն, կրկնեց յանկարծ կոմսուհին տասը վայրկեան լոին շրջագայութիւն մը ընելէն ետե, ստոյդ է որ այնչափ բանն ը տեսած, այնչափ ճամբորդութիւններ ըրած և այնչափ նեղութիւններ կրած էք :

— Այո, տիկին, խիստ շատ տառապանքներ կրեցի, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ :

— Բայց չիմա երջանի՛կ էք :

— Անտարակոյս, պատասխանեց կոմսը, ըստ որում մէ կը իմ տրտունջս չլսեր :

— Արդի երջանկութիւննիդ կատարեալ է :

— Ներկայ երջանկութիւնս անցեալ թշուառութեանս կը հաւասարի, ըսաւ կոմսը :

— Ամենեին ամուսնացած չէք, հարցուց կոմսուհին :

— Ես ամուսնանամ, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ սարսուալով, և ովք ըստ ձեզ այդ խօսքը :

— Մէկը ըստ, բայց նորատի և զեղանի անձ մը շտանդամ Օբէրային տանելնիդ տեսեր են :

— Իշխանի աղջիկ մ'է ան, տիկին, զոր կոստանդնուպոլսէն իբր գերի դնեցի, և ես աշխարհիս մէջ սիրոյ ուրիշ առարկայ մը չունենալուս՝ ինձ որդեգիր ըրի զան :

— Ուրեմն առանձին կ'ապրիք :

— Այո՞ :

— Քոյր . . . որդի . . . կամ հայր չունիք :

— Մէկը չունիմ աշխարհիս վրայ :

— Ուրեմն ինչպէս կրնաք ապրիլ առանց սիրոյ առարկայ մը ունենալու :

— Յանցանքը իմս չէ, տիկին. Մալթայի մէջ նորատի աղջիկ մը կը սիրէի և անոր հետ ամուսնալու վրայ էի, երբ պատերազմը վրայ հասնելով՝ ստիպուեցայ հեռանալ անորմէ : Կարծեցի թէ այնչափ կը սիրէ զիս որ մինչև դառնալս պիտի սպասէ և մինչև գերեզմանը ինձ հաւատարիմ պիտի մնայ : Բայց վերադարձիս՝ զան ամուսնացեալ դտայ : Քսան տարեկանը լրացընող ամեն մարդու պատմութիւնն է այս : Բայց ես զուցէ ուրիշներէն աւելի տկար սիրտ մը ունէի, և ուրիշ մը զուցէ ինձի չափ շտառապէր — :

Կոմսուհին վայրկեան մը լուս կեցաւ, ըստ որում յայտնի կ'երեւէր որ շունչ առնելու պէտք ունէր :

— Այո՞, ըստ, մարդս մէկ անդամ կը սիրէ . . . և այն սիրոյն յիշատակը ձեր սրտէն ելած չէ . . . Բայց անկէ 'ի վեր այն կինը ամենեին չտեսաք :

— Ամենեին :

— Ամենեին :

— Անոր զտնուած քաղաքը մէկ մ'ալ չվերադարձայ :

— Մալթա :

— Այս՝ Մալթա :

— Ուրեմն Մալթա կը գտնուի :

— Կարծեմ :

— Եւ ձեզ այնչափ տառապանքներ պատճառելուն համար ներեցիք անոր :

— Անոր, այս :

— Բայց միայն անո՞ր ներեցիք. ուրեմն զան ձեզմէ բաժնողները միշտ կ'ատէք — :

Կոմսուհին Մօնթէ-Քրիսթոյի առջև կեցաւ. անուշահոտ խաղողին մէկ մասը տակաւին ձեռքը բռներ էր :

— Առեք, ըստ :

— Ամենենին մշկահոտ խաղող չեմ ուտեր, տիկին, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ այնպիսի կերպով մը որպէս թէ ամենենին այսպիսի խօսք մը առաջէն եղած չէր իրենց մէջ — :

Կոմսուհին յուսակտուր շարժումով մը ողկոյզը մօտակայ խիտ ծառոց մէջ նետեց :

— Անողոքելի էք —, մըմջեց Մէրսէտէս :

Մօնթէ-Քրիսթօ այս կշտամբանաց վրայ անդզայ կեցաւ, որպէս թէ իրեն ուղղուած չըլլար այն խօսքը :

Այն միջոցին Ալպէր դէսլ 'ի իրենց կը վազէր :

— Ո՛չ, մայր իմ, ըստ, մեծ դժբաղդութիւն մը :

— Ի՞նչ կայ, ինչ պատահեցաւ, հայցուց կոմսուհին աղէտալի երաղէ մը արթնցածի պէս. դժբաղդութիւն մը ըսիր. իրօք՝ պէտք է որ դժբաղդութիւն մը պատահի :

— Պ. աը Վելլֆօրը եկաւ :

— Ետքը :

— Իւր կինն ու աղջիկը տանիլ կ'ուզէ :

— Ի՞նչ պատճառաւ :

— Վասն զի Սէն-Մէրանի տիկին մարքէզուհին Բարիլ հասնելով՝ իմացուցեր է որ Պ. Սէն-Մէրան Մարսիլիայէն մեկնելով առաջին օթեանին մէջ մեռեր է. Տիկին Վելլֆօր զուարթութեան մէջ ըլլալով՝ չէր ուզեր ոչ այս դժբաղդու-

թեան հաւասար և ոչ մտիլ ընել իւր ամուսնոյն խօսքերը։ Բայց օրիորդ Վալանթին առաջին խօսքերէն ամեն բան դռւշակեց, թէե Պ. տը Վիլլֆօր անորմէ գաղտնի պահէլու համար զգուշութիւններ կ'ընէր, այս դոյժը կայծակի հարուածի պէս ազդեց իրեն և նուաղեալ ինկաւ։

— Պ. տը Աէն-Մէրան օրիորդ Վալանթինի ի՞նչն է, հարցուց կոմսը։

— Օրիորդին հանին է, իւր թոռը Փրանզին հետ ամուսնացընելու համար Բարիզ կու դար։

— Ի՞նչ կ'ըսէք։

— Այս կերպով Փրանզին ամուսնութիւնը ետ կը մնայ, ըստ Ալփէր։ Ինչո՞ւ Պ. տը Աէն-Մէրան օրիորդ Տանկլարի ալ հանին շըլլար։

— Ալփէր, Ալփէր, ըստ տիկին տը Մորսէրֆ կշտամբական քաղցր ձայնով մը, ի՞նչ կ'ըսես։ Ա՛չ, պարոն կոմս, ըսէք անոր որ այս խօսքը չվայելեր, քանի որ կ'ակնածէ ձեզմէ։

Կոմսուհին քանի մը քայլ յառաջացաւ։

Մօնթէ-Քրիսթօ այնպիսի տարօրինակ նայուածքով մը և այնպիսի մոտախորհ ու կեղծ զարմանքով մը անոր նայեցաւ որ կոմսուհին ետ գարձաւ։

Անոր ձեռքը բռնեց, ինչ ատեն իւր որդւոյն ձեռքն ալ կը սեղմէր և երկուքն ալ իրարու միացընելով։

— Բարեկամ ենք, այնպէս չե, ըստ։

— Ա՛չ, ձեր բարեկամը, տիկին, ամենակին այդ համարձակութիւնը չօւնիմ, ըստ կոմսը։ բայց ամեն պարագայի մէջ ձեր խոնարհ ծառան եմ։

Կոմսուհին սրտի անպատմելի անձկութեամբ մը անորմէ բաժնուեցաւ, և տասը քայլ չըրած՝ կոմսը տեսաւ որ Մէրսէտէս իւր թաշկինակովը աշքերը կը սրբէր։

— Միթէ մօրս հետ անհամաձայնութիւն մը ունիք, ըստ Ալփէր դարձանքով մը։

— Ընդ հակառակն , պատասխանեց կոմսը , աեսաք որ ձեր
առջեւը հիմա ըստ որ իրարու բարեկամ ենք :

Սրահը մտած ժամանակնին՝ Վալանթին և Պ. ու տիկին
Արքափօր անկէ կը մեկնէին :

Աւելքդ է ըսել թէ Մորել իսկ անոնց ետեւէն դուրս ե-
լեր էր :



ՉԱՌԱՐԱ ՀԱՅ :

ՑԻԿԻՆ ՑԷ ԱԷՆ-ՄԵՐԵՆ

ՎԻ ԲՐԵՔ Պ. տը Ա.իլքֆօրի տան մէջ տիրագին
տեսարան մը տեղի ունեցեր էր :
Տիկին տը Ա.իլքֆօր և Վալանթին
պարահանդէսը երթալէն ետեւ՝ թա-
գաւորի զործակալը , որ իւր ամուս-
նոյն թախանձանքը մտիկ չընելով անոր ընկերանալ չուզեր
էր , սովորութեանը համեմատ իւր դահլիճը քաշուեր էր ծը-
րար մը թղթերով , սրոնց քանակութիւնը կրնար ուրիշ մար-
դու սարսափ պատճառել , բայց անոնք իւր կենաց անդործ

Ժամերաւն մէջ հաղիւ կը բաւէին իւր աշխատութեան ցան կութիւնը յագեցընելու :

Սակայն այս անդամ թուղթերը ձեի համար կուտուած էին . քանզի Ակիլֆօր աշխատելու գայած չէր այլ խորհելու . իւր գուռը գոցելով ու հրամայելով որ միայն խիստ կարեոր գործ մը պատահած ատեն դան իրեն իմաց տան , իւր թեաթոռին վրայ նստաւ և եօթը կամ ութ օրէ 'ի վեր իւր տիբութեան և դառն յիշատակաց բաժակը յորդու սրաբագաները վերստին մի առ մի իւր մտաց մէջ ներկայացուց :

Եյն ատեն՝ փոխանակ իւր առջեւ կուտուած թուղթերը խառնելու , իւր դրանոցին մէկ դղրոցը քաշեց , անոր գաղտնի մէկ ծակը բացաւ , և իւր մասնաւոր թղթակցութեանց և տեղեկութեանց թանկապին ծրարը հանեց . իւր քաղաքական ընթացքին , դրամային դործոց , անիրաւ դատաստանաց կամ գաղտնի սիրահարութեանցը մէջ իւր թշնամիներն եղողներուն անունները միայն իրեն ծանօթ դրերով անոնց մէջ կարգաւ նշանակած էր :

Հիմա որ թագաւորի դործակալը սկսեր էր երկնչել , անոնց թիւը զինքը կը սարսափեցընէր . թէե այն ամեն անունները , որչափ և զօրաւոր և ահարկու ըլլային , շատ անդամ իւր ժպիտը շարժեր էին , ինչպէս կը ժպտի լերան բարձրագոյն կատարը հասնող ճամբորդը՝ երբ իւր ստորոտը սրածայր ժայռեր , անկոփ ճանապարհներ և դահավէժներ կը տեսնէ , ուրոնց հետ այնչափ երկար ժամանակ և դժուարութեամբ մըրցեր էր նոյն բարձրութեան վրայ հասնելու համար :

Երբ այն անունները վերստին իւր յիշողութեան մէջ ներկայացուց , ու անոնց ծանօթութիւնները վերստին աշքէ անցուց , քննեց , ու անոնց վրայ մտածեց , իւր գլուխը շարժելով ,

— Ոչ , մըմնաց , այս թշնամիներէն մէկն ալ չկրնար այն շափի համբերութեամբ և մնծ գժուարութեամբ մինչե ցայսօր սպասել , որպէս զի այս գաղտնեաց մէջ ինձմէ վրէժ լուծելու դայ : Երբեմն , ինչպէս կ'ըսէ համեմ , խիստ խորունկ

թաղուած դաղտնեաց շռւկը դետնի տակէն կ'ելնէ , և շրջմալի փոսփորական հուրերուն ողէս օդին մէջ յիմարութեամբ կը վազէ . բայց լոկ բաց են անոնք , որոնք բռնկելով զմեզ կը շփոթեն : Կարելի է Քորսիացին իւր պատմութիւնը քահանայի մը պատմելով , քահանան ալ Մօնթէ-Քրիսթոյի պատմց , և կոմսը ստոյգ տեղեկութիւն ստանալու համար . . . :

« Սակայն ստոյգ տեղեկութիւնը իրեն ի՞նչ օգուտ պիտի ընէ , կրկնեց Ախլաֆօր վայրկեան մը մտածելէն ետե . սրարոն Մօնթէ-Քրիսթօ , կամ Պ. Զադոն , Մալթացի նաւայարդարի մը որդին , Թեսաղոնիկէի մէջ հանք գտնողը այսպիսի տխուր , դաղանի և անօգուտ զործի մը վրայ տեղեկանալէն ի՞նչ պիտի շահէ : Աբրայ Պիւզոնիկէն և լորտ Ախլմորէն , այսինքն իւր բարեկամէն ու թշնամիկէն ստացած իրարու հակառակ տեղեկութիւններէս սա միայն ստոյգ , Ճիշդ և յայտնի կ'երեկի որ ինձի հետ ամենեին որ և է ժամանակի և ո՛ր և է պարագայի կամ առթի մէջ հաղորդակցութիւն ունեցած չէ — .

Ախլաֆօր այս խօսքերը իւրովի կ'ըսէր բայց իւր ըսածներուն ալ համոզուած չէր :

Ամենէն սոսկալին դաղտնիքին երեան ելնելու չէր , քանզի կրնար ուրանաւ կամ պատասխան մը տալ :

Իրեն անհանդսութիւն պատճառողը պատին վրայ արիւներանդ դրերով երեցած Մանէ , Թաէիէ , Փարէսը չէր , այլ զանոնք դժող ձեռքին մարմինը կ'ուզէր ճանշնաւ :

Այն միջոցին որ իւր սիրտը հանդարտեցընելու կը ջանար , և իւր փառասիրութեամբ երազած այն քաղաքական ապագայ յին տեղը՝ այնչափ երկար տաենէ՝ ՚ի վեր քունի մէջ եղող թշնամին արթընցընելու երկիւղին հետ մէկտեղ իւր տնային ուրախութիւնները սահմանող ապագայ մը կը դիտէր , իւր տանը գաւթին մէջ կառքի մը ձայնը առաւ , եռքը տարիքը առած անձի մը հառաչելով և ողլալով սանդուխէն վեր ելնելու լսեց :

Ախլաֆօր իսկոյն իւր դահլիճին պարզունակը բայցաւ , և

պառաւ տիկին մը առանց իւր զալուստը իմացընելու՝ ներս
մտաւ իւր ցփսին բաղկին տակը առած և դլխարկը ձեռքը
բռնած :

Իւր սպիտակացեալ մաղերուն տակը դեղնած փղոսկրի նման
տժզոյն ճակառը կ'երեւէր . և իւր աչքերը , որոնց անկիւն .
ները տարիքը խորունկ խորշեր բացած էր , լացերէն ուռեւ-
նալով դրեթէ աներեսոյթ եղեր էին :

— Ա՛յ , պարոն , այս ի՞նչ դժբաղդութիւն է , ըստ տի-
կինը , ես ալ պիտի մեռնիմ , այո , անշուշտ ես ալ պիտի
մեռնիմ — :

Այս խօսքերէն ետեւ դրան ամենէն մօռ թեաթոռին վրայ
ինկաւ և սկսաւ հեծկլտալով ողբալ :

Ծառաները դրան սեմոց վրայ կանգնած եւ ներս մտնելու
չհամարձակելով ։ Եսուարթիէի ծերունի ծառային կը նայէին ,
որ իւր տիրոջը սենեկէն այս ձայնը լսելով՝ վաղեր եկեր և
միւս ծառաներուն ետին կանգներ էր :

Վիլքօր իւր զոքանչին քովը վաղեց , վասն զի եկողը տի-
կին տը Սէն-Մէրանն էր :

— Ավ Տէր Աստուած , ի՞նչ կայ , տիկին , հարցուց անոր ,
ինչո՞ւ այդպէս կը տաղնապիք . Պ. տը Սէն-Մէրան հետեր-
նիդ չէ :

— Պ. տը Սէն-Մէրան մեռաւ — , ըստ մարքեզուհին ա-
ռանց երկարաբանելու և դրեթէ ապուշ նայուածքով՝ մը :

Վիլքօր քայլ մը ետ քաշուեցաւ և ձեռքերը իրարու
զարկաւ :

— Մեռաւ . . . , ըստ Վիլքօր կակաղելով , այսպէս յան-
կարծ մեռաւ . . . :

— Ութ օր առաջ , շարունակեց տիկին տը Սէն-Մէրան ,
Ճաշէն ետեւ միատեղ կառքը հեծանիք . Պ. տը Սէն-Մէրան
քանի մը օրէ ՚ի վեր անհանդսութիւն մը ունէր . սակայն
մեր սիրելի Ալալանթինը տեսնելու բաղձանքը անոր ոյժ կու
տար , և իւր անհանդսութիւնը բանի տեղ չդնելով ուզեց

Ճամբար ելնել, երբ Մարսիլիային վեց մղոն անդին՝ իւր սովորական գեղահատերը առնելէն ետև՝ այնպիսի խորին քունի մէջ ընկղղմցաւ, ոչ բնական չէր երեսը ինձ . սակայն զան արթնցընելու կ'երկմաէի, և տեսայ որ իւր գէմքը կը կարմրէր և քունքին երակները սովորականէն աւելի սաստեռթեամբ կը բարափիւրն . Գիշերը վրայ հասնելով և բան մը չտեսնելու՝ թողուցի որ քնանայ, շատ շանցաւ՝ խորունկ և կսկզնեցուցիչ ձայն մը հանեց երազի մէջ տաղնապող մարդու մը պէս, և յանկարծական շարժմամբ գլուխը գէպ 'ի ետև կախեց . Սենեկապանս կանչեցի, կառավարը կեցուցի, ո. տը Սէն-Մէրանի անունը տուի, ողելից սրուակս անոր քթին բռնեցի, ամեն բան լինցեր եր, ամռափինս մեռեր եր, և մինչեւ Էքս անոր անշնչացեալ մարմոյն քով մնացի — .

Ա. իլլֆօր ապշած և բերանը բաց մեացեր էր,

— Անտարակոյս բժիշկ մը կանչեցիք,

— Անմիջապէս, բայց ինչպէս որ ըսի՝ շատ ուշ էր,

— Այս, բայց զոնէ կրնար հասկընալ թէ ողորմելի մարքէզը ինչ հիւանդութեամբ մեռ աւ :

— Սոսկալի կաթուած մը կ'երեի ըսաւ բժիշկը:

— Եւ ինչ ըրիք այն ատեն :

— Պ. ար Սէն-Մէրան միշտ կ'ըսէր որ եթէ Քարիզէն հեռու մեռնի, կը բաղձայ որ իւր մարմինը ընտանեացը շիրմին մէջ թաղուի, կապարեայ արկղի մը մէջ դնել տուի զան և անորմէ քանի մը օր առջեւ անցայ:

— Ո՛չ, խեղչ մայր իմ, ըսաւ Ա. իլլֆօր . այդպիսի մեծ դժբաղդութենէ ետև ձեր այդ տարիքին մէջ ինչպէս կարող եղաք այդ զործերը կատարել :

— Աստուած ոյժ տուաւ ինձ . ասկէ զատ՝ միթէ սիրելի ամռուինս նոյնը պիտի ըընէր ինձ որ ես իրեն ըրի . Անորմէ բաժնուելէս 'ի վեր՝ կարծեմ թէ խենթեցած եմ. աւ չեմ կրնար լալ, սաղյզ է այն խօսքը թէ իմ աարիքս եղողներուն արտասուքը կ'ըսպառի, սակայն ինձ այնպէս կ'երեի

թէ այսպիսի դժբաղդութեան մէջ եղողը պէտք է որ կարենայ լալ, Ուր է Աւալանթին, պարոն, անոր համար մենք ճամբայ ելած էինք, կ'ուզեմ Աւալանթինս տեսնել — :

Աիլըֆօր մտածեց որ խիստ տարադէայ պիտի ըլլայ եթէ Աւալանթին պարահանդէսը զնաց ըսէ, ուստի մարքէզուհոյն պատասխանեց թէ իւր թռուը մօրուին հետ դուրս ելած է և իսկոյն մարդ պիտի զրկէ զանոնք կանչելու :

— Հիմա շուտով կանչել տուէք, պարոն, կ'աղաչեմ — , ըսաւ տիկինը :

Աիլըֆօր աիկին տը Սէն-Մէրանի թել իւր թեկին տակը տուաւ, և անոր սենեակը տարաւ զան :

— Հանդստացէք, մայր իմ — , ըսաւ անոր :

Մարքէզուհին այս խօսքին վրայ դլուխը վերցուց և այն մարդը տեսնելով, որ իւր այնչափ ցաւած աղջիկը կը յիշեցընէր, որուն կենդանի պատկերն էր Աւալանթին, անոր տուած մայր անունին վրայ սիրտը շարժեցաւ, սկսաւ լալ և թեաթռուի մը վրայ ծնրադրեալ իյնալով իւր պատկառելի դլուխը ծածկեց :

Աիլըֆօր իւր կին ծառաներուն պատուիրեց որ հոգ տանին անոր, ինչ ատեն ծերունի Պարուան ալ ահուդողավ իւր տիրոջը քով կը վազէր . վասն զի ծերերը ուրիշ բանէ չեն վախնար, բայց եթէ երբ կը տեսնեն որ մահը զիրենք թողլով ուրիշ ծերի մը կեանքը վերջացուցած է :

Սէն-Մէրանի տիկինը միշտ ծնրադրեալ ջերմեռանդութեամբ աղօթելու ժամանակ՝ թագաւորի դործակալը կառք մը բերել տուաւ և ինքը անձամբ իւր կինն ու աղջիկը բերելու զնաց :

Պարահանդէսին սրահը մտած ժամանակ այնչափ գունաւեալ կ'երեւէր, որ Աւալանթին անոր քովը վազեց դոչելով .

— Ո՛չ, հայր իմ, դժբաղդութիւն մը պատահեցաւ արդեօք :

— Սիրելի հանիդ եկաւ, Աւալանթին, ըսաւ պարոն տը Աիլըֆօր :

— Հասկա հաւս չեկա՞ւ — , հարցուց նորատի աղջիկը դող-
դզալով :

Պ. աը Ակլըֆօր պատասխանի տեղ թեր իւր աղջկան
ներկայացուց :

Վալանթինի դլուխը թալկութեամբ դարձաւ :

Տիկին տը Ակլըֆօր անոր օղնութեան հասաւ և իւր ա-
մուսնոյն հետ մինչեւ կառքը տարաւ զան :

— Տարօրինակ բան է այս , ըսաւ տիկին Ակլըֆօր . որու
մոքէն կ'անցնէր այսպիսի բան մը -- :

Եւ բոլոր այս ընտանիքը այսպիսի անհնարին թախծութեամբ
սրահէն գուրս ելան և այն ուրախ դիշերին մնացեալ ժամկ-
րուն վրայ ու քողի նման իրենց տրամութիւնը տարածեցին :

Սահորիսին վարի կողմը Վալանթին Պարուան տեսաւ , որ
իրեն կ'ըսպասէր :

— Պ. նուարթիէ այս իրիկուն զձեզ տեսնել կ'ուզէ , ը-
սաւ ցած ձայնով մը :

— Հանիս տեսնելէս ետեւ կու դամ — , ըսաւ Վալանթին :
Նորատի աղջիկը իւր այս տկարութեանը մէջ հասկցեր էր
որ այս ժամուս տիկին տը Սէն-Մէրանի պէտք ունեցած անձը
ինքն էր :

Վալանթին իւր հանին անկողնոյ մէջ դտաւ :

Անձայն դրկընդիմառնութիւն , թախծալից սրտի այտում ,
ընդհատեալ հառաջնքներ , կիզիչ արտասուք , աշա ասոնք
էին այս տեսակցութեան պատմուելու կարելի եղող մանրա-
մասն պարագաները , տիկին տը Ակլըֆօր իւր ամուսնոյն թե-
ւէն չբաժնուելով , ողորմնի այրի կնոջ առջն զոնէ ըստ ե-
րեսութից ակնածանօք կեցեր էր :

Վայրկեան սը ետքը՝ բերանը իւր ամսւսնոյն ականջին մօ-
տեցընելով ,

— Չեր հրամանովը , ըսաւ , աւելի աղէկ է որ ես քաշուիմ ,
վասն զի իմ ներկայութիւնս դուցէ աւելի վշտագնէ ձեր դո-
քանչը — :

Տիկին տը Սէն-Մէրան անոր ձայնը լսեց :

— Այո՛, այո՛, ըստ Վալանթինի տկանջին, թող երթայ .
բայց դուն քովս կեցիր — :

Տիկին տը Վիլլֆօր գուրս ելաւ, և Վալանթին առանձին
իւր հանիին անկողնոյն քովս մնաց . վասն զի թագաւորի գործ
տկալը այս անակնկալ մահուան վրոյ վհասութիւն մը զդաւ
լով իւր կնոջը ընկերացաւ :

Պ. Նուարթիէ տան մէջ եղած ձայները լսելով, ինչպէս
ըսինք, իւր ծեր ծառան դրկեր էր որ պատճառը ինչ ըլլալը
իմանայ :

Երբ Պարուա վերադարձաւ, Պ. Նուարթիէ իւր կենդանի
և հանձարալի աշօքը հարցուփորձ ըրաւ զան :

— Եփսո՞ւ, պարո՞ն, ըստ Պարուա, մեծ դժբաղդութիւն
մը պատահէր է . տիկին տը Սէն-Մէրան թարիզ եկեր է, և
իւր ամուսինը մեռեր է — :

Պ. տը Սէն-Մէրան և Պ. Նուարթիէ իրարու հետ բարեկամական սերա կապով մը կապուած չէին, սակայն ինչպէս
յայտնի է՝ ծերի մը մահուան դոյժը մեծ ազգեցութիւն կ'ընէ
ուրիշ ծերի մը :

‘Նուարթիէ տառ ապեալ և մատծութեանց մէջ ընկդմած
մարդու մը պէս զլուխը կուրծքին վրայ կախեց, ետքը մէկ
աչքը զոյեց :

— Օրիորդ Վալանթինը կ'ուզէք — , ըստ Պարուա:
‘Նուարթիէ նշան ըրաւ թէ այս :

— Պարուահնդէ մն է՝ ինչպէս որ դիտէք, քանդի վասուորը
հազուած եկաւ ձեզի մնաք բարե ըսելու — :

‘Նուարթիէ վերստին ձախ աչքը զոյեց :

— Զան տեսնել կ'ուզէք, այնպէս չէ :

‘Ծերունին նշան ըրաւ թէ իւր փափաքը այն էր :

— Անշուշտ տիկին տը Մոքսէրֆի տունէն հիմա պիտի
կանչեն զան, անոր դարձին կ'ըսպասեմ, և կ'ըսեմ որ ձեր
քովս զայ, այս չէ ուզածնիդ :

— Այո՛ — , պրատասխանեց կաթուածահարը :

Ուստի Պարուան Վալանթինի դարձին սպասեց , և ինչպէս ըսինք՝ իւր հաւին փափաքը անոր իմացուց :

Վալանթին ալ ծերունիին բաղձանքը կատարելու համար՝ անոր սենեակը եկեր էր տիկին աշ Սէն-Մէրանի սենեկէն ելնելէն ետե , որ թէպէտ խիստ յուզուած էր , բայց վերջապէտ յոդնութենէն ընկճելով՝ ջերմոտ քունի մը մէջ ընկլնցաւ :

Չեռքի հեռաւորութեամբ փոքր սեղան մը մօտեցուցեր էին անոր , որուն վրայ շիշ մը նարնջի օշարակ , (որ իւր սովորական ըրպելիքն էր) և բաժակ մը դրեր էին :

Ասկէ ետե՝ ինչպէս ըսինք՝ նորաաի աղջիկը նուարթիէի սենեակը երթալու համար մարգէղուհոյն անկողնին քովէն հեռացեր էր :

Վալանթին եկաւ ծերունւոյն համբոյր մը տուաւ , և անոր խիստ խանդաղատանօք իւր երեսը նայելու տեսնելով , իւր աչքերէն վերտանին արտասուք բղնիլու զդաց , որոնց աղքիւրը ցամքած կը կարծէր :

Ծերունին իւր նայուածքը անոր վրայէն չէր վերցըներ :

— Այո՛ , այո՛ , ըստ Վալանթին , ըսել կ'ուզես թէ հաւ միշտ պիտի սիրէ զիս , այնպէս չէ — :

Ծերունին նշան ըրաւ թէ իւր նայուածքովը ձիշդ այն ըսել կ'ուզէր :

— Բաքերազդաբար այդպէս է , կրկնեց Վալանթին . եթէ ոչ ինչ պիտի ըլլայի ես , ովլ Աստուած իմ — :

Ըստուան ժամը մէկն էր . Պարուա , որ քնանալու մեծ փափաք ունէր , զիսողութիւն ըրաւ որ այնպիսի վշտալի զիշեր մը ամեն մարդ պէտք է որ հանդստանայ : Ծերունին չուզեց ըսել թէ իւր հանդստութիւնը իւր թռոք տեսնելն էր : Ուստի Վալանթինը զրկեց որ քնանայ . իրօք տրտմութիւնն ու յոդնութիւնը նորատի աղջիան անհանդառութիւն մը պատճառեր էին :

Հետեւ առաւ Աւալանթին իւր հանիին սենեակը մանեւ լով, անկողնոյ մէջ զտաւ դան . մարգեզուհւոյն տենդը մինչեւ այն ժամը դադրած չէր . իւր աշքերը կրակի պէս կ'այրէին , և ջղային սաստիկ յուզման մը ենթակայ եղեր էր :

— Ով Աստուած իմ , տակաւին անհանդիսաւ ես , սիրելի հանիս , զոչեց Աւալանթին անոր անհանդսութեան նշանները տեսնելով :

— Ոչ , աղջիկս , ոչ , ըսաւ տիկին ար Սէն-Մէրան . բայց անհամբերութեամբ քեզ կ'ըսպասէի որ հայրդ հոս կանչելու դրկեմ :

— Հայրս , ըսաւ Աւալանթին անհանդսութեամբ մը :

— Այս , խօսելիք ունիմ անոր — :

Վալանթին չհամարձակեցաւ իւր հանիին կամքին դէմ կենաւ , մանաւանդ որ պատճառը չէր զիտեր . վայրկեան մը կաքը Ակլըֆօր ներս մոտաւ :

— Պարոն , ըսաւ տիկին ար Սէն-Մէրան առանց դարձուածոյ կերպեր բանեցընելու և իւր ժամանակին կարձութեանը վրայ վախցողի մը պէս , ինձ դրած էիք որ այս աղջիկը ամուսնացընելու դիտաւորութիւն մը ունիք :

— Այս , տիկին , պատասխանեց Ակլըֆօր . զիտաւորութիւննիս հաստատուեցաւ , և գաշինք մը եղաւ :

— Փեսայացուին անունը Պ. Ֆրանզ ա'կրինէ է :

— Այս , տիկին :

— Այն ա'կրինէ զօքապետին որդինէ , որ մեր կողմնակիցն էր , և Յափշտակչին Էլզա կղզիէն դառնալէն քանի մը օր առջ սպաննուեցաւ :

— Ճիշդ ան է :

— Ժազոպէնի մը թուան հետ այս ամուսնութիւնը ընելու դժկամութիւն չցուցըներ :

— Բարեբաղդաբար մեր քաղաքական երկպառակաւթիւնները վերջացած են , մայր իմ , ըսաւ Ակլըֆօր . պարոն ա'կրինէ իւր հօրը մահուան ժամանակ զրկթէ մանուկ մ'էր ,

Հազիւ թէ ու . Կուտարը թիւն կը ճանչնայ , և անտարակոյս եթէ ոչ ուրախութեամբ , զոնէ անտարքերութեամբ պիտի տեսնէ զան :

— Այսէ լուչ կը տեսնէք այս ամսւսնութիւնը :

— Ամեն կերպով :

— Երիտասարդը ի՞նչովէս է :

— Ամենուն յարդանքը կը վայելէ :

— Յարմար է :

— Խիստպատւաւոր Ճանչցուած երիտասարդներէն մին է — :

Այս ամեն խօսակցութեան միջոցին Վալանթին անձայն կեցեր էր :

— Աւրեմ , ըստ տիկին տը Աէն-Մէրան քանի մը մանրերկրորդ մասձելէն ետե , պէտք է որ շուտով կատարենք , քանզի ապրելու ժամանակս կարճ է :

— Ի՞նչ կ'ըսէք , արկին , ի՞նչ կ'ըսես , հանիս , դոչեցին միատեղ Պ. Վիլըֆօր և Վալանթին :

— Ես զիտեմ ի՞նչ կ'ըսեմ , կրկնեց մարքեզուհին . պէտք է որ աշապարէք , որպէս զի քանի որ Վալանթին մայր չունի , զոնէ իւր հանիին օքչնութիւնը առնու : Քանզի ինձմէ զատ մէկը չունի իմ ողբարձր Աէնէ աղջկանս կողմանէ , զոր դուք այնչափ շուտով մասցաք , պարոն :

— Ա՛յ , տիկին , ըստ Վիլըֆօր , կը մոռնաք որ այս խեղճ դաւկին կորսնցուցած մօրը տեղ ուրիշ մայր մը տալ պէտք էր :

— Մօրու մը երբէք մօր աելզ չկրնար բռնել , պարոն . բայց խնդիրը ատոր վրայ չէ . խնդիրը Վալանթինի ամսւսնութեան վրայ է . մեռեալները հանգարտ թողունք — :

Այս ամեն խօսքերը այնպիսի ձայնով մը արտասաներ էր , որ դրեթէ զառանցութեան կը նմանէր :

— Ձեր փափաքը լիովին պիտի կատարեմ , տիկին , ըստ Վիլըֆօր , մանաւանդ որ իմ բաղձանքս ալ ձերինին համայնէ . Պ. Ֆրանդ տ'էրինէն Բարիզ հասնելուն պէս . . . :

— Սիրելի հանիս , ըստ Վալանթին , միթէ ուստշաճու-

թեանց պիտի չնայի՞նք, մեր սուզը պիտի չյարդե՞նք . . . այս պէս շարադուշա՞կ ժամանակի մէջ կ'ուզէք ամուսնութիւնը կատարել:

— Զաւակս, ընդմիջեց մաքքէզուհին աշխուժիւ, հեռացուր մաքէդ այդ դոեհիկ մտածութիւնները, որոնք տկարամաններու արգելք կ'ըլլան իբրենց տափադան առահօվելու: Աս իսկ մայրս մահուան անփողնոյ մէջ եղած ժամանակ ամուսնացայ, բայց այս պատճառաւ ալ դժբաղդ չեղայ:

— Դարձեալ մոռնելու խօսք կ'ընէք, տիկին, կրկնեց Ալիլֆօր:

— Այս, դարձեալ կ'ընեմ . . . բայց դուք չէք հասկընար, ես պիտի մոռնիմ կ'ըսեմ. և մոռնելոս առաջ կ'ուզեմ փեսաս տեսնել, կ'ուզեմ պատուիրել անոր որ իմ թոռս երջանիկ ընէ, կ'ուզեմ անոր աչքերէն իմանալ թէ ինձ հնաղանդելու է: Աերջաղէս կ'ուզեմ ճանչնալ զան, շարունակեց հանին, որպէս զի եթէ արժանաւոր մէկը չէ, զերեզմանիս մէջն քամ զինքը տեսնելու:

— Տիկին, ըսաւ Ալիլֆօր, հեռացուցէք ձեր մաքէն այդ յուզեալ զաղափարները, որոնք զբեթէ յիմարութեան կը տանին: Մեռեալները իրենց զերեզմանին մէջ պառ կելնուն պէս առանց երեք անկէ ենթէ կարենալու կը ննջեն:

— Ոչ, այս, այս, հանդարաեցուր սիրադ, սիրելի հանիս, ըսաւ Ալալանթին:

— Եւ ես կ'ըսեմ, պարսն, թէ ձեր կարծածին պէս չէ, այս իրիկուն սոսկալի քուն մը քնացայ, քանզի հոգիս մարմինէս բաժնուած կը տեսնէի, աչքերս, զորոնք բանալու կը ջանայի, ակամայ կը զոցուէին, զիտեմ որ այս բանս ձեղանկարելի պիտի երեի, մանաւանդ ձեզ, պարսն, հաւատացէք որ տիկին Ալիլֆօրի հաղուելու դահշէին մէկ դուռն եղած անկիւնէն սպիտակ ստուերի մը անշըուկ ներս մանելը և նոյն ձեր կանդնած տեղը դալը դաց աչօքս տեսայ — :

Ալալանթին վախնալու ձայն մը հանեց:

— ԶՅԵՂ տաղնապեցընողը ջերմին էր, տիկին, ըստ Ա. իւլիոֆօր :

— Դուք մի՞ հաւատաք եթէ կ'ուզէք, բայց ես ըստիս վրոյ ապահով եմ, սպիտակ ստուեր մը տեսայ, և անշուշտ զդայարանացս միայն մէ կուն վկայութեանը հաւատալու համար այդ բաժակին շարժիլը լսեցի, այս՝ այդ սեղանին վրայ եղալ բաժակին :

— Ո՛չ, սիրելի հանի, երազ մ'էր այդ :

— Ամենեին երազ չէր, վասն զի ձեռքս զանգակին երեխնցուցի, և զայն հնչեցուցած ժամանակս ստուերը անեւելով եղաւ : Սենեկապանը այն ատեն այս ճրագով ներս մատւ :

— Աւրեմ մարդ մը տեսաք :

— Աւրուականները միայն անոնց կ'երեին որոնք որ պէտք են տեսնել, անշուշտ իմ ամուսնոյս հողին էր, և եթէ ամուսնոյս հողին զիս կանչելու կու դայ, ինչու համար իմ հողիս աղջիկս պաշտպաննելու պիտի չդայ : Յաբարերութեան կապը կարծեմ աւելի ուղղակի է :

— Ո՛չ, տիկին, ըստ Ա. իւլիոֆօր ակամայ սիրտը շարժելով, վերջացուցէք այդ տիրագին խօսքերը, դուք մեզի հետ պիտի ապրիք, տակաւին երկար ժամանակ և երջանիկ պիտի ապրիք, և մնիք պիտի սիրենք ու յարդենք զնեղ և պիտի ջանանք մոռցընել . . . :

— Երբէք, բնաւ ամենեին, ըստ մաբքէզուհին : Պ. ա' Է. րինէն երբ պիտի վերադառնայ :

— Վայրիեանէ վայրիեան անոր կ'ըստասենք :

— Ըստ աղէկ . դալուն պէս՝ իմացուցէք ինձ : Ըստ ընենք, աճապարենք : Ասկէ զատ՝ կ'ուզեմ նօտար մ'ալ տեսնել, որպէս զի բռլոր մեր ինչքը Ա. ալանթինին ըլլալը ապհաչովեմ :

— Ո՛չ, մայր իմ, մընջեց Ա. ալանթին իւր շուրթերը հանիին կիղիչ Ճակտին յարելով, զիս մեռցընել կ'ուզես . Ջերմդ վրադէ տակաւին, քեզի պէտք եղածը նօտար մը չէ, այլ բժիշկ ու :

— Բժիշկ մը, ըստւ մարքեզուհին ուսերը թոթվելով, ևս հիւանդ չեմ, միայն ծարաւութիւն ունիմ:

— Ի՞նչ կ'ուղես խմելու, բարի հանիս:

— Գիտես որ միայն նարնջի օշարակ կը խմեմ միշտ + բաժակս սեղանին վրայ է, ինձի տուր, Վալանթին — :

Վալանթին բաժակը լեցուց և դրեթէ սոսկումով մը առաւ զայն ու իւր հանիին ներկայացուց. վասն զի մարքեզուհին կը պնդէր որ այս նոյն բաժակը ստուերը բռներ էր:

Մարքեզուհին 'ի մի ումպ պարսկեց զայն:

Ետքը զլուսիը բարձին դրաւ կրկնելով.

— Նօտարը, նօտարը կանչեցէք — :

Պ. տը Վ.իլովօր դուրս ելաւ, Վալանթին իւր հանիին անկողնոյն քովը նստաւ:

Ա'երեւէր թէ ողորմելի աղջիկն ալ խիստ պէտք ունէր այն բժշկին, որ իւր հանիին համար կանչելու առաջարկեր էր:

Բոցանման կարմրութիւն մը իւր այտերուն խնձորը կ'այրէր, հեալով շունչ կ'առնուր և երակը ջերմոտի պէս կը բարախէր:

Պատճառը այն էր որ թշուառ աղջիկը կը մտածէր թէ ի՞նչ յուսահատութեան մէջ պիտի իյնար Մաքսիմիլիէն երբ իմանաթ որ տիկին տը Սէն-Մէրան փոխանակ իւր բարեկամերէն մէկն ըլլալու, զինքը չձանչցած՝ իւր թշնամին եղեր էր:

Որչափ անգամ Վալանթին մոտածեր էր որ ամեն բան իւր հանիին պատմէ, և բնաւ երկմտելու չէր եթէ Մաքսիմիլիէն Մորէլին անունը Ելուէր տը Մորսէրֆ կամ Ռաուլ տը Շամօ-Ռէնօ ըլլար. սակայն Մորէլ հասարակ ժողովրդենէ յառաջ եկած էր, և ազնուատոչմ չեղողներուն տը Սէն-Մէրանի մարքեզուհւոյն ունեցած արհամարհանքը Վալանթին շատ աղէկ կը ճանչնար:

Այս զաղտնիքը անօգուտ տեղը յայտնելը աղէկ զիտնալով, Վալանթին ամենեին չհամարձակեցաւ երեան հանել զայն. քանզի իւր հայրն ու մօրուն այս զաղտնիքը իմանալ «...Ես՝ ամեն չան պիտի կորսուէր:

Գրեթէ երկու ժամ այսպէս անցաւ . տիկին տը Սէն-Մէրան տաղնապեալ և յուղեալ քունով կը քնանար , երբ հաւարին դալը իմացուցին :

Թէև այս լուրը խիստ ցած ձայնով իմացուցեր էին , բայց տիկին տը Սէն-Մէրան զայն լսե լով իւր զլուխը բարձրացուց :

— Կօտա՞րը բաիք . թող դայ , ըսաւ , թող դայ — :

Կօտարը դրան առջեր ըլլալով ներս մտաւ :

— Գնա , Վալանթին , ըսաւ տիկին տը Սէն-Մէրան , ու զիս սղարոնին չետ առ անձին թող :

— Բայց , մայր իմ . . . :

— Գնա , գնա — :

Նորատի առջիկը իւր հանիին ճակատը համբուրեց և աչքերը թաշկինակովը զոցելով դուրս ելաւ :

Դրան առջեւ սենեկապանը տեսաւ , որ բժշկին դալը և սրահին մէջ սովասելը իմացուց :

Վալանթին արտօրնօք վար իջաւ :

Բժիշկը ընտանիքին բարեկամը և ժամանակին ամենէն ճարտար բժիշկներն մէ կն էր . Վալանթինը շատ կը սիրէր , վասն զիս անոր աշխարհք դալը տեսեր էր :

Դրեթէ օրիորդ տը Վիլֆօրի հասակաւ աղջիկ մը ունէր , որ կուրծքի հիւանդութիւն ունեցող մայրէ մը ծնած էր . մինչեւ անոր աշխարհք դալը իւր կնոջ կեանքը վտանգի մէջ էր :

— Յարի եկաք , սիրելի Պ. տ' Ավրինեի , ըսաւ Վալանթին , մեծ անհամբերութեամբ ձեզ կ'ըսպասէինք . բայց նախըսէր , ինչպէս են Մատըլէն և Անթուանէթ — :

Մատըլէն Պ. տ' Ավրինեի աղջիկն էր և Անթուանէթ անոր եզրօր աղջիկը :

Պ. տ' Ավրինեի տրտմութեամբ ժպտեցաւ :

— Անթուանէթ շատ աղէկ է , ըսաւ , և Մատըլէն բաւական լաւ վիճակի մէջ կը դանուի : Զիս ինչո՞ւ կանչեցիք , սիրելի աղջիկս , ոչ ձեր հայրը հիւանդ է և ոչ տիկին տը Ավրիլֆօր : Մեր ջղային հիւանդութենէ ազատ չըլլալիս

յայտնի է, ուստի չեմ կարծեր որ այնպիսի բանի մը համար կանչեք զիս, որ մեր երեակալայութենէն դուրս ըլլայ — :

Ա. ալանթին կարմրեցաւ :

Պ. ա'Ավրինեի շատ անգամ ճիշդ զուշակութիւն կ'ընէր. ըստ որում մէկուն բարոյականէն բնականը զննող բժիշկներէն մէկն էր :

— Աչ, ըստ Ա.ալանթին, հանիիս համար կանչեցինք ըղձեզ, մեղ պատահած դժբաղդութիւնը իմացաք, այնպէս չէ : — Բան մը չեմ դիտեր, ըստ Պ. ա'Ավրինեի :

— Ափսոս, ըստ Ա.ալանթին իւր հառաջանքը զսպելով, հաւս մեռաւ :

— Պ. աը Աէն-Մէրանը :

— Այո :

— Յանկա՞րծ :

— Յանկարծական կաթուածէ մը :

— Կաթուածէ մը, կրկնեց բժիշկը :

— Այո, ողորմելի հանիս ալ, որ իւր ամաւսինէն երբէք բաժնուած չէր, այնպէս կը կարծէ թէ Պ. աը Աէն-Մէրան զինքը միւս աշխարհէն կը կանչէ, և թէ ինքն ալ անոր քովզ պիտի երթայ : Կ'աղաջեմ, Պ. Ավրինեի, աղեկ հոգ տարէք հանիս :

— Ա՞ր է հիմա տիկինը :

— Նօտարին հետ իւր սենեակը կը դտնուի :

— Պ. նուարթին ինչպէս է :

— Միշտ նոյն վիճակին մէջն է. իելքը կատարեալ կենդանի է, բայց ինքը նոյն անշարժութեան և նոյն համրութեան մէջ կը դտնուի :

— Եւ ձեզի համար նոյն սէրը ունի, այնպէս չէ, սիրելի զաւակս :

— Այո, ըստ Ա.ալանթին հառաջելով, զիս շատ կը սիրէ :

— Եւ ովհ չսիրեր զձեղ — :

Ա.ալանթին տիսրութեամբ ժպտեցաւ :

— Եւ ի՞նչ է ձեր հանիին հիւանդութիւնը :

— Զղային զարմանալի յուզմունք մը , և տարօրինակ ու անհանդիստ քուն մը ունի . այս առտու կը պնդէր թէ իւր քունին մէջ իւր հոգին տեսեր էր , որ քնացած մարմնոյն վրայօք օդին մէջ կեցեր էր . զառանցութիւն մ'է այս . կը հաստատէ նաև թէ ուրուականի մը իւր սենեակը մտնելը տեսեր , և անոր իւր բաժակին դպչելը լսեր է :

— Զարմանալի բան , ըստ բժիշկը , չէի դիտեր որ տիկին տը ԱԷն-Մէրան կը զառանցէ :

— Ես իսկ առաջին անգամն է որ կը տեսնեմ , ըստ Վալանթին . այս պատճառաւ շատ վախցուց զիս , կարծեցի թէ խենթեցաւ . հայրս կը ճանշնաք , պարոն , և դիտէք թէ որ շափ ծանր բնութիւն մը ունի , հօրս անգամ մնձ ազդեցութիւն ըրաւ :

— Հիմա կը տեսնենք , ըստ Պ. ա'Ավրինեի . ըստանիդ տարօրինակ կ'երեկի ինձ — :

Կօտարը մարքէզուհւոյն սենեկէն մեկնելով , ծառաները եկան Վալանթինի իմացուցին որ իւր հանին առանձին կը դտնուի :

— Վ'եր ելիք , ըստ բժշկին :

— Դուք պիտի չդաք :

— Ես չեմ համարձակիր վեր ելնելու . ըստ որում հանիս հրաման ցունէր որ ես զձեղ կանչեմ . ասկէ զատ՝ ինչպէս որ կ'ըսէք՝ ես ալ խռոված և անհանդիստ եմ . քիչ մը պարտէզը պիտի իջնեմ պտըտելու որ շունչ առնում — :

Բժիշկը Վալանթինի ձեռքը թոթվեց և մարքէզուհւոյն սենեակը ելաւ , ինչ ատեն նորատի աղջիկը պարտէզը իջաւ :

Հարկ չէ ըսել թէ Վալանթինի սկրելի շրջադայութիւնը պարտէզին ո՛ր կողմն էր : Քանզի նորատի աղջիկը տան բոլորտիքը շրջապատող ծաղկոցին մէջ երկու կամ երեք անգամ շրջադայելէն , և իւր կուրծքը կամ մաղերուն մէջ տեղաւորելու համար վարդ մը փրցընելէն ետեւ՝ դէսլ 'ի նըս-

սարանը տանող ստուերաւոր ծառուղին կ'երթար, և անկէ վանդակներուն իը մօտենար:

Այս անդամ՝ Վալանթին ըստ սովորութեան իւր ծաղկանց մէջ երկու կամ երեք գարձ ըրաւ, բայց առանց անոնցմէ փըրցընելու:

Իւր սրտին սուղը չէր ներեր որ այս անդամ՝ այն պարզ զարդը իւր վրայ կրէ:

Վալանթին վանդակներուն մօտեցած ժամանակ իրեն այն ողէս կ'երեւէր թէ իւր անունը կը լսէ:


Այն ատեն զարմանալով կանդ առաւ:

Բայց ձայնը աւելի որոշ իւր ականջին հասնելով, Մաքսիմիլինինը ըլլալը ճանցաւ:



ՊԱՌԵԼ ԺԴ.

ԽՈԽՑՈՒՄԸ



Ա կ րօք Մարելի վոայ առջի իրիկունէն 'ի վեր կենդանութիւն չէր մնացեր:

Մայրերու և սիրահարներու յատուկ եղած բնազդումով դուշակեր էր որ տիկին տը Սէն-Մէրանի դալուստէն և մարքեղին մահուանէն

ետև՝ իւր սիրոյն նկատով դէպք մը տեղի պիտի ունենար Վիլֆօրի տան մէջ:

Դնչպէս որ պիտի տեսնենք, իւր նախազգուշութիւնները ստոյդ էին, և զինքը շադանակենիներուն տակի վանդակաց առջե դողով ու սարսափով տանողը պարզ անհանգստութիւն մը չէր:

Վալանթին չէր զիտեր որ Մորէլ իրեն կ'ըսպասէ, անոր գալստեան սովորական ժամը հասած չէր, ուստի բարեբաղդութիւն մը կամ թէ ըսենք երջանիկ համազգացութիւնն էր որ նորատի աշխիկը պարտէզը կ'առաջնորդէր:

Մորէլ օրիորդը տեսնելուն պէս՝ կանչեց զան, և Վալանթին անոր մօտեցաւ:

— Այս ժամուն դուն ես հոդ, սիրելիս, ըսաւ աղջիկը:

— Այո՛, խեղճ սիրուհիս, պատասխանեց Մորէլ. զէ լուրեր առնելու և բերելու եկայ:

— Ուրեմն դժբաղդութեանց տուն մ'է այս, ըսաւ Վալանթին. ըսէ, Մաքսիմիլիէն: Բայց արդէն ընդունած վիշտերս բաւական չեն արդեօք:

— Սիրելի Վալանթին, ըսաւ Մորէլ իւր սրտի յուզմունքը հանդարտեցընելու ջանալով, մտիկ ըրէ ինձի, կ'աղաչեմ. վասն զի քեզի ըսելուքներս կարեսոր բաներ են. երբ զքեզ ամուսնացընելու միտք ունին:

— Մտիկ ըրէ, ըսաւ Վալանթին, քեզմէ բան մը պահէլ չեմ ուզեր, Մաքսիմիլիէն: Այս առտու ամուսնութեանս խօսքը ըրին, և հանիս, որուն վրայ յոյսս դրած էի իմ միակ պաշտպանս կարծելով, ոչ միայն այն ամուսնութեան հաւանութիւն կու տայ, այլ և այնչափ կը փութացընէ զայն, որ միայն տ'էրինէին դարձը կը յասկաղէ, և անոր հասնելուն հետեւեալ օրը ամուսնութեան դաշինքը պիտի ստորադրուի — :

Սրտաճմլիկ հառաջանք մը երիտասարդին սիրաը ուռեցուց, և տիրութեամբ ու երկար ժամանակ նորատի աղջկան երեսը նայեցաւ:

— Ափսոն, կրկնեց յած ձայնով, սոսկալի բան մ'է երբ մարդ իւր սիրած կնոջ բերնէն այս խօսքը կը լսէ թէ՛ « Քու տանջանացդ ժամը որոշուած է և քանի մը ժամեն տեղի պիտի ունենայ . բայց ինչ ընենք, պէտք է որ համբերենք, և իմ կողմանէս ընդդիմութիւն մը պիտի չընեմ » . Քանի որ գաշնազիրը ստորադրելու համար միայն Պ. տ' Երինէին կ'ըսպասեն, քանի որ անոր համնելուն հետեւալ օրը անորը պիտի ըլլաս, ուրեմն վաղը ձեռքդ Պ. տ' Երինէին պիտի տաս, ըստ որում այս առառ Բարիզ հասաւ ան — :

Վալանթին հառաջանք մը հանեց :

— Ժամ մը առաջ Մօնթէ-Քրիսթոյ կոմսին տունն էի, ըսաւ Մորէլ, ու ձեր խօսքը կ'ընէինք . կոմսը ձեր ընտանեաց վշտակից կ'ըլլար, ու ես միայն քեզի ցաւակից կ'ըլլայի, երբ յանկարծ բակին մէջ կառքի մը ձայնը լսեցի . Մինչեւ այն վայրկեանը նախազզացութեանց չէի հաւատար, վալանթին, բայց հիմա պէտք է որ հաւատամ . այն կառքին ձայնը ինձ սարսուո մը պատճառեց . շատ չանցաւ՝ սանդուխին վրայ ոտից ձայներ լսեցի : Հրամանատարին բարձրահընչիւն ոտնաձայնը այնչափ սարսափ պատճառած չէր Տոն Ճուղանէին, որչափ անոր քայլերուն ձայնը ինձ պատճառեց * Վերջապէս դուռը բացուեցաւ . առաջ Ալպէր աը Մորսէրֆ ներս մոտնելուն, կարծեցի թէ սխալեր եմ, բայց անոր ետեւէն ուրիշ երիտասարդ մը յառաջանալով, կոմսը անոր ըսաւ . « Բարի եկաք, Պ. սեպուհ Ֆրանզ ա'կրինէ » : Ինքնինքս բռնելու համար բռլոր ոյժս ամփոփեցի . զոյնս նետեց և սկսայ դողալ, բայց ժպիտ դէմք մը կեղծելով ուզեցի հոն կենալ . հազիւ հինդ վայրկեան կարու եղայ կենալու, կըրնամ ըսել որ այն հինդ վայրկենին մէջ եղած խօսքերէն մէկն ալ չլսեցի, ինքզինքս կորմնցուցեր էի :

— Խեղձ Մաքսիմիլիէն, մըմնջեց Վալանթին :

— Վալանթին, պատասխան տուր ինձի, բայց դիտցիր որ այդ պատասխանդ կամ մահ և կամ կեանք պիտի պատճառէ ինձ . ինչ ընելու միոք ունիս — :

Վալանթին դլուխը խոնարհեցուց , այս խօսքին ներքեւ ընկաեր էր :

— Մտիկ ըրէ , ըստ Մորէլ , առաջին անդամը չէ որ մեր վիճակին վրայ կը մտածենք . մեր այսօրուան կացութիւնը ծանր է , դժնդակ և վսեմ : Կարծեմ թէ ամուշ վշտակութեամբ վհատելու և անփոյթ կենալու ժամանակը չէ . այս բանս անոնց կ'իյնայ ընել , որոնք որ անձայն նեղութեան համբերել և իրենց արտասուքը դիւրութեամբ ըմպել կը զիջանին : Այսպիսի մարդիկ կրնան դանուիլ , և անշուշտ Աստուած ալ անոնց երկրի վրայ ունեցած համբերութեան համար երկինքը վարձք մը պիտի տայ , բայց մրցելու կամք զզ այսողը թանկադին ժամանակ մը չկորսնցըներ , և բաղդէն ընդունած հարուածը անոր կը վերագրածընէ իսկոյն , Հսէ , Վալանթին , չար բաղդին դէմ մրցելու կամք ունիս . քանզի այս բանս հարցընելու համար եկած եմ — :

Վալանթին սարսուաց , և սոսկումով ու խոռվեալ աչօք Մորէլի նայեցաւ :

Իւր հօրը , հանիին , վերջապէս իւր բոլոր ընտանիքին ընդունանալը երբեք մաքէն անցած չէր :

— Ի՞նչ կ'ըսես , Մաքսիմիլիէն , հարցուց Վալանթին , և մրցիլ ըսելով ինչ կ'իմանաս . նուիրական պարտքս ժխտեմ , հօրս հրամանին և մահամերձ հանիիս կամքին դէմ դնեմ . անկարելի է — :

Մորէլ շարժում մը ըրաւ :

— Ազնիւ սիրտ մը ունիս դուն և անշուշտ ըսածս կը հասկընաս , սիրելիդ իմ Մաքսիմիլիէն , և այնչափ աղէկ կը հասկընաս որ չես ուղեր խօսիլ : Ես դէմ կենամ , Աստուած չընէ . ոչ , ոչ . բոլոր ոյժս պահած եմ ինքզինքիս դէմ մըքքելու , և ինչպէս ըսիր՝ արտասուքս խմելու համար . սակայն երբեք չեմ կրնար հայրս վշտացընել ու հանիիս վերջին ժամբը խոռվել :

— Իրաւունք ունիս , ըստ պաղութեամբ Մորէլ :

— Այդ ի՞նչ կերպով խօսեցար ինձի այդ խօսքը, ո՞վ Աստուած իմ, զուեց Վալանթին վիրաւորեալ սրաով:

— Քու վրադ զմայլող մէկու մը պէս խօսեցայ, օրիորդ, կրկնեց Մաքսիմիլիէն:

— Օրիորդ ըսիր ինձի, զուեց Վալանթին, օրիորդ ըսիր, ոչ, ինչ եսական անձ մ'ես եղեր. զիս յուսահատութեան մէջ կը տեսնես ու ըսածս շհասկընալ կը կեղծես:

— Կը սիսալիս, շատ աղէկ կը հասկընամ. ըսել կ'ուզես թէ ո՛. ուր Վիլֆօրի չես կրնար ընդդիմանալ, մարքէզու հոյն անհնազանդութիւն ընել չես ուզեր, ու վաղը ուրիշ չետ ամուսնանալու դաշինքը պիտի ստորագրես:

— Բայց ուրիշ ի՞նչ կերպ կրնամ ընել:

— Պէտք չես ինձի հարցընել այդ բանը, օրիորդ, ըստ որում կը տեսնես որ այս խնդրոյն մէջ աղէկ խորհուրդ չեմ տար քեզ, և իմ եսութիւնս պիտի կուրացընէ զիս, պատաս խանկ Մորէլ, որուն խորունի ձայնը և զոց բռուերը իւր զայրոյթին աճումը կը յայտնէին:

— Ի՞նչ առաջարկութիւն պիտի ընէիր ինձ, Մորէլ, եթէ զայն ընդունելու պատրաստ դժոնէիր զիս, պատասխան տուր. բաւական չէ ըսել թէ ըրածս պէշէ, այլ պէտք ես ի՞նչ ընելիքս ցուցընել ինձ:

— Առանց կատակի՞ կը հարցընես ինձ այդ բանը, Վալանթին, ըսէ, և ես համարձակ ըսեմ քեզի տալու խրատս:

— Անշուշտ, սիրելի իմ Մաքսիմիլիէն, քանզի եթէ բարի է խրատդ, կ'ընդունիմ:

— Վալանթին, ըսաւ Մորէլ, արդէն անջատեալ տախտակներուն մէկը տեղէն հանելով, բարկութեանս ներելուդ ապացոյց ձեռքդ ինձի տուր. պատճառը այն է որ խելքս դլուխս չէ, և ճամէ մը 'ի վեր մտքիս մէջէն խիստ խելացնոր խորհուրդներ կ'անցնին. Ո՛չ, բայց եթէ իմ խրատս մերժես . . . :

— Ըսէ, ո՞րն է տալու խրատդ:

— Ահա ըսկմ, Վալանթին — :

Դորատի աղջիկը ձեռքը դէպ 'ի երկինք վերցուց և հառաշանք մը հանեց :

— Ես ազատ եմ, կրկնեց Մաքսիմիլիեն, ու երկուքնուս բաւելու չափ ալ հարուստ . կ'երգնում որ շուրթերս Ճակտիդ չմօտեցած իմ կինս պիտի ըլլաս :

— Կը սոսկացընես զիս այդ խօսքով, ըստ Վալանթին :

— Հետո եկու, շարունակեց Մորել. զքեզ քրոջն տունը տանիմ, որ քու քոյրդ ըլլալու արժանի անձ մ'է, միատեղ Ալճէրիա, Անգղիա կամ Ամերիկա կը մեկնինք, եթէ չես ուղեր որ Գաղղիոյ գաւառներէն մէկուն մէջ սպասենք մինչեւ որ մեր բարեկամները ձեր ընտանեաց ընդդիմութեան յաղթեն, ու այն ատեն Քարիզ վերադառնանք — :

Վալանթին գլուխը շարժեց :

— Մաքէս կ'անցնէր որ այդ առաջարկութիւնը պիտի ընես ինձ, Մաքսիմիլիեն . ես ալ քեզմէ աւելի անմիտ պիտի ըլլամ եթէ մէկ խօսքով զքեզ չկեցընեմ. անկարելի է, Մորել, անկարելի է :

— Ուրեմն քու բաղդիդ պիտի հնազանդիս, և ամենեին պիտի չաշխատիս անոր հարսւածին դէմ դնել, ըստ Մորել թախծութեամբ մը :

— Այո՛, եթէ մեռնել իսկ պէտք ըլլայ :

— Ուրեմն, Վալանթին, վերստին կը կրկնեմ՝ իրաւունք ունիս : Իրօք ես խենթեցեր եմ, և գուն կ'ապացուցանես ինձ թէ կիրքը ամենէն ուղիղ միոքերը անդամ կը կուրացընէ . ուստի զոհ եմ տեսնելով որ առանց կրքի դատողութիւն կ'ընես : Թող այնպէս ըլլայ, ուրեմն որոշուած է, վաղը անշուշտ Պ. Ֆրանզ տ'էրինէին կինը պիտի ըլլաս, չէ թէ կատակերգական խաղերու մէջ տեսնուած թատրոնական այն արարողութեամբ, որ դաշանց սառըադրութիւնը կ'անուանեն, այլ քու անձնական կամոքդ :

— Դարձեալ կ'ըսեմ, կը յուսահատեցընես զիս, Մաքսի-

միլեն, ըսաւ Վալանթին, դաշոյնը վերստին վէրքին մէջ կը խօթես . ըսէ, ի՞նչ պիտի ընէիր եթէ քոյրդ ինձի տռւածիդ պէտ լուսաւ խրատ մը մտիկ ընէր :

— Օրիորդ, կրկնեց Մորէլ դառն ժպիտով մը, ես ինքնասէր եմ ըսիր, իմ ինքնասսիրութեամբս ամեններն մտքէս չեմ անցըներ թէ ուրիշները ի՞նչ պիտի ընէին եթէ իմ տեղս ըւլային, այլ կը մտածեմ թէ տարի մ'է որ ես զքեղ կը ճանչնամ, և այն օրէն իմ բոլոր երջանկութիւնս քու սիրոյդ վրայ դրի . օր մը ինձ ըսիր թէ կը սիրես զիս, և այն օրէն իմ ապագայ երջանկութիւնս քեզի չետ ամուսնանալէս կախեալէր : Բայց հիմա ամեն յոյսերս կը կորսնցընեմ և ինքնիրենս կ'ըսեմ թէ բաղդիս յաջողութիւնները ձախորդութեան փոխուեցան, ինքզինքս երկինքը կը կարծէի, և հիմա զետնի վրայ կը գտնուիմ : Ամեն օրուան պատահած բաներ են ասոնք . խաղամուլ մը ոչ միայն ունեցածը այլ և չունեցածն ալ կը կորսնցընէ — :

Մորէլ այս խօսքերը սրտի կատարեալ հանդարտութեամբ խօսեր էր . Վալանթին իւր հետազօտիչ նայուածքովը զարմանքով անոր երեսը նայեցաւ, և կը ջանար միանդ ամայն իւր սրտին խորը վրդովող շփոթութիւնը անորմէ պաշելու :

— Բայց վերջապէս ի՞նչ պիտի ընես, հարցուց Վալանթին :

— Մնաս բարեաւ ըսելու պատիւը ունիմ, օրիորդ, վկայ կոչելով զԱստուած, որ իմ խօսքերս կը լսէ և սրտիս զաղունիքը կը ճանչնայ, և քեզի այնպիսի հանդիսու, երջանիկ և ուրախ կեանք մը կը մաղթեմ, որ ալ միաքդ չըերես զիս :

— Ո՛չ, մըմնջեց Վալանթին :

— Մնաս բարեաւ, Վալանթին, մնաս բարեաւ, ըսաւ Մորէլ խոնարհութիւն մը ընելով :

— Ո՛ւր կ'երթաս, քոչեց Վալանթին ձեռքը վանդակին մէջէն երկնցընելով և Մաքսիմիլիէնի զգեստը բռնելով, քանզի աղէկ կը հասկընար որ իւր սիրահարին սրտի հանդարտութիւնը ստոյդ չէր :

— Ընտանեացդ մէջ նոր շփոթեւթիւն մը չպատճառ ելու և իմ կացութեանս մէջ դանուող անն պարիկշտ և անձնուէր մտրդոց օրինակ մը ըլլալու համար զբաղելու կ'երթամ:

— Ինձմէ բաժնուելէդ առաջ ըսէ ինձ թէ ինչ պիտի ընես, Արքսիմիլիէն — :

Երիտասարդը տիրութեամբ ժպտեցաւ:

— Ըսէ, ըսէ, ըսաւ Աւալանթին, կ'աղաշեմ:

— Դիտաւորութիւնդ փոխեցիր, Աւալանթին:

— Ազէկ դիտես որ չեմ կրնար փռխել, ողորմիլի մարդ, գոշեց նորատի աղջիկը:

— Աւրեմն մնաս բարեաւ, Աւալանթին — :

Աւալանթին այնպիսի ուժով մը վանդակապատը շարժեց, որ իրմէ չէր յուսացուեր, և որովհետեւ Մորէլ կը հեռանար, նորատի աղջիկը երկու ձեռքերը վանդակին մէջէն դուրս հանեց, և զանոնք միացընելով,

— Ըսէ, Մաքսիմիլիէն, ինչ պիտի ընես, կ'ուզեմ դիտնալ:

— Ա՛չ, անհոգ եղից, ըսաւ Մաքսիմիլիէն դուռէն երեք քայլ հեռու կենալով, բաղդին ինձ համար պահած խսութեանց ուրիշ մը պատասխանառու ընել չէ միտքս: Աւրիշ մը զուցէ սպառնայ քեզ ըսելով թէ պիտի երթայ Պ. Ֆրանզը զտնէ, զան զրդու և անոր հետ մնամարտի. ասոնք անմորի դործեր են: Պ. Ֆրանզ մը զործին մէջ ինչ յանցանք ունի. այս առառու առաջին անդամն էր որ զիս տեսաւ, զուցէ զիս տեսնելն ալ մոռցած է. ձեր երկու ընտանեաց մէջ այս ամուսնութեան որոշումը եղած ժամանակ չէր դիտեր իսկ որ աշխարհիս մէջ ինծի պէս մարդ մը կայ: Հետեւարար ֆրանզին հետ ամենեին զործ չունիմ, և կ'երդնում որ երբեք պիտի չատեմ զան:

— Բայց զով պիտի տաես, զի՞ս:

— Զքեզ ատեմ, Աւալանթին . ո՛չ, Աստուած չընէ: Աինը նուիրական է, և սիրուած կին մը սուրբ է:

— Աւրեմն ինքզինքդ պիտի տաես, զժբաղդ մարդ:

— Յանցաւորը ես եմ, այնպէս չե՞մ, ըստ Մորէլ։

— Մաքսիմիլիեն, ըստ Վալանթին, Մաքսիմիլիեն, կ'ուզեմ որ հոս դաս —։

Մաքսիմիլիեն իւր քաղցր ժպիտովը վերւտին մերձեցաւ, և եթէ դեղնութիւնը չուլսար, իւր սովորական վիճակին մէջ պիտի կարծէին զինքը։

Մտիկ բրէ ինծի, սիրելիս, իմ պաշտելի Վալանթինս, ըստ երիտոսարդը իւր քաղցր և ծանր ձայնովը, աշխարհի, ծնողաց և Վատուծոյ առջեւ ամշնալու համար խորհուրդ մը շունեցող մաղի աբս անձեռը իրարու սրտին խորը կը թափանցեն։ Ես վիպասան չեմ, և ոչ մելամաղձոտ գիւցազն մը, ոչ Մանֆրէտի գերը կը ներկայացընեմ և ոչ Անթօնիի, սակայն ես իմ կեանքս քեզ նուիրեցի, ու դուն հիմա կը մերժես զիս, իրաւունք ունիս, արդէն ըսի, դարձեալ կը կրկնեմ։ զքեզ կորսնցընելով իմ կեանքս ալ պիտի կորսնցընեմ։ Եըք ինձմէ հեռանաս, Նալանթին, ես մինակ պիտի մեամբ աշխարհիս վրայ։ քոյրս իւր ամուսնոյն քովը երջանիկ է, անոր ամուսինը իմ լոկ քեռայքս է, այսինքն այնպիսի անձ մը, որու հետ միայն ընկերային դաշամբ միացած եմ։ ուստի իմ կեանքս երկրի վրայ մէկու օգուտ չունի։ Իմ ընելիքս այս է։ մինչեւ ամուսնանալուդ վերջին մանրերկրորդը պիտի սպասեմ, քանզի բազգին դիպուածական յաջողութեան մէկ ստուերն անդամ չեմ ու զեր կորսնցընել, վասն զի վերջապէս մինչեւ ոյն վայրկեանը Պ. Գրանզ կրնայ մեռնիլ, իրարու մօտեցած ժամանակնիդ՝ կրնայ կայծակէ զարնուիլ։ մահուան դատապարտեալի մը ամեն բան հաւանական կ'երեկի, և իւր կենաց աղաթութեան վրայ խորհերով՝ մինչև հրաշք մը կտրելի կը համարի։ Աւստի ինչպէս ըսի՝ մինչև վերջին վայրկեանը պիտի սպասեմ, և երբ իմ դժբաղդութիւնս ստուզուի, և անդամանելի ու անուշի մը անկիւնը, փասի մը եաին

կամ՝ զետի մը եզրը ատրձանակը դլիսիս պիտի պարպեմ, և այս ըստ Գաղղիոյ ամենէն պարկեցա մարդու մը զաւակն ըլլալուս պէս Ճշմարիտ է — :

Վալանթինի բոլոր մարմինը սկսաւ գողալ :

Երկու ձեռօքը բռնած վանդակապատը թողուց, բազուկները թուլութեամբ վար կախուեցան, և իւր այտերուն վրայէն արտասուաց երկու կաթիլներ գլորեցան :

Երիտասարդը տիսուր և անողոք անոր առջելը կեցաւ :

— Ո՛չ, զթա ինծի, մեղքըցիր, ըսաւ Վալանթին, պիտի ապրիս, այնպէս չէ :

— Ոչ, պատուոյս վրայ կ'երդնում, ըսաւ Մաքսիմիլիէն. սակայն քու ինչ հողդ, դուն քու պարտքդ կատարած պիտի ըլլաս, և քու ինդչդ պիտի մնայ քեզի — :

Վալանթին իւր թախծալից սիրտը սեղմելով ծնկան վրայ եկաւ :

— Մաքսիմիլիէն, ըսաւ, Մաքսիմիլիէն, բարեկամն, երկրի վրայ եղբայրս, ու երկնից մէջ իմ Ճշմարիտ ամուսինս, կ'աղաւշեմ, ինծի պէս ըրէ, վիշտերով ապրէ. դուցէ օր մը վերստին միանանք :

— Մնաս բարեաւ, Վալանթին, կրկնեց Մորէլ :

— Ով Աստուած իմ, զոչեց Վալանթին ձեռքերը դէպ 'ի երկինք վերցընելով վսեմ կերպով մը, կը տեսնես որ հնազանդ աղջիկ մը ըլլալու համար ամեն կրցածս ըրի. աղաւցի, թախանձեցի, ոչ աղաւանացս միտ գրաւ, ոչ թախանձանացս և ոչ արտասուացս։ Ուրեմն, շարունակեց իւր արտասուքը սրբելով, նախամեծար կ'ընտրեմ ամշնալով մեռնիլ քան թէ ինդչի տադնապով մը։ Պիտի ապրիս, Մաքսիմիլիէն, և ես քեզմէ ուրիշ մէկու հետ պիտի չամուսնանամ, ո՞ր ժամուն, ո՞ր վայրկենին կ'ուզես, հիմա կ'ուզեն. խօսէ, հրամայէ և ես պատրաստ եմ հնաղանդիլ քեզ — :

Մորէլ, որ մեկնելու համար վերստին քանի մը քայլ առեր էր, այս խօսքին վրայ ետ դարձաւ, և ուրախութենէն

զունատեալ, սիրուը սիոփիած՝ ձեռքերը վանդակներուն մէջ ջէնալալանթինի երկնցուց:

— Վալանթին, ըսաւ, սիրուչիս, պէտք չես այդ կերպի խօսիլ ինձի, եթէ ոչ աւելի աղէկ է որ մռոնիմ, Խնձու բըռնութեամբ պիտի առնում զքեզ, երբ զքեզ սիրածիս պէս դուն ալ զիս կը սիրես. այս կերպով կ'ըստիպես զիս որ մարդասիրութեան համար ասլրիմ, ուստի ես ալ մռնիլը նախամծար կը համարիմ:

— Իբօք, մրմթեց Վալանթին, աշխարհիս վրայ ովկ կը սիրէ զիս, ան: Իմ վշտացս մէջ ովկ մսիթարեց զիս. ան: Ցոյսս որու վրայ է, որու վրայ կը յարի իմ այլայլեալ նայուածքս. որու վրայ կը հանդչի իմ թախծալից սիրսս. անոր վրայ, միշտ անոր վրայ: Իրաւոնք ունիս, Մաքսիմիլիէն, հօրս տունը և ամեն բան պիտի թողում ու քու հետդ պիտի զամ: Ա՛հ, որչափ ապերախտ եմ եղեր, ամեն բան պիտի թողում, մինչ իմ սիրելի հաւս, որ միաքես եղեր էր:

— Ոչ, ըսաւ Մաքսիմիլիէն, ո՛. Նուարթիէի համար ըսիրթէ իմ վրաս համակրութիւն ցուցուց. փախչելէդ առաջ ամեն բան անոր պատմէ, և անոր հաւանութիւնը Աստուծոյ առջեւ կ'արդարացընէ զքեզ. ասկէ զատ՝ երբ ամուսնանք, մեր տունը կու զայ, այն ատեն մէկ զաւակի տեղ երկու զաւակ կ'ունենայ: Իրարու հետ ինչ կերպով խօսակցելնիդ ինձ ըսած ես, այն նշանացի սրտառուչ լեզուն ես ալ շուտով կը սորվիմ: Ա՛հ, կ'երդնում, Վալանթին, որ մեր առջեւ երեցած յուսահատութեան տեղ կը խոստանամ զքեզ երջանիկ ընել:

— Տե՛ս, Մաքսիմիլիէն, տե՛ս, ինչ աղդեցութիւն ունիս վրաս, ըսածներուդ գրեթէ կը հաւատամ. սակայն հայրս պիտի անիծէ զիս. անողոքելի սիրտ մը ունի և երբէք պիտի չներէ: Ուստի մտիկ ըրէ, Մաքսիմիլիէն, եթէ հնարքով, աղաչանքով կամ դիպուածով և կամ ինչ զիտնամ վերջապէս ո՞ր և է կերպով ամուսնութիւնը յապաղել կարենամ, կ'ըսպասէս, այնպէս չէ:

— Այս՝ կ'երդնում, եթէ դուն ալ երդնուս որ այն սոս կալի ամուսնութիւնը բնաւ պիտի չկատարուի, և եթէ զքեզ դառաւորին, քահանային առջևն ալ քաշեն, ոչ պիտի ըսես:

— Մօրս վրայ կ'երդնում, Մաքսիմիլիէն, որ աշխարհիս վրայ ինձի ամսնեն նուիրական է:

— Սպասենք ուրեմն, ըսաւ Մորէլ:

— Այս, սպասենք, կրկնեց Ալալանթին, որ այս խօսքին վրայ շունչ կ'առնուը, մեղի պէս թշւառները աղատելու այն չափ միջնոներ կան:

— Ես քեզի կը վստահիմ, Ալալանթին, ըսաւ Մորէլ, ինչ որ ընես ինձ ընդունելի է. բայց եթէ քու աղաջանացդ ականչ չգնեն, եթէ հայրդ, տիկին աը Սէն-Մէրան պահանջեն որ դաշնապիրը սառըապրելու հտմար վազը ո՛. Գրանդ մ'երինեն կանչուի

— Խօսք տաւած եմ քեզ, Մորէլ:

— Ուրեմն փոխանակ ստարազրելու . . . :

— Կու գամ զքեզ գտնելու և միատեղ կը փախչենք. բայց մինչև այն ժամուն համսիլը զԱստուած ՀիսորՅենք, Մորէլ, և դիրար շտեսնենք. զրեթէ հրաշք մը և Աստուծոյ նախախնաւ մութիւնն է որ մենք մինչեւ ցարդ դեռ ձեռք չանցանք. եթէ զմեզ բռնէին, եթէ մեր ինչ կերպով զիրար տեսնելնիս իւմանային, այնուհետեւ պիտի չկարենայինք զիրար տեսնել:

— Իրաւունք ունիս, Ալալանթին, բայց ինչպէս զիտնամթէ . . . :

— Պ. Տէշան նօտարէն:

— Կը հանչնամ զան:

— Եւ ես կը դրեմ քեզի, հաւատա ինձի: Ո՛վ Աստուածիմ, այն ամուսնութիւնը, Մաքսիմիլիէն, քեզի ատելի եղածին չափ ինձի ալ ատելի է:

— Ընորհակալ եմ, սիրելիդ իմ Ալալանթին, կրկնեց Մորէլ: Ուրեմն իրարու միտքը հասկըցանք. ես որոշեալ ժամը զիտեմ, հոս կու դամ, դուն ալ այս պատէն բաղկացա մէջ

կը ցատկես, և դիւրութեամբ կը փախչինք . պարտիզիս դուքը կառք մը կ'ըսպասեցընեմ, միատեղ կը հեծնանք ու զքեզք քրոջս տունը կը տանիմ, հոն կ'ուղես անծանօթ կը մնաս, կ'ուղես փառաւորապէս ինքղինքդ կը ճանցընես, մեր զօրութիւնն ու կամքը 'ի դործ կը դնենք, և շնոք թողուր որ մեր կոկորդը կտրեն զառնուկի պէս, որ հառաջանքներով միայն ինքինքը կը պաշտպանէ:

— Ծատ աղեկ, Մաքսիմիլիեն, ես ալ կ'ըսեմ թէ ինչ ոք ընես՝ ինձ ընդունելի է:

— Սիրելիդ, իմ Աալանթին:

— Գո՞չ ես հիմա քու կինեդ, ըսաւ նորատի աղջիկը տիրութեամբ մը:

— Սիրելիդ, իմ Աալանթին, այս ըսեն անդամ բաւական չէ:

— Բաեւ, հոգ չէ — :

Աալանթին, կամ լաւ ես է ըսել Աալանթինի շուրթերը վանդակապատին մօտեցեր էին . իւր խօսքերը անուշահոս շունչ չովք մինչեւ Մորէլի շրթանց վրայ կը սահեին, և երիտասարդը ցուրտ և անողոք վանդակներուն միւս կողմէն իւր բերանը անոնց կը յարէր:

— Նորէն տեսնուինք, ըսաւ Աալանթին այն երջանկառիթ տեսակցութենէն բաժնուելով, նորէն տեսնուինք:

— Նամակ պիտի գրես ինձ:

— Այո՛ :

— Ըստրհակալ եմ, սիրելի կինս, նորէն տեսնուինք — :

Ասմեղ և դաղտնի համբոյրի մը ձայնը հազիւ թէ լսուեցաւ, երբ Աալանթին թմբիներուն տակէն փախաւ:

Մորէլ հոն իեցաւ մինչեւ որ անոր շրջազդեստին նշդարիներուն քսուելով ելած շըսկը, և ստքերուն՝ աւաղին վրայ կոխելով հանած ձայնը անլսելի եղաւ, իւր աչքերը անպատում ժայխտով մը զէսլ 'ի երկինք վերցընելով Աստուծոյ շնորհակալ ըլլալէն ետեւ որ Աալանթին այնուէս զինքը կը սիրէր, ինքն ալ աներեցիթ եղաւ:

Երիտասարդը իւր տունը վերադաշտաւ և բոլոր զիշերն ու չետեւեալ օրը սպասեց , բայց Վալանթինէն լուր մը չըստացաւ :

Վերջապէս երրորդ օրը , առտօւան ժամը դէպ 'ի տասին՝ Պէտքան հօտարին երթալու ժամանակ թղթառունէն փոքր տոմսակ մը ընդունեց , ո ը Վալանթինինը ըլլալը հասկըցաւ , թէև երբէք անոր զիրը տեսած չէր :

Նամակին պարունակութիւնը այս էր .

« Արտասուք , աղաջանք , թախանձանք ամենեին օգուտ չըրին :

« Երեկ Սէն-Ֆիլիփ-տիւ-Ռուլի եկեղեցին դացի , և երկու ժամ շարունակ ջերմեանգութեամբ աղջք ըրի :

« Աստուած իմ աղաջանքս ընդունեց , և դաշնագրին ստորագրութիւնը այս իրիկուան ժամը իննին որոշուած է :

« Սրտիս պէտ խօսքս ալ մէկ է , Մորել , խօսքս քեզի տռւած եմ , ինչպէս և սիրտս քուկդ է :

« Կինդ

« Ա.Ա.Ա.Ա.ԹԻՒՆ ՏԲ ՎԻ.Ը.ՁՕՐ

« Յ. Գ. Ողորմիլի հանիխ վիճակը երթալով կը գէշնայ , երեկ իւր հիւանդութեան սաստկութենէն կը զառանցէր , այս օր զառանցութիւնը զրեթէ յիմարութեան փոխուեցաւ :

« Զիս խիստ պիտի սիրես , այնպէս չէ , Մորել , որպէս զի այս վիճակին մէջ զինքը թողելս մոռցնել տաս ինձ :

« Կարծեմ թէ դաշնագրին ստորագրութիւնը այս իրիկուն տեղի ունենալը նուարթիէ հաւէս զաղունի կը սղահեն » :

Մորել Վալանթինէն ստացած տեղեկութիւններէն չքաւականացաւ :

Նօտարը տեսնելու դնաց , որ ստուդից թէ դաշնագիրը իրիկուան ժամը իննին պիտի ստորագրուի :

Երիտասարդը անկէ Մօնթէ-Քրիսթոյի տունը դնաց, որմէ աւելի տեղեկութիւններ ստացաւ:

Քրանգ անձամբ եկեր էր այս լուրը կամսին հաղորդելու:

Տիկին տը Ա. իշխօօր ալ նամակ մը դրեր էր կամսին աղաւելով որ զի՞նքը չհբաւիրելնուն համար ներէ իրենց քանզի Պ. տը Աէն-Մէրանի մահը և անոր այլրիին հիւանդութեան վեճակը այն հանդիսին վրայ տիրութեան քող մը կը ձգէին, որով տիկինը չէր ուղեր կամսը տիրեցրնել, այլ ամեն տեսակ բարեմաղթութիւններ ըրեր էր անոր համար:

Առջի իրիկունը Գրանգ տիկին տը Աէն-Մէրանին ներկայեր էր, որ իւր փեսայացուին ընդունելութիւն տալու համար անկաղլնէն վար իջեր էր, բայց անմիջապէս ետքը վերստին անկաղլնը մտեր էր:

Մորէլ, ինչպէս որ հասկընալը դիւրին էր, այնպիսի այլայլութեան մը մէջ կը դանուէր, որ Մօնթէ-Քրիսթոյի պէս սրատես աչք ունեցողէ մը անկարելի էր աննշմարելի ըլլալ: Ուստի կամսը առաջուանէ աւելի սիրով վարուեցաւ անոր հետ, այն աստիճան որ երկու կամ երեք անդամ քիչ մնաց Մաքսիմիլիէն ամեն բան անոր պիտի յայտնէր:

Բայց իւր Վալանթինին տուած խոստումը յիշեց, և իւր դաղանիքը սրտին խորը մնաց:

Երիտասարդը բոլոր օրը քսան անդամ Վալանթինի նամակը կարդաց:

Առաջին անգամն էր որ Վալանթին իշեն նամակ կը դրէր և այն՝ ինչ առթիւ:

Ամեն անգամ նամակը կարդալուն՝ Մաքսիմիլիէն Վալանթինը երջանիկ ընելու համար ըրած երգումը կը նորոգէր:

Իրօք՝ այնպիսի աներկիւղ որոշում մը ընելուն համար նորատի աղջիկը ո՛րչափ պատուոյ արժանի էր, ո՛րչափ անձնութեութիւն կը պարտաւորէր իրեն երիտասարդը, որուն համար ինքը ամեն լան զոչեր էր:

Անշուշտ և իրօք այնպէս ըլլալ պէտք էր՝ Վալանթին իւր սիրոյն ամենէն մեծ առարկայն պիտի ըլլար :

Միանգամայն թագուհին և կին մ'էր, և երիտասարդը ո՛ր շափ շնորհակալ ըլլար անոր և սիրէր զան, բաւական չէր :

Մորէլ անպատում յուղմամբ այն վայրկենին կը մտածէր, երբ Վալանթին պիտի դար իրեն ըսելու :

— Եհա եկայ, Մաքսիմիլիէն, փախչինք միատեղ — :

Մորէլ այս փախուստին համար ամեն բան տնօրիներ էր, իւր պարտէղին մէջ երկու սանդուխ պահեր էր . կառք մը, զոր Մաքսիմիլիէն անձամբ պիտի վարէր, չոն պիտի սպասէր . հետը ոչ ծառայ պիտի առնուր և ոչ ճրագ . առաջին փողոցը դառնալնուն պէս՝ կառքին լաստերները պիտի վառէր, վասն զի պէտք չէր անդուշութեամբ ոստիկանութեան ձեռքն իյնալ :

Մերթ ընդ մերթ Մորէլի բոլոր մարմինը կը սարսուար : Այն վայրկեանը միտքը կը բերէր երբ Վալանթին պատին վրայէն պիտի անցնէր, և ինքը իւր զրկացը մէջ պիտի ընդունէր այն անձը, որուն միայն ձեռքը սեղմեր և մատին ծայրը համբուրեր էր :

Բայց երբ իրիկուան գէմ եղաւ, և երբ ժամը կը մօտենար, Մորէլ զզաց որ պէտք էր մինակ մնալ . իւր արիւնը կ'եռար, բարեկամի մը պարզ հարցումը կամ լոկ ձայնը զինքը պիտի դրդուէր . իւր սենեակը փակուելով բան մը կարդալու ջանաց . միայն իւր նայուածքը երեսներուն վրայ յարած էր, բայց ինքը բան մը չէր հասկընար . վերջապէս ոիրքը ձեռքէն նետեց, ու երկրորդ անդ ամ իւր յատակադին, սանդուխին և պարտիզին վրայ մտածել սկսաւ :

Վերջապէս ժամը հասաւ :

Երբէք անհամբեր ոիրահար մը իւր ժամացոյցին թողուցած չէ որ հանդարտութեամբ իւր շրջանը կատարէ :

Մորէլ իւր ժամացոյցը այնշափ խառնեց որ ժամը վեցին ժամացոյցը ոչի՞ւ կէս կը նշանակէր :

Այն ատեն նայեցաւ որ երթալու ատենն եկած է . ժամը իննին գաշնազրին ստորագրութիւնը տեղի պիտի ունենար , բայց հաւանականաբար Վալանթին այն անօդուտ ստորագրութեան պիտի չոպասէր :

Հետեւաբար Մորէլ իւր ժամացոյցին համեմատ ժամը ութ ու կէսին Մէսլէ փողոցէն ելնելով , իւր պարտէղը մտած ժամանակը՝ Սէն-Ֆիլիփ-ախւ-Ռուլ եկեղեցւոյն ժամացոյցը ութ կը հնչէր :

Իւր ձին ու կանքը պարտիղին մէկ կողմը կիսաւեր չենքի մը ետին պահեց , ուր Մորէլ պահուելու սովորութիւն ունէր :

Սակաւ առ սակաւ մութը օրատեց , այն ատեն Մորէլ իւր պահուած տեղէն ելաւ և սրտի բարախմամբ դնաց վանդակաց ճեղքուածքէն նայեցաւ . Վալանթին եկած չէր տակաւին :

Ժամը ութ ու կէս հնչէր . կէս ժամ հոն սպասեր էր :

Մորէլ իւր պարտիղին մէջ մէկ կողմէն միւսը կը պարտէր , բայց մերթ ընդ մերթ վանդակներուն կը մօտենար ու ծակէն կը նայէր :

Պարտէղը երթալով կը մթնիար , սակայն այն մթութեան մէջ պարագ տեղը նորատի աղջկան սոյիտակ շրջազդեստը կը փնտոէր , և այն լուսթեան մէջ անօդուտ տեղը ոտնաձայնի մը ականջ կը դնէր :

Ծառերուն մէջէն երեցած Վիլֆօրի տունը մթութեան մէջ կը դանուէր , և ամուսնութեան գաշնազրին ստորագրութեան հանդէսը կատարուիլը ցուցընող նշան մը չէր ներկայեր :

Մորէլ իւր ժամացոյցը նայեցաւ , որ ինը և երեք քառորդ կը նշանակէր , բայց զրեթէ մի և նոյն միջոցին եկեղեցւոյն ժամացոյցը , որ արդէն երկու կամ երեք անգամ իւր ժամացոյցին սիսալունքը յայտներ էր , ինն ու կէս կը հնչէր :

Երդէն Վալանթինի որոշած ժամուն վրայ կէս ժամ աւտնցեր էր . քանզի ժամը իննին ըսեր էր և աւելի առաջ քան թէ ետքը :

Երիտասարդին կենացը մէջ ամենէն սոսկալի ժամն էր այն ,

և որուն որտին վրայ ժամացոյցին ամեն մէկ մանրեքլրորդը կապարեալ մուրճի հարուածի պէս կը դարնէր:

Տերեներուն ամենէն թեթև չուկը, հողմին ամենէն տկար ձայնը իւր ուշադրութիւնը կը հրաւիրէր և Ճակատը քրախն քով կը պատէր: Այն ատեն սարսուալով իւր սանդուխը կը շիտի և ժամանակ չկրսնցընելու համար իւր ոտքը անոր առաջին աստիճանին վրայ կը դնէր:

Մերթ վախնալով և մերթ յուսալով, և որտին մերթ սփոփութեան և մերթ անձկութեան միջոցին եկեղեցւոյն ժամացոյցը տասը հնչեց:

— Ո՛չ, մրմռաց Մաքսիմիլիէն սոսկումով, անկարելի է որ դաշնագրի մը ստորագրութիւնը այսափ երկար տեէ, միայն թէ անակնկալ դիպուած մը չպատահի: Բոլոր զործողութեանց և արարողութեանց տեած միջոցը հաշիւ ընելով, անշուշտ բան մը պատահած է անոր — :

Այն ատեն մերթ յուզմամբ վանդակներուն առջն կ'երթեւեկէր, և մերթ իւր հրատապ Ճակատը անոնց կոթընած կը կենար:

Արդեօք Վալանթին դաշնագրէն ետե նուազեցաւ թէ փախչելու ժամանակ բռնուեցաւ:

Այս երկու յուսահատեցուցիչ հաւանականութիւնները երիտասարդին մեծ անհանգ ստութիւն կը պատճառէին:

Բայց ամենէն աւելի իրեն երկիւղ պատճառողը այն էր թէ արդեօք Վալանթին փախչելու ժամանակ իւր ոյժը կորսնցը նելով ծառուղոյ մը մէջ նուազեալ ինկա՞ւ:

— Ո՛չ, եթէ այնակէս է, դոչեց երիտասարդը սանդուխին վրայ ելնելով, ուրեմն անմտութեամբ պիտի կորսնցընեմ դան կը փոխէ:

Մթութեան մէջ իւր նայուածքը թափանցել ջանալով կը

կարծեց թէ մութ ծառուղւոյն մէջ դետինը առարկայ մը կը տեսնէ :

Մորէլ մինչև ձայն տալու համարձակեցաւ, և իրեն այն պէս երեցաւ թէ հողմը վշտագին հեծութեան մը հեռաւոր ձայնը մինչև իրեն կը բերէր :

Ա. Երջադէս ժամացոյցը կէս զարկաւ :

Անկարելի էր որ աւելի երկար ժամանակ համբերէր . ամեն քան հաւանական էր :

Մաքսիմիլիէնի քունքը ուժդնութեամբ կը բարախէր . ոը բունքը պատին վրայէն անցուց և միւս կողմը ցատկեց :

Ա. Իլլորի պարտէզը իջնելով սկսաւ մտածել թէ իւր այս պիսի դործին հետեւթիւնը կրնար ծանը ըլլալ, քանզի սան գուղով հան իջեր էր . սակայն անշուշտ ետ դառնալու համար չէր որ մինչև հան եկեր էր :

Քանի մը վայրիեան պատին քովերը շրջագայելէն եաւ՝ մէկ սստիւնով ծառուղւոյն մէջէն անցնելով, խիս ծառոց քովը հասաւ, ուրիշից տունը մօտէն կը տեսնուէր :

Արդէն վանդակներուն առջելը ծառերուն մէջէն դիտած ժամանակ ըրած կարծիքը ստուգուեր էր . ամեն պատուհանները լուսաւորուած ըլլալու տեղ, ինչպէս որ հանդիսաւոր օրեր ալլորաբար կ'ըլլայ, միայն տան մոխրագոյն պատը տեսաւ, որուն վրայ լուսինը սքովազ թանձր ամազ մը ստուերի մմծ վարագոյր մը սփուեր էր :

Միայն առաջին դստիկոնի երեք պատուհաններուն առջեւն ժամանակ առ ժամանակ Ճրագ մը մոլի հուրի պէս վազելով կ'անցնէր :

Այս երեք պատուհանները տիկին առ Սէն-Մէրանի սենե կինն էին :

Աւրիշ լոյս մը կարմիր վարագոյրներու ետին անշարժ կեցեր էր :

Այս կարմիր վարագոյրները տիկին առ Ա. Իլլորի ննջաւանինն էր :

Մորէլ զուշակելով ամեն բան զտեր էր . օրուան ժամեւ ըռւն մէջ այնչափ անգամ Վալանթինի վրայ կը մտածէր , այնչափ անդամ , կ'ըսենք , այս տան յատակաղիծը իւր մըտօքը կը ծրագրէր , որ առանց տեսնելու սենե ակներուն դիրքը կը ձանջնար :

Երիտասարդը տան մէջ տիրած մթութինէն և լոռութենէն աւելի շատ վախցիք էր քան թէ Վալանթինի բացակայութենէն :

Բոլորովին այլայլած , անհանգստութենէ խենթեցած և Վալանթինը տեսնելու ու անոր զլուխը ինչ գժրաղդութիւն եկած ըլլալը ստուգելու համար ամեն բան աչքը առած՝ Մորէլ խիտ ծառերուն մէջէն դուրս ելաւ և կը պատրաստուէր կարելի եղածին չափ արագութեամբ ծաղկոցին մէջէն անցնել , երբ ձայն մը լսեց , որ թէկ տակաւին բաւական հեռու էր , բայց հովը մինչեւ իրեն կը բերէր զայն :

Ասոր վրայ քայլ մը ետ քաշուեցաւ ,

Արդէն ծառերուն տակէն կէս մը դուրս ելեր էր , բայց ձայնը լսելով բոլորովին ներս քաշուեցաւ և մթութեան մէջ անշարժ ու անձայն կեցաւ :

Մորէլ իւր ընելիքը որոշչեր էր :

Եթէ եկողը Վալանթինն էր , անցնելու ատեն ձայն մը հանելով պիտի խմացընէր անոր . եթէ հետը մէկը ըլլար , գոնէ զան տեսնելով , սիրուը պիտի հանդարտէր և պիտի ստուգէր . որ Վալանթինի զլուխը ամենեին գժրաղդութիւն մը եկած չէ . եթէ օտարականներ ըլլային , անոնց խօսակցութիւնը պիտի լսէր , և մինչեւ այն վայրկեանը իրեն անհասկանալի եղած այն գաղանիքին պատճառը պիտի հասկընար :

Այն միջոցին լուսինը ամպին տակէն ելնելով , Մորէլ սանդուխին դրան առջեւ սև զգեստներով մարդու մը հետ պարս Վիլֆորը տեսաւ :

Միատեղ վար իջան ու դէպ 'ի խիտ ծառերը յառաջացան :

Աւ զդեստներով մարդը չորս քայլ չառած՝ Մորէլ ձանչ ցեր էր զան որ ո'Վիլրինեի բժիշկն էր :

Առիտասարդը անոնց իւր կողմը դալը տեսնելով, մեքենա պէս ետ քաշուեցաւ, և ժանտաթղենիի մը բռւնին ետին ապաստանեցաւ:

Հաստ չափաւ շրջողներուն ոտնաձայնը դադրեցաւ:

— Ա՛յ. պարոն բժիշկ, ըստ թագաւորի զործակալը, ստուդիւ Աստուած յայտնապէս մեր տանը դէմ բարկացած պիտի ըլլայ: Այս ի՞նչ սոսկալի մահ է: այս ի՞նչ կայծակի հարուած մ'է: Զիս սփոփելու մի ջանաք, պարոն. ափսոս, այսպիսի դժբաղդութեան մը համար մի թարութիւն չկայ, վէրքը խիստ ազդու եւ խորունկ է: Մեռաւ, պարոն, մեռաւ — :

Պաղ քրտինք մը երիտասարդին ճակատը սառեցուց, և ակրաները սկսան կափիկափել: Արդեօք ո՞վ էր Ակլոֆօրի տան մէջ մեռնողը, որուն համար ի՞նքը իւր բերնովը անթծեալ առւն կ'ըսէր:

— Սիրելիդ իմ՝ Պ. Ակլոֆօր, պատասխանեց բժիշկը այն պիսի ձայնով մը, որ երիտասարդին երկիւզը կրկնապատկեց. զձեղ մի թարելու համար չըերի ես հոս, այլ ընդ հակառակն ուրիշ դոյժ մը տալու:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, հարցուց թագաւորի զործակալը սարսափած:

— Ըսել կ'ուզեմ թէ պատահած այտ դժբաղդութեան տակ ուրիշ դժբաղդութիւն մը կայ, որ զուցէ աւելի մծ ըլլայ:

— Ա՞վ Աստուած իմ, մրմթեց Ակլոֆօր ձեռքերը միացընելով, ի՞նչ կայ ուրիշ:

— Բոլորովին առանձին ենք, բարեկամն:

— Այո, բայց այդ զգուշութիւնները ի՞նչ կը նշանակեն:

— Մտերմական ազդարարութիւն մը ունիմ ձեղ ընելու, ըստ բժիշկը. նստինք — :

Ակլոֆօր նատարանք մը վրայ թուլութեամբ նստաւ:

Բժիշկը մէկ ձեռքը անոր ուսին վրայ դրած առջելը կանդ. նեցաւ:

Ասրէլ սոսկումեն սառելով, մէկ ձեռքովը ճակատը բռներ

Էրեմիւս ձեռքովը սիրտը կը սեղմէր, որուն բարախումը կը վախնար որ չլսուի:

— Ո՞վ մեռաւ արդեօք —, կ'ըսէր ինքնիրեն երիտասարդը բոլորվին այլայլելով:

— Խօսեցէք, պարոն բժիշկ, մտիկ կ'ընեմ ձեզ, ըստ Արթօփօր, պատմեցէք և ևս ամեն բանի համար պատրաստուած եմ:

— Յիրաւի տիկին աը Սէն-Մէրան խիստ պարաւցած էր, բայց խիստ առողջ կին մ'էր — :

Մորէլ տասը վայրկեանէ՝ 'ի վեր հիմա սկսաւ շունչ առնուլ:

— Տրտմութենէն մեռաւ, պարոն, ըստ Արթօփօր, այո՛, իւր տրտմութենէն մեռաւ: Քառասուն տարի մարգէղին հետ երջանիկ կեանք մը վարելով . . . :

— Ոչ, պարոն, տրտմութենէն չմեռաւ: Տիրութենէ մարդ կրնայ մեռնիլ, թէև շատ քիչ անդամ կը պատահէի, բայց օրուան մը, ժամուան մը և տասը վայրկենի մէջ չմեռնիր — :

Արթօփօր պատասխան չտուաւ, զլուխը վերցուց, զոր մինչև այն վայրկեանը կախած էր, և ապուշ նայուածքով անոր նայեցաւ:

— Հոգեվարքին ժամանակ հո՞ն էիք, հարցուց ա'նվրինեի:

— Այո՛, պատասխանեց թագաւորի զործակալը, կամաց մը ինձ ըսկիք որ չհեռանամ անկէ:

— Տիկին աը Սէն-Մէրանի հիւանդութեան նշանները զիտեցիք:

— Անշուշտ . տիկին աը Սէն-Մէրան իրարմէ քանի մը վայրկեան միջոցով երեք Ճղնաժամ ունեցաւ՝ ամեն անդամ աւելի սասականալով: Չեր հասած ժամանակը՝ արդէն քանի մը վայրկենէ՝ 'ի վեր ողեսողական մնացեր էր, իւր առաջին Ճղնաժամը պարզ զղահարութիւն մը կարծեցի, բայց սկսեր էի իրօք վախնաւ երբ տեսայ որ իւր անկողնոյն մէջ ելաւ նըստաւ անդամները և զլուխը ձգտած: Այն ատեն ձեր երեսը նայելով հասկըցայ որ անոր վիճակը կարծածէս աւելի ձանր

Էւ Առաջին Ճգնաժամը անցնելով՝ ձեր երեսը նայեցայ, բայց դուք անոր ձեռքը բռնած էիք, երակաց բարախումը կը համարէիք, և մինչև երկրորդ Ճգնաժամին սկսելը երեսնիդ անոր դարձուցած էիք: Երկրորդ Ճգնաժամը առաջինէն աւելի սոսկալի եղաւ: Ջղերուն նոյն շարժումները աեղի ունեցան, բերանը կարկամեցաւ և մանիշակաղոյն եղաւ: Երրորդ Ճգնաժամին մեռաւ: Արդէն առաջին Ճգնաժամին վերջերը ջիղերու կարկամութիւնը մը դիտեր էի, և դուք իմ կարծիքս հաստատեցիք:

— Այս, ամենուն առջին, կրկնեց բժիշկը, բայց չիմամփնակ ենք:

— Ի՞նչ պիտի ըստք, ո՛վ Աստուած իմ:

— Ըսել կ'ուզեմ թէ ջիղերու կարկամութեան և թունաւորուածին նշանները բոլորովին մի և նոյն են — :

Պ. տը Վ. իլլոֆօր ելաւ կանդնեցաւ, և վայրիեան մը անշարժ և լուս կենալէն ետե՝ իւր նսանարանին վրայ վերստին ինկաւ:

— Ա՛յ, պարոն բժիշկ, ըսաւ, աղէկ մոտածեցէք թէ ի՞նչ կ'ըստք ինձ — :

Մորէլ չէր դիտեր թէ երաղ կը տեսնէր թէ արթուն էր:

— Մոիկ ըրէք, ըսաւ բժիշկը, ըսած յայտարարութեանս կարկամութիւնը և ձեր բնութիւնը լաւ կը ճանչնամ:

— Իբր դատաւո՞ր մաիկ ընեմ թէ իբր բարեկամ, հարցուց Վ. իլլոֆօր:

— Իբր բարեկամ, այս վայրկենիս ձեր չետը բարեկամօքէն կ'ուզեմ խօսիլ: Ջղաց կարկամութեան և բուսական հիւթերէ թունաւորուածին նշանները այնչափ իրարու կը նմանին, որ եթէ ըսածս ստորագրել հարկ ըլլայ, Ճշմարիտ կ'երկմատիմ: Աւստի կը կրկնեմ՝ խօսքս դատաւորին չէ այլ բարեկամիս, և բարեկամիս կ'ըսեմ որ երեք քառորդ որ անոր հողեվարքը տեսց, ուշադրութեամբ անոր Ճգնաժամը, ջղաձդութիւնները և մահը դիտեցի, տեսածիս վրայ այնչափ

Համոզուած եմ որ կրնամը ըսել թէ տիկին աը Սէն-Մէրան ոչ միայն թունաւորեալ մեռաւ, ոյլ ի՞նչ թոյնէ մոռնիլն անգամ՝ դիանի:

— Պարան, պարոն:

— Եմն բան յայտնի կը ցուցընէ . ջղային ձղնամերէն ընդմիջեալ խորունի քնէութիւնը, ուղեղի սաստիկ յուղմունքը, զործարանաց թմբրութիւնը բաւական ապացոյներ են : Տիկին աը Սէն-Մէրան բեեկինի ցեղէ բոյսի մը հիւթովը անշուշտ դիսուածով կամ դուցէ սխալմամբ թունաւորուած է :

Ակլթօր բժշկին ձեռքը բռնեց:

— Ո՛չ, անկարելի է, պարոն, ըսաւ, անկարելի է . արդեօք երած է տեսածս ։ Սառւզիւ կը սոսկամ երր ձեղի պէս անձի մը բերանէն այսպիսի խոսք մը կը լսեմ . կ'աղաւեմ, սիրելի պարոն բժիշկ, յանուն երկնից, ըսէք, միթէ չէք կրնար սխալիլ:

— Անշուշտ կրնամ սխալիլ . բայց . . . :

— Բայց, ի՞նչ ըսել կ'ուզէք :

— Բայց չեմ կարծեր :

— Գթացէք ինծի, պարոն բժիշկ . քանի մը օրէ 'ի վեր այնչափ անլուր դժբաղդութիւններ կը պատահին, որ կարծեմ թէ պիտի խենթենամ :

— Աւրիշ բժիշկ մը տիկին աը Սէն-Մէրանի այցելութիւն ըրաւ :

— Ամենեին :

— Արդեօք ինձմէ դաղտուկ դեղաղիր մը դեղավաճառի տարուեցաւ :

— Ամենեին :

— Տիկին աը Սէն-Մէրան թշնամիներ ունէք :

— Եեմ Ճանշնար մէ կը որ անոր թշնամի ըլլայ :

— Մէկը անոր մեռնիլը կ'ուզէք :

— Ոչ, ամենեին . աղջիկս անոր միակ ժառանդն է : Ո՛չ, եթէ այսպիսի խորհուրդ մը մտքէս անցնէր, ինքզինքս դաշտյնով կ'ըսպաննէի :

— ԱՇ, սիրելի բարեկամ, դոչեց տ'Ավրինեի . Աստուած շընէ որ մէ կու վրայ ամբաստանութիւն ընեմ, դիպուած ի կամ սխալմունքի վրայ է խօսքս: Սակայն կ'ուղէ դիպուած ըլլայ, կ'ուղէ սխալմունք, զործը ինքնին կամաց ձայնով խղջիս կ'ըսէ, և կ'ըստիպէ զան որ բարձր ձայնով ձեր հետը խօսի: Այս բանիս վրայ տեղեկացէք, պարոն:

— Որմէ, ինչպէս, և ինչ բանի վրայ:

— Արդեօք Պարուա ծերունի ծառան իւր տիրոջը համար պատրաստած ըմպելի գեղ մը սխալմամբ տիկին աը Սէն-Մէրանին առւան:

— Իմ հօրս համար պատրաստուած:

— Այս:

— Բայց միթէ կարելի է որ Պ. Նուարթիէի համար պատրաստած գեղ մը տիկին աը Սէն-Մէրանը թունաւորէ:

— Վասր տարակոյս չկայ. զիտէք որ քանի մը հիւանդութեանց մէջ թոյնը գեղ է, կաթուածն ալ այն հիւանդութիւններէն մէկն է: Պ. Նուարթիէի շարժելու և խօսելու կարողութիւնը վերադարձընելու համար ամեն միջոց 'ի գործ դնելէս ետե՛ դրեթէ երեք ամփոէ 'ի վեր որոշեցի վերջին միջոց մը ևս փորձելու. երեք ամփոէ 'ի վեր, կ'ըսեմ, բեկենի հիւթը կը զործածեմ անոր. վերջին անդամ հրամայած գեղիս մէջ այն հիւթէն վեց հարիւրակրամ դնել տուի. վեց հարիւրակրամը, (որ կրնայ Պ. Նուարթիէի կաթուածահար գործարանաց ազգեցութիւն չընել, քանզի չետպհատէ աստիճանաբար նոյն թոյնէն գեղի մէջ առնելով՝ սովորած է անոր), բաւական է այն գեղին չսովորող ուրիշ ո՛ր և է մէկուն մաշ պատճառել:

— Սիրելիդ իմ տ'Ավրինեի, Պ. Նուարթիէի և տիկին աը Սէն-Մէրանի սենեկաց մէջ ամենեին հաղորդակցութիւն չկայ, և Պարուան բնաւ զոքանչիս սենեկը չմտներ: Աերջապէս, պարոն, կը համարձակիմ ըսել որ թէպէտե զձեղ խիստ ներհուն և մանաւանդ խիստ երկիւղած մարդ մը կը

Հանջնամ, թէպէտե ամեն պարադայի մէջ ձեր խօսքը արեւոն լրւսին նման ինձ կ'առաջնորդէ՛, այսու ամենայնիւ, իմ այս համոզմանս հակառակ՝ « Մարդս սխալական է » ըստած առակին վրայ կը թընելու պէտք ունիմ :

— Մաիկ ըրեք, Վիլլֆօր, ըստ բժիշկը, իմ պաշտօնաւ կիցներէս այնպիսի մէ կը կը ճանչնաք, որու վրայ իմ վրաս ունեցածնուդ չափ վատահութիւն ունենաք :

— Խնդր համար, ըսեք. ինչ բանի համար կը հարցընէք :

— Կանչեցէք զան, իմ բոլոր տեսածներս և դիտածներս անոր կը պատմեմ, և տիկին աը Սէն-Մէրանի մարմինը կը բանանք :

— Այդ կերպով թոյնին հետքը կը դանէք :

— Աչ, թոյն չըսի ես, այլ իւր ջիղերը գրգռող պատճառը կը քննենք, իւր անշնչութեան ուրիշից յառաջ գալը իսկոյն կը հասկընանք և կ'ըսենք ձեզի. Սիրելի Վիլլֆօր, եթէ այս գժրադդութիւնը անհոգութեամբ պատահած է, ձեր ծառաներուն վրայ հսկեցէք. իսկ եթէ թշնամութեամբ պատահած է, ձեր թշնամեաց վրայ հսկեցէք :

— Ա՛չ, Տէր Աստուած, ինչ կ'առաջարկէք ինձ, Պ. ո'Ավրինեի, պատասխանեց Վիլլֆօր յաղթուելով. այս գալանիքը ձեղմէ ուրիշ մէ կը իմանալուն պէս պէտք է որ քննութիւնը մը ըլլայ, և տանս մէջ այդ քննութիւնը ընել անկարելի է. Այսու ամենայնիւ, շարունակեց թագաւորի դործակալը սիրու առնելով և անհանգստութեամբ բժշկին երեսը նայելով, այսու ամենայնիւ, եթէ կ'ուզէք, եթէ անշուշտ կը պահանջէք, ձեր կամքը կը կատարեմ: Կրօք պէտք եմ այս դործին ետեւէն ըլլալ, բնութիւնս ալ այնպէս կը պահանջէ: Սակայն, պարոն բժիշկ, կը տեսնէք որ մեր սիրալ վիշտերով լցուած է. այնչափ վիշտերէն ետեւ տանս մէջ այնչափ գայթակեցուցիչ քննութիւն մը ընել տալով կինս և աղջեկս պիտի մեռնին: Գիտէք, պարոն, որ թագաւորի դործակալութիւն ընողը առանց թշնամիներ ունենալու չկրնար քսան և

Հինգ տարի իւր պաշտօնը կատարել . իմ թշնամիներու ալ խիստ բաղմաթիւ են . այս դայթակղեցուցիչ դործը անոնց համար յաղթութիւն մը պիտի ըլլայ . անոնք պիտի ուրախանան և ես ամօթով պիտի մնամ : Ներեցէք ինձ , Պ . բժիշկ , այս զոեհին դաղափարներուն համար . եթէ դուք քահանայ մը ըլլայիք , չէի համարձակեր ձեզ այս բանս ըսել . բայց դուք մարդ մ'էք , և միւս մարդերը կը ճանչնաք , ուստի կարծեմ իրաւունք կու տաք ինձ այս բանիս համար :

— Սիրելիդ իմ Պ . տը Ակլըֆօր , պատասխանեց բժիշկը զիջանելով . իմ առաջին պարտքս մարդասիրութիւնն է . տիկին տը Աէն-Մէրանը կ'աղատէի՝ եթէ արուեստս օդնէր ինձ . բայց ան մեռաւ , և ես պէտք եմ կենդանիներուն բարիք ընելու ջանալ . Ուրեմն թաղենք այս սոսկալի դաղտնիքը մեր սրափին խորութեանցը մէջ , և եթէ մէ կը իմանայ իսկ , պահած լոռութիւնս թող ագիտութեանս տայ , հոգս պիտի չընեմ : Սակայն , պարոն . անչող պէ կենաք , միշտ փնտոեցէք , և ուշադրութեամբ քննեցէք . կարելի է որ ընողը այսչափորդուհին չըլլայ Եւ երբ յանցաւորը դտնէք , ես պիտի ըսեմ ձեզ թէ դուք դատաւոր մ'էք , ուղաձնիդ ըրէք :

— Ո՛չ , չնորհակալ եմ , չնորհակալ եմ , պարոն բժիշկ , ըստ Ակլըֆօր անորդատում ուրախութեամբ մը , ձեզմէ աւելի մտերիմ բարեկամ մը չունեցայ երբէք :

Եւ կարծես թէ վախնալով որ տ'Ամրինեի նոյն խնդրոյն վրայ չվերագառնալ և իւր խոստման վրայ չզդայ , ոտք ելաւ և բժիշկը տան մէջ տարաւ :

Անոնք հեռանալնուն պէս Մորէլ զլուխը իւր պահուած տեղէն դուրս հանեց և լուսինը անոր երեսը լուսաւորեց , որ ուրուականի պէս դեղներ էր :

— Աստուած յայտնի բայց սոսկալի կերպով կը պաշոպանէ զիս , ըսաւ . բայց Ատլանթինս , Ալալանթինս , ողսրմելի սիրուհիս , արդեօք այնչափ վիշտերուն պիտի կընայ տոկալ — :

Այս խօսքերը ըսելով՝ փոփոխակի կարմիր վարադոյըներով

պատուհանին և սպիտակ վարադոյրներով երեք պատուհան, ներուն կը նայէր :

Կարմիր վարադոյրներով սպատուհանին լոյսը գրեթէ բոլորովին աներեղիթ եղեր էր :

Անոտարակոյս տիկին տը Ա.իլքֆօր իւր Ճրադը մարեր էր, և միայն դիշերային կանժեղը իւր տկար ցոլացումը ապակին ներուն կու տար :

Ընդ հակառակին՝ սպիտակ վարադոյրներով երեք պատուհաններէն մէկուն բացուիլը տեսաւ :

Վառարանին վրայ զետեղուած մոմ մը իւր աղօստ լոյսը դէպ ՚ի գուրս կ'արձակէր և ստուեր մը պատշգամբին մէջ դալով, արմկանը վրայ կոթընեցաւ :

Մորէլ սարուաց :

Իրեն այնպէս երեցաւ թէ հառաչանք մը կը լոէ :

Զարմանալի բան էր որ Մորէլի պէս այնչափ աներկիւլ և ուժեղ անձ մը մարդկային ամենէն զօրաւոր երկու կիրքերէն, այսինքն՝ սէրէն և երկիւղէն յուղուելով և շփոթելով, այն աստիճան տիւարացեր էր որ երեակայական ցնորքներու մէջ ինկեր էր :

Թէև անկարելի էր որ Վալսնթին զինքը իւր պահուած տեղը տեսնէր, սակայն իրեն այնպէս եկաւ թէ պատուհանին ստուերը զինքը կը կանչէ :

Իւր յուղեալ և բորբոքեալ սիրտը այնպէս կը հաւացընէր իրեն, և այս կարծեաց մէջ այնչափ համողուած կ'երեւէր, որ երիտասարդական թեթև սստիւնով մը ծառերուն տակէն գուրս ցատկեց, և տեսնուելէն, Վալանթինը վախցընէն, և նորատի ալջկան զինքը յանկարծ տեսած ժամանակ ակամայ հանելու ձայնովը քնացողները արթնցընելէն չվախնալով, երկու քայլով ծաղկոցին մէջէն անցաւ, զոր լուսինը լՃի մը պէս լայն և սպիտակ կ'երեցընէր, և տան առջև շարուած նարնջենիներուն արկղներուն քով հասնելով սանդուխին վրայէն արադութեամբ վեր ելաւ, և դուռը հռեց, որ առանց ընդդիմութեան իսկոյն բացուեցաւ :

Վալանթին պատուհանին առջել եղած ժամանակ զինքը շտեսեր էր . իւր աչքերը դէպ 'ի երկինք վերցուցած՝ երկնից կապոյտին վրայ շըջող արծաթաղոյն ամպ մը կը դիտէր , ուրան ձել երկինք ելնող ստուերի մը ձեն ունէր :

Եւր յուզեալ և վերացեալ մտօքը զայն իւր հանիին հուզին կը կարծէր :

Այսու ամենայնիւ Մորէլ նախասենեակը անցնելով երկրորդ սանդուխին քովը հասեր էր :

Սանդուխին աստիճաններուն վրայ տարածուած օմոցը երիտասարդին ոտնաձայնը կը խափանէր :

Մորէլ այն աստիճան յուզեալ էր որ Պ. տը Ա.իլքֆօրի ներկոյութիւնը անդամ պիտի չվախցընէր զինքը : Եթէ պարոն տը Ա.իլքֆօր իւր դիմացը ելնէր , երիտասարդը իւր ընելքը որոշեր էր :

Անոր պիտի մօտենար և ամեն բան խոստովանելով պիտի աղաջէր որ ներէ իրենց և չգծկամի այն սիրոյն , որ զինքը իւր աղջկան հետ և իւր աղջիկը իրեն հետ կը միացընէր :

Մորէլ խենթեցեր էր :

Բարեբազդաբար մարդ մը շտեսաւ :

Այն ատեն տան ներքին յատակաղթին վրայօք Վալանթին նէն ստացած տեղեկութիւնը իրեն շատ օգնեց :

Առանց վտանգի սանդուխին վրայ հասաւ , և երբ դէպ 'ի ո՛ր սենեակը երթալուն վրայ կը մտածէր , չեծութեան ձայն մը լսեց , և իսկոյն դէպ 'ի ձայնը ելած կողմը ուղղեցաւ :

Կիսաբաց դրան մը մէջէն լոյսի մը ցոլացումը և չեծութեան ձայնը դուրս կ'ելնէին :

Մորէլ այն գուռը հսեց և ներս մտաւ :

Մեռեալը անկողնոյ մը մէջ կը հանգչէր սպիտակ սաւանի մը տակ , որ բոլորովին կը ծածկէր զան և մարմար ձեւ կը նկարէր . Մորէլ , որ դիպուածով անոր մահուան դաղանիքը իմացեր էր , զան այս դիրքին մէջ տեսնելով աւելի սոսկաց :

Ենկողնոյն քովը՝ Վալանթին մեծ թիկնաթռնի մը վրայ

ծնրադրեալ ու դլուիը աթոռին թիկնաբարձերուն մէջ և իւր երկու ձեռքերով ծածկտօն՝ դողալով ու հեծելով կ'ողբար։ Պատուհանը բաց թողլով ներս մտեր էր և այնալիսի սրտառուց կերպով բարձրածայն կ'աղօթէր, որ ամենէն անզդայ սիրաերն անդամ պիտի շարժէին։

Իւր վիշտերը այնպիսի կիսկիչ կապերով իւր կոկորդը կը սեղմէին, որ բերանէն ելած խօսքերը իրարու անհամաձայն և դժուարիմաց էին։

Լուսինը որատուհանի վանդակներուն մէջէն ներս թափանցելով մամին լոյսը կը տժդունէր և այս թախծալից պատկերը իւր տիրական դոյներովը կը ներկէր։

Մորէին սիրտը այս տեսարանին չկրցաւ դիմանալ, թէե ինքը օրինակ ըլւալու չափ բարեպաշտ և իւր սիրտը այնչափ դիւրազգեցիկ չէր, բայց Վալանթինը տառապանաց և արտասուաց մէջ տեսնելով, չկրցաւ ինքզինքը զսպել։

Հառաչանք մը հանեց, անուն մը մրմուաց, և Վալանթին իւր դլուիը վերցուց, որ թեաթուին թաւիչէն կճակերպ նկարուած ու Մադդաղինէի դլուուն նման արտասուաց մէջ թաթխուած էր, և անոր կողմը գարձած մնաց։

Վալանթին Մորէլը տեսաւ և զարմանք մը չխայտնեց։

Յետին յուսահատութենէն ուուեցած սրտին մէջ միջնական յուղմունք չիրնար ըլլալ։

Մորէլ ձեռքը իւր սիրուհւոյն երկնցուց։

Վալանթին իւր քովը զալուն համար զինքը արդարացը նելու միակ նողատակաւ՝ մահաղոյժ սաւանին տակ հանդչած դիակը ցուցուց անոր և վերստին սկսաւ հեծելով լալ։

Երկուքն ալ չէին համարձակեր այն սենեկին մէջ խօսելու։ Երկուքն ալ կ'երկմաէին խզել ոյն լուրեթիւնը, որ կարծես թէ մեռեալը սենեկին մէկ անկիւնը կանդնած և ձեռքը շորթանց վրայ գրած կը հրամայէր։

Վերջապէս Վալանթին անորմէ առաջ բերանը բանալու համարձակեցաւ։

— Բարեկամ, ըստ, ի՞նչպէս հոս եկար: Ափսոս, քեզի բարի եկար կ'ըսէի, եթէ այս տան գուռոը քեզի բացողը մահը չըլլար:

— Վալանթին, ըստ Մորէլ դոդոջուն ձայնիւ և ձեռքերը միացընելով, ժամը ութ ու կէսէն 'ի վեր հոն կ'ըսպասէի, երբ նայեցայ որ չեկար, աճշանդ ստութիւն մը պատեց դիս, պատին վրայէն ցատկեցի, պարտէզը իջայ, այն տանն այդ աղէտալի դիսուածին վրայ խօսելու ձայներ լսեցի:

— Ի՞նչ ձայներ —, հարցուց Վալանթին:

Մորէլ սարսուաց, վասն զի բժշկին և Պ. որ Ավելիքօրի բռլոր խօսակցութիւնը յիշեց. այնպէս կարծէր թէ սաւանին տակէն անոր ձգտեալ թեւերը, ոյիքի պարանոցը և մանիշակագոյն շուրթերը կը տեսնէ:

— Ձեր ծառաներուն ձայներէն ամեն բան խմացայ, ըստ Մորէլ:

— Մինչեւ հոս դալով կրնայիր մեր կորստեան պատճառ ըւլալ, սիրելիս, ըստ Վալանթին առանց երկիւղի և բարկութեան:

— Կերէ ինձ, պատասխանեց Մորէլ նոյն ձայնիւ, հեմո կը մեկնիմ:

— Ոչ, կեցիր, ըստ Վալանթին, դիմացդ կրնայ մէ կը ելնել.

— Բայց եթէ մէ կը հոս դայ — :

«որատի աղջիկը զլուխը շարժեց»:

— Մէկը չդար, ըստ, անհոդ եղիր, ահա մեր պաշտամանը — :

Եւ իւր ձեռքովը սաւանին տակի գիտակը ցուցուց:

— Ըսէ ինձ, կ'աղաչեմ, կրկնեց Մորէլ, պարոն տ'երինէն ի՞նչ եղաւ:

— Դաշնագիրը ստորագրելու համար Պ. Փրանդին եկած ժամուն հանիս իւր վերջին շունչը կ'աւանդէր:

— Ափսոս, ըստ Մորէլ եսական ուրախալի զգացմամբ,

քանզի իւրովի կը մտածէր թէ այս մահը Վալանթինի ամուսնութիւնը անորոշ կերպով կը յապաղէր :

— Բայց իմ վիշտերս կրկնապատկողը այն է, շարունակեց Վալանթին՝ կարծես Մորէլի այն զգացումը պատճելու համար, որ իմ ողորմիլի սիրելի հանիս մեռնելու տաեն պատուիրեց որ ամուսնութիւնը կարելի եղածին շափ շուտով կատարուի : Ով՛ Աստուած իմ, ան ալ զիս պաշտպանել կարծելով ինձ թշնամութիւն կ'ընէր :

— Մտիկ ըրէ, ի՞նչ ձայներ են ասոնք — , ըսաւ Մորէլ, Երիտասարդները լուռ կհցան :

Դրան մը բացուիլը, նրբազաւիթին տախտակամածին Ճռընչիւնը և սանդուխէն իջնելու ձայներ լսուեցան :

— Հայրս է որ իւր դահլիճէն դուրս կ'ելնէ, ըսաւ Վալանթին :

— Անշուշտ բժիշկը կը ճամբէ, յաւելցուց Մորէլ :

— Բժիշկն ըլլալը ուրկից դիտես, հարցուց Վալանթին զարմանքով :

— Այնպէս կը կարծեմ — , ըսաւ Մորէլ :

Վալանթին երիտասարդին երեսը նայեցաւ :

Այն միջոցին փողոցին դրան զոցուիլը լսեցին :

Պ. տը Ակլըֆօր պարտիզին դուռն ալ բանիքելէն ետե՞սանդուխէն վեր ելաւ :

Նախասենեկին մէջ մտնելով վայրկեան մը կանդ առաւ մտածելով թէ իւր սենեամկը դառնայ եթէ տիկին տը Աէն-Մէրանի սենեակն երթայ :

Մորէլ վարագոյրի մը ետին պահուեցաւ :

Իսկ Վալանթին տեղէն շշարժեցաւ . իւր յետին տիսրութիւնը կարծես սովորական երկիւղները բանի տեղ չէր դներ :

Պ. տը Ակլըֆօր իւր սենեակը դարձաւ :

— Հիմա, ըսաւ Վալանթին, ոչ պարտիզին դռնէն կրնաս դուրս ելնել և ոչ փողոցին — :

Մորէլ զարմանքով նորատի աղջկան երեսը նայեցաւ :

— Հեմա, ըստ Վալանթին, դուքս ելնելու միայն մէկ ներելի և ապահով Ճամբայ կայ, այն է՝ հաւիս սենեկէն — :

Վալանթին այս խօսքը ըսելով ոտք ելաւ :

— Եկու, ըստ անոր :

— Ուր, հարցուց Մոքսիմիլիէն :

— Հաւիս սենեակը :

— Պ. Նուարթիէլ սենեակը զամ՞ :

— Այո :

— Աղէկ մտածեցի՞ր, Վալանթին :

— Աղէկ մտածեցի և երկար ժամանակէ ՚ի վեր : Աջնարչի վրայ անորմ զատ բարեկամ չունիմ, և երկուքնիս ալ անոր պէտք ունինք Եկու :

— Աղէկ մտածէ, Վալանթին, ըստ Մորէլ նորատի աղջկան հրամայածը կատարելու երկմառութիւն ցուցընելով. մինչեւ հոս դալս անմտութիւն մ'էր որ ըրի . բայց հիմա աղէկ կ'ըզդամ ըրածս, աշացս պատանը հանեցի . և գուն այդքանը ինձ հրամայելու համար աղէկ մտածած ես, սիրելիդ իմ Վալանթին :

— Այո, ըստ Վալանթին, միայն հանիս մեռեալ մարմինը առանձին ձգելուս համար խիզճ կ'ընեմ, որուն քովը միալու համար յանձնառու եղած եմ :

— Վալանթին, ըստ Մորէլ, մահը ինքնին նուիրական է :

— Այո, պատասխանեց նորատի աղջիկը, սակայն երկար չտեսր, եկու — :

Վալանթին նրբաղաւիթիթէ մը անցնելով նուարթիէի սենեակը տանող փոքր սանդուխէ մը վար իջաւ :

Մորէլ ոտից ծայրերուն վրայ քալելով անոր ետևէնկ'երթարտ երբ գրան առջել հասան, ծերունի ծառային հանդիպեցան :

— Պարուա, ըստ Վալանթին, դուռը գոցէ, և մի թողուր որ մարդ ներս մտնէ — :

Եւ առաջ ինքը ներս մտաւ :

Նուարթիէ տակաւին իւր թեաթրուին վրայ նստած էր, առ

մենէն թեթև շշուկին ուշ դնելով, և բոլոր պատահածները ծերունի ծառայէն իմանալով, իւր անյագ նայուածքը դրան վրայ յարեր էր:

Վալանթինը տեսնելով իւր աչքը փայլեցաւ :

Նորատի աղջկան ընթացքին և դիմաց վրայ այնպիսի սովորականէ դուրս բան մը կար որ կաթուածահարը զարմացուց :

Ուստի ծերունոյն աչքը, որ 'ի սկզբան կը փայլէր, անոր այս ընթացքը տեսնելով սկսաւ հարցընելու շարժումներ ընել :

— Սիրելի հաւս, ըսաւ ցած ձայնով, աղէկ մտիկ ըրէ ինձի . զիտես որ Աէն-Մէրան հանիս ժամ մը կայ որ մեռաւ, և հիմա աշխարհի վրայ քեզմէ զատ մէկը չունիմ որ զիս սիրէ — :

Ծերունոյն աչքը մէջ անտահման գորովանաց զգացում մը տեսնուեցաւ :

— Ուրեմն իմ վիշտերս ու յոյսերս քեզէ յայտնել պէտք եմ, այնպէս չէ — :

Կաթուածահարը նշան ըրաւ թէ այս :

Վալանթին Մաքսիմիլիէնի ձեռքը բռնեց :

— Ուրեմն, ըսաւ անոր, տես այս պարոնը — :

Ծերունին իւր հետազոտիչ և սակաւ ինչ զարմացեալ նայուածքը Մորէլի վրայ յարեց :

— Պ. Մաքսիմիլիէն Մորէլն է, ըսաւ աղջիկը, Մարսիլիոյ այն պարկեցու վաճառականին որդին, որուն անունը անտարկոյս լսած ես :

— Այս, ըսաւ ծերունին :

— Մաքսիմիլիէն իւր հօրը անսաղիւտ անունը փառաւորելու վրայ է . քանզի երեսուն տարեկան հասակին մէջ հեծելազօրաց հրամանատար և Պատուոյ Լէզէոնի պաշտօնատար է — :

Ծերունին նշան ըրաւ թէ կը յիշէ :

— Ուրեմն, սիրելի հաւս, ըսաւ Վալանթին ծերունոյն առջեր ծնկան վրայ զալով և մէկ ձեռքովը Մաքսիմիլիէնը ցըւցընելով, կ'իմացընեմ որ ես Մորէլը կը սիրեմ և միայն անոր

Հետ կ'ուղեմ ամուսնանալ։ Եթէ զիս ուրիշի հետ ամուսնացընելու սովորեն, աւելի աղջկա ունիմ որ զիս սպաննեն և կամ եռ ինքդինքս պիտի սպաննեմ — :

Կաթուածահարին նայուածքը զանազան մտածութիւններ ունենալը կը յայտնէր :

— Պ. Մաքսիմիլիէն Մորէլը կը սիրես գուն, այնպէս չէ, սիրելի հաւս, հարցուց նորատի աղջիկը :

— Այո՛, ըստ անշարժ ծերունին :

— Աւրեմն մենք որ քու զաւակներդ ենք, կրնաս հօրս կամացը գէմ պաշտպանել դմբակ — :

Նուարթիէ իւր հանձարալի նայուածքը Մորէլի վրայ յարեց, որպէս թէ ըսել ուղէր. Կը մտածենք :

Մաքսիմիլիէն հասկըցաւ :

— Օրիորդ, ըստ, գուն նուիրական սրարոք մը ունիս հանիիդ սենեակը կատարելու. Կը ներե՞ս ինձ որ քիչ մը պարոն նուարթիէի հետ խօսելու պատիւն ունենամ :

— Այո՛, այո՛ —, ըստ ծերունւոյն աչքը :

Ետքը անհանդատութեամբ Աւալանթինի երեսը նայեցաւ :

— Ըսել կ'ուղես թէ քու մոտքդ ինչպէս ալիտի հասկընայ, այնպէս չէ. սիրելի հաւս :

— Այո՛ :

— Ո՛չ, անհոդ եղիր. այնչափ անդամ քու վրայօքդ խօսեցած ենք, որ քեզի հետ ինչ կերպով խօսիլս դիտէ — :

Ետքը սիրալիր ժպիտով Մաքսիմիլիէնի գառնալով, թէեւ այն ժպիտին տակը խորին տիրութիւն մը տիրած էր,

— Բոլոր դիտցածներս ան ալ դիտէ —, ըստ :

Աւալանթին ոտք ելաւ, Մորէլի աթոռ մը ներկայացուց եղարուային պատուիրեց որ մարդ չթողու որ ներս մտնէ, և խանդալատանօք իւր հաւը համբուրելին ու Մորէլի տիրադին ողջոյն մը տալէն ետեւ միկնեցաւ :

Այն ատեն Մորէլ նուարթիէին ցուցընելու համար թէ Աւալանթինի մտերմութիւնը սուցած է և իրենց բոլոր զազա-

նիքը կը Ճանչնայ , բառարանը , դրիչը և թուղթը առաւ ու սեղանի մը վրայ գրաւ :

— Բայց նախ ներեցէք ինձ , պարոն , ըստ Մորէլ , որ իմ ով ըլլալս , ինչպէս օրիորդ Վալանթինը սիրելս և ինչ դիտաւորութիւն ունենալս պատմեմ ձեզ .

— Մտիկ կ'ընեմ — , ըստ նուարթիէ :

Բաւական պատկառելի տեսարան մը կը ներկայէր այն ծերունին , որ թէպէտ ըստ երկութից անօդուտ բեռ մ'էր , բայց երկու ծաղկահաս , դեղեցիկ , ուժեղ և առոյզ սիրահարաց միակ պաշտպանը , միակ նեցուկը և միակ դատաւորն եղեր էր :

Իւր դէմքը , որ ազնուութեան և անաշոութեան նշանաւոր գրաշմբն ունէր , Մորէլի պատկառանք մը տուեր էր , որ դոզալով իւր պատմութիւնը սկսաւ :

Եյն ատեն երիտասարդը պատմեց անոր թէ ինչպէս Վալանթինը Ճանջեր և ինչպէս զան սիրեր էր . ինչպէս Վալանթին իւր առանձնութեանը և դժբաղդութեանը մէջ Մորէլի անձնութրութեան առաջարկութիւնը ընդուներ էր :

Երիտասարդը իւր ծննդեան , վիճակին և հարստութեանը վրայ ալ խօսեցաւ և քանի մը անդամ երբ կաթուածահարին միտքը հասկընուլու համար անոր երեսը կը նայէր , ծերունին իւր նայուածքովը իրեն կը պատասխանէր :

— Ըստ աղէկ , շարունակէ :

— Հիմա , ըստ Մորէլ երբ իւր պատմութեան առաջին մասը վերջացուց , հիմա որ իմ սէրս և ակնկալութիւններս ձեզի պատմեցի , կ'ուզէք որ դիտաւորութիւններս ալ իմացընեմ :

— Եյն , ըստ ծերունին :

— Մեր որոշումը այս էր — :

Եւ այն ատեն ամեն բան նուարթիէին պատմեց , թէ ինչպէս պարտիզակին մէջ կառք մը կ'ըսպասէր , ինչպէս Վալանթինը պիտի առնուր իւր քրոջը տունը տանէր , անոր հետ պիտի ամուսնար , և մինչեւ ու . աը Վիլլֆօրի ներողութիւնը ընգունելնին պիտի սպասէին :

— Աչ, ըստու Կոռարթիկ :

— Աչ կ'ըսէք, կրկնեց Մորէլ, աէտք չե՞նք այսպէս ընել :

— Աչ :

— Աւրեմն մեր որոշման հաւանութիւն չունիք :

— Աչ :

— Աւրեմն ուրիշ միջոց մը կայ — , ըստու Մորէլ :

Ծերունոյն հետազոտիչ նայուածքը հարցուց .

— Ո՞րն է :

— Կ'երթամ Պ. Փրանդ ո՛երինէն կը գտնեմ, շարունակեց Մաքսիլիլիկն . (ուրախ եմ որ Վալանթինի բացակայութեան ժամանակ կարող եղայ այս բանս ձեզ ըսելու,) և այնպէս կը վարուիմ անոր հետ, որով պիտի պարտաւորի պատուաւոր մարդու մը ընթացքը բռնելու — :

Նուարթիկի նայուածքը կը հարցընէր :

— Ըստ կ'ուղէք թէ ինչ պիտի ընեմ, կրկնեց երիտասարդը :

— Այս :

— Ի՞նչպէս որ ըսի՝ պիտի երթամ գտնեմ զինքը . օրիորդ Վալանթինի հետ ունեցած մեր սէրը սիլտի պատմեմ անոր . եթէ ազնուասիրտ մէկն է, իւր նշանածէն հրաժարելով իւր աշնուութիւնը պիտի յայտնէ, և այն ժամէն ցմահ անոր աննուէր բարեկամը պիտի ըլլամ . բայց եթէ կամ շահասիրութենէ և կամ ծաղրելի հպարտութենէ դրդեալ մերժէ և դէմ կենայ ինձ, փորձով անոր ցուցընելէս ետև թէ Վալանթին զիս կը սիրէ ու ինձմէ ուրիշ մէկու հետ չուզեր ամուսնանալ, անոր հետ պիտի մենամարտիմ զինուց ընտրութիւնն ալ անոր թողլով, և պիտի սպաննեմ զան և կամ ինքը զիս պիտի սպաննէ . եթէ ես սպաննեմ, Վալանթինի հետ պիտի չամուսնանայ, իսկ եթէ ան զիս սպաննէ, ասպահով եմ որ Վալանթին անոր հետ չամուսնանար — :

Նուարթիկ անպատճեմ ուրախութեամբ Մորէլի ազնիւ և անկեղծ դէմքը կը դիտէր, որուն վրայ իւր լեզուին յայտ-

նած զգացումները կը նկարուէին, և որուն զեղեցկութիւնը ըստ խօսքերուն հաստատութիւնն ու ճշմարտութիւնը կ'աւելցընէր:

Սակայն երբ Մորէլ իւր խօսքը վերջացուց, Կոռարթիէքանի մը անդամ աշքը զոյցէց, որ ինչպէս արդէն զիաենք՝ ոչ ըսելու եղանակն էր:

— Ոչ կ'ըսէք, ըստ Մորէլ, ուրեմն այս երկրորդ խորհուրդին աւ չէք հաւանիր, ինչպէս որ առաջինը արդէն մերժեցիք:

— Այո՛, չեմ հաւանիր, ըստ ծերը:

— Ուրեմն ինչ ընենք, պարոն, հարցուց ծերը: Տիկին ուր Սէն-Մէրանի վերջին խօսքերը այնպէս են որ ամուսնութիւնը չյապաղին, այս զիանալով զօրծերը իրենց ընթացքին թողովում — :

Կոռարթիէ անշարժ կեցաւ:

— Այո՛, կը հասկընամ, ըստ Մորէլ, ըսել կ'ուղէք թէ պէտք եմ սպասել:

— Այո՛:

— Բայց ուրչափ յապաղենք, այնչափ պիտի կորսնցընենք, պարոն, կըկնեց երիտասարդը: Վալանթին առանձին բլլալով ոյժ չունի, և մանկան պէս պիտի բռնադատեն զինքը: Այս տան մէջ պատահածները տեսնելու համար հրաշքով ներս մտնելով ու ձեր առջելը ներկայանալով, չեմ կրնար իրաւամբ յուսաւ որ այս բարեպատեհ առիթները ուրիշ անգամ պատահին: Հաւատացէք ինձ, ձեզի առաջտրկած երկու միջոցներէս մէկը կայ միայն առջանիս, որով կրնանք օդուտ քաղել, ներեցէք երիտասարդութեանս սնափառութեանը: Ըսէք միայն, այս երկուքէն ո՞րը նախամեծ ար կ'ընտրէք, կը հրամայէք որ օրիսրդ Վալանթինը առնում փախչիմ:

— Ոչ:

— Կ'ուղէք որ ոչ, ուկրինէն երթամ զանեմ:

— Ոչ:

— Բայց, ովք Աստուած իմ, որու միջոցաւ պիտի հասնի
մեզ այն օղնութիւնը որ երկինքէն կ'ըստասենք — :

Ծերունին իւր աչօքը ժապեցաւ, ինչպէս որ ամեն անդամ
երկնից խոռքը եղած ժամանակ ժպտելու սովորութիւն ունէր:
Ըստատուածութեան գաղափարը միշտ մնացած էր քիչ մը հին
ժադոպէնին սրտին մէջ:

— Բաղդին միջոցաւ, կրկնեց Ասբէլ:

— Ոչ:

— Զեր միջոցաւ:

— Այս:

— Զեր միջոցաւ կ'ըսէք:

— Այս, կրկնեց ծերունին:

— Ըրած հարցումն աղէկ կը հասկընաք, ոյարո՞ն: Կերեցէք կրկնելուս, ըստ որում իմ կեանքս ձեր պատասխանէն կախեալ է. մեր ազատութիւնը ձեր կողմէն ողիտի ըլլայ:

— Այս:

— Ազահանչվ էք:

— Այս:

— Կ'երաշխաւորէք:

— Այս — :

Կաթուածահարին նայուածքին մէջ այնպիսի հաստատութիւն մը կար, որ եթէ ոչ ուժին, զոնէ անոր կամացը վրայ տարակուսիլը անկարելի էր:

— Ո՛չ, չնորհակալ եմ, ովարո՞ն, հարիւր անդամ շնորհակալ եմ: Բայց ի՞նչպէս պիտի կրնաք այն ամուսնութեան դէմ գնել, գուք որ ձեր թեաթուին մէջ շղթայեալ, համը և անշարժ էք, միայն թէ Աստուծոյ մէկ հրաշքովը ձեր լեզուն բացուի, ու շարժիլ կարենաք — :

Ծերունոյն երեսը ժպիտով մը փայլեցաւ. անշարժ երեսի վրայ այս ժպիտը աչաց ժպիտէն աւելի դարմանալի էր:

— Ուրեմն սպասել պէտք եմ, հարցուց երիտասարդը:

— Այս:

— Բայց ամսանութեան դաշնագիրը պիտի ստորագրեն — :
Նուարթիէ նոյն ժպիտով ժպոեցաւ :

— Ըսել կ'ուղէք թէ պիտի չստորագրե՞ն :

— Այու, ըսաւ նուարթիէ :

— Աւրեմն դաշնագիրը պիտի չստորագրե՞ն կ'ըսէք, այնպէս
չէ, զուց Մորէլ, Ո՛չ, ներկցէք, պարօն, երբ մեծ ելջան-
կութեան մը լուրը կ'ընդունի մարդ, ներելի է անշուշտ որ
տարակուսի : Աւրեմն դաշնագիրը պիտի չստորագրուի :

— Ոչ —, ըսաւ կաթուածահարը :

Մորէլ այս ապահովութեան վրայ դարձեալ հաւատալու-
կ'երկմտէր :

Անդամալլյած ծերունոյ մը այս խոստումը տարօրինակ կ'ե-
րեէր իրեն . քանզի կրնար չէ թէ կամքի զօրութենէն, այլ
զործարանաց տկարութենէն յառաջազայիլ :

Եւր յիմարութիւնը չճանչցող անմաին իւր կարողութենէ
վլեր զործադրութիւն պահանջելը բնական չէ :

Կամ երիտասարդին երկմտութիւնը դիտելուն, և կամ ա-
նոր ցուցուցած հնագանդութեան վրայ վստահ չըլլալուն
նուարթիէ իւր նայուածքը անոր վրայ յարեց :

— Ի՞նչ կ'ուղէք, պարօն, հարցուց Մորէլ. կ'ուղէք որ
բան մը չընելու համար ըսած խոստումն նորողէմ — :

Նուարթիէի նայուածքը յարած և անշարժ մեաց, որպէս
թէ ըսել ուղէր թէ խոստումը բաւական չէ : Եաքը նայուածքը
անոր ձեռաց վրայ յարեց :

— Կ'ուղէք որ երդնո՞ւմ, պարօն, հարցուց Մաքսիմիլիէն :

— Այու, ըսաւ կաթուածահարը նոյն վսեմութեամբ, կ'ու-
ղեմ որ երդնուք — :

Մորէլ հասկըցաւ որ ծերունին այն երդման մեծ կարեռ-
ութիւն կու տար : Աւսի ձեռքը երկնցուց :

— Կ'երդնում պատույս վրայ, ըսաւ, որ պիտի սպասեմ
մինչեւ որ Պ. Ֆրանզի գէմ ըսած որոշումիդ 'ի զործ գնէք :

— Աղէկ, ըսին ծերունոյն աշքերը :

— Հիմա, պարոն, կը հրամայէք որ մեկնիմ, հարցուց Մորէլ:

— Այս:

— Առանց օրիորդ Վալանթինը տեսնելու:

— Այս — :

Մորէլ նշան բրաւ թէ հնազանդելու պատրաստ է:

— Հիմա, շարունակեց Մորէլ, պիտի ներէք, պարոն, որ ձեր որդին զձեղ համբուրէ, ինչպէս որ ձեր աղջիկը ասկէք մը առաջ համբուրեց — :

Կուտարթիելի աշաց նշաններէն կարելի չէր սխալիլ:

Երիտասարդը իւր շուրջերը ծերունիին ճակատին վրայ յարեց Ճիշդ այն տեղը, ուր նորատի աղջկան շուրջերը գլաց չէր էին:

Ետքը երկրորդ անգամ ծերունին ողջունելով դուրս ելաւ:

Գաւաթին մէջ Պարուային հանդիպեցաւ, որ Վալանթինէն պատուիրուած ըլլալով՝ Մորէլին կ'ըսպասէր, և իրեն ընկերանալով մութ նրբագաւթէ մը անցուց զինքը, որ դէպ ՚ի պարակին վրայ բացուող դուռ մը կ'առաջնորդէր:

Մորէլ դուրս ելնելով իսկոյն վանդակներուն քովշ հասաւ:


Կոշտարի ծառէն պատին վրայ ելաւ, և սանդուխին վրայէն մանրէրկրորդի մը մէջ իւր պարակղը իջաւ, ուր կառքը միշտ իրեն կ'ըսպասէր:

Ըուտով կառքը հեծաւ, և իւր կրած յուղմունքէն յոդնած, թէեւ սիրտը աւելի աղատ կ'եւեէր, դէպ ՚ի կէս զիշերին Մէսլէ փողոցը հասաւ, անկողինը մօսաւ և խորունկ արքեցութեան մէջ եղողի մը պէս քնացաւ:



ԳԼՈՒԽ ՀԱՅ

ՎԵԼՔՈՐԻ ԷՆՑԵՆԵՐԸ ՅԻՒԽՄԸ


 Երանի օր ետքը, առտուան ժամը տասին,
 Պ. առ Վիլքֆորի դրան առջևը մծ
 բազմութիւն մը ժողվուեր էր, և զըւ-
 խաւորաբար Սէնթ-Օնօրէ արուարձանին և
 Բէքինիէր փողոցին մէջ սդոյ և մասնաւոր անձանց
 կառքերու երկար շարք մը կը տեսնուէր:
 Այս կառքերէն մէկը միւսներէն տարրեր ձեւ մը ունէր և
 երկար ճամբարպութիւն մը բրած կ'երեւէր:
 Աեւ հերկուած զոյ սայլի մը կը նմանէր, որ յուղարկա-
 ւորաւթեան հանդիսին ամենէն առաջ հասնողներէն մէկն էր:
 Այն ատեն ամեն մարդ իմացաւ որ զարմանալի գիպմամբ
 մը Սէն-Մէրանի Պ. մարքէզին գիտակը այն կառքին մէջ կը
 զտնուէր, և թէ մէկ յուղարկաւորութեան հանդէսը կատա-
 րելու համար եկողները երկու մռեալներու թաղման պիտի
 դտնուէին:

Յուղարկաւորութեան հանդիսին դտնուողները խիստ բազ-
 մաթիւ էին. քանզի Սէն-Մէրանի Պ. մարքէզը, որ Լուի
 Ժ. և Շարլ Փ. թաղաւորաց խիստ հաւատարիմ և խիստ ջերմ
 բարձրաստիճան պաշտօնակալներէն մէկն էր, խիստ շատ բա-
 րեկամներ ունէր, որոնք Վիլքֆորի կողմանէ եկողներուն հետ
 միանալով, մեծ խումբ մը կը կաղմէին:

Խսկոյն կառ ավարութեան իմաց տրուեցաւ , և հրաման առ նուեցաւ որ երկու յուղարկաւորութիւնները մրատեղ կատարեն :

Սկզ զարդերով զարդարուած երկրորդ կառք մըլ Պ . տը Վ. իլլոֆօրի տան առջևը բերին և Պ . աը Սէն-Մէրանի գիակը պարունակող արկղը դոյ սայլին մէջէն յուղարկաւորութեան կառքին մէջ փոխադրեցին :

Երկու մեռեալները Բէր-Լաշէղի դերե զմանատան մէջ պիտի թաղուէին , ուր երկար ժամանակէ ՚ի վեր Պ . տը Վ. իլլոֆօր իւր բոլոր ընտանեաց համար մասնաւոր շիրիմ մը կանգներ էր :

Արդէն այս շիրմին մէջ թաղուած էր ողարմելի Ռէնէին մարմինը , որուն հայրն ու մայրը տասը տարիէ ՚ի վեր անորմէ բաժնուելէն ետե՝ զինքը դանելու կու դային :

* Բարիզի ժողովուրդը , որ միշտ հետաքրքիր է և այսպիսի սդոյ հանդէսներու մէջ իրար կ'անցնի , երկիւզած լոռութեամբ տյն մեծաշուք ուղեկիցներուն անցնելը տեսաւ , որոնք գէու ՚ի վերջին կայանը կը տանէին այն երկու տնձանց գիակները , որոնք հանձարավ ու արժանաւորութեամբ հոչակառ եղաղ հին աղնուականութեան կը վերաբերէին :

Պոշան , Ալզէր և Շաթօ-Ռիրնօ մէկ կառքի մէջ դանուելով՝ այն զրեթէ յանկածական մաշուան վրայ կը խօսէին :

— Անցեալ տարի Ալձէրիայէն դառնալուս էր որ տիկին տը Սէն-Մէրանը Մարսիլիա տեսայ , կ'ըսէր Շաթօ-Ռիրնօ . անոր կատարեալ առազդութիւնը , կորովամութիւնը և զարմանալի աշխաւմութիւնը գիտելով , կ'ըսէի թէ հարիւր տարի ապրելու կին մ'է : Դիտէք քանի տարեկան էր տիկինը :

— Ֆրանզէն լսած եմ թէ վաթսուն և վեց տարեկան էր , պատասխանեց Ալզէր : Բայց տիկինը պասաւութենէն չմեռաւ , այլ մարքէզին մահաւանը վրայ դգացած վիշտերէն : Կ'երեւի թէ անոր մահը իրեն սաստիկ հարուած մը ըլլալով , իւր մահուան ալ պատճառ եղաւ :

— Բայց վերջապէս ինչ հիւանդութենէ մնուաւ , հարցուց Պոշան :

— Կարծեմ ուղղային հիւանդութենէ և կամ յանկարծական կան կաթուածէ . երկուքն ալ նոյնը ըսել չէ:

— Գրեթէ:

— Կաթուածով մռնելուն հաւատալը գժուար է , ըսաւ Պոշան : Տիկին տը Սէն-Մէրան , զոր ևս ալ կենացս մէջ մէկ կամ երկու անդամ տեսած եմ , կարձահառակ , վլտիտ , և չղուտ քան թէ արիւնաշատ անձ մ'էր : Տիկին տը Սէն-Մէրանի մարմայ կազմութիւնը ունեցող անձանց վիշտերէ կաթուածամահ ըլլալը շատ քիչ անդամ տեսնուած է :

— Տիկինը ո՛ր հիւանդութենէ կամ ո՛ր բժիշկէն կ'ուզէ թող մռնի , ես կը տեսնեմ որ անոր մահուամբը ու տը Վ.իլը Փօր կամ օրիորդ Վալանթին , և կամ լաւ ևս ըսենք՝ մեր ֆրանդ բարեկամը դեղեցիկ ժառանգութեան մը տէր կ'ըլլայ . կարծեմ ութոսուն հազար ֆրանք եկամուտ ունի :

— Այս , և Կուարթիէ Տիկին ժազոպէնին մահուամբն ալ ոյիտի կրկնապատկուի :

— Բայց յամառ հաւ մը կ'երեի ան , ըսաւ Պոշան . կարծեմ մահուան հետ զրաւ դրած է որ իւր բոլոր ժառանգորդները թաղէ . և ստուդիւ պիտի յաջողի : Աս այն 93 թուականին ծեր դաշնակիցն է , որ 1814ին Կաբոլէնին կ'ըսէր .

« Դուք կը տկարանաք , ինչու որ ձեր տէրութիւնը իւր աճմանը ժամանակ յողնած նորատի բունի մը կը նմանի : Հասարակապետութիւնը իրը նեցուկ առեք , լաւ կազմուած՝ պատերազմին դաշտը դառնանք , և ես ձեզ Տիկինդ հազար զինուոր , ուրիշ Մարէնկօ մը և երկրորդ Օսմէրլից մը կը խոստանամ :

« Գաղափարները չեն մռնիր , Վեհափառ տէր , այլ երբ բեմն կը ննջեն , բայց քնանալէն առաջ եղածէն աւելի ուժով կ'արթնանամ » :

— Կ'երեի թէ , ըսաւ Ալլէր , իրեն համար մարդիկ դաշափառներու պէս են . բայց ես անհամբերութեամբ կ'ուզէի զիտնուլ թէ : Փրանդ տ'էրինէն ինչպէս ոլիտի յարմարի իւր

ծերունի աներին հետ , որ պիտի չուղէ անոր կնոջմէն բաժ-
նուիլ . բայց ուր է ֆրանդ :

— Պ . աը Վիլքֆօրի հետ առաջին կառքին մէջն է . ար-
դէն Վիլքֆօր իւր ընտանիքէն կը համարի զան — :

Այս յուղարկաւորութեան ընկերացող կառքերուն գրեթէ
ամսնուն մէջ մի և նոյն խօսքերը կ'ըլլային . այսպիսի շուտ
և իրարու ետև պատահած երկու մահուան վրայ զարմացած
էին , բայց և ոչ մէջ կառքին մէջ կը կասկածէին այն սոսկալի
զաղունեաց վրայ , զոր Պ . ա'նքրինեի Պ . աը Վիլքֆօրին
յայտներ էր անոր պարտիղին մէջ :

Ժամ մը ճամբայց ընկելէն ետե՝ գերեզմանատան զուռը
հասան :

Օդը հանդարտ բայց տիսուր էր և չետեաբար կատարուած
սղոյ հանդէսին հետ ներդաշնակեալ կ'երեէր :

Դէպ 'ի զերեզմանը յառաջացող բազմութեան մէջ՝ Շա-
թօ-Ռընօ Մորէլը տեսաւ , որ առանձին կառքով եկեր էր :

Երկու կարգ զեղձիներով ճամբուն վրայ առանձին , լոիկ
և զունատեալ կը յառաջանար :

— Գուք ալ հոս էք , ըսաւ Շաթօ-Ռընօ իւր թեր երի-
տասարդ հարիւրապետին թեկին տակը անցընելով . ուրեմն Պ .
աը Վիլքֆօրը կը ճանչնաք , և Բնչպէս կ'ըլլայ որ զշեզ ա-
մննեին անոր տունը չոեսայ :

— Պ . աը Վիլքֆօրը չեմ ճանչնար , պատասխանեց Մո-
րէլ , այլ տիկին աը Սէն-Մէրանը կը ճանչնայի — :

Այս միջոցին Ալպէր Փրանզին հետ անոնց մօտեցաւ :

— Այս տեղս ներկայացընելու յարմար աեղ մը չէ , ըսաւ
Ալպէր . բայց հոդ չէ . մենք աւելորդապաշտ չենք : Պ . Մո-
րէլ , ներեցէք ինձ որ Պ . Փրանզ տ'էրինէն ձեղ ներկայա-
ցընեմ , ճամբորդութեան աղնիւ ընկերս է , որուն հետ Ի-
տալիս պտըտեցանք : Սիրելիդ իմ Փրանզ , կը ներկայացընեմ
քեզ Պ . Մաքսիմիլիէն Մորէլ իմ աղնիւ բարեկամս , զոր բա-
ցակայութեանդ ժամանակ ճանչնալու ոլատիւն ունեցայ , և

որուն վրայ խօսիլս պիտի լսես ամեն անդամ՝ որ քաջարութեան, կորովամոռութեան և մարդասիրութեան խօսքը բացուի:

Մորէ լ վայրիեան մը ի՞նչ ընելիքը չէր դիտեր. կը մասձէր թէ ի՞նչ անտանելի կեղծաւորութիւն մ'էր դրեթէ բարեկամորէն այն մարդը ողջունելը, որուն հետ ՚ի ծածուկ կը մրցէր. սակայն իւր երդումը և պարագայից ծանըութիւնը միտքը բերելով, իւր դիմաց վրայ բան մը չայտնելու համար իւր կրցածն ըրաւ, և խոչեմութեամբ Ֆրանզը բարեկայ:

— Օրիորդ որ Ակիլիֆօր խիստ տիսուր էր, այնպէս չէ, ըստ Տըպրէ Ֆրանզին:

— Այս, պարոն, չափէ դուրս, այս առառւ այն աստիճան աւրուեր էր որ հաղիւ թէ ճանչցայ զան — :

Այս պարզ խօսքերը Մորէ լի սիրուը վիրաւորեցին. ուրեմն Ֆրանզ Վալանթինը տեսեր և անոր հետ խօսեր էր.

Այն ատեն աշխոյժ երիտասարդ պաշտօնատարը երդումը չդրժելու համար բոլոր ոյժը ՚ի դործ դրաւ:

Շաթօ-Արնոյի թեր մանելով դէս ՚ի Ակիլիֆօրի շիրիմը տարաւ զան, որու առ չեւ արդէն երկու մեռեալները բերեր էին:

— Ի՞նչ չգեղ բնակութիւն, ըստ Պոշան փառաւոր շիրիմը դիտելով, ամառուան և ձմեռուան ապարանք մ'է այս, որուն մէջ ձեր կարդն ալ պիտի զայ բնակելու, սիրելիդ իմ տ'էրինէ, ըստ որում դուք ալ նոյն ընտանիքէն եղաք: Ես փիլիսոփայի սէս դիւլական տնակ մը, ծառերու տակ պարզ հիւղ մը կ'ուղեմ, և ողորմելի մարմնոյս վրայ այնչափ քանզակութած քարեր կը լին չեմ ախորժեր . . . : Քաջալերութիւն, Ֆրանզ, ձեր կինը ժառանդութեանց տէր կ'ըլլայ:

— Ստուդիւ, Պոշան, անտանելի մարդ մ'էք, ըստ Ֆրանզ: Ձեր քաջաքական դրժերը սովորեցուցած են զձեղ ամեն բանի վրայ ծիծաղիլ, և դործով զբաղեալ մարդիկ սովորութիւն ունին ամեննին բանի մը չաւատալ: Բայց վերջապէս, Պոշան, երբ հասարակ մարդոց մէջ զանուելու պատիւը ու քաղաքական ատեանէն վայրիեան մը հեռանալու բարեբաղդու-

թիւնն ունենաք, ջանացէք ձեր սիրտը միատեղ կրելու, զոր պատկամաւորաց կամ ծերակուտի ժողովոց գիւանատանց մէջ կը թողուք:

— Ե՞ս, ինչ է մարդուս կեանքը, ըստ Պոշան, բայց եթէ մահուան նախասենելին մէջ սպասել մը:

— Թող ուզածը խօսի —, ըստ Ալպէր, և Գրանդին հետ հեռացաւ՝ թողով Պոշանը որ Տըղբէի հետ իւր փիլմառփայական խօսքերը շարունակէ:

Վիլֆօրի ընտանեաց շիրիմը սպիտակ քարերով և դրեթէ քսան սոք բարձրութեամբ քառակուսի մը կը կաղմէր:

Ներքին կողմը երկու մասի բաժնուած՝ Սէն-Մէրանի ընտանիքը Վիլֆօրի ընտանիքին կ'որոշէր, և իւրաքանչիւր բաժնում իւր մասնաւոր գուսն ուներ:

Այս շիրիմը ուրիշ գերեզմաններու պէս իրարու վրայ զետեղուած անյարմար դարաններ շուներ, որոնց մէջ մեռեալները կը պահեն այնպիսի արձանադրութեամբ մը, որ ցուցակի կը նուանի. արտաքին պղնձի գոնէն տիսուր և վայելուչ նախասենեակ մը կը աեսնուէր պատով մը բոն գերեզմանատեղին բաժնուած:

Եւ այս պատին մէջ աեղեն այն երկու դոները կը բացուէին, որոց վրայօք հիմա կը խօսէինք և ուրկից Վիլֆօրի և Սէն-Մէրանի գերեզմանները կ'երթուէր:

Անոնց մէջ պիտի կրնար մարդ աղատութեամբ իւր վիշտերը բանալ առանց տեսնուելու այն խենթ այցելուներէն, որոնք Բէր-Լաշէդի գերեզմանատունը կու դան կամ զիւղական շրջագայութեան մը նախատակաւ և կամ սիրահարական ժամադրութեամբ մը, և անոնց երգերը, ձայները և շրջադայութիւնները կամ արտասուածոր աղօթքները պիտի չկընային շփոթել:

Երկու գիակները աչ կողմի գերեզմանին մէջ փոխադրուեցն, քանզի Սէն-Մէրանի ընտանեաց գերեզմանը աչ կողմը կը զանուէր, և արկղները պատըաստուած պատուանդաններու վրայ տեղաւորեցին:

Ալիքֆոր, Ֆրանկը և քանի մը մօտ ազգականեցը շիրմին սելքին կողմը մտան:

Կրօնական արարողութիւնները շիրմին դրան առջև կատարուած ըլլալով և մոռեալներուն վրայ դամբանական ձառ մը չխօսուելով, բազմութիւնը իրարմէ բաժնուեցան :

Մէկ կողմէն Ծաթօ-Ռընօ , Ալպէր և Մորէլ մեկնեցան , և
միւս կողմէն Տբարէ և Պոշան :

Գրանց Պ. տը Ակլբօրի հետ մնաց :

Գերեզմանատան դրան առջև Մորէլ պատճառ մը զանելով կեցաւ :

Գրանդին և Պ. Վ. Ա. իլլոֆօրին սղոյ կառքով միատեղ գուրս
ելնելը տեսաւ, և երկուքնուն դլուխ դլուխի տալը զէշ նշան
մը շամարեց:

Աւստիք Քարիկ վերադարձաւ, և թէպէտ Շախօ-Ռընոյի և
Ալպէրի հետ մէկ կառքի մէջ կը գտնուէր, սակայն երկու
երիտասարդներուն խօսակցութենէն բառ մը անզամ չլսեց:

Իրօք՝ Փրանդ Պ. աը Վ.իլըֆօրէն բաժնուելու ատեն՝ թագաւորի զործակալը բսեր էր.

— Պ. սեպուհ, Երբ պիտի տեսնեմ զձեզ:

— ԵՐԲ ՈՐ ՌԵԳԵՔ, պարոն, պատասխանեք էք Փրանդ:

— Կարելի եղած ին չափ շուշառվ ։

— 26 р Հրամանները կատարելու պատրաստ եմ, պարօն .

կը Հաջիբը որ միատեղ երթանք :

— Եթէ ձեզ անհանդստութիւն մը չեմ պատճառեր,

— Узбеки бўн — :

Այսպէս ապառնի աները և փեսայցուն նոյն կառքը վերստին հեծանիքները անոնց անցնելը տեսնելով մեծ անշանդանութիւն մը կ'ըգդար:

Վելը Փօր և Ֆրանզ Սէնթ-Օնորէի արուարձանը վերապարհան :

Թագաւորի զործակալը մէկուն սենեակը շմտած, և իւր աղջկան կամ կնոջը չետ շխոսեցած՝ Երիտասարդը իւր դահմէցը չքաւիրեց և անոռ աթոռ մը նկոնաւառոնի ուժ.

— Պ. ա'կրինէ , ըսաւ , տիկին տը Սէն-Մէրանի փափաքը ըսեմ ձեզ , և ժամանակին ալ դուցէ անյարմար չըլլայ , երբ մտածենք որ մոռեալներուն կամքը կատարելը անոնց գերեզմանին վրայ դրուելու առաջին նուերն է . տիկին տը Սէն-Մէրան անցեալ օր իւր հոգեվարքի անկողնոյն մէջ եղած ժամանակ խնդրեց որ Վալանթինի ամուսնութիւնը չուշացընենք : Գիտէք որ Հանդուցելոյն դործերը կատարեալ կարդի դրուածեն . իւր կտակը Սէն-Մէրաններուն բոլոր հարստութիւնը Վալանթինին կ'ապահովցընէ . նօտարը երէկ կտակադիրը ցուցուց ինձ , որով ամսուսութեան դաշնագիրը շնորհու կարող պիտի ըլլանք : Կրնաք նօտարը տեսնել և իմ կողմէս կտակադիրը խնդրել և աչքէ անցընել : Նօտարը Պ. Տէշանն է , որ Սէնթ-Օնօրէ արուարձանին , Պօվօ Հրապարակին մէջ կը դտնուի :

— Պարոն , պատասխանեց ա'կրինէ , Վալանթին այնողէս արտասուաց մէջ ըլլութիւն դուցէ ամսուսինի մը մտածելու ժամանակ չունի . ստուդիւ ես կը վախնամ որ . . . :

— Վալանթին իւր Հանիին վերջին կամքը կատարելէն աւելի մեծ փափաք մը չունի . ըսաւ Վ.իլլֆօր զան ընդմիջելով . ուստի կ'երաշխաւորեմ զձեղ որ այս կողմանէ արդելք մը չկայ :

— Եթէ այդպէս է , պատասխանեց Ֆրանդ , իմ կողմանէս ալ ամնելին արդելք մը չունիմ . ինչպէս պատշաճ կը տեսնէք այնպէս ըրէք . խօւքս ձեզ տուած եմ , ոչ միայն ուրախութեամբ , այլ և զիս երջանիկ համարելով խոստումն պիտի կտարարեմ :

— Աւելմն , ըսաւ Վ.իլլֆօր , սպասելու ամնելին արդելք մը չունինք , դաշնագիրը ասկէ երեք օր առաջ պիտի ստորագրուեր , բոլորովին պատրաստ պիտի դտնենք կայն , և այժօր կրնաք ստորագրել :

— Բայց սուզը , ըսաւ Ֆրանդ երկմանելով :

— Անչող եղիք , պարոն , կրկնեց Վ.իլլֆօր . օրինրդ մը

Վիլլֆօր՝ սղոյ համար որոշուած երեք ամիսները Սէն-Մէրանի կալուածին մէջ կ'անցընէ, վասն զի այն կալուածը իրն է։ Եթէ ուզէք ութ օբէն՝ անձայն և առանց հանդէսի քաղաքական ամուսնութիւնը հոն կը կատարենք։ Տիկին տը Սէն-Մէրանին բաղձանքն ալ այն էր որ իւր թոռը այն կալուածին մէջ ամուսնանայ։ Ամուսնութիւնը կատարելէն ետե՛ կրնաք Բարիդ վերադառնալ, և ձեր կինը իւր մօրուին հետ սպոյ ժամանակը կը լրացընէ։

— Ինչպէս որ կը հաճիք, պարոն, ըսաւ Գրանզ։

— Ուրեմն, կրկնեց Պ. տը Վիլլֆօր, հաճեցէք կէս ժամ սպասել. Վալանթին հիմա սրահը կ'իջնէ, Պ. Տէշանը կանչել կու տամ, դաշնագիրը կը կարդանք և շուտով կ'ըստորագրենք, և այս իրիկունէն՝ Վալանթին տիկին տը Վիլլֆօրի հետ Սէն-Մէրանի կալուածը կ'երթան, ուր ութ օբէն մնաք ալ կ'երթանք զանոնք գտնելու։

— Պարոն, ըսաւ Գրանզ, խնդիրք մը ունիմ ձեզ ընելու։

— Ի՞նչ կը խնդրէք։

— Կը խնդրեմ որ Ալզէր տը Մորսէրֆ և Ռաուլ տը Շաթօ-Ռընօ ստորագրութեան ժամանակ ներկայ գտնուին. դիտէք որ անոնք իմ վկաներս են։

— Կէս ժամը բաւական է անոնց իմացընելու համար. դուք կ'ուզէք երթալ զանոնք կանչել թէ մարդ զրկենք։

— Աւելի կ'ընտրեմ որ ես երթամ, պարոն։

— Ուրեմն կէս ժամէն կ'ըսպասեմ ձեզ, սեպուհ, և կէս ժամէն Վալանթին պատրաստ պիտի ըլլայ —։

Գրանզ Պ. տը Վիլլֆօրը բարեեց և մեկնեցաւ։

Հազիւ թէ երիտասարդին վրայ փողոցին գուռը զոյուեցաւ, որ Վիլլֆօր Վալանթինի մարդ զրկեց իմացընելով որ կէս ժամէն սրահը իջնէ, վասն զի նօտարին և Պ. տէրինէի վկաներուն կ'ըսպասեն։

Այս անակնկալ լուրը տան մէջ մեծ ազդեցութիւն մը պատճառեց։

Տիկին տը Վ.իլլֆօր չուզեց հաւատալ, և Վ.ալանթին կայ ծակի հարուածէ դարնուածի սլես ինքինքը կորսնցուց :

Իւր բոլորտիքը նայեցաւ թէ արգեօք որմէ կընար օգնութիւն խնդրել :

Աւզեց իւր հաւին սենեակը իջնել, բայց սանդուխին վրայ Պ. տը Վ.իլլֆօրի հանդիպեցաւ, որ իւր թեկն բռնելով սրահը տարաւ :

Կախասենեկին մէջ Վ.ալանթին Պարուային հանդիպեցաւ, ու յուսահամեալ աշօք անոր նայեցաւ :

Վ.ալանթինի հասնելէն վայրկեան մը ետքը՝ տիկին տը Վ.իլլֆօր իւր փոքր Էտուարին հետ սրահը մտաւ :

Յայտնի կ'երևէր որ նորասի կինը ընտանեաց վշտաց մասնակից եղած էր :

Գունատեալ և սաստիկ յոդնած կ'երևէր :

Սրահին մէջ հստաւ, Էտուարը իւր ծնդացը վրայ առաւ, և մերթ ընդ մերթ զրեթէ ջղային յուզմամբ իւր կուրծքին վրայ կը սեղմէր այն փոքր մանուկը, որուն վրայ իւր բոլոր կեանքը կենդրոնացած կ'երևէր իրեն :

Հաստ չանցաւ դաւիթին մէջ մանող երկու կառքերու ձայնը լսուեցաւ :

Մէկը նոտարինն էր, միւսը Փրանգին և իւր բարեկամներուն :

Մէկ վայրկենէն ամեն մարդ սրահը ամփոփուեցան :

Վ.ալանթին այնչափ գեղներ էր, որ քունքին կապայտ երակները աչաց բոլորտիքը և այտերուն վրայ նկարուեր էին :

Փրանգ չէր կընար իւր սրտին բաւական սաստիկ յուզմունքը զսպել :

Հաթօ-Ռընօ և Ալպէր զարմացմամբ իրարու երեսը կը նայէին :

Քիչ մը առաջ կատարուած արարողութիւնը սկսելու արարողութենէն աւելի տիսուր չէր երեեր իրենց :

Տիկին տը Վ.իլլֆօր թաւշեայ վարագոյրի մը ետին ստուերին մէջ նսաեր էր, և որովհետեւ միշտ իւր զաւկին վրայ

Հակած էր, դժուար էր անոր սրափն մը ջ անցածները դիմացը վրայ նշմարել:

Պ. աը Վիլլֆօր ըստ սովորաւթեան անկարեկիր կ'երեւէր:
Նօտարը օրինաց պաշտօնէից սովորական եղանակաւը թուղթ
թերը սեղանին վրայ դնելէն, իւր թեաթոռին վրայ նստելէն
ու ակնոցը դնելէն ետե՝ ֆրանգին դառնալով,

— Պ. ֆրանզ աը քէսնէլ, տ'էրինէ սեպուհը գո՞ք էք,
հարցուց անոր, թէե շատ աղէկ կը ճանչնար զան:

— Այս, պարոն —, պատասխանէց ֆրանզ:

Նօտարը խոնարհութիւն մը ըրաւ:

— Աւրեմն պէտք եմ իմացընել ձեզ, պարոն, ըստ, և
այն՝ Պ. աը Վիլլֆօրի կողմանէ թէ Պ. Նօտարթիէ՝ օրիորդ
աը Վիլլֆօրի հետ ամուսնանալու որոշումնիդ լսելով իւր
թոռին համար ըրած տնօրէնութիւնները փախեց, և բոլորս
վին կը զրկէ զան իւր հարստութեանց ժառանգութենէն, զո-
րոնք անոր պիտի թողուր: Կը փութամ աէն լցընելու, շա-
րունակեց նօտարը, թէ կտակարարը իւր հարստութեանց
միայն մէկ մասէն զրկելու իրաւունք ունենալով, և բոլորէն
զրկել ուզելով, իւր կտակը ոյժ չունի, հետեւարար անվաւերէ:

— Այս, ըստ Վիլլֆօր. միայն թէ կանխաւ կ'իմացընեմ:
Պ. տ'էրինէին, թէ քանի որ ես կենդանի եմ՝ հօր կտա-
կին գէմ դատ պիտի չբանայ, քանզի իմ պաշտօնս չներեր
դայթակղութեան մը ստուերն անգամ ցաւցընել:

— Պարոն, ըստ ֆրանզ, կը ցաւիմ որ օրիորդ Վալան-
թինի առջեւ այսպիսի խնդիր մը բացուեցաւ: Իւր հարստու-
թեան զումարին վրայ երբէք հարցուփորձ ըրած չեմ, որ որ-
շափ և փոքր ըլլայ, անջուշ իմ հարստութենէս զերազանց
է: Պ. աը Վիլլֆօրի հետ ըրած խնամութեանը մէջ իմ ըն-
տանեացս փնտոածը անոր բարի համբաւը, և իմ փնտոածս
երջանկութիւնն է — :

Վալանթին շնորհակալութեան աննշմարելի նշան մը ըրաւ,
ինչ ատեն երկու անձայն արտասուաց կաթիլներ այտերուն
վրայէն վար դլորեցան:

— Չեք ակնկալութեանց մէկ մասին կորուսաը՝ ի բաց առ
նելով, ըստ Ակլըֆօր իւր փեսայացուին, այն կոտակը զձեղ
վիրաւորելու նպատակ մը չունի, այլ Պ. Կուարթիէի մտքի
տկարութիւնը կը ցուցընէ։ Հօրու անհաջոյ երեցածը օրիորդ
Վալանթինին ձեզի հետ ամուսնանալը չէ, այլ Վալանթի-
նին ամուսնութիւնը. օրիորդին ուրիշ որ և է մէկու հետ ա-
մուսնանալը նոյն ցաւը պիտի ազգէր անոր։ Ծերութիւնը
ինքնասէր է, պարոն, և օրիորդ տը Ակլըֆօր Պ. Կուար-
թիէին մտերիմ ընկերն է, բայց ամուսնանալէն ետե ան-
ցուշա պիտի չկրնայ նոյն ընկերութիւնը շարունակել։ Հայրս
ոզորմելի վիճակի մը մէջ դտնուելուն՝ շատ քիչ անդամ ծանր
խնդրոց վրայ կը խօսինք անոր հետ, իւր մտքի տկարութիւնը
չներեք որ զանոնք մատիկ ընէ, և կատարեալ համոզուած եմ
որ իւր աղջիկ թոռան ամուսնութիւնը յիշած ատենը՝ անոր
զաւկին կրելու փառաւոր անունը անգամ մոոցած է —։

Պ. տը Ակլըֆօր հազիւ թէ ոյս խօսքերը վերջացուցեր էր,
երբ սրահին դուռը բացուելով՝ Պարուա ներս մտաւ։

— Պարոնայք, ըստ ծառան այնպիսի ձայնով մը, որ այս
պիսի հանդիսաւոր պարագայի մէջ իւր տէրերուն հետ խօ-
սող ծառայի մը համար խիստ համարձակ կ'երեէր, պարոն
Կուարթիէ տը Ակլըֆօր հիմա այս ժամուս կը խնդրէ պարոն
Փրանզ տը Քէսնէլ, ո'հիքինէ սեպուհին հետ խօսիլ —։

Կուարթին պէս ծառան ալ նշանածին ամեն տիտղոսները
կը յիշէր, որպէս զի անձանց սխալունք մը չըլլայ։

Ակլըֆօր սարսուաց, տիկին տը Ակլըֆօր իւր որդին ծնդացը
վրայէն իջեցուց, Վալանթին դունատեալ և արձանի մը պէս
լը իկ ոտք ելլաւ։

Ալպէր և Շաթօ-Բընօ առաջինէն աւելի մեծ զարմացմամբ
իրարու նայեցան։

Կուարը Ակլըֆօրի երեսը նայեցաւ։

— Վակարելի է, ըստ թագաւորի զործակալը, Պ. ո'հի-
քինէն այս ժամուս չկրնար սրահին դուրս ելնել։

— Պ. Նուարթիէ տէրս հիմա կը խնդրէ կարեռը դործոց վրայօք Պ. Ֆրանզ տ'էրինէին հետ խօսիլ:

— Աւրեմն Նուարթիէ հաւը կը խօսի հիմա —, հարցուց իսուար իւր սովորական յանդղնութեամբը:

Այս հանձարեղ խօսքը տիկին տը Վիլֆօրի ժպիտն անդամ շշարժեց, այնչափ իւր միտքը խորհուրդներով զբաղեալ էր:

— Ըսէ Պ. Նուարթիէին, կրկնեց Վիլֆօր, թէ իւր խնդրածը անկարելի է:

— Այն ատեն Պ. Նուարթիէ կ'իմացընէ ձեղ, պարոններ, կրկնեց Պարուա, թէ դինքը այս սրահը բերել պիտի տայ —:

Ամենուն զարմանքը կատարեալ եղաւ:

Տիկին տը Վիլֆօրի դիմաց վրայ ժպիտի պէս բան մը նկարուեցաւ: Վալանթին իրը ակամայ իւր աշքերը դէպ ՚ի սրահին առաստաղը վերցուց Եստուծոյ շնորհակալ ըլլալու համար:

— Վալանթին, ըսաւ Պ. տը Վիլֆօր, գնա նայէ, կ'աղախեմ, հաւիդ այդ նորաձեւ մտային հաճոյքն ինչ է —:

Վալանթին իսկոյն դուրս ելնելու համար աշխուժիւ քանի մը քայլ յառաջացաւ, բայց Պ. տը Վիլֆօր իւր միտքը փոխեց:

— Կեցիր, ըսաւ, ես ալ հետդ դամ:

— Կերեցէք, պարոն, ըսաւ Ֆրանզ, քանի որ Պ. Նուարթիէ զիս կը խնդրէ, կարծեմ թէ ես երթալ պէտք եմ. մանաւանդ որ երջանիկ պիտի ըլլամ իմ յարգանքս անոր մատուցանելով, որմէ այս պատիւը ողահանջելու առիթը չունեցայ դեռ —:

— Անհանդիստ մի ըլլաք, կ'աղախեմ, ըսաւ Վիլֆօր յայտնի սրտի անհանդստութեամբ մը:

— Կերեցէք, պարոն, ըսաւ Ֆրանզ հաստատ որոշում ընող մարդու մը ձայնով: Կը փափաքիմ այս առիթը չփախցընել՝ Պ. Նուարթիէին յայտնելու համար թէ որչափ կը սիսալի ինձի դէմ դժկամութիւններ ցուցընելուն, որոնց յաղ-

թելու համար ամեն անձնութիրութիւնս՝ ի զործ դնելու որոշած եմ — :

Եւ առանց Ալիքֆօրի ընդդիմութեան ականջ գնելու՝ Ֆրանդ ոտք ելու և Ալալանթինի ետեւէն դնաց, որ արդէն սանդուխէն վար կ'իջնէր այնպիսի նաւարեկեալի մը պէս, որուն ձեռքը ժայռի մը կը հասնի:


Պ. տը Ալիքֆօր անոնց ետեւէն դնաց:

Ըսթօ-Ռընօ և Ալպէր առջի երկու անդամնն աւելի մեծ զարմացմամբ իրարու նայեցան:



ԳԼՈՒԽ ՓԶ.

ԵՐՉԵՆԵԴԻՐՔ



ԱՌԻԱՐԹԻԿ ու զգեստներ հաղած և իւր թեաթորին վրայ նստած կ'ըսպասէր :
Երբ իւր ակնկալութեան համեմատ երեք անձերը իւր սենեակը մոտան,
կաթուածահարը աչքը դրան վրայ յարեց, և Պարուա իսկոյն փակեց զայն:
— Զդուշացիր, ըստ Ալիքֆօր ցած ձայնով Ալալանթի,

նին, որ չէր կրնար իւր ուրախութիւնը ծածկել. եթէ Պ. Նուարթիէ քու ամուսնութիւնդ արդիլող խօսքեր հաղորդել ուզէ, հրաման չունիմ որ հասկըցընես — :

Վալանթին կարմրեցաւ, բայց պատասխան չտուաւ : Վիլլֆօր Նուարթիէի մօտեցաւ :

Ահա Պ. Ֆրանդ տ'էրինէն, բաւ. ուզեցիք զան տեսնել, և ահա ձեր խնդրանաց համմատ եկաւ : Երկար ժամանակէ 'ի վեր այս տեսակցութեան կը փափաքէինք, և ուրախ եմ որ փորձով պիտի տեսնէք թէ Վալանթինի ամուսնութեան ընդդիմութիւն ընելով որչափ կը սխալիք — :

Նուարթիէ այնպիսի նայուածքով մը պատասխանեց, որ Վիլլֆօրի բոլոր երակաց մէջ սարսու մը ազդեց :

Աչքովը նշան ըրաւ Վալանթինին որ մօտենայ :

Նորատի աղջիկը իւր հաւին հետ ըրած խօսակցութեանց ժամանակ սավորաբար բանեցուցան միջոցներովը դատւ որ ուղածը բնաւէ բառն էր :

Այն ատեն կաթուածահարին աչքը գիտեց . ձերունին իւր նայուածքը երկու պատուհանաց մէջ աեղը եղած փոքր պահանցի մը զգրոցին վրայ յարեց :

Վալանթին զգրոցը քաշեց և իրօք բանալի մը դտաւ :

Դերունին նշան ըրաւ թէ իւր խնդրածը Ճիշդ այն է, և իւր աչքը գէպ 'ի հին զրասեղան մը ուղղեց, որ երկար տարիներէ 'ի վեր անդորձածելի մնացեր էր, և անպիտան թղթեր կը պարունակէ կ'ըսէին :

— Կ'ուզես որ դրասեղանը բանամ, հարցուց Վալանթին :

— Այո՛, պատասխանեց ձերունին :

— Գլոցները քաշեմ :

— Այո՛ :

— Կողմանակի՞ զգրոցները :

— Աչ :

— Մէջ տեղինը :

— Այո՛ — ?

Վալանթին մէջ տեղի զգոցը բացաւ և ծրաբ յը թուղթ
հանեց :

— Այս է խնդրածդ , ըստ :

— Ոչ — :

Վալանթին զգոցին մէջի բոլոր թղթերը մի առ մի դաւրս
հանեց :

— Գգոցին մէջ բան չմնաց — , ըստ Վալանթին :

Նուարթիէ աշքը բառարանին վրայ յարեց :

— Հասկըցայ — , ըստ նորատի աղջիկը :

Եւ սկսաւ այրուբենին զիրերը մի առ մի կրկնել :

Գ գրին նուարթիէ կեցաւ :

Վալանթին բառարանը բացաւ , և ծերունույն աչքը դիմելով մատը բառերուն վրայ շրջեց մինչև որ ժողովները բաշին հասաւ :

— Աւրեմն զադոնի խորշ մը կայ , ըստ Վալանթին :

— Այս , ըստ նուարթիէ :

— Եւ զայն բանալու կերպը ո՞վ զիտէ — :

Նուարթիէ գրան կաղմը նայեցաւ , ուրկից ծառան գտերս ելքը էր :

— Պարուան , հարցուց Վալանթին :

— Այս , ըստ նուարթիէ :

— Հոս կանչեմ զան :

— Այս — :

Վալանթին դէպ 'ի դուռը զնաց և Պարուան կանեց :

Այն միջոցին Արթօնի Ճակաէն անհամբերութեան քըրմինքը վար կը հոսէր , և Ֆրանոլ ապշեալ մնացեր էր :

Ծերունի ծառան ներս մատաւ :

— Պարուա , ըստ Վալանթին , հաւս հրամայեց ինձ որ այս պահանոցին բանալին առնում , ու զբանեղանը բանամ և այս զգոցը քաշեմ . բայց այս զգոցին մէջ դաղանի խորշ մը կայ եղեր . կ'երեկի թէ դուն զիտես , բաց շուտով — :

Պարուա կաթուածահարին երեսը նայեցաւ :

— Հնազանդէ —, ըստ «Առւարթիէի հանձարալի աչքը»:
Պարուա հնազանդեցաւ . զաղտնի խորշը բացաւ և ուժ ժամաւէնով կապուած թղթերու ծրար մը հանեց մէջէն:
— Այս է խնդրածնիդ , պարոն , հարցուց Պարուա:
— Այս , ըստ «Առւարթիէ»:
— Որու յանձնեմ այս թղթերը . Պ. աը Ա.իլքֆօրին:
— Ոչ:
— Օրիորդ Վալանթինին:
— Ոչ:
— Պ. Ֆրանդ տ' Երինէին:
— Այս —:
Ֆրանդ Պարուային ձեռքէն թղթերը տուաւ , և պահարանը գիտելով անոր վրայ կտրդաց .

«Մահուանէս ետև Տիւրան զօրապետին քովը պահուի , և ան ալ մեռնելու ատենը իւր որդւոյն թողու՝ պատուիրելով անոր որ իբր խիստ կարեռը թղթեր պահէ զանոնք » :

— Այս թղթերը ի՞նչ ընեմ ես , հարցուց Ֆրանդ:
— Անտարակոյս եղածին պէս կնքեալ պիտի պահես , ըստ թաղաւորի զործակալը :
— Ոչ , ոչ , պատասխանեց «Առւարթիէ աշխուժիւ»:
— Ուրեմն կ'ուզես որ պարոնը կարդայ զանոնք , հարցուց Վալանթին:
— Այս , պատասխանեց ծերունին:
— Աը լսէք , պարոն սեպուհ , հաւս կ'աղաչէ որ այս թղթերը կարդաք , ըստ Վալանթին:
— Ուրեմն նստինք , ըստ Ա.իլքֆօր անհամբերութեամբ , որովհետեւ երկար պիտի տեէ :
— Դատեցէք — , ըստ ծերունոյն աչքը:
Ա.իլքֆօր թեաթոռին կոթնելով նստաւ և Ֆրանդ ոտքի վրայ կեցաւ :

Գաղանապահ թղթերը ձեռքը բռնած էր :

— Կարդացէք — , ըսին կաթուածահարին աչքերը :

Ֆրանդ պահարանը հանեց , և սենեկին մէջ խորին լոռութիւն մը եղաւ :

Եւ այն լոռութեան միջոցին հետեւալը կարդաց .

« 1815 Փետրուարի 3ին՝ Սբն-ժամ կուշց ունի անեց-ն դահլիճութեան ժամին ու որյան-բրդին ուղարկել » :

Ֆրանդ ընդմիջեց :

— 1815 Փետրուար 3ը հօրս սպաննուած օրն է — , ըսաւ վալանմին և Ա. ի. լոքոր լուռ կեցան :

Ծերունոյն աչքը յայտնապէս կ'ըսէք .

— Շարունակեցք :

— Հայրս ալ այն ժողովէն դուրս ելած ժամանակ , ըսաւ Ֆրանդ , անելեային եղեք է — :

Նուարթիէի աչքը շարունակ կ'ըսէք .

— Կարդացէք — :

Ֆրանդ շարունակեց :

« Ստորագրեալքս , Լուի-Ժամ Պօրըւէր՝ դնդամիկ զօրաց դնդապետի տեղակալ , Էթիէն Տիւշանբի՝ հեծելազօրաց դնդին զօրապետ , և Վլու Լ. ըշարբէլ՝ ջուրերու և անտառներու կառավարիչ .

« Կը յայտնենք որ 1815 փետրուարի 4ին Էլյա կղզին նամակ մը եկաւ , որ պոնաբարդական ժողովին անդամոց մարդասիրութեանը և վատահութեանը կը յանձնէր Ֆլավիէն տը Քէսնէլ զօրապետը , որ 1804էն մինչեւ 1815 կայսեր ծառայած ըլլալով՝ անշուշտ նաբոլէոնեան իշխանութեան բոլորովին անձնուէր պիտի ըլլայ՝ Լուի Ժամին իրեն շնորհած սեպուհի տիտղոսը արհամարհէլլով :

« Հետեւարար Քէսնէլ զօրապետին տոմսակ մը դրուեցաւ աղաչելով զան որ հետեւալ օրուան այսինքն փետրուարի 3ին նիստին ներկայ դումուի :

« Ղրկուած տոմսակը ստորագրութիւն չունէր և դումարումը

ըլլալու փողոցը կամ տան թիւը չէր յայտներ անոր , այլ
կ'իմացընէր զօրապետին որ եթէ դալու պատրաստ ըլլայ , ի-
բիկուան ժամը իննին դինքը առնելու պիտի դան :

« Ժամը իննէն մինչև կէս զիշեր նիստ կ'ըլլար :

« Ժամը իննին՝ ժողովին նախաղահը զօրապետին տունը
ներկայացաւ . զօրապետը պատրաստ կ'ըսպասէր :

« Նախաղահը ըստ անոր որ ժողովին մէջ մտնելու պայ-
մանաց մէկը այն է որ իրենց դումարման աեղը ամենելին պէտք
չէ որ գիտնայ , և Քէսնէլ պէտք է թողու որ իւր աշքերը կա-
պեն , միանդամայն երդում ընելալ որ աշաց պատանը հանե-
լու փորձ պիտի չփորձէ :

« Քէսնէլ զօրապետը պայմանը ընդունեց և իւր պատուոյն
վրայ խոստացաւ որ զինքը ուր տանելնին տեսնել պիտի չփորձէ :

« Զօրապետը իւր կառքը պատրաստել տուեր էր , բայց
նախաղահը ըստ անոր թէ անկարելի է որ իւր կառքով եր-
թայ . քանզի ինչ օդուտ պիտի ըլլար տիրոջ աշքերը կապել
երբ կառավարին աշքերը բաց պիտի մնային և ամեն անցնե-
լու փողոցները պիտի տեսնէին :

« — Աւրեմն բնչուես պիտի երթանք , հարցաց զօրապետը :

« — Ես կառք ունիմ , ըստ նախաղահը :

« — Աւրեմն ձեր կառավարին վրայ այնչափ ապահով էք ,
որ այնպիսի զաղտնիք մը կը վստահիք անոր , զոր իմ կառա-
վարիս յայտնելու անխոհեմութիւն կը համարիք :

« — Մեր կառավարը ժողովարանին մէկ անգամն է , ըստ
նախաղահը . տէրութեան խորհրդականները մը կառքը պիտի
վարեն :

« — Աւրեմն , ըստ զօրապետը ծիծաղելով , ուրիշ վտանգ
մը կայ առջևնիս , այն է՝ զլորելու — :

« Այս կատակը իբր ապացոյց կը նշանակենք հոս , որ զօ-
րապետը նիստին ներկայ զանուելու համար ամենելին բռնա-
դատուած չէր , և իւր աղատ կամօքը եկաւ :

« Կառքը մտնելով , նախաղահը յիշեցուց զօրապետին իւր
աշքերը կապելու համար ըրած խոստումը :

« Զօրապետը ամենեին ընդդիմութիւն ըսրաւ այն պայմանին . կառքին մէջ այս նպատակաւ պատրաստուած մետաքսեայ թաշկինակ մը դործը տեսաւ :

« Ճամբան նախագահին այնպէս երեցաւ թէ զօրապետը պատանին տակէն նայելու կը ջանայ . ուստի ըրած երդումը յիշեցուց անոր :

« — Այս , իրաւունք ունիք — , ըսաւ զօրապետը :

« Կառքը Սէն-ժադ փողոցին ծառուղւոյն առջելը կեցաւ :

« Զօրապետը նախագահին թե ին կրթընելով՝ վար իջաւ , քանզի անոր աստիճանին բարձրութիւնը չէր ճանչնար և ժամկին պարզ մէկ անդամը կը կարծէր :

« Ծառուղին անցան , դստիկոն մը վեր ելան և խորհրդարանը մտան :

« Ժողովարանը բացուեր էր :

« Անդամները իմացած ըլլալով որ այն իրիկուն զօրապետը պիտի դայ , խմբովին գումարուեր էին :

« Սրահին մէջ տեղը հասնելով՝ զօրապետը հրաւիրուեցաւ իւր պատանը հանելու .

« Այս հրաւերին վրայ զօրապետը իսկոյն աչքերը բացաւ + և շատ զարմացաւ երբ իւր ծանօթներէն այնչափ բազմաթիւ դէմքեր տեսաւ այնպիսի ընկերութեան մը մէջ , որուն դոյռւթեանը վրայ մինչեւ այն միջոցին կասկած մը ըրած չէր :

« Անոր զգացմանց վրայ հարցուփորձ ըրին , բայց զօրապետը բաւական համարեց պատասխանել թէ հլզա կղղիէն եկած նամակներէն պէտք էին իւր ինչ զգացմունք ունենալը հասկընալ . . . » :

Ֆրանզ ընդպիշեց :

— Հայրս թագ աւորական էր , ըսաւ . իւր զգացմանց վրայ հարցուփորձ ընելու պէտք չունէին , քանզի ամենուն ծանօթ էին անոնք :

— Եւ ձեր հօրը հետ ունեցած բարեկամութիւնս անոր այնպիսի զգացմումներ ունենալուն համար էր , ըսաւ Ալլոֆօր .

շուտով կը բարեկամանայ մարդ երբ իւր դիմացինին դադա-
փարները իւր զաղափարներուն համեմատ կ'ըլլան :

— Կարդացէք — , կ'ըսէք շարունակ ծերունոյն աչքը :
Ֆռանդ շարունակեց :

« Այս ատեն զօրապետը պարտաւորելու համար որ իւր
միաքը աւելի որոշ բացատրէ՝ նախադահը սկսաւ խօսիլ . բայց
Պ. որ Քէսնէլ պատասխանեց թէ ամեն բանէ առաջ կ'ուզէ
զիտնալ թէ իրմէ պահանջուածը ինչ է :

« Այս ատեն Ելստա կղզին եկած նամակը զօրապետին
հաղորդուեցաւ , քանզի այն նամակը անոր համար պոնա-
բարդական ժողովին յանձնաբարութիւն կ'ընէք , իբր այն-
պիսի անձ մը , որուն աջակցութեանը վրայ կրնայինք վստահ
ըլլալ :

« Ամբողջ պարբերութիւն մը կայսեր Ելստա կղզին հաւա-
նական գարձը կը յայտնէք , և կը խոստանար ուրիշ նամա-
կաւ աւելի ընդարձակ աեղեկութիւններ տալ Փարանին հա-
սած ժամանակ , որ Մարսիլիոյ Մորէլ նաւատէրին նաւն էր ,
և որուն նաւապետը կայսեր անձնուէրներէն մէ ին էր :

« Նամակին ընթերցման միջոցին՝ զօրապետը , որուն վրայ
իբր եղբայր վստահ ըլլալու յոյս ունէինք , ընդ հակառակի
յայտնի դժգոհութեան և ատելութեան նշաններ ցուցուց :

« Ընթերցումն վերջը զօրապետը յօնքը կնճռելով լուս
կեցաւ :

« — Այս նամակին համար ինչ պիտի ըսէք , պարոն զօ-
րապետ , հարցուց նախադահը :

« — Լուի Ժ. Հաւատարիմ Թնալու համար երդում ը-
նելս շատ քիչ ժամանակ ըլլալուն , պատասխանեց Քէսնէլ ,
դահէն ինկած կայսեր մը օգտին համար երդմազանց չեմ
կրնար ըլլալ — :

« Այս անդամ պատասխանը խիստ որոշ ըլլալուն՝ անոր ինչ
զգացմունք ունենալը առանց սխալելու կրնար ամեն մարդ
հասկընալ :

« — Զօրապետ, ըսաւ նախագահը, մեզի համար այսուշետե ոչ Լուի Ժ. թաղաւոր կայ և ոչ գահէ ինկած կայսր. մեզի համար Նորին Վեհափառութիւնը կայսր և թաղաւոր է, որ տասը ամսէ ՚ի վեր բռնութեամբ և մատնութեամբ Գաղղայէն իւր իշխանութենէն հեռի կը դժուուի:

« — Ներեցէք, պարոններ, ըսաւ զօրապետը, կրնայ Լուի Ժ. ձեզի համար թագաւոր ըլլալ, բայց ինձի համար է. ու բովիշետե զիս սեպուհ և բանակի մարաջախտ անուանեց, և երբէք պիտի չմոռնամ որ անոր բարեբաղդ վերադարձին կը պարտաւորիմ այս երկու տիտղոսներս:

« — Պարոն, ըսաւ նախագահը խիստ ծանր ձայնով մը և ոտք ելնելով, ուշ դրէք ձեր ըսածին, ձեր խօսքերը յայտնի կ'ապացուցանեն մեզ թէ Ելզա կղզւոյն մէջ ձեզի համար սխալը են և մենք իսկ խարուեցանք: Ձեր պատուոյն և խօսքին վրայ վստահ ըլլալնու՞ մեր զաղտնիքը ձեզ հաղորդեցինք ։ Սակայն մենք սխալը ենք. տիտղոս մը և բարձր աստիճան մը զձեզ կը միացընեն այն նոր կառավարութեան հետ, զոր մենք կործանել կ'ուզենք: Զենք բռնագատեր գձեզ որ մեզ աջակից ըլլաք ։ ամենեւին մէկուն խղճին և կամքին դէմ չենք զինիր. բայց կը պարտաւորենք զձեզ որ վեհանձն ըւլաբ եթէ մեր խմբին մէջ մտնել իսկ չուղէք:

« — Վեհանձն կ'անուանէք այն մարդը երբ ձեր դադանի դաւակցութիւնը տեսնէ և երեան չհանէ: Բայց ես ձեզի մեղսակից կ'անուանեմ զան: Կը տեսնէք որ ես ձեզմէ աւելի աներկիւլ եմ...»:

— Ա՛յ, հայր իմ, ըսաւ Գրանզ ընդմիջելով, հիմա կը հասկընամ թէ զքեղ մեոցընելնուն պատճառը ի՞նչ է — :

Վալանթին չկրցաւ ինքզինքը զսպել և իւր նայուածքը Գրանզին դարձուց երիտասարդը իւր որդիական սիրոյ յուղամանց մէջ ստուգիւ զեղեցիկ կ'երեւէր:

Վելլովոր անոր ետին սենեկին երկայնքը կը չընէր:

ՆՈՒԱՐԾԻԵ ամեն մէկուն զդացմունքը կը դիտէր, և իւր մօծարոյ ու անաշառ գիրքը կը պահէր:

Ֆրանզ Հարունակեց.

« — Պարոն, ըսաւ նախաղահը, մենք չօտիպեցինք զձեզ, այլ աղաւեցինք որ մեր ժողովին ներկայ զտնուիք. ձեր աչքը կապելու առաջարկեցինք և դուք ընդունեցիք: Մեր այս կըրկին խնդիրքը ընդունած ժամանակնիդ՝ աղէկ զիաեկիք որ մեր դիտաւորութիւնը Լուի Ժլի դահը ապահովցընել չեր, եթէ ոչ ինչ հարկ կար այնչափ զգուշութիւններ ընել ոստիկանութենէն պահուելու համար: Կը հասկընաք անշուշտ թէ մարդոց գաղտնիքը խմանալու համար որչափ դիւրին բան է դիմակ մը գնել, և ետքը այն դիմակը հանել ու ձեր վրայ վստահ եղողները կորսոցընել: Ոչ, ոչ, նախ և առաջ համարձակ ըսէք մեզ թէ այս միջոցիս դիպուածով տիրող թաղաւորին կողմէն էք թէ նորին վեհափառ կայսեր:

« — Ես թագաւորական եմ, պատասխանեց զօրապետը. Լուի Ժլին երգում ըրի, և պէտք չեմ երգում զրժել — :

« Այս խօսքերէն ետեւ ընդհանուր քրթմնջիւն մը լսուեցաւ, և ժողովին բազմաթիւ անդամոց նայուածքներէն յայտնի կը տեսնուեր որ այս անխոհեմ խօսքերուն համար Պ. տ' էրինէն զղջացընելու խնդիրը կը յուղեն:

« Նախաղահը վերստին ոտք ելաւ և լրութիւն պատուիրեց:

« — Պարոն, ըսաւ անոր, դուք խիստ ծանրաբարոյ և հանձարեղ ըլլալնուդ՝ անշուշտ կը հասկընաք մեր իրարու դէմ դտնուելու կացութեան հետևութիւնները, և ձեր համարձակութիւնն իսկ մեր ընելու պայմանները մեզ կը սորվեցընէ. ուստի ձեր պատույն վրայ երդում պիտի ընէք որ բոլոր լրածներնէդ բան մը պիտի չյայտնէք մէկուն — :

« Զօրապետը ձեռքը իւր սուրին վրայ դրաւ զոշելով.

« — Եթէ պատույ խօսքը կ' ընէք, ճանչցէք ուրեմն անոր օրէնքը և ամենեին բռնութեամբ մի՛ վարուիք:

« — Եւ ես կը խրատեմ զձեզ, ոլարոն, որ ձեր սուրին

ՀՊԱՀԻՔ, ըստ նախադահիշը այնպիսի սրտի հանդարտութեամբ մը, որ զօրապետին բարկութենէն գուցէ աւելի սոսկալի կ'երեւէր — :

« Զօրապետը իւր նայուածքը բոլորտիքը չըջեց, որով իւր անհանգստութիւնը կը յայտնէր, Սակայն տակաւին չէր զիշաներ, ընդ հակառակն իւր բոլոր ոյժը ամփոփելով,

« — Չեմ երդնուր, ըստ :

« — Ուրեմն պիտի մոռնիք, պարո՞ն — , պատասխանեց նախադահիշը հանդարտութեամբ :

« Պ, ա՛երինէի զօյնը նետեց, երկրորդ անդամ՝ իւր բոլորտիքը նայեցաւ, ժողովին անդամոց մեծ մասը կը չշնչէին և իրենց վերարկուին տակէն զէնք կը փնտոէին :

« — Զօրապետ, ըստ նախադահիշը, անհոգ եղիք, այնպիսի պատուաւոր մարդոց մէջ կը զտնուիք, որոնք ձեզի զէմ վերջին միջոցը բանեցընելէն առաջ ամեն կերպով պիտի ջանան համոզել զձեղ. բայց ինչպէս որ ըսիք՝ դաւակիցներու մէջ կը դտնուիք. դուք մեր զաղանիքը իմացաք, պէտք է որ վերադարձընէք մեզ զայն — :

« Այս խօսքերուն նշանական լուսթիւն մը հետեւցաւ, և որովհետեւ զօրապետը բան չէր պատասխաներ :

« — Փակեցէք դռները — , ըստ նախադահիշը նուիրակոներուն :

« Ես մահագոյժ լուսթիւնը այս խօսքերուն յաջորդեց :

« Այն ատեն զօրապետը յառաջ անցաւ, և ինքովինքը զըսպելով ըստ :

« — Ես զաւակ մը ունիմ, և մարդասպաններու մէջ զըստած ժամանակս պէտք եմ անոր խորհիլ :

« — Զօրապետ, ըստ նախադահիշը ազնուութեամբ մը, առանձին մարդ մը միշտ իրաւունք ունի յիսուն հոգի անպատուելու, տիկարութեան առանձնաշնորհն է այս. Միայն թէ կը սիալի այս իրաւունքը՝ ի դորձ գնելով: Հաւատացէք ինձ, զօրապետ, երդում ըրէք և մի անպատուէք զմեզ — :

« Զօրապետը նախագահին վսեմութենէն դարձեալ յաղթուելով, վայրկեան մը երկմտութեան մէջ մեաց . բայց վերջապէս մինչեւ նախագահին դրասեղանին մօտենալով հարցուց .

« — Ո՞րն է ձեր երդման եղանակը :

« Աչաւասիկ , « Կ'երդնում պատուոյս վրայ որ 1815 և փետրուարի 5^ի իրիկուան ժամը իննէն մինչեւ տասը տես և սածներուտ և լրածներու վրայօք ամենակին մարդու բան պիտի շըսեմ , և եթէ երդումս դրժեմ՝ մահուան արժանի ըլլալս կը յայտնեմ » :

« Զօրապետը այնպիսի ջղային սարսուռ մը զգաց , որ քանի մը մանրերկրորդ չկրցաւ պատասխան տալ . վերջապէս իր յայտնի դժկամութեանը յաղթելով , սղահանջուած երդումը ըրաւ , բայց այնչափ ցած ձայնով որ հաղիւ թէ կը լուռէր , այնպէս որ բազմաթիւ անդամներ խնդրեցին որ աւելի բարձր և աւելի որոշ ձայնիւ երդումը կրկնէ , և զօրապետը հնազանդեցաւ :

« Անշուշտ ազատ եմ ալ , ըստ զօրապետը , քանզի կ'ուզեմ մեկնիլ ասիկ — :

« Նախագահը ոտք ելաւ , ժողովին անդամներէն երեք հոդի որոշեց որ անոր ընկերանան , և ինքն ալ զօրապետին աշքերը կապելէն ետեւ՝ անոր հետ կառքը հեծաւ :

« Այս երեք անդամոց մէջ էր զիրենք բերով կառավարն ալ :

« Ժողովին միւս անդամներն ալ լուռթեամբ իրարմէ բաժնուեցան :

« — Ո՞ւր կ'ուզէք որ տանինք զձեղ , հարցուց նախագահը :

« — Ուր որ կ'ուզէք տարէք , միայն թէ ձեր ներկայութենէն ազատ ըլլամ , պատասխանեց Պ. տ'էրինէ :

« — Պարոն , կրկնեց այն տաեն նախագահը , զզուշացէք , ալ ժողովին մէջ չէք գտնուիր , այլ մասնաւոր անձերու հետ է զործերնիդ . մի անպատուէք զանոնք եթէ չէք ուզէք այն նախատանաց պատասխանատու ըլլալ — :

« Բայց Պ. տ'էրինէ փոխանակ այն խօսքերը հասկընալու պատասխանեց .

« — Ժողովին մէջ եղածնուղ չափ ձեր կառքին մէջ ալ զօրաւոր էք, վասն զի չորս հոգի առանձին անձէ մը միշտ աւելի ուժով են — :

« Նախազահը կառքը կեցընել առւաւ :

« Ճիշդ Օրմի նաւամատոյցին առջին կը գտնուէին, ուր սանդուխ մը կար գետը իջնալու համար :

« — Ինչու կառքը կեցընել տուիք, հարցուց Պ. ա'կրինէ :

« — Ինչու որ մարդու մը պատուսյն դպցաք, և այն մարդը իրեն եղած նախատանաց փոխարէնը ըստ օրինի ընդունելէն առաջ չուզեր քայլ մը աւելի յառաջանալ :

« — Այս ալ մարդ մեղքնելու ուրիշ եղանակ մ'է, ըստ զօրապետը ուսերը թոթվելով :

« — Չայն մի հանէք, պարո՞ն, պատասխանեց նախազահը, եթէ չէք ուզեր այնպիսի անձ մը համարուիլ, զօր հիմա կ'ըսէիք, այսինքն այնպիսի վատ մը, որ իւր տկարութիւնը իրը վահան կ'առնու : Դուք առանձին էք, առանձին մարդ մը ձեր գէմը պիտի ելնէ . սուր մը ունիք ձեր մէջքէն կախուած, ես ալ գաւազանիս մէջ սուր մը ունիմ . վկայ չունիք, պարոններէն մէկը ձեր վկան կ'ըլլայ : Հիմա եթէ այս ըսածներս վայելուչ կը դանէք, ձեր աշաց կապը կրնաք հանել — :

« Զօրապետը իսկոյն իւր աշաց պատանը հանեց :

« — Վերջապէս հիմա կը տեսնեմ թէ որո՞ւ հետ է գործու, ըստ :

« Կառքին դռնակը բացին և չորս անձերը վար իջան . . . » :

Ֆրանդ գարձեալ իւր ընթերցումը ընդմիջեց և իւր ճակատէն վազած ոլաղ քրտինքը սրբեց :

Սուկալի աեռարան մը կ'ընծայէր այն դունատեալ և գողգոջուն որդին, որ բարձր ձայնիւ կը կարդար իւր հօրը մահուան մանրամասն տեղեկութիւնները, զորոնք մինչև այն օրը չէր դիմեր :

Վալանթին ձեռքերը միացուցեր էր՝ կարծես աղօթք կ'ընէր։
Նուարթիէ արհամարհական և դուռը նայուածքուլ մը Ա.ի-
լը Փօրին կը նայէր։

Ֆրանգ շարունակեց։

« Ա.յն օրը՝ ինչպէս ըսինք՝ փետրուարի 5^ն էր։

« Երեք օրէ ՚ի վեր՝ հինգ կամ վեց աստիճան կը սառէր,
և սանդուխը սառերով ծածկուած էր։ զօրապետը դեր և բար-
ձրահամապակ մարդ մ'ըլլալուն՝ նախադահը սանդուխին վան-
դակապատ կողմը անոր թաղուց որ անվտանգ վար իջնէ։

« Երկու վկաները անսնց ետեւէն կ'իջնային։

« Գիշերը սասարիկ մութ էր. սանդուխէն մինչև զետեղը
զետինը ձիւնէն և եղեամէն խոնաւացեալ էր. սև և խո-
րունկ ջուրը սառի հատուածներ բերելով կը սահէր կ'երթար։

« Վկաներէն մէ կը դնաց ածուխի նաւակի մը մէջէն լազ-
տեր մը բերաւ, և անոր լուսովը զէնքերը քննեցին։

« Նախադահին սուրը, որ ինչպէս ըսիր էր թէ զաւաղանի
մէջ կրելու սուր մ'էր, իսր հակառակորդին սուրէն հինգ
թաշափ կարծ էր և դաստապանի եղջիւր չունէր։

« Տ'երինէ զօրապետը առաջարկեց որ երկու սուրերուն
համար վիճակ ձգեն, բայց նախադահը պատասխանեց թէ
մենամարտութեան առաջարկութիւնը ինքը ըրած ըլլալով,
սլէտք է որ իւրաքանչիւր ոք իւր սուրը դործածէ։

« Վկաները ջանացին դէմ դնելու, բայց նախադահը հրա-
մայեց որ լուս կենան։

« Լազարերը գետինը դրին. երկու հակառակորդները իրա-
րաւ դէմ անցան, և մենամարտութիւնը սկսաւ։

« Լապտերին լոյսէն երկու սուրերը երկու փայլակներ կը
ձեռային։ Ամեն կողմ այնպիսի մթութիւն մը պատեր էր,
որ մարդիկ հաղիւ զիրար կը տեսնէին։

« Պ. զօրապետը բանակին քաջ զինամարտերէն մէ կն էր,
սակայն սրբ առաջին հարուածներէն այնչափ նեղը մտաւ որ
ուղղութիւնը կորսնցուց և գետինը ինկաւ։

« Ակաները կարծեցին թէ մեռաւ . բայց հակառակորդը անոր դպցած ըլլալը աղէկ դիտնալով, ձեռքը երկնցուց ու ստք ելնելու օդնեց անոր :

« Այս գործը փոխանակ զօրապետին սիրտը հանդարտեցը նելու՝ աւելի գրգռեց զան և վերստին սկսաւ կուրիլ :

« Բայց իւր հակառակորդը ուղղութիւնը չկորսնցուց . երեք անդամ զօրապետը նեղը մտնելով ետք քաշուեցաւ, բայց դարձեալ մօտեցաւ :

« Երրորդ անդամին նորէն ինկաւ . կարծեցին թէ առաջին անդամուան պէս սահեցաւ :

« Սակայն վկաները տեսնելով որ ստք չէր ելներ՝ անոր մօտեցան և ջանացին ոտքի վրայ կանդնեցընելու . բայց զան դրկելով վերցընել ուղղողը ձեռքին տակը խոնաւ տաքութիւն մը զդաց :

« Զօրապետին արիւնն էր այն :

« Պ. տ'էրինէ, որ գրեթէ մարեր էր, սթափելով ըստաւ .

« — Ո՛չ, անշուշտ սուսերամարտ մը կամ մարտուսոյց մ'է որ դիմացս հանեցիք — :

« Նախազահը առանց պատասխանելու լապտերը բռնող վկային մօտեցաւ, և թեղանիքը բանալով՝ իւր թեին վրայ սուրի երկու հարուածներ ցուցուց . ետքը զդեստին և բաճակոնին կոճակները հանելով՝ իւր կուշտին վրայ երրորդ վէրք մը երեցաւ :

« Այսու ամենայնիւ հառաջանք մը անդամ չհանեց :

« Տ'էրինէ զօրապետը հինգ վայրկեան հոգեվարքէ ետեւ մեռաւ . . . » :

Ֆրանդ այս վերջին խօսքերը այնպիսի հեղձեալ ձայնիւ կարգաց, որ հազիւ թէ լսուեցաւ, և ընդմիջելով սկսաւ իւր աշքերը շփել, որպէս զի տեսնէ թէ արդեօք երազ է տեսածը : Բայց վայրկեան մը լուռեթենէ ետև շարունակեց .

« Նախազահը իւր սուրը դաւազանին մէջ անցընելէն եւ

տեւ՝ սանդուխէն վեր ելաւ . արեան հետք մը ձիւնին վրայ իւր Ճամբան կը ներկեր :

« Սանդուխին վրայ դեռ չհասած՝ զետի ջուրին ծփելու ձայնը առաւ :

« Վեաները զօրապետին մահը ստուգելէն ետեւ՝ զան դետին մէջ նետեր էին :

« Ինչպէս կ'երեկի՝ զօրապետը օրինաւոր մենամարտութեալբ մեռաւ և ոչ դաւաճանութեամբ մը , ինչպէս որ պիտի կարծուի :

« Ի հաստատութիւն ճշմարտութեան այս ամեն եղածներուն ներկայ զբութիւնը կ'ըստորագրենք , որպէս զի չըլլայթէ օր մը այն սոսկալի տեսարանին ականատեսներէն մէկը իրը մարդասպան ամբաստանուի :

« ԴԵՐ-ԴՐԵ-Լ. ՊՈԲԿԵՐ, ՏԻՇԵՆՔԻ ,
և Լ.Ը.Ը.Բ.Ա.» :

Երբ Ֆրանզ այս սոսկալի արձանադրին ընթերցումը վերջացուց , երբ Վալանթին սիրոը շարժելով իւր արտասուրքը սրբեց , երբ Վելլոֆօր անկիւն մը կծկուած և դողդղալով կը չանար փոթորիկը անցընել անողոք ծերին թախանձալի նայուածքներ ուղղելով ,

— Պարոն , ըստ տ'էքինէ նուարթիէին , քանի որ այս ահոնելի պատմութիւնը իւր մանրամասն տեղեկութիւններով ձեզ ծանօթ են , քանի որ պատուաւոր ստորագրութիւններով զայն վաւերացընել տուիք , քանի որ ինձ համակիր կ'երեկիք , թէև ձեր համակրութիւնը վիշտով մը յայտնուեցաւ , վերջին շնորհք մը մի մերժէք ինձմէ . ըսէք ինձ թէ ով էր ժողովին նախագահը , որպէս զի զիտնամ թէ ով էր ողորմելի հօրս սպանից — :

Վելլոֆօր խենթի պէս դրան վրայ բանալու դունքը փնտոեց : Վալանթին , որ ծերունւոյն տալու պատասխանը ամենէն առաջ հասկըցեր էր , և անոր բաղկին վրայ սուրի երկու հարուածոց հետքը շատ անդամ տեսեր էր , քայլ մը ետ քաշուեցաւ :

— Յանուն երկնից, օրիորդ, ըստ Ֆրանզ՝ իւր նշանածին դառնալով, օգնեցէք ինձ որ երկու տարեկան հասալիս մէջ զիս որբ ընող մարդունը իմանամ — :

Վալանթին անշարժ և անձայն մնաց:

— Կ'աղաչեմ, պարոն, այդ սոսկալի տեսարանը աւելի մի երկարէք, անունները գիտմամբ զաղտնի սլահուած են. Հայրս անդամ այն նախազահին անունը չգիտեր, և եթէ զիտնայ իսկ, պիտի չկընայ ըսել . . . քանզի յատուկ անունները բառարանին մէջ չեն գտնուիր:

— Ո՛չ, ի՞նչ դժբաղդութիւն, զոշեց Ֆրանզ. այս զրութիւնը կարդալու համար ինձ համբերութիւն և ոյժ տուող միակ յոյսս զոնէ հայրս մեոցընող մարդուն անունը ճանչնալ էր: Պարոն, պարոն, շարունակեց երիտասարդը Նուարթիէի կողմը դառնալով, յանուն երկնից, կրցածնիդ ըրէք . . . ըսէք, կ'աղաչեմ, և ճանչնուցէք ինձ զան . . . :

— Այո՛, պատասխանեց Նուարթիէ:

— Ո՛չ, օրիորդ, օրիորդ, զոշեց Ֆրանզ, ձեր հայրը նշանը ըրաւ թէ կրնայ սպաննողին ով ըլլալը ըսել ինձ . . . : Օգնեցէք . . . , կ'աղաչեմ, զթացէք ինձի — :

Նուարթիէ բառարանին նայեցաւ:

Ֆրանզ ջղային դողդոջիւնով բառարանը առաւ, և սկսաւ այրութէնի զիբերը մի առ մի արտասանել մինչեւ Եղիբը:

Եղիբն՝ ծերը նշան ըրաւ թէ ուզած բառը այն զրով կ'ըսկաի:

— Ե —, կրկնեց Ֆրանզ, և մատը բառերուն վրայ ջրջեց. ամեն բառին Նուարթիէ բացասական նշանով մը կը պատասխանէր:

Վալանթին դլուխը երկու ձեռացը մէջ ծածկեր էր:

Վերջապէս Ֆրանզ ԵՍ բառին հասաւ:

— Այո՛, ըստ ծերունին:

— Դուք, զոշեց Ֆրանզ, որուն զլիի մաղերը քստմեցան. Հայրս սպաննողը դուք էք. Պ. Նուարթիէ:

— Այո՛ —, պատասխանեց Նուարթիէ երիտասարդին վրայ վսեմ նայուածք մը յարելով:

Փրանդ թեաթոռի մը վրայ ուժաթափ ինկաւ։
Վիլֆօր գուռը բանալով փախաւ, քանդի այն սոսկալի
ծերունոյն սրտին մէջ մնացած քիչ մը կենդանութիւնը բառ-
նալու խորհուրդը կ'անցընէր իւր մաքէն։



ԳԼՈՒԽ ԺԷ

ԱՆՏԻԾ ԳԵՎԵԼԴԵՆԹԻԻ ՅՌՄԵԶԵԴԻՄՈՒԹԻՒՆԸ

ԱՐԴՆ Պարթոլոմէօ Գավալդանթի իւր պաշ-
տօնին վերադառնալու համար մեկներ
էր՝ չէ թէ Աւստրիոյ Վեհափառ կայ-
սեր բանակին մէջ մանելու, այլ Լուք-
քայի բազանիքները երթալու համար։

Աւելորդ է ըսել թէ իւր Ճամբորդութեան և հօր մը գերը
ներկայացընելուն վարձատրութեանը համար իրեն շնորհուած
դումարը ամբողջապէս իւր հետը տարաւ։

Անոր մեկնելու ատենը Պ. Անտրէա բոլոր այն վկայագի-
րերը ընդունեց, որոնք իւր Պարթոլոմէօ Գավալդանթի մար-
քէլին և Լէոնորա Գորսինարի մարքէզուհւոյն որդին ըլլալը
կը հաստատէին։

Աւստի Անտրէա Բարիղեան այն ընկերութեանց մէջ մտերէր, որոնք այնչափ դիւրութեամբ օտարականները կ'ընդունին և անոնց հետ չեն թէ բուն վիճակնուն այլ երեցածնուն համատ կը վարուին :

Մանաւանդ թէ՝ Բարիղե մէջ երիտասարդէ մը ինչ կը փնտուի, բայց եթէ՝ զրեթէ Գաղղիարէն լեզուն խօսիլ, զայերշապէս հագուիլ, քաջ խաղացող ըլլալ և ոսկի վճարել:

Դարձեալ ասոնք ալ Բարիղեանէ մը աւելի կը փնտուին քան թէ օտարականէ մը :

Անտրէա տասն և հինգ օրուան մէջ բաւական յառաջադիմութիւն ըրեր էր . զինքը պարոն կոմս կը կոչէին, անոր համար յիսուն հաղար ֆրանք եկամուտ ունի կ'ըսէին, և Սարամիջզայի գետնափորերուն մէջ անոր հօրը ունեցած անբաւ կանձերուն վբայ կը խօսէին :

Այս վերջին տարաձայնութիւնները իմաստակ մը լսելով, այն ստորերկրեայ դանձերը տեսած ըլլալը հաստատեց, որով մինչեւ այն ժամանակ տարակուսելի եղած կարծիքներուն հաստատութիւն և ստուգութիւն տուաւ :

Անտրէա այս օրինակ պատիւ կը գտնէր Բարիղեան ընկերականց մէջ, երբ իրիկուն մը Մօնթէ-Քրիսթօ ո. Տանկլարի այցելութիւն մը ընելու եկաւ :

Պ. Տանկլար դուրս ելեր էր, ուստի կոմսին առաջարկուեցաւ որ տիկին Տանկլարի սենեակն երթայ :

Օթէօյլի Ճաշէն և անորնէ ետեւ սպատահած դէպքերէն 'ի վեր տիկին Տանկլար Մօնթէ-Քրիսթոյի անունը լսած ատեն ջղային սարսուռէ մը ազատ չեր :

Եթէ կոմսին ներկայութիւնը տիսուր երեսոյթ մը ունենար, տիկնոջ ցաւագին ազդեցութիւնը կ'աւելցընէր. եթէ ընդհակառակն կոմսը զուարթագէմ և ուրախ աչօք երկէր, տիկին Տանկլարի հետ իւր ունեցած սիրուն և քաղցր վարմունքը երկիւղի ամենաթեթև ազդեցութիւնն անզամ. անոր սրտէն կը խլէր, Տիկնոջ անկարելի կ'երեւէր որ այնախի սիրուն

երեցած անձ մը իրեն գէմ չար դիտաւորութիւններ ունենայ . ամենէն խանդարեալ սրտերն անդամ չեն կրնար զժբաղդութեան մը հաւատալ մինչեւ որ չկարծեն թէ իրենց դիմացինը մասնաւոր օգուտ մը պիտի քաղէ իրենցին . անօգուտ տեղը և առանց պատճառի դժբաղդութիւն մը պատճառելը ատելի և տարօրինակ բան է :

Երբ Մօնթէ-Քրիսթօ այն դահլիճը մտաւ , ուր արդէն անգամ մը մեր ընթերցողները մացուցինք , և ուր տիկին Տանկլար Էօծէնին իրեն ներկայացուցած նկարները բաւական անհանդիստ նայուածքով մը Պ. Անտրէա Գավալդանթիի հետ կը դիմէր , կոմսին ներկայութիւնը իւր սովորական ազդեցութիւնն ըրաւ , և թէսկտ անոր անունը լսած ատեն բաւական այլայլութիւն մը զգացեր էր , սակայն տիկինը ժպիտով մը ընդունելութիւն տուաւ անոր :

Իսկ Մօնթէ-Քրիսթօ մէկ նայուածքով դահլիճին բոլոր տեսարանը դիտեց :

Բազմոցակի մը վրայ զրեթէ երկնաց տիկին Տանկլարի քով Էօծէնի նստեր էր , և Գավալդանթի ոտքի վրայ կեցած էր :

Գավալդանթի կէօթէի դիւցազունի մը պէս սև զգեստներ , ապիկեալ մուշակներ և բանեցած մետաքսեայ սպիտակ գուլպաներ հաղած էր , և իւր բաւական սպիտակ և բաւական մաքուր ձեռքովը խարսեաշ մազերը կը խառնէր , որոնց մէջ ադամանդ մը կը փայլէր , զոր փառասէր երիտասարդը Մօնթէ-Քրիսթոյի խրատուց հակառակ չէր կրցեր իւր փոքր մատին վրայ կրելու բաղձանքի դէմ գնել :

Եւ այն դիրքին մէջ իւր սիրալիր նայուածքը օրիորդ Տանկլարի վրայ յարած էր և հառաջանքներ կ'ուղղէր անոր :

Օրիորդ Տանկլար ամմնեին փոխուած չէր , միշտ գեղեցիկ , ցուրտ , և ծաղրող կ'երեւէր : Անտրէայի նայուածքներէն և հառաջանքներէն մէկն ալ իւր աչքէն փախած չէր , սակայն կարծես թէ անոնք Աթենասայ զբահին վրայ կը սահէին և կ'ոչնչանային , այն զբահին վրայ , որով Սաֆոյի կուրծքը ժամանակաւ ծածկուած էր ըստ ոմանց փիլիսոփայից :

եօմէնի պաղութեամբ մը կոմսը բարեեց , և միւսներուն խօսակցութեան սկսելու ժամանակ իւր ուսմանց սենեակը քաշուեցաւ , ուրկից շատ չանցաւ դաշնամուրը դաշնակելու ձայնին հետ խառն երկու ուրախալի և բարձր ձայներ լսուելով՝ Մօնթէ-Քրիսթօ հասկըցաւ որ օրիորդ Տանկլար երգի ուսուցիչ օրիորդ տ'Արմիյլիին ընկերութիւնը նախամեծար ընտրեր էր իւր և Պ . Գավալզ անթիի ընկերութենէն :

Մօնթէ-Քրիսթօ տիկին Տանկլարի հետ խօսակցելու , և ըստ երևութից այն խօսակցութեան մէջ ուրախութեամբ ընկղմած ատեն՝ Պ . Անտրէա Գավալզը անթիի սրտի անձկութիւնը , դրան մօտենալով՝ ուրկից չէր համարձակեր ներս մտնել ; Երաժշտութեան ականջ դնելը , և իւր զմայլումը յայտնելը դիտեր էր :

Ծատ չանցաւ՝ սեղանաւորը ներս մտաւ . սոոյդ է որ իւր առաջին նայուածքը Մօնթէ-Քրիսթոյի վրայ շրջեց , բայց անորմէ ոչ նուազ ուրախութեամբ Պ . Անտրէան բարեեց :

Խոլ իւր կինը այնպիսի ամուսիններու պաղութեամբը բարեց , որուն վրայ ամուրինները պիտի չկրնան դաղափար մը ունենալ մինչև որ ամեւսնութեան վրայ աւելի ընդարձակ օրինադիրք մը չհրատարակուի :

— Միթէ օրիորդները դձեզ չհրաւիրեցին որ միատեղ երգէք , հարցուց Տանկլար Անտրէային :

— Եփոնս , ոչ . պարոն — , պատասխանեց Անտրէա՝ իւր առջին հառաջանքներէն աւելի նշմարելի հառաջանքով մը :

Տանկլար իսկոյն դրան մօտեցաւ և բացաւ զայն :

Երկու նորատի աղջիկները մի և նոյն աթոռի վրայ դաշնամուրին առջին նստեր էին : Երկուքնին ալ մէկ ձեռքով կը նուազէին , և այս կրթութիւնը յաճախ կրկնելալ լաւ յառաջադիմութիւն ըրեր էին :

Դրան շրջանակին մէջէն երկու օրիորդները այն կենդանի պատկերներէն մէկը կը ներկայացընեին , որոնց նմանը Գերմանիոյ մէջ կը նկարեն :

Օրիորդ տ'Արմիլի բաւական նշանաւոր. զեղեցկութիւն մը կամ թէ ըստնք ազնիւ երևոյթ մը ունէր. Պարիկի նման կարահաչասակ և խարտեաշ աղջիկ մ'էր՝ յոզնած աչերով և խոսպացեալ երկար մազերով, որոնք քիչ մը երկար պարանոցին վրայ կ'ինային, ինչպէս որ բէրիւժէն երբեմն իւր նկարագրած կոյսերուն կու տայ:

Կ'ըսէին թէ կուրծքի տիկարութիւն ունի և Անթոնիայի պէս օր մը երգելու ատեն պիտի մեռնի:

Մօնթէ - Քրիսթօ արագ և հետաքրքիր նայուածք մը շրջեց օրիորդներուն սենեկին մէջ:

Առաջին անգամն էր որ օրիորդ տ'Արմիլին կը տեսնէր, ուրուն վրայ տան մէջ շատ անգամ խօսութիւր լսեր էր:

— Աւրեմն զմեզ չէք ընդունիր —, ըստ սեղանաւորը իւր աղջկան, և երիտասարդը անոնց սենեկը մտցուց: Կամ պատահմամբ և կամ դիտմամբ դուռը Անտրէային ետեւէն դոցուելով՝ Մօնթէ - Քրիսթօ և տիկին Տանկլար չկրցան նստած տեղերնեն բան մը տեսնել:

Բայց որովհետեւ սեղանաւորը Անտրէայի հետ զայեր էր, կ'երեւէր թէ դրան զոցուիլին անգամ շդիտեց:

Քիչ մը ետքը՝ դաշնամուրին ձայնին հետ կոմսը Անտրէայի ձայնը լսեց, որ քորսիական երգ մը կ'երգէր:

Այս երգը ժպիտով մը մտիկ ընելու ատեն, որ Անտրէայի անունը մասցընելով Պէնէտէթթօն կը յիշեցընէր կոմսին, տիկին Տանկլար իւր ամուսնոյն արութիւնը կը զովէր, որ նոյն առոտու Միլանի մէջ պատահած սնանկութեամբ մը երեք կամ չորս հարիւր հազար ֆրանք կորսնցուցեր էր:

Եւ իրօք արժանի էր այն զովութեան. քանզի եթէ կոմսը այն սնանկութիւնը լսած չըլլար կամ տիկին Տանկլարէն և կամ զուցէ այն միջոցներէն մէկէն, զորոնք կոմսը ունէր ամեն բան իմանալու համար, սեպուհին դէմքը բան մը չեր յայտներ:

— Կը տեսնեմ որ կ'ըսկսի կորսնցուցածը պահել, մտածեց Մօնթէ - Քրիսթօ, ամփս մը առաջ իւր կորստեանցը հա-

մար կը պարծէք։ Տիկին, ըսաւ բարձր ձայնիւ, Պ. Տան-
կլար գրամանոցի զործերը այնչափ աղէկ կը ճանշնայ, որ
իւր կորսնցուցածին տեղը շուտով կը լեցընէ։

— Կը տեսնեմ որ հասարակաց սխալման մասնակից կ'ըւ-
լաք, ըսաւ տիկին Տանկլար։

— Եւ ինչ բանի մէջ խարուած ենք, տիկին։

— Կը կարծէք որ Պ. Տանկլար գրամանոցի խաղերուն մէջ
կը մտնէ, ընդ հակառակին ամենեին չմտներ։

— Ո՛չ, այո՛, ստորդ է, տիկին, կը յիշեմ որ Պ. Տըպրէն
ըսաւ թէ . . . : Բայց աղէկ միտքս եկաւ, Պ. Տըպրէն ինչ ե-
ղաւ, երեք չորս օր կայ որ զինքը տեսած չեմ։

— Ես ալ նոյնպէս, ըսաւ տիկին Տանկլար նոյն զարմա-
նալի անտարբերութեամբ . բայց գուք մը սկսաք և ան-
կատար թողուցիք։

— Ի՞նչ խօսք։

— Պ. Տըպրէ ձեզ ինչ ըսաւ։

— Ո՛չ, այո՛, Պ. Տըպրէ ըսաւ թէ դուք էք խաղացողը։

— Քիչ մը ատեն այն հաճոյքը ունեցայ, կը խոստովա-
նիմ, բայց հիմա չունիմ։

— Եւ կը սխալիք, տիկին . բաղդին խաղերը անհաստատ
են, եթէ ես կին ըլլայի, և բաղդը այնպէս բերէր որ ա-
մուսինս ալ սեղանաւոր ըլլար, ամուսնոյս բաղդաւորութեանը
վրայ որչափ և վստահ ըլլայի, (քանզի գիտէք աղէկ որ շա-
հագիտութեան մէջ յաջողութիւն և ձախողութիւն իրարու-
քոյր են), կ'ըսկսէի անկախ հարստութիւն մը ապահովցընել
ինձ, եթէ անորմէ անծանօթ մարդոց ձեռօք խոլ շահադիտու-
թիւններ ընել պէտք ըլլար —։

Տիկին Տանկլար ակամայ կարմրեցաւ։

— Ասեցիք, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ՛ անոր կարմրիլը չոես-
նել ձեւցընելով, Նաբոլիի արժէթղթոց վրայ մեծ շահեր
եղեր են երէկ։

— Նաբոլիի արժէթղթեր չունիմ ես, ըսաւ տիկինը աշխու-

ժիւ, և երրեք չունեցայ. բայց այս դրամային խօսքերը բաւական են, պարոն կռմա. երկուքնիս ալ փոխանակադրաց միջնորդներու նմանեցանք. քիչ մը Ալիլովորի անբաղդ ընտանեաց վրայ խօսինք, որ այս միջոցիս մէծ դժբաղդութիւններու մէջ կը գտնուի:

— Ի՞նչ պատահեցաւ արդեօք, հարցուց Մօնթէ-Քրիսթօ կատարեալ պարզմութեամբ մը:

— Անշուշտ լսած էք. Պ. տը Սէն-Մէրանը իւր մէկնելէն երեք չորս օր ետքը մոռնելէն ետեւ՝ մարգէղուհին ալ մոռաւ անոր Բարիդ հասնելէն երեք չորս օր ետքը:

— Այս, ստոյզ է, լսաւ Մօնթէ-Քրիսթօ, լսեցի. սակայն ինչպէս կ'ըսէ Գլոտիուս Համբէթին՝ բնութեան մէկ օրէնքն է որ հայրերը իրենց զաւակներէն առաջ մեռնին, որպէս զի ասոնք անոնց վրայ լան:

— Բայց ուրիշ դժբաղդութիւն մը ևս կայ:

— Ի՞նչ դժբաղդութիւն:

— Գիտէք որ իրենց աղջիկը պիտի ամուսնացընէին:

— Այս, Պ. Փրանզ տ'էրինէին հետ. արդեօք ետ եղաւ:

— Երեկ առտու՝ ինչպէս որ կ'երեի. Փրանզ իւր խօսքը ետ առեր է:

— Եւ ի՞նչ է եղեր պատճառը:

— Զեմ՞ դիտեր:

— Ի՞նչ կ'իմացընէք ինձ, տիկին . . . Պ. տը Ալիլովոր այս ամեն դժբաղդութեանց ինչպէս կը համբերէ:

— Իւր սովորութեան համեմատ՝ այսինքն փիլիսոփայի պէս —

Այս միջոցիս Տանկլար առանձին իրենց սենեակը վերադառնաւ:

— Պարոն Գավալլանթին առանձին ձեր աղջկան հետ կը թողուք:

— Միթէ օրինրդ տ'Ալմիլլին հոն չէ՞ —, սլատասիսնեց սեղանաւորը:

Ետքը Մօնթէ-Քրիսթոյի գառնալուլ,

— Պարոն Գավալզանթի իշխանը ազնիւ երիտասարդ մ'է ;
ոյնպէս չէ , պարոն կոմս . . . : Միայն թէ իրօք իշխան մ'է :

— Եշխան ըլլալուն երաշխաւոր չեմ ըլլար , ըսաւ Մօնթէ -
Քրիսթօ . անոր հայրը իրը մարգէղ ներկայացուցին ինձ ,
կրնայ կոմս ըլլալ , բայց կարծեմ ինքն ալ չպահանջեր որ
այդ տիտղոսը տան իրեն :

— Ինչու համար , հարցուց սեղանաւորը . եթէ իշխան է ,
կրնայ պարծելու . ամեն մարդ իւր իրաւունքը պէտք է ունե-
նայ . ես չեմ ախործեր որ մէ կը իւր ծնունդը ուրանայ :

— Բուն հասարակապետական մէ կը կ'երեկիք , ըսաւ Մօն-
թէ - Քրիսթօ ժպիտով մը :

— Բայց տեսէք , ըսաւ տիկին Տանկլար , ինչ՞ր կ'ընէք .
Հիմա եթէ ըստ գիտաց Պ. Մորսէրֆ դայ , Պ. Գավալզան-
թին այն տեսնեկին մէջ պիտի դանէ , ուր ինքը էօծէնիին նշա-
նածն ըլլալովը մտնելու հրաման ունեցած չէ երբէք :

— Աղէկ ըսիք ըստ գիտաց ըսելով , կրկնեց սեղանաւորը ;
ըստ որում այնշափ քիչ անդամ հոս կը տեսնենք որ իրօք
բաղդը միայն զինքը մեր տունը կը բերէ :

— Վերջապէս եթէ դայ , և այն երիտասարդը ձեր ազջկան
քովը դանէ , կրնայ գձկամակիլ :

— Ո՞վ , Ալպէր պիտի գձկամակի ; կը սխալիք . Ալպէր իւր
նշանածը այն աստիճան չսիրեր որ անոր համար նախանձի .
բայց և այնպէս ինչ հոգս եթէ գձկամակի կոմ ոչ :

— Այսու ամենայնիւ քանի որ զործերը այս կէտը հա-
սած են . . . :

— Այո , այո , կ'ուզէք որ ըսեմ . իւր մօրը պարահանդէ-
սին մէջ միայն անդամ մը պարեց աղջկանս հետ , մինչդեռ
Պ. Գավալզանթի երեք անդամ սրարեց անոր հետ , և Ալ-
պէրին հոգը անդամ չեղաւ :

— Պ. գերակոմս Ալպէր ար Մորսէրֆը եկաւ — , ըսաւ
սենեկապանը գրան առջեւ երեխլով :

Տիկին Տանկլար ավտուժիւ ոտք ելաւ և կ'ուզէր երթալ իւր

աղջիան իմացընելու երբ Տանկլար անոր թեր բռնելով կեցուց:
 — Թողուցէք — , ըսաւ :
 Տիկինը զարմանքով անոր երեսը նայեցաւ :
 Առնթէ-Քրիսթօ այս տեսարանը շուտոնել ձեացուց :
 Ալպէր ներս մտաւ . խիստ զեղեցիկ և ուրախ կ'երեւէր :
 Տիկինը յարդանօք , Տանկլարը ընտանեքար և Առնթէ-Քրիսթօն սիրով բարեեց :
 Ետքը տիկին Տանկլարի կողմը գառնալով ,
 — Աը ներէք , տիկին , ըսաւ , որ հարցընեմ թէ օրիորդ
 Տանկլար ինչպէս է :
 — Շատ աղէկ վիճակի մէջ է , պարոն , պատասխանեց
 իսկոյն Տանկլար . այս միջոցիս իւր սենեկին մէջ Պ . Գավալ
 դանթիի հետ երաժշտական դաշնակութիւններ կ'ընէ — :
 Ալպէր իւր հանդարտ և անտարբեր կերպարանքը չփոխեց՝
 դուցէ ներքին արհամարհանք մը զգալուն . բայց տեսաւ որ
 Առնթէ-Քրիսթօ իւր նայուածքը իրեն վրայ յարեր էր :
 — Պ . Գավալդանթին նէնցի խիստ ընտիր ձայն մը ունի ,
 ըսաւ Ալպէր , և օրիորդ Էօժէնին ընտիր սբբանայի , մանաւանդ որ
 թալպէրի նման ալ դաշնամուրը կը նուազէ , որով
 երաժշտական քաղցր դաշնակութիւն մը կը կազմնան :
 — Ստուգիւ իրաբու շատ կը յարմարին — , ըսաւ Տանկլար :
 Ալպէր այս երկդիմի խօսքերը չշասկընալ ձեացուց , թէն
 այնչափ տմարդի էին որ տիկին Տանկլար շառագնեցաւ :
 — Ես ալ երաժշտութեան մէջ բաւական յաջողութիւն ու
 նիմ , շարունակեց երիտասարդը , զոնէ դասատուներս այն
 պէս կ'ըսէին . սակայն զարմանալի բան որ ձայնս ամենեին
 ուրիշ ձայնի հետ չկըցայ յարմարցընել , մանաւանդ սբբանայի հետ — :
 Տանկլար թեթե կերպով ժպտեցաւ որ կը նշանակէր .
 — Բայց ինչո՞ւ չէք բարկանար : Իրօք , ըսաւ Ալպէրին ,
 յուսալով իւր նողատակին հասնել , իշխանը և աղջիկս երեկ
 ամենուն զարմանքը դրաւեցին : Հոս չէիք երեկ , պարոն որ
 Ալպէրի :

— Ա՞ր իշխանը, հարցուց Ալպէր:

— Գալալի անթի իշխանը, կրկնեց Տանկլար, որ կ'ուզէր
միշտ նայն տիտղոսը երիտասարդին տալու:

— Ա՛չ, կը ներէք, ըստ Ալպէր, անոր իշխան ըլլալը չէի
դիտեր. ուրեմն երէկ Գալալի անթի իշխանը օրիորդ Կօժէնիին
հետ երդեց: Ցիրաւի խիստ սիրուն բան մը պիտի ըլլար + և
խիստ կը ցաւիմ որ չկրցայ ներկայ դտնուիլ: Ձեր հրաւերին
վրայ չդալուս պատճառը այն էր որ տիկին տը Մորսէրֆը
Շամօ-Ռընո սեպիւչին տունը տանելու ստիպուած էի, ուր
Գերմանացիները կ'երկեին — :

Եւ լուսութենէ մը եաքը և որպէս թէ ամենեին խօսք մը եւ
դած չէր,

— Ներելի՞ է ինձ, կրկնեց Մորսէրֆ, որ իմ յարդ անքս
օրիորդ Տանկլարին մատուցանեմ:

— Աեցիք, կեցիք, կ'աղաչէմ, ըստ սեղանաւորը երիտա-
սարդը կեցընելով, կը լէք սս սիրուն եղանակը, թա, թա,
թա, թի, թա, թի, թա, թա, զմայլելի եղանակ մ'է, հի-
մա կը լմնայ . . . մաներկըրորդ մը միայն, լմնցաւ, կեցցես +
կեցջլը — :

Եւ սեղանաւորը սկսաւ սաստկութեամբ ծափահարել:

— Կլօք, ըստ Ալպէր, խիստ քաղցր կ'երդեն, և անկա-
րելի է որ ուրիշ մէկը իւր երկրին երածշտութիւնը Գալալ-
դանթիի հասկըցածէն աւելի աղէկ հասկընայ: Իշխան մ'է
ըսիք, այնպէս չէ. բայց եթէ իշխան չէ խկ, կրնայ ըլլալ.
Խտալիոյ մէջ շատ դիւրին է: Սակայն մեր աղնիւ երգեցիկ-
ներուն գառնալով՝ հաճէիք մէջ շնորհք մը ընել, Պ. Տան-
կլար, առանց անոնց իմացընելու թէ հոս օտարական մը
կայ, աղաչէիք օրիորդ Տանկլարը և Պ. Գալալդանթին որ
ուրիշ կտոր մը սկսին: Երածշտութեան ձայնը խիստ հեշ-
տալի կու դայ երբ քիչ մը հեռուէն կը լսուի կէս լուսա-
ւորեալ սենեկի մը մէջ, առանց տեսնուելու, առանց տես-
նելու, և հետեւաբար առանց երածշտին անհանդ ստութիւն

պատճառելու , որ այս կերպով իւր ոգւոյն բոլոր բնազդմամբը
և սրտին ամեն եռանդով երգելու կը յուզուի — :

Այս անդամ Տանկլար երիտասարդին սրտի հանդարատու-
թենէն յաղթուեցաւ :

Մօնթէ-Քրիսթօն մէկ կողմ քաշեց :

— Ի՞նչ կ'ըսէք մեր սիրահարին համար , ըսաւ :

— Յայտնապէս շատ ցուրտ կ'երեկի ինձ . բայց ինչ պիտի
ընէք , խօսք տուած էք :

— Անտարակոյս , խօսք տուած եմ աղջիկս այնպիսի մար-
դու տալու , որ սիրէ զան և ոչ թէ չսիրէ : Չտեսաք՝ ինչպէս
կիմք նման պաղ , և սիրամարդի նման զոռող է . եթէ հա-
րուստ ըլլար , եթէ Գավալդանթիներուն հարստութիւնն ու-
նենար , կրնայինք ձայն շանել : Ճշմարիտ՝ դեռ աղջկանս
չշարցուցի , եթէ լաւ ընարողութիւն ունի . . . :

— Չեմ զիտեր , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ , թէ անոր վրայ
ունեցած բարեկամութիւնն է որ զիս կը կուրացընէ . ստոյգ
կ'ըսեմ որ Պ. տը Մորսէրֆ ազնիւ երիտասարդ մ'է , որ ձեր
աղջիկը խիստ երջանիկ պիտի ընէ , և վաղ կամ անազան
երեելի մէկը պիտի ըլլայ . քանզի վերջապէս իւր հօրը վի-
ճակն ալ զէշ չէ :

— Հը՛ :

— Ինչո՞ւ կը տարակուսիք :

— Անցեալը . . . այն մութ անցեալը միշտ կը մնայ :

— Բայց հօր անցեալը որդւոյն չնկատեր :

— Ծատ աղէկ կը նկատէ :

— Եյդպէս շուտով ձեր որոշումը մի փոխէք . ամիս մը ա-
ռաջ այս ամուսնութիւնը խիստ վայելուշ կը համարէիք . . . :
Ծիսակը ըսեմ , ես խիստ կը ցաւիմ . դուք իմ տանս մէջ
ճանչցաք այն Գավալդանթի երիտասարդը , զոր ես չեմ ճանչ-
նար , կը կրկնեմ այս խօսքը .

— Իմ ճանշնալս բաւական է , ըսաւ Տանկլար :

— Ի՞նչպէս , ուրեմն անոր վրայ տեղեկութիւններ ստա-
ցաք , հարցուց Մօնթէ-Քրիսթօ :

— Միթէ այդ բանը ընելու հարկ կայ, և միթէ մարդուս երեղյթը իւր ինչ ըլլալը ջայտներ . նախ և առաջ հարուստ է:

— Ես չեմ ստուգեր:

— Սակայն գուք անոր երաշխաւորն էք:

— Յիսուն հազար ֆրանքի համար, որ չնչին զումար մ'է:

— Ընտիր գաստիարակութիւն մը առած է:

— Հըհ, ըստ Մօնթէ-Քրիսթօ ալ:

— Երաժշտութիւն դիաէ:

— Բոլոր Խոտալացիները դիտեն:

— Ճշմարիտ, կոմս, այդ երիտասարդին համար իրաւունք չունիք:

— Մորսէրֆի ընտանեաց հետ ձեր ըրած որոշումը դիտնալովս, ցաւով կը տեսնեմ որ այս երիտասարդը եկած է անոնց զործը տւրելու և իւր հարտութեամբը զեզչումներ ընելու:

Տանկլար սկսաւ ծիծաղիլ:

— Ո՛չ, ինչպէս խիստ կ'երեկիք, ըստ, այս դործերը ամեն օր կը պատահին:

— Այսու ամենայնիւ չեք կրնար ձեր որոշումը այսպէս գըրծել, սիրելիդ իմ Պ. Տանկլար. Մորսէրֆի ընտանիքը այս ամուսնութիւնը կատարելու յոյս ունին:

— Ստուգիւ կը յուսան:

— Վնտարակոյս:

— Ուրեմն մտքերնին թող իմացընեն, պէտք էիք այս գործին վրայ երկու խօսք ըսել անոր հօրը, սիրելիդ իմ կոմս, գուք որ անոնց տան մէջ այնչափ համակրութիւն դտած էք:

— Ե՞ս, և ուր տեսած էք այդ բանը:

— Կարծեմ անոնց պարահանդէսին մէջ, ինչպէս, միթէ կրնաք ուրանալ որ կոմսուհին, այն սէդ Մէրսէտէսը, գոռող Գաթալանուհին, որ իւր հին բարեկամներուն հետ հազիւ բերանը կը բանայ խօսելու, ձեր թեր մտաւ, ձեզի հետ պարտէզը իջաւ, ծառուղիները պտըտեցաւ, և կէս ժամ ետքը միայն ձեզմէ բաժնուեցաւ:

— ԱՇ, սրաբոն սեպուհ, չէք թողուր որ մտիկ ընենք . ձեզի պէս նուադամոյի մը կողմանէ անդթութիւն մ'է այս :

— Շատ աղէկ, ծաղրեցէք — , ըստ Տանկլար : Ետքը Մօնթէ-Քրիսթոյի գառնալուլ,

— Յանձնառու կ'ըլլաք ըսածս անոր հօրը ըսելու :

— Յօժարութեամբ կ'ըսեմ եթէ կ'ուզէք :

— Կ'ուզէմ որ այս անդամ խնդիբը պարզուի և որոշուի , հոյրը թող աղջիկս ուզէ , ժամանակ մը որոշէ , իւր սատակի պայմանները յայտնէ , վերջապէս իրարու միտքը հասկընանք և կամ գործը աւրենք . բայց ըսածս կը հասկընաք , երկընցընել պէտք չէ :

— Շատ աղէկ, ձեր հրամանը կը կատարեմ :

— Զեմ ըսեր ձեզ թէ ուրախութեամբ զի՞նքը տեսնել կը փափաքիմ, բայց վերջապէս իրեն կ'ըսպասեմ . ինչպէս զիտէք՝ սեղանաւոր մը իւր խօսքին զերին ըլլալ պէտք է — :

Եւ Տանկլար Պ. Անարէայի կէս ժամ առաջ հանած հառաջանաց նման հառաջանք մը հանեց :

— Կեցցես, կեցջիք , զոչեց Մորսէրֆ սեղանաւորը ծաղբէլու մտօք քիչ մը առաջ անոր ըսածը կրկնելով և նուազուած ու երգուած եղանակին վերջը ժափահարելով — :

Տանկլար կ'ըսկսէր ծուռ աչօք Ալպէրին նայիլ երբ ծառայ մը եկաւ և ցած ձայնալ երկու խօսք խօսեցաւ անոր :

— Հիմա կու դամ, ըստ սեղանաւորը Մօնթէ-Քրիսթոյին . սպասեցէք ինծի , զուցէ 'ի դարձիս խօսք մը ունենամ ձեզ ըսելու — :

Այս ըսելէն ետե դուրս ելաւ :

Տիկին Տանկլար իւր ամուսնոյն բացակայութեան ատեն դնաց իւր աղջկան սենեակը բացաւ , և Պ. Անարէա , որ Էօժէնիին հետ դաշնամուրին առջելը նստեր էր , ձգտալարի պէս սաք ելաւ :

Ալպէր ժպիտով մը օրիորդ Տանկլարը բարեեց , որ առանց շփոթութիւն մը յայտնելու իւր սովորական պաղութեամբը անոր ողջոյնին պատասխանեց :

Գավալլանթի յայտնի այլայլած կ'երեէր . Երբ Մորսէրֆը բարեց , երիտասարդը խիստ ամբարտաւան կերպով անոր պատասխանեց :

Այն ատեն Ալպէր սկսաւ օրիորդ Տանկլարի ձայնը չափաղնց զովել և առջի իրիկուան երեկոյթին ներկայ չգտնուելուն համար զգացած վիշտերը յայտնել :

Գավալլանթի մինակ մնալով Մօնթէ-Քրիսթօն մէկ կողմբաշեց :

— Բաւական է , ըստ աիկին Տանկլար , երաժշտութիւնները և զովաւթիւնները մէկ գի թողուցէք և եկէք թէյ խմենք :

— Եկու , Լուիդ — , ըստ օրիորդ Տանկլար իւր բարեկամուհւոյն :

Ամենքն ալ մերձակայ սրահը անցան , ուր իրօք թէյը պատրաստուած էր :

Անդիմական սովորութեան համեմատ դրդալները դաւաթներուն մէջ ձգելու միջոցին՝ դուռը բացուեցաւ և Տանկլար յայտնի այլայլած ներս մտաւ :

Գլխաւորաբար Մօնթէ-Քրիսթօ սեղանաւորին այս յուզմունքը դիտեց և նայուածքով պատճառը հարցուց :

— Հիմա Յունաստանէն նամակներս ընդունեցի :

— Ա՛չ , ուրեմն այս պատճառաւ կանչեցին զձեզ , ըստ կոմուը :

— Այս :

— Օթոն թադաւորը բնչովէս է եղեր — , հարցուց Ալպէրդուարիթ ձայնով մը :

Տանկլար առանց պատասխանելու կողմակի անոր երեսը նայեցաւ , և Մօնթէ-Քրիսթօ իւր երեսը դարձուց , որպէս զի իւր դիմացը վրայ երեցած և դրեթէ անմիջապէս ետքը աներեսոյթ եղած զթութեան զգացումը չյայտնուի :

— Մէկտեղ պիտի մեկնինք , այնպէս չէ , ըստ Ալպէր կոմսին :

— Ծատ աղէկ — , պատասխանեց կոմսը :

Ալպէր սեղանաւորին այն նայուածքէն բան մը չէր կրցէր հասկընալ, ուստի դէպ 'ի Մօնթէ-Քրիսթօ դառնալով, որ Տանկլարի միտքը շատ աղէկ հասկըցէր էր,

— Տեսաք, ըսաւ, ինչպէս երեսս նայեցաւ:

— Այո՛, պատասխանեց կոմսը, բայց անոր նայուածքին մէջ մասնաւոր բան մը նկատեցիք:

— Անշուշտ, սակայն Յունաստանի լուրերով ինչ ըսել ուզեց:

— Ես ի՞նչպէս զիտնամ:

— Վասն զի կարծեմ թէ այն երկրին վրայ տեղեկոթիւններ ունիք դուք —:

Մօնթէ-Քրիսթօ պատասխանել չուզով մարդու մը պէս ժպտեցաւ:

— Տեսէք, ըսաւ Ալպէր, ահա ձեզ կը մօտենայ. ես օրիորդ Տանկլարին քովը կ'երթամ անոր նկարը զովելու, և այն միջոցին հայրը ժամանակ պիտի ունենայ ձեր հետը խօսելու:

— Եթէ զովութիւն մը պիտի ընէք, զոնէ անոր ձայնը դովեցէք, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ:

— Ոչ, ամեն մարդ ձայնը կրնայ զովել —:

Ալպէր ժպիտով մը եօծէնիին քովը զնայ:

Այն միջոցին Տանկլար կոմսին ականջին ըսաւ.

— Պատուական խրատ մը տուիք ինձ, և ֆէրնանի ու Եանչեայի վրայ ամբողջ սոսկալի պատմութիւն մը կայ:

— Ի՞նչ կ'ըսէք, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ:

— Այո՛, ետքը կը պատմեմ ձեզ, բայց երիտասարդը հետերնիդ տարեկք, քանզի միծ անհանդ ստութիւն կ'ըզդամ զոն հռա տեսնելով:

— Հիմա միատեղ պիտի մեկնինք, բայց կ'ուզէք որ հայրը ձեզ դրիեմ:

— Հիմա աւելի կ'ուզեմ տեսնել զինքը:

— Եղէկ —:

Կոմսը Ալպէրին նշան մը ըրաւ :

Երկուքնին ալ տիկինները բարեեցին և մեկնեցան՝ Ալպէր օրիորդ Տանկլարի ցուցուցած արհամարհանաց բոլորովին անտարբեր երենելով, և Մօնթէ-Քրիսթօ սեղանաւորի կնոջ մը իւր ապառնին ապահովելու համար ունենալու խոչեմութեանը գրայ տիկին Տանկլարի տուած խրատները կրկնելով :

Այն ատեն յաղթութեան բոլոր ասպարէզը Պ. Գավալը պանթիի մասց :



ՊԼՈՒԹ ՀՃ.

ՀԱՅՑ

ԱԶԴԻ թէ կոմսին ձիերը ծառուղլոյն
անկիւնը գարձեր էին, երբ Ալպէր
դրեթէ բռնագատուած խիստ բար-
ձրաձայն ծիծաղով մը կոմսին դառ-

ֆալով ըսաւ :

— Ըսէք, կոմս, դերս աղէկ չխաղացի. Շարլ Թ. Աէն-
Պարթէլմիէն ետքը Գաթէրին տը Մէտիսիին հարցուցածին
ցէս ես ալ ձեզ իր հարցընեմ:

- Ի՞նչ նկատմամբ :
- Հակառակորդիս Պ. Տանկլարին տունը պատռով ընդունուելուն նկատմամբ :
- Ո՞ր հակառակորդին :
- Ձեր պաշտպանած Պ. Անտրէա Գավարդանթիին :
- Ո՛չ, անզատեհ կատակներ մի ընէք, դերակոմս . միայն Պ. Տանկլարի հետ ունեցած գրամային դործոյ մը մէջ Պ. Անտրէան կը պաշտպանեմ :
- Եթէ երիտասարդը պաշտպանութեան պէտք ունենար, պիտի մեղադրէի զձեղ, սակայն բարեբազդաբար իմ կողմանէս երկիւղ չունի :
- Ի՞նչպէս, կը կարծէք որ սիրահարած ըլլայ :
- Հաւատացէք ինձ, իւր նայուածքը ցանկական է և ձայնը սիրահարական, և կը փափաքի սէդ հօժէնիին սէրը ստանալ : Ճշմարիտ կ'ըսեմ՝ յանցանքը իմա չէ, ես զործը այնպէս կը տեսնեմ և կը կրկնեմ թէ Պ. Անտրէան սէդ հօժէնիին սիրահարած է :
- Ձեր ի՞նչ հողը, քանի որ անոնք միայն դձեղ կ'ուզեն :
- Մի այդպէս ըսէք, կ'աղաջեմ, սիրելիդ իմ կոմս . երկու կողմէն ալ խստութեամբ կը վարուին հետո :
- Ի՞նչպէս երկու կողմէն :
- Այս, օրիորդ հօժէնի հաղիւ թէ ինձ պատասխան տուաւ, իսկ օրիորդ տ'Արմիլին անոր մտերմուչին ամենեին չպատասխանեց :
- Այս, բայց հայրը խիստ կը սիրէ զձեղ :
- Հայրը, ընդ հակառակն սիրոս դաշոյններու հարուածներ խօթեց . թէև այն դաշոյնները ինձի համար ոչինչ էին և թատրերութեան դաշոյններու կը նմանեին, սակայն ինքը կը կարծէր թէ ճշմարիտ հարուածներ կ'ընէ :
- Նախանձոտութիւնը սէրը կը ցուցընէ :
- Այս, բայց ես նախանձու չեմ :
- Պ. Տանկլար կը նախանձի :

- Ալեքս, Տաղորէէն :
- Աչ, Անդիկ :
- Խանձիւ. դրաւ կը դնեմ որ ութ օրէն իւր գուուը երեւ
սիս փակել պիտի տայ :
- Կը սխալիք, սիրելիդ իմ դերակոմա :
- Ի՞նչ ազացոյց ունիք :
- Ազացոյց կ'ուզէք :
- Այս :
- Այս ամուսնութեան որոշումը ընելու համար Պ. Տան-
կլար առաջարկեց ինձ որ Պ. առ Մորաէրֆ կոմսը աղաչեմ
որ իրեն հետ տեսնուելու երթայ :
- Որո՞ւ հետ :
- Սեպուհին հետ :
- Ա՛չ, սիրելիդ իմ կոմս, ըսաւ Ալզէր իւր բոլոր կեղ-
ծաւորութեամբը, անոր այս յանձնարարութիւնը պիտի չկա-
տարէք, այնպէս չե :
- Կը սխալիք, Ալզէր, պէտք եմ կատարել, ըստ որում
խօսք առւած եմ :
- Կ'երեի թէ, ըսաւ Ալզէր հառաջնքով մը, անշոշտ
զիս ամուսնացընել կ'ուզէք :
- Ես կը փափաքիմ ամսնուն հետ բարեկամ ըլլալ բայց
աղէկ միաքանեկաւ, բաւական ժամանակ է՝ Պ. Տըղրէն տի-
կին Տանկլարի տունը տեսած չեմ :
- Գյտութիւն մը ունեցաւ :
- Տիկնո՞ջ հետ :
- Աչ, պարսնին հետ :
- Աւրեմ պարսնը բան մը դիմեր է :
- Ի՞նչ աղւար կատակներ կ'ընէք :
- Բայց կը կարծէք որ կասկածած ըլլայ, ըսաւ Մօնթէ-
Քրիսթօ բոլորովին պարզմութիւն ձեացընելով :
- Բայց ըսէք ինձ, սիրելի կոմս, դուք ուրկից կու դաք :
- Գանկոյէն ըսենք :

- Առ ալ բաւական հեռու չէ :
- Բայց միթէ ես ձեր բարիզեանները կը ճանշնա՞մ :
- Ամուսինները ամեն տեղ նոյն են . եթէ ո՛ր և է երկրի մէջ անհատ մը ճանցաք , անոր ցեղն ալ կը ճանշնաք :
- Ուրեմն Տանկլարի և Տըպրէի իրարու հետ զժտելնուն պատճառը ի՞նչ է . իրարու շատ աղէկ յարմարած կ'երեւէին , ըստ Մօնթէ-Քրիսթօ վերստին պարզմտութիւն ձեւացընելով :
- Հիմա ալ Եղիսի դապանեաց մէջ կը մտնենք և ես ամենեին աեզեկութիւն չունիմ . երբ Պ. Գալացանթի Պ. Տանկլարի ընտանիքէն ըլլայ , այս բանս անոր հարցուցէք — :
- Կառքը կեցաւ :
- Հասանք , ըստ Մօնթէ-Քրիսթօ . դեռ ժամը տասն ու կէս է , վեր եկէք :
- Յօժարութեամբ :
- Ետքը կառքս կը տանի զձեղ :
- Ոչ , չնորհակալ եմ , անշուշտ իմ կառքս ետևնէս սիրատի զայ :
- Իրօք , ահա կու դայ — , ըստ Մօնթէ-Քրիսթօ իւր կառքէն վար ցատկելով :
- Երկուքնին ալ տան մէջ մտան , և սրահը դացին , որ արդէն լուսաւորուած էր :
- Պաթիսթէն , ըստ Մօնթէ-Քրիսթօ , մնդի թէյ բեր — : Պաթիսթէն առանց խօսք մը խօսելու դուրս ելաւ :
- Երկու մանրերկորդ ետքը՝ ափսէով մը վերադարձաւ . անոր մէջ ամեն բան պատրաստուած էր , և կարծես ողիներու թեթև ընթրիքի մը պէս զետնին տակէն կ'ելնէր :
- Յիրաւի , ըստ Մորսէրֆ , զիս զարմացընողը ձեր հարսաւութիւնը չէ , սիրելիդ իմ կոմս , քանզի դուցէ ձեզմէ աւելի հարուստներ զանուին . ձեր հանձարը չէ , քանզի Պոմարչէ ալ թէւ ձեզմէ աւելի հանձար չունէր , բայց ձեզի շափ ունէր . այլ ձեր ծառաներուն ծառայելու կերպը զիս կը զարմացընէ , որոնք առանց ձեզ պատասխան մը աալու՝

վայրկենի մը , մանրերկրորդի մը մէջ ձեր կամքը 'ի դործ կը դնեն . կարծես թէ ձեր հնչելու եղանակէն ձեր փափառածը կը դուշակեն , որպէս թէ ձեր ուզածը միշտ պատրաստ եղած ըլլար :

— Ըստանիդ զրեթէ Ճիշդէ . ծառաներս իմ սովորութիւնս դիտեն , և օրինակի համար հիմա կը տեսնէք . թէյը խմբուատեն բան մը չէք ուզեր :

— Անշուշտ , ծխել կ'ուզեմ — :

Մօնթէ-Քրիսթ զանդակին մօտեցաւ և հարուած մը տուաւ :

Մանրերկրորդ մը ետքը՝ մասնաւոր դուռ մը բացուեցաւ , և Ալի Լաթագիոյ ընտիր ծուխով լցուած երկու ծխափողերով ներս մտաւ :

— Ճշմարիտ կ'ըզմայլիմ , ըստ Մորսէրֆ :

— Բայց պէտք չէ որ զարմանաք , կրկնեց Մօնթէ-Քրիսթո . Ելի դիսէ որ թէյ կամ սուրճ խմբուատեն կը ծխեմ . դիտէ որ թէյ ուզեցի , դիսէ որ տունս վերադարձայ . երբ դինքը կանչելս կը լսէ , ինչ պատճառաւ կանչելս կը զուշակէ . այնպիսի երկրէ մը եկած է . ուր հիրասիրութիւնը դընաւորաբար ծխափողով 'ի դործ կը դրուի . և մէկ ծխափողի տեղ երկու կը բերէ :

— Այս ալ միւսներուն պէս հիանալի է . բայց սա ալ Ճշմարիտ է որ ձեզմէ զատ մէկը Ո՛չ , բայց ինչ կը լսեմ — :

Եւ Մորսէրֆ դէպ 'ի դուռը հակեցաւ , ուրկից իրօք փանդիսի ձայնին հետ միաբանեալ ձայներ կը լսուէին :

— Այս իրիկուն երաժշտութեան նուիրերէք ինքզինքնիդ , սիրելիդ իմ գերազում , ըստ Մօնթէ-Քրիսթո . օրիորդ Տանկլարի դաշնամուրէն հեռանալով ձայտէի նուազածութեան կը հանդիպիք :

— Հայտէ ըսկիք , ինչ քաղցր անուն մ'է այդ , ուրեմն լորտ Պայրընի քերթուածներէն դուրս սառւզիւ Հայտէ անունը կրող կիներ կը գտնուին :

— Անտարակոյս . Հայտէ անունը հազուադիւտ է Գաղղիոյ մէջ , սակայն բաւական հասարակ է Ելզականիոյ և Եպիսոպուի մէջ . մկրտութեան անունի պէս բան մ'է , ինչպէս կ'ըսեն Բարիղցիք , և կը նշանակէ ողջախոհութիւն , պարկեշտութիւն և անմեղութիւն :

— Ա՛յ , ինչպէս սիրուն անուն մ'է , բռաւ Ալպէք , մըշափ կը փափաքէ ի որ մեր Գաղղիացի կիներն աւ օրիորդ Բարեսըրտութիւն , օրիորդ Լոռութիւն և օրիորդ քրիստոնէական Ընկերութիւն կոչուէին : Ըսէք , կ'աղաչեմ , օրիորդ Տանկըսր փոխանակ Գլէք-Մարի-Խօճէնի կոչուելու՝ և թէ օրիորդ Աղջախութիւն-Պարկեշտութիւն-Անմեղութիւն կոչուէր , ո՛չ և ամուսնութեան արարողութեան մէջ ինչ ազգեցութիւն պիտի ընէք արգեօք :

— Այդչափ բարձրաձայն մի ծաղրէք , բարեկամ . Հայտէ կրնայ ձեր ձայնը լսել :

— Կը նեղանայ արդեօք :

— Էմինեին ; ըսաւ կոմսը :

— Բարի անձ մ'է , հարցուց Ալպէք :

— Բարութիւն չէ ըրածը , այլ պարաքմը . զերի մը շկրնարիւր տիրոջը դէմ բարկանալ :

— Գուք ալ հիմա կատակը թողուցէք , միթէ տակաւին զերի կայ :

— Անտարակոյս , քանի որ Հայտէ իմ զերիս է :

— Երօք՝ ձեր ըրածը և ունեցածը ուրիշներուն ըրածին և ունեցածին չնմանիր : Պ . Մօնթէ-Քրիսթոյ կոմսին զերին ըլլալ , Գաղղիոյ մէջ պատույ աստիճան մ'է ան ալ : Ասկիներու հետ ձեր խաղալը մատծելով , անշուշո ձեր զերին տարին վեց հարիւր հաղար ֆրանք պիտի արժէ ձեղ :

— Վեց հարիւր հաղար ֆրանք կ'ըսէք , ողօրմելի աղջնկը ատկէ շատ մեծ հարստութիւններ ունէր , այնպիսի դանձերու մէջ ծնած է , որոց քով Հայտը և Քէ Քէշէներուն դանձերը ոչինչ բաներ են :

- Ուրեմն իշխանուհի մ'է :
- Ճիշդ այդպէս , և իւր երկրին ամենէն մած իշխանուհիներէն մէկը :
- Մաքէս անցաւ . բայց ի՞նչպէս իշխանուհի մը զերի եղած է :
- Ի՞նչպէս Տընի բռնաւորը դպրոցի ուսուցիչ եղաւ . չէ որ պատերազմին բաղդը և բաղդին խաղը ամեն բան կարելլի կ'ընեն :
- Եւ անոր անունը դաղսնիք մ'է , պարուն կոմն :
- Ամենուն համար այս , բայց ձեզի համար , սիրելիդ իմ գերակոմն , որ իմ բարեկամն էք և անշուշտ մարդու բան չէք ըսեր , այնպէս չէ , չէք խոստանար որ լսածնիդ դաղսնի պիտի պահէք :
- Ո՛չ , պատուոյս վրայ :
- Եանեայի կուսակալին պատմութիւնը դիտէք :
- Անշուշտ , Թէքէ-աէլէնի Ալի-բաշային ըսել կ'ուզէք , ըստ որում հայրս անոր ծառայութեան մէջ հարստացեր է :
- Սաոյդ է , ես մոտցեր էի :
- Հայտէն Ալի-բաշային ի՞նչն է :
- Անոր աղջիկն է :
- Ի՞նչպէս , Ալի-բաշային :
- Եւ անոր կնոջը Վասիլիքիին :
- Եւ Ալի-բաշային աղջիկը ձեր զերին է :
- Այս , ըսի ձեզ :
- Բայց ի՞նչպէս :
- Օր մը կաստանդինուղօլսոյ վաճառանոցէն կ'անցնէի՝ զնեցի զան :
- Զեղի չետ , սիրելիդ իմ կոմն , մարդ չապրիր , այլ կ'երազէ : Հիմա զուցէ անխոչեմնութիւն է ըստած խնդիրքս :
- Ըսէք , հոդ չէ :
- Բայց որովհեան միատեղ գուրս կ'ելնէք , որովհեան ձեր հեաը Օքէբային կը բերէք . . . :

- Ետքը :
- Համարձակիմ խնդիրք մը ընելու :
- Ամեն բան ինդրելու ազատ էք :
- Ուրեմն, սիրելիդ իմ կոմս, զիս ձեր զերբին ներկա յացուցէք :
- Յօժարութեամբ, բայց երկու դաշտմբ :
- Առաջէն կ'ընդունիմ զանոնք :
- Նախ ձեր անոր ներկայացուիլը ամենենին մէկու պիտի չայտնէք :
- Ծատ աղէկ — :
- Մորսէրֆ ձեռքը երկնցուց :
- Կ'երդնում, ըսաւ :
- Երկրորդ՝ Պ. մը Մորսէրֆ կոմսին անոր հօրը ծառաւյելը պիտի չըսէք :
- Կ'երդնում առոր համար ալ :
- Ծատ աղէկ, դերակամն, այս երկու երդումները պիտի յիշէք, այնպէս չէ :
- Այս, ըսաւ Ալոյէր :
- Ծատ աղէկ, ես ալ զձեղ պատուաւոր մարդ մը կը ճանչնամ — :
- Կոմսը վերստին զանգակը հնձեցուց, և Ալի ներս մտաւ :
- Հայուէին իմացուր, ըսաւ, որ սուրՃո իւր սենեակը խմբու պիտի զամ, և ըսէ որ բարեկամներէս մէկը իրեն ներկայացընելու ներողութիւնը կը խնդրեամ — :
- Ալի խոհարհութիւն մը ընելով գուրս ելաւ :
- Ուրեմն իրարու միաքը հասկրցանք, ամենենին ուղղակի հարցումներ պիտի չընէք. այնպէս չէ, սիրելիդ իմ դերակոմս և թէ բան մը հասկընալ կ'ուզէք, ինծի հարցուցէք և ս կը հարցընեմ անոր :
- Ծատ աղէկ — :
- Ալի վերստին զալով վարադոյը բռնած իեցաւ՝ իւր տիւրով և Ալոյէրին իմացընելու համար որ կընան ներս մտնել :

— Եկեղեց երթանք — , ըստ Մօնթէ - Քրիսթօն
Ըլպէր ձեռքովը մազերը շիտկեց , և ընչացքը ոլորեց :
Կոմսը դիմարկը առաւ , ձեռնոցները հաղաւ և Ալպէրին
առջեր անցաւ Հայտէին բնակարանը երթալու , որուն վրայ
Ելի յառաջապահ պահանորդի մը պէս պահպանութիւն կ'ըներ .
և երեք սենեկապահ Գաղղիացի կիները Միրթոյի հրամաննի
տակ՝ պահակներու պէս կը պաշտպանէին զան :

Հայտէ առաջին սրահին մէջ զարմանքով և հետաքրքրու-
թեամբ կ'ըսպասէր . քանզի առաջին անդամն էր որ Մօնթէ -
Քրիսթոյէ զատ ուրիշ մարդ մը իւր սենեկալը պիտի մտնէր :

Քազմոյի մը մէկ անկիւնը նտոած էր՝ սրունքները իւր տակը
ծալլած , և Արևելքի խիստ փառառոր բանուած և գծաւոր
մտաքսեայ կերպասներու մէջ զողցես բոյն մը կազմած էր :

Իւր քովը կը դժոնուէր այն նուազարանը , որուն ձայնը
զինքը յայտներ էր :

Այս դիրքին մէջ Հայտէ խիստ շնորհալի կ'երեւէր :

Հայտէ Մօնթէ - Քրիսթօն տեսնելով իրեն յատուի եղած
որդիական և սիրալիր ժպիտովը ոտք ելաւ :

Կոմսը գէպ 'ի անոր յառաջացաւ և ձեռքը անոր երկնցուց ,
որուն վրայ Հայտէ ըստ սովորութեան իւր շուրթերը յարեց :

Ալպէր գրան քովո մնացեր էր , այնչափ Հայտէին գեղեց-
կութենէն յափշտակուեր էր . քանզի առաջին անդամն էր որ
այնպիսի գեղեցկութիւն մը կը տեսնէր , որուն վրայ Գաղ-

ղիոյ մէջ զաղափար մը չեն կրնար ունենալ :

— Ո՞վ է այս սպարոնը , հարցուց յունարէն լեզուաւ նո-
րատի աղջիկը Մօնթէ - Քրիսթոյին . եղբայր մ'է , բարեկամ
իր կամ լոկ ծանօթ մէկն է թէ թշնամի :

— Բարեկամ մ'է , ըստ Մօնթէ - Քրիսթօն նոյն լեզուաւ :

— Անունը ի՞նչ է :

— Ալպէր գերակոմա . Հոռոմի մէջ աւաղակներու ձեռքէն
ազատածս է :

— Ի՞նչ լեզուով կ'ուղես ոբ հետը խօսիմ — :

Մօնթէ-Քրիսթօ զետ ՚ի Ալպէր դառնալով հարցուց՝
— Արդի Յունարէն լեզուն զիտէք:

— Ափսոս, ըստ Ալպէր, նախնի Յունարէնը անդամ չեմ
դիտեր, սիրելիդ իմ կոմն. Հոմերոս և Պղատոն ինձի չափ
ողորմիլի, և կը համարձակիմ իսկ ըսելու, ինձի չափ անպի-
տան աշակերտ մը ունեցած չեն:

— Ուրեմն, ըստ Հայտէ՝ ուզելով իմացընել որ Մօնթէ-
Քրիսթօյի հարցումը և Ալպէրի պատասխանը հասկըցեր էր,
եթէ կը ներես՝ Գաղղիարէն կամ Խտալերէն լեզուաւ հեաը
կը խօսիմ — :

Մօնթէ-Քրիսթօ վայրկեան մը մտածեց :

— Խտալերէն խօսէ հետը — , ըստ :

Ետքը զետ ՚ի Ալպէր դառնալով .

— Մեղք որ արդի կամ նախնի Յունարէնը չէք կրնար խօ-
սիլ, որոնք Հայտէ սքանչելի կերպով կը խօսի . ողորմիլի աղ-
ջիկը պիտի ստիպուի ձեր հետը Խտալերէն խօսիլ, որով ա-
նոր վրայ սիալ գաղափար մը պիտի ունենաք — :

Մօնթէ-Քրիսթօ Հայտէին նշան մը ըրաւ :

— Բարի եկար, բարեկամ, ըստ նորատի աղջիկը ընտիր
թոսկաներէն լեզուաւ, և Հռոմէտիան այն քաղցր արտասա-
նութեամբ, որ Տանթէի լեզուն Հռոմերի լեզուին չափ քաղ-
ցրահնչին կ'երեցընէր . Ալի, սուրճ և ծխափողեր բեր — :

Եւ Հայտէ ձեռքովը Ալպէրի նշան ըրաւ որ մօտենայ, ինչ
ատեն Ալի իսկոյն կը հեռանար իւր նորատի տիրուհւոյն հրա-
մանները ՚ի զործ դնելու :

Մօնթէ-Քրիսթօ Ալպէրին երկու ծալածոյ աթոռ ցուցուց,
և իւրաքանչիւր ոք մէկ աթոռ առնելով՝ փոքր սեղանի մը մօ-
տեցան, որուն վրայ բնական ծաղիկներ, նկարներ և երաժշ-
տութեան տետրակներ կային և ասոնց մէջ տեղը ծխաքաշ
մը դրուած էր :

Ալի սուրճով և ծխափողերով ներս մտաւ, իսկ Պ. Պա-
թիսթէնի արդիլուած էր տան այս մասին մէջ մտնելու :

Ալպէր Կուսպիացիին իրեն ներկայացուցած ծխափողը մերձեց։
— Մի քաշուիք, առեք, առեք, ըստ Մօնթէ-Քրիսթօ։
Հայտէ զրեթէ Բարիզեան տիկնոջ մը չափ քաղաքակրթեալ
է։ Հավանայի զ լանիկները իրեն անհաճոյ են, ըստ որում
դէշ հոսերը չախորժեր։ բայց զիտէք աղէկ որ Արեւլքի
ծուխերը քաղցր հոտ մը ունին։

Ալի գուրս ելաւ։

Առւրծին զաւաթները լցուած էին. միայն թէ Ալպէրի հա-
մար շաքարաման մը զրեր էին։

Մօնթէ-Քրիսթօ և Հայտէ Արաբացի այս ըմպելիքը Արա-
բացւոց պէս կը խմէ ին, այսինքն առանց շաքարի։

Հայտէ ձեռքը երկնցուց և իւր վարդաղոյն ու նուրբ մա-
տերուն ծայրով ձաբռնի յախճապակեայ դաւաթը առաւ ու
իւր շրթանց մօտեցուց այնպիսի անկեղծ ուրախութիւն մը ըդ-
գացող մանկան մը պէս, որ իւր սիրածը կը խմէ կամ կ'ուտէ։

Նոյն միջոցին երկու կիներ ներս մտան, երկու ափսէնե-
րով պաղպաղակներ և օշարակներ բերին, և անոնց համար
յատկացեալ երկու փոքր սեղաններու վրայ դրին։

— Եիրելի ասպնջականս, և գուք տիկին, ըստ Ալպէր
Խտալերէն լեզուաւ, ներեցէք ապշութեանս, քանդի իրօք
հիացման մէջ կը դանուիմ. ինքզինքս Արեւելքի, Ճշմարիտ
Արեւլքի մէջ կը նկատեմ, ոչ թէ ինչպէս որ գժրաղդա-
րար ես տեսայ, այլ Ճիշդ ինչպէս որ Բարիզի մէջէն երա-
զիցի. քիչ մը առաջ կառքի րուն անցնելը և օշարակ ծախող-
ներուն զանդակներուն հնչիւնը կը լսէի։ Ո՛չ, տիկին, ին-
չն Յունարէն խօսիլ չդիտնայի, որպէս զի այս դիւթեալ
տեսարաններով խառն ձեր խօսակցութիւնը այնպիսի երե-
կոյթ մը կազմէր, որուն յիշատակը երբէք միտքէս չելներ։

— Զեզի հետ խօսելու չափ Խտալերէն լեզուն կրնամ խօ-
սիլ, պարոն, ըստ Հայտէ հանդարտութեամբ, և քանի որ
այդչափ Արեւլքը կը սիրեք, կրցածս պիտի ընեմ զայն հոս
ձեր առջել ներկայացընելու համար։

— Ի՞նչ նիւթի վրայ կրնամ խօսիլ, հարցուց ցած ձայնով
Ալղեր Մօնթէ-քրիսթոյին:

— Ինչ նիւթի վրայ որ կը փափաքիք. կրնաք անոր եր-
կիրն, երետասարդութեան և ամէն յիշածներուն վրայ, աս-
կէ զատ Հռոմի, Կաբուլի կամ Գիորէնցայի վրայ խօսիլ,

— Ոչ, Յոյն կնոջ մը հետ չենք կրնար խօսիլ այնպիսի
նիւթերու վրայ, որ Քարիզեան տիկիններու հետ կը խօսինք,
ես Արեւելքի վրայ պիտի խօսիմ անոր հետ:

— Խօսեցէք, սիրելիք իմ Ալղեր. իրեն ամենէն աւելի
հաճելի եղած խօսակցութիւնը այդ է — :

Ալղեր զէպ 'ի Հայտէ դառնալով հարցուց.

— Քանի՞ տարեկան էիք երբ Յունատանէն մակնեցաք:

— Հինգ տարեկան, պատասխանեց Հայտէ :

— Զեր հայրենիքը կը յիշէք, հարցուց Ալղեր :

— Երբ աչերս կը դոցեմ, հայրենեացս մէջ ամեն տեսած-
ներս վերստին կը տեսնեմ: Մարդու երկու տեսութիւն ունի.
մարմնոյ և հոգւոյ տեսութիւն: Մարմնոյ տեսութիւնը կրնայ
երեմն մոռնալ, սակայն հոգւոյ տեսութիւնը միշտ կը յիշէ:

— Ամենէն հեռու յիշած ժամանակնիդ ո՞րն է :

— Հազիւ քաղել սկսելու ժամանակս կը յիշեմ. մայրս,
որ Վասիլիքի կը կոչուէր, (Վասիլիքի թաղաւորական ըսել
է, յաւելցուց նորատի աղջիկը զլուխը վերցրնելով), մայրս
ձեռքէս կը բռնէր և երկուքս ալ քողով ծածկուած, բռլոր
մեր ունեցած ոսկիները քսակին տակը դնելով, բանարկե-
լոց համար ողորմութիւն ծողվելու կ'երթայինք ըսելով. «Փոխ
տայ Աստուծոյ որ ողորմի անանկին »: Երբ քսակնիս կը լե-
ցընէինք, մեր պալատը կը վերագառնայինք, և առանց հօրս
բան մը ըսելու՝ իրը մուրացիկներ ժողված բռլոր ստակնիս
վանահայրին կը դրկէինք, որ բանտարկելոց մէջ կը բաժ-
նէր զանոնք :

— Եւ այն միջոցին քանի՞ տարեկան էիք :

— Երեք տարեկան, ըսաւ Հայտէ :

— Աւրեան երեք տարեկան եղած հասակներ՝ ի վեր բոլոր պատահածները կը յիշե՞ :

— Բոլորն ալ :

— Կոմս, ըստ Մորսէրֆ կամաց մը Մօնթէ-Քրիսթոյին, կրնայիք ներեւ տիկնոջ որ իւր պատմութենէն մաս մը պատմեմլ։ Հօրս վրայ խօսելու հրաման չառեիք ինձ, դուցե տիկինը անոր վրայ ինքնին խօսի. չէք կրնար երևակայեւ թէ որչափ երջանիկ պիտի ըլլամ երբ այնպիսի զեղեցիկ բերանեմը անոր անունը լսեմ — :

Մօնթէ-Քրիսթօ Հայտէի երեսը նայեցաւ և յանքովը նշան մը ընելով, որով կ'իմացընէր անոր խիստ մեծ ուշադրութիւն ընծայեւ իւր ըսելու խօսքերուն, ըստ անոր Յունարէն լեզւաւ .

— Պատմեմ մեղ քու հօրդ գժբաղդութիւնը, բայց մատնիշին անունը և մատնութիւնը մի յիշեր — :

Հայտէ երկար հառաջանք մը հանեց և տիսւր ամոլ մը իւր մաքուր ձակատը ծածկեց :

— Ի՞նչ ըսիք անոր, հարցուց Մորսէրֆ կամաց մը :

— Վերստին ըսի անոր թէ դուք իմ բարեկամս էք, և թէ ձեզմէ դադանիք չպահէ :

— Բանտարկելոց համար ժողված ողօրմութիւննիդ կը յիշեք. ուրիշ բան չէք յիշեր :

— Ինքզինքս ժանտամզենիներու ստուերին տակ կը նկատեմ լջի մը մօտ. տերեւներուն մէջէն ջրին շարժիլը կը տեսնեմ. հայրս ամենէն մեծ և ամենէն տերեւախիտ ծառին տակը բազմոցի մը վրայ նստած էր, մայրս անոր ոտից քովը պառկած էր և ես իբր տկար մանուկ մը անոր մինչեւ կուրծքը իշած սպիտակ մօրուքին և մէջքը խօթած ականակուո. դաստապանով դաշոյնին չետ կը խաղայի. մերթ ընդ մերթ Նլպանացի մը կու զար մէկ երկու խօսք կ'ըսէր, որոնց ուշադրութիւն չէի ըներ, մի և նոյն ձայնով հայրս կը պատասխանէր անոր. Սպաննեցէք, կամ՝ ազատեցէք :

— Թատրոնի մը վրայ լսուածէն դուրս նորատի աղջկան մը բերանէն այսպիսի սկատմութիւն մը լսելը տարօրինակ բանէ , ըսաւ Ալպէր , և այս լսածս առասպել մը չէ : Եւ ձեր այդ բարձր հորիզոնովը , յաւելցուց Ալպէր , ու ձեր հիանալի անցեալովը Գաղղիան ի՞նչպէս կը դանէք :

— Կարծեմ թէ զեղեցիկ երկիր մ'է , ըսաւ Հայտէ , սակայն կնոջ մը աչօք գիտելով՝ եղածէն ուրիշ բան մը չեմ տեսներ . ընդ հակառակն՝ իմ երկիրս , զոր մանկութեանս աշօք տեսած եմ , ինձ պայծառ կամ տխուր մառախուղով պատած կ'երեի՝ քաղցր հայրենիք մը կամ դառն տառապանաց վայր մը նկատելուս համաձայն :

— Այնպիսի Ճիշմ հասակնուդ մէջ ի՞նչպէս կարող եղաք այն նեղութեանց համբերել — :

Հայտէ աչքերը զէպ ՚ի Մօնթէ-Քրիսթօ դարձուց , որ աննշարելի նշանով մը մրմնաց .

— Պատմէ :

— Մանկութեան յիշատակները սրտին մէջ անջնջելի կը մնան , և առջի պատմած երկու անցքերէս զատ մանկութեանս միւս յիշատակները տխուր են :

— Խօսեցէք , տիկին , խօսեցէք , ըսաւ Ալպէր , կ'երդնում որ անպատմելի ուրախութեամբ մտիկ կ'ընեմ ձեզ — :

Հայտէ տիրութեամբ ժպտեցաւ ,

— Ուրեմն կ'ուզէք որ միւս յիշատակներուս անցնիմ , ըսաւ : Կ'աղաշեմ , ըսաւ Ալպէր :

— Մտիկ ըրէք ուրեմն . չորս տարեկան էի երբ իրիկուն մը մայրս արթնցուց զիս : Եանեայի պալատին մէջ կը դըտնուեինք . երբ աչքերս բացի , անոր աչքերը աբասասուօք լցուած տեսայ :

« Առանց խօսք մը խօսելու առաւ զիս և տարաւ :

« Անոր լալը տեսնելով՝ ես ալ սկսայ լալ :

« — Լոէ , զաւակս — , ըսաւ :

« Հաս անդամ մայրական միսիթարութեանց կամ սորանաւ :

եաց ականջ չդնելով, ամեն մանկանց պէս վէսութեամբ շարունակ կու լայի. բայց այս անդամ՝ ռդորմելի մօրս ձայնը այնպիսի սոսկում մը կը յայտնէր, որ իսկոյն լռեցի:

« Զիս արագութեամբ տարած ատենը՝ տեսայ որ լայն սանդուխէ մը վար կ'իջնէ ինք :

« Մեր առջեկն մօրս աղախինները սնտուկներ, պարկեր, զարդարանաց առարկաներ, գոհարներ և ոսկեոյ քսակներ բեռնաւորուած նոյն սանդուխէն վար կ'իջնէ ին կամ զողցես վար կը դահավիճէին :

« Աղախիններուն ետին քսան պահապաններ կը յառաջանային երկար հրացաններով և ատրանակներով, և այն հազուստներով, զորոնք Գաղղիացիք կը ճանչնան Յունաստան վերստին աղդ մը ըլլալէն 'ի վեր :

« Իրենց քունէն կէս սթափած այն գերիններուն և աղախիններուն երկար շարքին մէ չ աղէտալի բան մը կ'երեւէր, յաւելցուց Հայտէ դլուխը շարժելով և անոնց միայն յիշտակէն զունատելով, զոնէ ես այնպէս կը կարծէի, քանզի կատարեալ արթնցած չըլլալու՝ միւսներն ալ նոյն վիճակին մէ չ կ'ենթադրէի :

« Սանդուխին վրայէն բազմութիւնը իջած ժամանակ՝ եղենի ջահարերուն լոյսէն կամարներուն վրայ հսկայածե ստուերներ կ'երեւէին :

« — Աճապարեցէք — , պոռաց ձայն մը նրբագաւիթիններսէն :

« Այս ձայնին բոլոր բազմութիւնը խոնարհեցաւ, ինչպէս հողմը արտի մը վրայ ցորենի հասկերը կը խոնարհեցընէ :

« Զիս անդամ սարսուացուց :

« Այն ձայնը հօրս ձայնն էր :

« Իւր փառաւոր զդեստները հադած, ձեր կայսեր անոր տուած լայնաբերան հրացանը ձեռքը բռնած, և իւր Սէլիմ մտերմին կոթընած ամենուն ետեէն կը յառաջանար՝ մոլորեալ ոշխարները իւր առջել ձդող հովիւի մը պէս :

« Հայրս , ըստ Հայտէ զլութը վերցընելով , այն երկելի մարդն էր , զոր Եւրոպա թէրէ-տէլէնի Ալի-բաշայի անունով Ճանչցած է , և որմէ Տաճկաստան դողաց » :

Այս վեեմ և ծանր ձայնավ արտասանուած խօսքերը լսելով Ալպէր առանց պատճառը դիտնալու սարսուաց . իրեն այնպէս երեցաւ թէ նորատի աղջկան աչաց մէջ տխուրե սոսկալի բան մը կայ , երբ Հայտէ այնարիւնաթաթաւ մարդուն յիշատակը արթնցուց , որուն սոսկալի մահը արդի Եւրոպիոյ աչաց աւելի աչուելի երեցուց զի՞նքը :

— Երբ ամենքս ալ սանդուխէն վար իջանք , շարունակեց Հայտէ , Ծի մը եզրը կը դտնուէինք : Մայրս իւր բարախող սրտին վրայ զիս կը սեղմէր և մեղմէ երկու քայլ ետև հայրս տեսայ , որ իւր անհանդ իստ նայուածքը բոլորտիքը կը շըջէր :

« Չորս ստք մարմարեայ սանդուխէ մը վար իջնելով , Ծին ջուրին վրայ ծփող մակոյկի մը մէջ կը մտնուէր :

« Մեր եղած տեղէն մթաղոյն չէնք մը կ'երեէր Ծին մէջ տեղը . հօրս ամարանոցն էր այն , ուր պիտի երթայինք :

« Այն ամարանոցը գուցէ մթութեան պատճառաւ խիստ չեռու կ'երեէր ինձ :

« Մակոյկը իջանք . թիավարները իրենց թիերը ջուրին մէջ միսած ժամանակնին ամենեւ ին շըուկ մը անդ ամ չէին հաներ . քանդի իրենց դօտին անոնց փաթթեր էին :

« Մակոյկին մէջ թիավարներէն զատ աղախիներ , հայրս , մայրս , Աէլիմ և ես կը դտնուէինք :

« Հօրս քաջ մարդիկը Ծին եզրը կեցեր՝ սանդուխին վերջին աստիճանին վրայ ծնրագրեալ կ'ըսպասէին , անոր միւս երեք աստիճանները իրը պատուար թողուցած էին , որ եթէ թշնամիները ետենէս իյնան՝ կարենան դէմ դնել անոնց :

« Մեր մակոյկը հօղմի պէս կը թռչէր :

« — Մակոյկինիս ինչո՞ւ այսպէս շուտ կ'երթայ , հարցուցի :

« — Լուէ , զաւակս , ըստ մայրս , պատճառը այն է որ կը փախչինք :

« Այս խօսքերէն բան մը չհասկըցոյ :

« Արդեօք ինչու կը փախէր հայրս, որ այնչոփ զօրաւորէր, և որուն առջեէն սովորաբար ամեն մարդ կը փախէր, այնպէս որ այս խօսքը առակ ըրած էր միշտ .

« Ասորէն զի՞ւ . առա ուրեմն վ'երինչին ինչո՞ւ :

« Իրօք հայրս լՃին վրոյէն կը փախէր :

« Եանեայի բերդին պահապանները երկար զիմադրութեամբ յողնելէ ետքը . . . » :

Հոս Հայաէ իւր նշանական նայուածքը Մօնթէ-Քրիսթոյի վրայ յարեց . կոմսը իւր աչքը անոր աչաց վրոյէն ամենեին վերցուցած չէր :

Նորատի աղջիկը՝ իւր խօսքը հնարել կամ կրծատել ուղղ անձի մը պէս իւր վերջին խօսքերը ծանը կերպով կը շարունակէր :

— Եանեայի բերդակալները կ'ըսէիք, տիկին, կրկնեց Ալպէր՝ որ Հայտէի պատմած պատմութեան խիստ մեծ ուշադրութիւն կը մատուցանէր, երկար դիմագրութեամբ յողնած . . .

— Հայրս նուածելու համար սուլթանէն զրկուած Խուրշիտարակետին հետ սպարապետին հետ բանակցեցան . այն ատեն հայրս սուլթանին Գաղղիացի պաշտօնատար մը զրկելով, որուն վրայ մեծ վսահացութիւն ունէր, որոշեց որ երկար ժամանակէ ՚ի վեր իւր ողատրաստած պապստանարանը քաշուի :

— Եւ այն պաշտօնատարին անունը չէք յիշեր, տիկին —, հարցուց Ալպէր :

Մօնթէ-Քրիսթօ նորատի աղջկան հետ փայլակի մը արագութեամբ ակնարկութիւն մը փոխեց, զոր Մորուէրֆ չնշարեց :

— Ա՛չ, ըստու Հայտէ, շեմ յիշեր . բայց զուցէ ետքը միտքս դայ. և կ'ըսեմ ձեզ — :

Ալպէր քիչ մնաց իւր հօրը անունը պիտի տար, երբ Մօնթէ-Քրիսթօ կամաց մը մատովը լուսթեան նշան մը ըրաւ անոր:

Երիտասարդը իւր երդումը յիշեց և լուց :

— Կաւակնիս գեղ ՚ի այն ամարանոցը կը յառաջանար :
« Արաբացի ձեռվ՝ դետնայարկի վրայ շինուած էր՝ տանիք-ները ջուրին վրայօք երկնցած , և առաջին գտտիկոնը լճին վրայ կը նայէր . այս էր ահա հօրս ամառային ապարանքին երեսյթը :

« Սակայն զ ետնայարկին տակը՝ ընդարձակ զ ետնափորքա-րայր մը կար , որ մինչև կղզին կը տարածուէր , և ուր կը տանէին մայրս , զիս , աղախինները , վաթսուն հաղար քսակ և երիւր հարիւր տակառ . քսակներուն մէջ քսան և հինդ միլիոնի գումար մը կար բոլորն ալ ոսկի , և տակառներուն մէջ երեսուն հազար լիտր վառոդ :

« Այս տակառներուն մօտ Սէլիմ կեցած էր , հօրս այն հա-ւատարիմ անձը , որուն վրայօք խօսեցայ . վառ պատրոյդով երկար զաւաղան մը բռնած՝ զիշեր և ցորեկ կը հօկէր . հրաման ստացած էր հօրս մէկ նշանին վրայ վառոդները բը-սընկցընել և բոլոր ամարանոցը , պահպանները , բաշան , աղախինները և ոսկինները օդը հանել :

« Կը յիշեմ գեռ որ մեր աղախինները իրենց մօտ զանուած այն մահառիթ առարկայն տեսնելով , զիշեր և ցորեկ աղօ-թելով , լալով և հառաչելով կ'անցընէին :

« Այն աժդոյն և սե աչուի երիտասարդ զինուորը միշտ աշ-քիս առջևն է , և երբ մահուան հրեշտակը ինձի մօտենայ , ապահով եմ որ Սէլիմը պիտի ճանչնամ :

« Աղէկ չեմ կրնար յիշել թէ որչափ ժամանակ այն վե-ճակին մէջ կեցանք . այն տարիքիս մէջ ժամանակին ինչ ըլ-լալը չէի զիտեր . երբեմն բայց շատ քիչ անդամ հայրս զիս ու մայրս ապարանքին տանիքին վրայ բերել կու տար . ինչ ուրախութեան ժամեր էին անոնք ինձի համար , որ գետնա-փորին մէջ ողբացող ստուերներէ և Սէլիմի բոցավառ գա-ւաղանէն ղատ բան չէի տեսներ : Հայրս մծ խրամատի մը առջև նստած՝ իւր տխուր նայուածքը հորիզոնին խորութեանց մէջ կը թափանցէր , և լճին վրայ երեցած ամեն մէկ սե կէտերը

կը զննէր . մայրս անոր քովս կէս պառկած՝ դլուիը անոր ուսին կը կոթնցրնէր , ու ես անոր ստիցը քով կը խաղայի , և մանկական հիացմամբ կը գիտէի հօրիղոնին վրայ նկարուած բինտայի գառիթափ բլուրները , լճին կառոյտ ջուրերուն վրայ բարձրացած սպիտակ և անկիւնաւոր եանեայի բերդերը , մթադոյն խիտ կանաչութիւնները , որոնք հեռուէն լերան ժայռերուն փակած մամուռի կը նմանէին , սակայն մօտէն բարձրաբերձ եղեիններ և լսյնատարած մրտենիներ էին :

« Առտու մը հայրս զիս և մայրս իւր քովս տանել տուաւ , բաւական հանդարա բայց սովորականէն աւելի գեղնած դտանք զինքը :

« — Համբերէ , Աասիլիքի , ըստ հայրս , այսօր ամեն բան պիտի լրանայ , սուլթանին հրովարակալը այսօր պիտի զայ , և իմ Աակատաղիրս պիտի որոշուի : Եթէ կատարեալ ներէ ինձ , յաղթութեամբ եանեա պիտի վերադառնանք , իսկ եթէ զէշ լուր մը ստանանք , այս զիշեր կը փախչինք :

« — Բայց եթէ չթողուն մեղ որ փախչինք , ըստ մայրս :

« — Ա՛չ , անհոգ եղեր , պատասխանից հայրս ժամանակ՝ Սէլիմ և իւր պատրոյդը զործը կը լննցընեն , Անշուշտ զիս մեոցընել պիտի ուզեն , բայց ես մինակ մեռնել չեմ ուզեր — :

« Մայրս միայն հառաչանքներով պատասխանեց այս միսիթարական խօսքերուն , որոնք հօրս սրաէն չէին բղիներ :

« Սառած ջուր պատրաստելով հօրս ներկայացուց , քանզի հայրս այս ամարանոցը ապաստանելէն 'ի վեր հրատապ ջերմով բորբոքած ըլլալով , ամեն վայրկեան այն ջուրէն կը խըմբ . Աասիլիքի անոր սպիտակ մօրուքը անուշահոտ իւղով բուրեց և ծիսափողը անոր ներկայացուց , որուն օդին մէ ջցրուած ծուխին վրայ հայրս ժամերով իւր աչքերը կը յարէր զանազան մտածութեանց մէջ ընկղմնով :

« Յանկարծ այնպիսի յուղեալ շարժում մը ըբաւ որ զիս սաբսակեցուց :

« Ու իւր ուշադրութիւնը զ բաւող կէտին վըսյէն իւր աչքը

չվերցընելով, հեռադիտակը խնդրեց :

« Մայրս որ իւր կոթնած կճածեփէն աւելի սպիտակ էք, շուտով անոր ուզածը տուաւ :

« Տեսայ որ հօրս ձեռքը կը գողար :

« — Ա.Հա մակոյկ մը . . . երկու . . . երեք . . . մըմնջեց հայրս . ուրիշ մը ևս՝ չորս հատ . . . — :

« Այս ըսելով սաք ելաւ իւր զէնքերը առաւ, և աղէկ կը յիշեմ՝ իւր ատրճանակներուն սկահակներուն մէջ վառող լեցընելով :

« — Ա.ասիլիքի, ըսաւ մօրս յայտնի սարսուռով մը, ահա մեր բազդը սահմանով ժամը հասած է . կէս ժամէն Ա.հա փառ կայսեր պատասխանը պիտի իմանանք, դուն Հայտէի հետ դետնափնըը քաշուէ :

« — Չեմ աւզեր քովէդ հեռանալ, ըսաւ Ա.ասիլիքի . Եթէ դուն մեռնիս, տէր իմ, ես ալ քու հետդ կ'ուզեմ մեռնիլ :

« — Աէլիմին քովը գնաւ, զուեց հայրս :

« — Մնաս բարեաւ, տէր իմ, մըմնջեց մայրս հնազանդելով և իրը մահուան մերձաւորութենէն խոնարհելով :

« — Տարեք Ա.ասիլիքին —, ըսաւ հոյրս իւր քաջ զինուորներուն :

« Բայց ես անոր քովը վազեցի և ձեռքերս անոր երկնցուցի . հայրս զիս տեսնելով՝ դէպ 'ի ինծի հակեցաւ, և իւր շուրթերովը ճակատս համբուրեց :

« Ո՛չ, այն համբոյրը վերջինն եղաւ . հոս Ճակտիս վրայ դեռ մնացած է այն :

« Ա.ար իջնելու ժամանակնիս՝ տանիքին ձողերուն մէջէն մակոյկները կը տեսնէինք, որոնք երթալով կը մեծնային, և որոնք քիչ մը առաջ սե կէտեր երե ելէն ետե՝ այն ատեն ալիքներուն մակերեսոյթը թռչող թռչուններու կը նմանէին :

« Այս միջոցին քսան քաջամարտիկները հօրս սափից քովը նըստած և տանիքին տախտակամած պատուարին ետին պահուած արիւնալի աչօք այն նաւակներուն զալուստը կը դիտէին և դադ-

տակըով ու արծաթով պատաճ իրենց երկար հրացանները
պատրաստ բռնած էին, անոնց բազմաթիւ փամփուշոները
դետինը քրուած էին. հայրս իւր ժամացոյցը կը նայէր և սրտի
անձկութեամբ կը պարտէր :

« Հօրս վերջին համբոյը ընդունելէս ետեւ տեսածներս ա-
սոնք էին :

« Մայրս և ես դետնափորը դացինք. Աէլիմ միշտ իւր տեղը
կեցած էր, զմեղ տեսնելով տիրութեամբ ժպտեցաւ : Քա-
րայրին միւս կողմէն բազմոցակներ բերինք և Աէլիմն քովը
նստանք. մեծ վտանգներու մէջ անձնուէր սիրտերը զիրար
կը փնտուին, և իմ մանկութեանս մէջ բնազդմամբ կ'ըզդայի
որ դլուխնիս մեծ գիբաղդութիւն մը պիտի դար » :

Ալպէր Եանեայի կառավարչին վերջին ժամբուն պատմու-
թիւնը շատ անգամ լսած էր չէ թէ իւր հօրմէն, որ ամենե-
ւին անոր խօսքը չէր ըներ, այլ օտարականներէ, և անոր
մահուան զանազան պատմութիւնները կարդացեր էր. սակայն
նորատի աղջկան բերնովը պատմուած այս պատմութիւնը,
անոր եռանդուն ձայնը ու աղփողորմ ողբերը իւր սրտին ան-
պատմելի հիացում և միանգամայն սոսկում մը կ'աղդէին :

Խոկ Հայտէ այս ահռելի յիշատակներէն յուղուելով վայր-
կեան մը լուեց. իւր ճակատը՝ փոթորկի ժամանակ կորած ծաղ-
կի նման՝ իւր ձեռքին վրայ հակեր էր, և աչքերը անորոշ
կերպով տկարանալով իրեն այնպէս կ'եւեէր թէ հորիզոնին
վրայ կանաչաղարդ բինտան և Եանեայի լքին կապոյս չու-
րերը կը տեսնէր, այն գիւթական հայելին, որ իւր նկարա-
դրած տիուր պատկերը կը ցոլացընէր :

Մօնթէ-Քրիսթօ հետաքրքրութեան և վշաակութեան ըլ-
դացմամբ անոր կը նայէր :

— Շարունակէ, աղջիկս —, ըստ կոմսը Յունարէն լեզուաւ :

Մօնթէ-Քրիսթօյի քաղցրահնչիւն խօսքերէն Հայտէ դողցես
երազէ մը սթափելով դլուխը վերցուց և իւր պատմութիւնը
շարունակեց :

— Երիկուտան ժամը չորսն էր, և թէպէտ պայծառ և զիշեցիլ օր մ'էք, սակայն դետնափորին մթութեանը մէջ ը նկղմած էինք :

« Ամպաւմած երկնից վրայ երեցած աղօտ աստղի մը նման քորայրին մէջ միայն լոյս մը կը փայլէք, և այն էր Սէլիմին սպառըյդը :

« Մայրս քրիստոնեայ էր և աղօթք կ'ընէք :

« Սէլիմ մը ընդ մերթ այս նուիրական խօսքերը կը կրկնէք:

« Աստուած մեծ է — :

« Եյու ամնայնիւ՝ մայրս ակնկալութիւն մը ունէք. վարիչնելու ժամանակը այն Գաղղիացի պաշտօնատարը Ճանցեր էք, զոր Կոստանդնուպոլիս զրկած էին, և որուն վրայ հայրս մեծ վստահութիւն ունէք. քանզի զիտէք որ Գաղղիացի զինուորները սովորաբար ազնիւ և առատասիրտ են: Մայրս քանի մը քոյլ սանդուիխն մօտեցաւ և ականջ գրաւ:

« — Կը մօտենան, ըսաւ, միայն թէ խաղաղութեան և աղթելու լուրը բերէին մեղ:

« — Ենցո՞ւ կը վախնաս, Վասիլիիքի, պատասխանեց Սէլիմի իւր քաղցր միանդամայն և աներիիւղ ձայնովը. եթէ խաղաղութեան լուրը չերենք մեղ, մենք ալ կ'ըստաննենք զանոնք — :

« Եւ իւր պատրոյի բոցը կ'արծարծէք այնպիսի շարժմամբ մը, որ զինքը հին կրէտէի Տիոնիսոսի կը նմանեցընէք:

« Սակայն ես գեռ մանուկ և անխելահաս ըլլալովս այն կատաղի և անխոհեմ քաջութենէն կը վախնայի + և օդին ու բոցին մէջ մեռնելու սոսկալի մահօւանէն կը սարսափէի :

« Մայրս ալ նոյն երկիւղները կ'ըզգար, վասն զի անորս սարսուալը կը տեսնէի:

« — Ո՛վ Աստուած իմ, դոչեցի, մայր իմ ուքեմն պիտի մեռնինք — ,

« Եւ այս խօսքիս վրայ աղախինները իրենց լացերը և աղօթքները կրկնապատկեցին :

« — Զաւակս, ըսաւ Վասիլիքի, Աստուած կը պաշտպանէ զմել այն մահօւանէն — :

« Ետքը Աէլիմին դառ նալով .

« — Աէլիմ , ըսաւ կամաց ձայնով , մեր տիրոջ հրամանը
ինչ է :

« — Եթէ իւր դաշոյնը դրկէ , պատասխանեց Աէլիմ . պի-
տի ցուցընէ որ սուլթանը իւր ներողութիւնը մերժած է , և
ես վառօդները պիտի բռնկեցընեմ . իսկ եթէ իւր մատնին
դրկէ , պիտի իմանամ որ սուլթանը իրեն ներած է և վա-
ռօդի համբարանոցը պիտի յանձնեմ :

« — Բարեկառ , կրկնեց մայրս , երբ տիրոջ հրամանը դայ ,
և զրկածը դաշոյնը ըլլայ , փոխանակ զմեզ այն մահուամբ
մեռցընելու՝ որ կը սոսկացընէ զմեզ , երկուքս ալ պարանոց-
նիս քեզ կ'երկնցընենք , և գուն այն դաշոյնով սպաննէ զմեզ :

« — Շատ աղէկ , Աւսիլիքի — , պատասխանեց Աէլիմ
անխռով ձայնով մը :

« Յանկարծ բարձր ձայներ լսեցինք . ականջ դրինք , ուրա-
խութեան ձայներ էին անոնք . Կոստանդնուպոլիս զրկուած
Գաղղիացիին անունը մեր քաջամարտիկները կրկնելով օդը
կը թնդացընէին . յայտնի էր որ կայսեր պատասխանը կը բե-
րէր ան , և այն պատասխանը նուաստաւոր էր » :

— Եւ այն Գաղղիացիին անունը չե՞ք յիշեր — , ըսաւ Մոր-
սէրֆ պատմողին յիշողութեան օդնելու պատրաստ դանուելով :
Մօնթէ-Քրիսթօն նշան մը ըրաւ անոր :

— Աչ , չեմ յիշեր , պատասխանեց Հայտէ :

« Չայները կը կրկնապատկուէին . քայլերու աւելի մօտա-
ւոր ձայնը կը լսուէրու զետնափորին սանդուխէն վար կ'իջնէին :

« Աէլիմ իւր պատրոյդը պատրաստեց :

« Շատ շանցաւ՝ վերի Ճառագայթներէն մինչեւ գետնափո-
րին մուտքը թափանցող կապուտազոյն մթնշաղ լոյսին մէ ջ
ստուեր մը երեցաւ :

« — Ո՞վ ես գուն , զոչեց Աէլիմ : Եւ ո՞վ որ ըլլաս , քայլ
մը աւելի մի առներ :

« — Օրհնեալ ըլլայ մեր սուլթանը , ըսաւ ստուերը . Ելի-

Քաշային ամեն ներողութիւն շնորհուեցաւ , և ոչ միայն անոր կեանքը ազատած է , այլ և անոր բոլոր հարստութիւնը և ինչքը անոր կը վերագարձընէ :

« Մայրս ուրախութեան ձայն մը հանեց և զիս իւր դրկացը մէ չ սեղմեց :

« — Կեցիր , ըստ անոր Աէլիմ տեսնելով որ տիկինը դուրս ելնելու կը պատրաստուի . դիտես որ կը պարտաւորի իւր մատնին տալու :

« — Ատոյդ է — , ըստ , մայրս և ծնկան վրայ եկաւ զիս դէպ 'ի երկինք վերցընելով , որպէս թէ ինձի համար Աստուծոյ ազօնք ըրած ժամանակը , կ'ուզէր միանգամայն զիս դէպ 'ի անոր վերցընել » :

Եւ երկրորդ անդամ Հայտէ իւր սրտի յուղմունքէն յաղթուելով խօսքը ընդմիջեց , այնպէս որ իւր դեկնած Ճակատէն քրտինքը կը հոսէր և իւր հեղձեալ ձայնը կարծես ցամքած կոկորդէն վեր չէր կրնար ելնել :

Մօնթէ - Քրիսթօ բաժակի մը մէջ քիչ մը սառած ջուր լեցուց և անոր ներկայացուց այնպիսի քաղցրութեամբ մը , ուրով ըսել կ'ուզէր .

— Քաջալերութիւն , աղջիկս — :

Հայտէ իւր աչքերը և Ճակատը որբեց , և շարունակեց .

— Աչքերնիս մթութեան սովորած ըլլալով՝ բաշային պատղամաւորը Ճանչցանք . մեր բարեկամն էր ան :

« Աէլիմ իսկ Ճանչցեր էր զան , բայց արիասիրտ երիտասարդը միայն մէկ բան դիտէր , այն է՝ հնաղանդիլ :

« — Տիրու անուամբ եկած ես հոս , հարցուց անոր :

« — Մեր տիրոջը Ալի-բաշային անունով :

« — Ուրեմն դիտես ինչ պիտի յանձնես :

« — Այս' , ըստ պատղամաւորը , անոր մատնին ը երած եմ - :

« Այն ատեն ձեռքը դլնուն վրայ բարձրացուց . բայց իրարմէ շատ հետու էինք , և դետն սփորը այնչափ լուսւոր չէր որ Աէլիմ կարենար իւր դանուած տեղէն իրեն ներկայացուած առարկան որոշել և Ճանչնալ :

« — Չեսքդ բռնածդ չեմ տեսներ , ըստւ Աէլիմ :

« — Աւրեմն կամ գուն մօտեցիր , ըստւ պատղամաւորը և կոմի ես :

« — Աչ ես եւ ոչ դուն , պատասխանեց երիտասարդ զիւնուորը . բռնած առարկայդ կեցած տեղդ և լցովին մէջ զիր , և հեռացիր ասկէ մինչեւ որ տեսնեմ զայն :

« — Ծատ աղէկի — , ըստւ պատղամաւորը :

« Եւ ծանօթութեան նշանը որոշուած տեղը գնելէն ետեւ հեռացաւ :

« Մէր սիրու կը բարախէր . քանդի թողուցած առարկայն իրօք մատնի մը կ'երեւէր . միայն թէ արդեօք հօրս մատնին էր այն :

« Մէլիմ վաս պատրոյդը միշտ ձեռքը բռնած՝ քարայրին բերանը եկաւ , դոչ սրտով նշանը դեանէն առաւ :

« — Մէր տիրոջ մատնին է — , ըստւ համբուրելով զայն :

« Եւ պատրոյդը զետինը նետելով՝ վրան կոլաց :

« Պատղամաւորը ուրախութեան ձայն մը հանեց և ձեռքերը իրարու զարկաւ :

« Այս նշանին վրայ՝ Խուրշիտ սպարապետին զինուորներէն չորս հոգի վազեցին , և Մէլիմ գաշոյնի չորս հարուածով զետինը ինկաւ :

« Խորաքանչիւր ոք մէկ հարուած տուեր էր անոր :

« Թէե իրենց զործած ոճիրէն յղփացած էին , բայց տակաւին երկիւղէն շուարած՝ զետնափորին ամեն կողմը շրջեցան , որպէս զի տեսնեն թէ արդեօք տեղ մը կբակ կը զտնեն , և ոսկւոյ պարկերուն վրայ ինկան :

« Այն միջոցին մայրս զիս դրկելով , և միայն մեզի ծանօթեղած մանուածապատ շրջաններէ հողմի պէս անցնելով , մինչեւ զաղացնի սանդուխ մը հասաւ , որուն մէջ սոսկալի աղմաւկ մը կը տիրէր :

« Ստորին սրահները Խուրշիտի զինուորներով , այսինքն մեր թշնամիներով լցուած էին :

« Մայրս դռնակը հռելու միջոցին՝ Ալի-բաշոյին աչառը
և սպառագին ձայնը լսեցինք :

« Մայրս իւր աչքը տախամակներուն ճեղքուածքներուն յա-
րեց, բարեբաղդաբար իմ առջիս ծակ մը դանուեցաւ ու անկէ-
նայիցաւ :

« — Ե՞նչ կ'ուզեք, կ'ըսէր հայրս ձեռքերնին սսկեզօծեալ
դրերով թուղթ մը բունաղ մարդոց :

« — Կորին Վեհափառութեան կամքը քեզ հաղորդել
կ'ուզենք. կը տեսնեմ ոյս հրովարտակը :

« — կը տեսնեմ, ըստ հայրս :

« — Աւրեան կարդա. դլուխդ կ'ուզենք — :

« Հայրս սպառնալիք մը ընելէն աւելի սասկալի կերպով
ծիծաղեցաւ, և գեռ ծիծաղը չլնցուցած՝ իւր ձեռքի ատընա-
նակին երկու հարուածովը երկու մարդ սպաննեց :

« Հօրս զինուորները և սրոնք երեսնին զետինը խոնարհած
հօրս բոլորտիքը պառկած էին, սաք ելան և իրենց հրացան-
ները սկսան պարագել :

« Սենեակը ձայնով և ծուխով լցուեցաւ :

« Կոյն միջոցին զնդանութիւնը միւս կողմէն ալ սկսաւ, և
դնտակները մեր բոլորտիքի տախամակները կը ծակի ին :

« Ո՛չ, այն զնտակներուն մէջ ինչպէս զեղեցիկ և ինչպէս
բարձր կ'երեւեր Ալի-բաշա հայրս սուրը ձեռքը բռնած և ե-
րեսը վասօգէն սեցած. Ինչպէս իւր թշնամիները ասչեն
կը փախէին :

« — Սէլիմ, Սէլիմ, պոռաց հայրս, հրոյ ոլահատլանը,
պարտաւորութիւնդ ՚ի գործ դիր :

« — Սէլիմ մեռաւ, պատասխանեց ձայն մը, որ կարծես
ամարանոցին խորունկէն կ'ելնէր, և դուն ալ, Ալի տէր իմ,
կթրսուած ես — :

« Կոյն միջոցին կամոց ճարճատիւն մը լսուեցաւ, և հօրս
բոլորտիքը տախամակամածը վար ինկաւ :

« Թշնամիները վարէն զնտակներ կ'արձակէին, հօրս զիւ-

Նուորներէն երեք կամ չորսը վարի դնտակներէն զարնուել լովլ վիրաւորեալ ինկան :

« Հայրս սկսաւ առիւծի սկէս մոնչել, մատերը դնտակներէն բացուած ծակերուն մէջ խօթեց, և տախտակ մը ամբողջ տեղէն քակեց :

« Այս վայրին հրացանի քսան հարուածներ այն բացուածքէն ներս արձակուեցան, և հրաբուխի բերանէն ելած բոցին սկէս ներս մանելով սրահակները բռնկցուցին :

« Այն քսամնելի խառնակութեան և այն աշոելի աղաղակներուն մէջ՝ ամեն հարուածներէն աւելի որոշ երկու հարուածներ և ամեն ձայներէն աւելի կոկծ հցուցիչ երկու ձայներ սարսափով սառեցին զիս :

« Այն երկու ձայնինները հօրս վրայ ուղղուած մահաբեր հարուածները, և այն երկու ձայները անոր երկու հառաջանքներն էին :

« Այսու ամենայնիւ հայրս պատուհանի մը փաթթուած տակաւին ոտքի վրայ կեցեր էր :

« Մայրս անոր հետ մեռնելու երթալու համար դուռը կը շարժէր :

« Առկայն դուռը ներքին կողմէն փակուած էր :

« Հօրս բոլորախիքը իւր զինուորները հոգեվարքի մէջ կը տառապէին . անոնց երկու կամ երեքը, որոնք ամենին կամ մենակ կերսովլ վիրաւորուած էին՝ պատուհաններէն դուրս նետուեցան :

« Այս միջոցին՝ տախտակամածը աակէն խորտակուելով ձայնեցաւ :

« Հայրս ձնկան մը վրայ ինկաւ :

« Խակոյն վաղակաւորներով, ատրճանակներով և դաշոյնակրով դինեալ քսան բազուկներ երկնցան և քսան հարուածներով առանձին մարդ մը զարկին, և հայրս իւր առջել բացուած գժոխքին մոնչող գեերէն բորբոքեալ կրակին յարձանքին մէջ աներեսոյթ եղաւ :

«Մայրս նուազեալ ինկաւ և զիս ալ զետինը դլորեց ։ Տայտէ թուլութեան մէջ իյնալով՝ հառաջանք մը հանեց և կումին երեսը նայեցաւ՝ ուղելով հարցընել անոր թէ իւր չնաղանգութենէն զօ՞չ է։

Առմաղ ոտք ելաւ, անոր մօտեցաւ, ձեռքը բռնեց և Յունարէն լիզուաւ բսաւ անոր.

— Հանդարտէ սիրտդ , սիրելի զաւակս , և համբերէ մասձելով որ չարագործները պատժող Աստուած մը կայ :

— Այս ինչ սոսկալի պատմութիւն մ'է, կոմս, ըստ Ալ-
պէր Հայուեի գունատութենէն երկնչելով, և կը ցաւիմ թէ
ինո՞ւ համար անդ թութեամբ այսպէս հետաքրքրութիւն մը րըիւ-

— Հոդ չէ — , պատճառիսանեց Աօնթէ-Քրիսթօ :

Ետքը ձեռքը՝ նորատի աղջկան դիխուն վրայ դնելով,

— Հայտէն արիասիրտ կին մ'է , շարունակեց կոմսը . իւր մշտադ ին պատմութիւնը ընելով երբեմն կը մսիթարուի :

— Վասն դի , տէր իմ , ըստ նորատի աղջիկը աշխուժիւ +
իմ վշտացս սպատմութիւնը քու բարերարութիւնդ կը յիշ-
ցրնէ ինձ — :

Ն. Եղիշ Հետաքրքրութեամբ Հայտէին երեսը կը հայէր քանզի նորատի աղջիկը իւր փափաքածը դեռ չպատմեր էր, այսինքն՝ թէ ինչպէս կոմսին դերին եղած էր :

Հայտէ կոմին և Ալպէրի նայուածքին մէջ նոյն բաղձանքը
յայտնի նշանը լով՝ շարունակեց.

— Աօրս խելքը դ լուխը եկած ժամանակ սպառապետին առջեւը տարեր էին դմեզ :

« — Աղասինեցէք զիս , ըստաւ մայրս , և Ալիքին այրի կնոջ պատույին խնայիցէք :

«—Այդ շնորհը ինձմէ մի խնդրեր, բայտ Խուրցիտ».

« — Հասկա որմէ՛ խնդրեմ:

« — 0'Л б юр ынор ынклюз.

«—ԱՀա այս պարո՞նն է —»

Է ԵՇ ԽՈՒՐՃԻՄ այն անձը ցուցուց մեղ, որ հօրս մահուան ամենէն աւելի աշխատողներէն մէկն էր, շարունակեց աղջիկը տիսուր բարկութեամբ մը:

— Աւրեմն, ըստ Ալպէր, այն մարդուն ձեռքն ինկաք:

— Աչ, պատասխանեց Հայտէ. չհամարձակեցաւ զմեղ պաշելու, կոստանդնուպօլիս գացող դերիներու վաճառականաց ծախից: Յունաստանէն անցանք և կիսամենու կայսերական դրան առջին հասանք, ուր հետաքրքիր մարդիկ ժողվուած մեղ ճամբայ կը բանային որ անցնինք: Երբ մայրս ամենուն նայուածքը ուղղուած կողմը նայելով, յանկարծ Ճիչ մը հանեց և այն դրան վրայ զլուխ մը ինձ ցուցընելով դետինը ինկաւ:

« Այն զլսին վրայ այս խօսքերը զբուած էին.

« — Եաննայի բաշաթէրէ-տէլէնի Ալիին դլուխն է այս — :

« Լալով մայրս վերցընելու աշխատեցայ. բայց մայրս մեռեր էր:

« Այն ատեն զիս վաճառանոցը տարին:

« Հարուստ Հայ մը զլս գնեց, կրթեց, ինձ դասառուներ բռնեց, և երբ տասն երեք տարեկան եղայ՝ ոռովթանին ծախից զիս:

— Արմէ ես ալ գնեցի, ըստ Մօնթէ-Քրիսթօ, ինչպէս ըսի՝ այն զմբուխու տալով, որ մանրադորի հատերս գրած զմբուխով կը նմանէր:

— Ա՛հ, որչափ բարի և որչափ վեհանձն ես, տէր իմ, ըստ Հայտէ Մօնթէ-Քրիսթօյի ձեռքը համբուրելով, և շատ երջանիկ եմ որ գուն զիս գնեցիր — :

Ալպէր իւր լսած պատմութեան վրայ շուարած մնացեր էր:

— Սուրբդ խմբ լմցուր, ըստ կոմսը անոր, պատմութիւնը վերջացաւ — :



ՊԼՈՒՐ ՀՐ.

ԵՇՆԵՑՑԷՆ ՄԵԶ ԷՐ ԳԻՆՆ

❖ ❖ ❖ ❖ ❖

Ա ՄԱՆՁ ԿՈՒԱՐԾԻԵՒ ունեկէն այնպէս դողլդա-
լով և այլայլեալ գուրս ելեր էր, որ
Վալանթին խոկ զայն մեղքըցիր էր:
Ակլըֆօր, որ առանց հետեւթեան
միայն քանի մը խօսք խօսելով իւր դաշլիճը փախչէր էր,
երկու ժամ ետքը հետեւեալ նամակը ընդունեց.

« Այս առտու յայտնուած պարագաներէն ետե՝ Պ. Կու-
արԾիէ տը Ակլըֆօր չկրնար ենթադրել թէ իւր և պարոն
Գրանդ տ'էրինէի ընտանեաց մէջ խնամութիւն մը կարելի
ըլլայ:

« Պ. Գրանդ տ'էրինէ սոսկումով կը մտածէ թէ ինչպէս
Պ. տը Ակլըֆօր, որ այս առտու պատմուած դէպքերուն
ծանօթ կ'երեւէր, իբե՞ն չէր իմացուցած » :

Այն միջոցին դատաւորին այնպիսի հարուած մը ընդունելը
տեսնողը չկրնար հաւատաւ որ Պ. տը Ակլըֆօր առաջէն կը
զուշակէր զայն :

Երօք՝ ամենին մաքէն չէր անցներ որ իւր հայրը այս առ-
տիճան համարձակութիւն կամ լաւ ևս է ըսել՝ տմարդու-
թիւն մը ունենայ այնպիսի պատմութիւն մը պատմելու :

Ստոյգ է որ Պ. ԿՈՒԱՐԾԻԵՒ իւր որդւոյն գաղափարները
արհամարհելով, երբէք հող ըրած չէր դորձը Ակլըֆօրի առ-
ջեւ պարդելու, որով դատաւորը միշտ կարծեր էր թէ տը

Քէսնէլ դօրապետը կամ ա'կրինէ սեպուհը (ո՞ր անունով կուղէք՝ այն անունով կոչեցեք զան . մէկ անունը ինքը կրած է և միւսը իրեն տուած են) սպաննուած էր և ոչ թէ մասմարտութեան մէջ օրինաւորապէս մեռած :

Մինչև այն օրը իրենց յարգելի եղած երիտասարդի մը այն աստիճան խիստ նամակը Ա. իլլովօրի որէս հաղարտ մարդու մը համար մահացու էր :

Հաղիւ թէ իւր գահլիճը մաեր էր երբ իւր կինը ետեւն ներս մտաւ :

Ֆրանդին Պ. Նուարթիէի տոջեր կանչուելով տունէն դուրս ելնելը այնչափ զարմանքի մէջ թողուցեր էր ամեն մարդ, որ տիկին ուր Ա.իլլովօր նօտարին ու վկաներուն հետ մինակ մաշուն երթալով մծ անհանդուսութիւն մը կ'ըղղար :

Այն առեն տիկին ուր Ա.իլլովօր պատճառ մը դտաւ, և լուր ստանալու պատրուակաւ դուրս ելաւ :

Պ. աը Ա.իլլովօր բաւական համարեց ըսելու անոր թէ Պ. Նուարթիէի և Պ. ա'կրինէի մէջ անհամաձայնութիւն մը աեղի ունենալով, Ա.ալանթինին ֆրանզին հետ ամուսնութիւնը ետ մնաց :

Ապասող անձանց լուր տանելը դժուար բան է, ուստի տիկին ար Ա.իլլովօր բաւական համարեց ըսելու թէ նայն ամուսնութեան վրայ Պ. Նուարթիէի խօսելու ժամանակ՝ անոր կալուածին վերահաս անհանգստութիւնը խօսքը ընդմիջեր, և երկու կողմին հաւանութեամբը գաշնազրին ստորագրութիւնը ուրիշ օրուան մնացեր է :

Նոյնօրինակ երկու դժբաղդութիւններէ ետեւ այս կեղծ լուրը ունկնդիրներուն այնչափ զարմանք պատճառեց, որ առանց խօսք մը խօսելու մեկնեցան :

Խոկ Ա.ալանթին երջանիկ և միանդամայն դողասարնափ ըլուալով իւր տկար ծերունի հաւը համբուրելէն և շնորհակալ ըլլալէն ետեւ, որ իրեն անլուանելի երեցած ամուսնութեան այն շղթայն այնպէս մէկ հարուածով կը խղէր, հրաման խըն

դրեց որ հանդչելու համար իւր սենեակը քաշուի . և առու արթիէ աչքի մէկ նշանով անոր խնդիրքը ընդունեց :

Բայց Աւալանթին փոխանակ իւր սենեակն երթալու՝ իւր հաւին սենեկէն մեկնելուն պէս նրբաղաւիթէն անցաւ , և փոքր գոնէն գուրս ելնելով պարտէ զը վաղեց :

Երարու վրայ տեղի ունեցած ամեն այս դեպքերուն մէջ միայն զաղանի երկիւղ մը անդադար իւր սիրտը կը տանձէր : կը կարծէր թէ վայրկեանէ վայրկեան Ֆորէլ տժդոյն և սալու նազին կերպարանքով իրենց դումարուած սենեակը յանկարծ ողիտի դաց , ինչորէս լորտ Ռավէնովուած Լիւսի տը Լամէ բժուշին դաշնազ իրը ստորագրելու միջոցին դացեր էր :

Իրօք՝ ճամանակն էր որ Աւալանթին վանդակներուն քովը չասէի :

Մաքսիմիլիէն առանց սպատահէլիքը դիտնալու՝ Ֆրանզին ու , աը Աիլըֆօրի հետ զերեզմանառունէն ելնելը տեսնելով՝ անոր ետքէն եկեր էր . անոր ներս մտնելը , մնինիլը և Ալպէրին ու Շաթօ-Ռընոյի հետ վերստին Աիլըֆօրի տունը վերադառնալը տեսեր էր :

Երեն համար ամենեին տարակոյս չմնացեր էր . ուստի իւր պարտէ զը մտնելով՝ անհամբերութեամբ Աւալանթինի կ'ըսապաէր . քանդի համոզուած էր որ քան մը պատահած միջուցին՝ նորատի աղջիկը փախչելու ժամանակ մը դանելով՝ դէպ'ի իրեն պիտի վաղէր :

Մաքսիմիլիէն չոխալէր էր . երբ աչքը վանդակաց ձեղը քուածքներուն յարած բոլոր պարակը և տունը կը դիտէր , իրօք նորատի աղջիկը տեսաւ , որ առանց սովորական նախագուշութիւնները բանեցընելու՝ վանդակաց քովը կը վաղէր :

Մաքսիմիլիէն զան տեսնելուն պէս՝ իւր սիրտը հանդարատեր էր , և անոր առաջին խօսքը լսելով՝ ուրախութենէն կը ցատկէր :

— Ազատեցա՞նք , ըստ Աւալանթին :

— Ի նչպէս ազատեցա՞նք , կրկնեց Մորէլ՝ չկրնալով այն պիտի երջանկութեան մը հաւատալ . բայց ո՞վ աղատեց դմեդ :

— Հաւս . ո՞չ , սիրել զան , Ասրէլ — :

Ասրէլ բոլոր սրառվ ծերունին սիրելու համար երդումը բրաւ . բայց այս երգումը ընկելու համար դժկամութիւն մը չէր զգար , ըստ որում այն միջոցին զան իր բարեկամ կամ եղբայր մը սիրելու չէր բաւականանար , այլ իր զերադոյն էակ մը կը սիրելը զան :

— Բայց ինչորէս եղաւ , հարցուց Ասրէլ , ինչ տարօրինակ միջոց մը դորձած էց — :

Աշալանթին ամեն բան պատմելու համար բերանը բացաւ , բայց մտածեց որ այն գեղքին մէ չ սոսկալի դաղանիք մը կար , որ միայն իւր հաւին չէր վերաբերեք :

— Ետքը ամեն բան կը պատմեմ , ըստ :

— Բայց երբ :

— Երբ քու ամուսինդ ըլլամ — :

Այս խօսքերը այնպիսի ժամանակուան մը ձգուելէն կրնար կիւրութեամբ անոր պատճառը հասկընալ . ուստի իւր լսածը այն օրուան համար բաւական համարեց : Ասկայն չհեռացաւ անկէ մինչեւ որ խօսք չառաւ Աշալանթինէն որ հետեւալ իւրիկուն զինքը անսնելու դայ :

Աշալանթին Ասրէլի խնդիրքը կատարելու խոստացաւ :

Եւր աչաց ամեն բան փռխուած կ'երկէր , և անտարակոյս հիմա աւելի դիւրաւ կը հաւատար Ամքսիմիլիէնի հետ ամուսնանալուն , քան թէ ժամ մը առաջ Ֆրանդին հետ չամուսնանալուն :

Այն միջոցին տիկին աը Ակլլաֆօր Նուարթիէի սենեակը դացեր էր :

Նուարթիէ տիսուր և դժնեայ աչօք անոր նայեցաւ , ինչպէս որ ամեն անգամ սովորութիւն ունէր այնպէս ընդունելութիւն տալու անոր :

— Պարոն , ըստ , հարկ չկայ իմացընել ձեզ որ Աշալանթինի ամուսնութիւնը ետ մնաց , ըստ որում այս սենեկին մէ չլուծուեցաւ այն — :

Նուարթիէ անօղբելի երեցաւ :

— Ասկայն, շարունակեց տիկին տը Ա.իլքֆօր, ձեր չղիտացն ալ սա է որ այն ամուսնութիւնը իմ կամացս հակառակ էր և ես միշտ դէմ դրած էի անոր — :

Նուարթիէ բացատրութիւն խնդրող մարդու մը պէս իւր նորին երեսը նայեցաւ :

— Հիմա որ ես մնաց այն ամուսնութիւնը, որուն ձեր կամաց հակառակ ըլլալը գիտէի, խնդրիք մը ունիմ ձեղ ընելու, զոր ոչ ոչ աը Ա.իլքֆօր և ոչ Ա.ալանթին կրնանքնել — :

Նուարթիէի աչքերը հարցուցին թէ ինչ խնդրիք է այն :

— Եկայ աղաչելու, պարոն, շարունակեց տիկին տը Ա.իլքֆօր, ինչպէս որ միայն ես իրաւունք ունիմ այս աղաչանքը ընելու, քանզի միայն ինձ չկրնար պատկանիլ այն, եկայ աղաչելու որ ձեր թոռան չէ թէ ձեր ներողութիւնը, ըստ որում Ա.ալանթին միշտ ստացած է զայն, այլ ձեր հարատութիւնը շնորհէք — :

Նուարթիէի աշերը վայրկեան մը տարակուսանաց մէջ մնացին, յայտնապէս անոր խնդրիքին պատճառը կը փնտռէր և չէր կրնար զտնել :

— Կրնամի յուսալ, պարոն, ըստ տիկին տը Ա.իլքֆօր, որ ձեր դիտաւորութիւնը իմ աղաչանացս համաձայն ըլլայ :

— Այո՛, ըստ Նուարթիէ :

— Արեմն երախտադէտ և միանդամայն երջանիկ ըլլալով՝ կը հեռանամ ձեր սենեկէն —, ըստ տիկին տը Ա.իլքֆօր և ո՛. Նուարթիէն ողջունելով դուրս ելաւ :

Երօք հետեւալ առտու՝ Նուարթիէ նոտարը քերել տուաւ, առաջին կտակը պատուեցաւ և ուրիշ մը շինել տուաւ, որուն մէջ իւր բոլոր հարստութիւնը Ա.ալանթինին թողուց այն դաշամբ որ Ա.ալանթին միշտ իւր քովը մնայ :

Ամանք հաշիւ ըրին որ օրիորդք տը Ա.իլքֆօր Սէն-Ա.էրանի մարքէղին և մարքէղու հոյն ժառանդն ըլլալէ ետեւ, հիմա ալ-

իւր հաւին ներսղութիւնը ստանալով, որ մը էրեք հաւիր հազար ֆրանք և կամուս պիտի ունենայ:

Ալիւթքօրի տան մէջ այս ամսունութիւնը լուծուած ժամանակ՝ Առուէրք կոմինը Աօնթէ - Քրիսթոյի այցելութիւնը ընդգուներ էր, և իւր համակրութիւնը Տանկլարի ցուցընկու համար, զօրապետի տեղակալի համադդեսաը հաղեր, իւր տամն խաչ շքանշանները իւր վրայ կրեր, և ամենէն ընտիր ձիերը կառքին լծել տռեր էր: Այսպէս զարդարուած՝ Շուսէ-տ' Անթէն փոշոցը դնաց, և իւր զալուստը Տանկլարին իմացուց, որ իւր ամսավերչին հաշուելողին էը պարագեր:

Սեղանաւորը ուրախ և զուարթ տեսնելու յարմաք ժամանակը չէր:

Աւստի Տանկլար իւր հին բարեկամը տեսնելով ծանը կերպ սպառանք մը տառւ և իւր թեամսուին մէջ զուօղութեամբ տեղաւորուեցաւ:

Առուէրք, որ սովորաբար կեղծ ձեւեր կը բանեցրնէր, անոր հակառակ՝ ծիծաղպէմ և սիրալիր կերպարանք մը կ'երեցընէր, հետեաբար հաւաստի ըլլալով որ իւր սկզբնաւորութիւնը աղէկ ընդգունելութիւն պիտի դանէ, առանց դարձուածոյ խօսքեր բանեցընելու՝ և իսկոյն իւր նպատակին հասնելով ըստաւ:

— Սեպաւհ, աչա եկայ, մեր ժամանակաւ ըրան խօսքերը երկար ատենէ՝ ի վեր մը միտքը զբաղած են . . . — :

Այս խօսքերուն վրայ Առուէրք կ'ըսպասէր որ սեղանաւորին երեսը զուարթ երեսյթ մը ստանայ, որուն տրասում երեիլը անոր լսութեանը կու տար, բայց ընդ հակառակն՝ անոր երեսը այնչափ անողոքելի և այնչափ ցուրտ երեցաւ, որ զբեթէ անհաւատալի կ'երեւէր:

Այս պատճառաւ Առուէրք իւր խօսքը ընդմիջեր էր:

— Ի՞նչ խօսք, պարոն կոմս, հարցուց սեղանաւորը՝ այնպէս ձեացընելով թէ պարաւ տեղը իւր մասց մէջ փնտուինը՝ զօրապետին ըստածը չէր կրցեր հասկընալ:

— Ա՞չ, սիրելիք իմ պարոն, ըստ կոմսը, կը տեսնեմ
որ պաշտօնական ձեռքուն ուշադիր էք և կը յիշեցընէք ինձ
որ սովորութիւնը իւր ամեն ձեռքովը կատարեմ։ Սաւզիւ իւր
առաւնք ունիք, ներգցէք, և որովհեան մէկ զաւակ ունիմ։
Ես առաջին անդամն ե որ զան ամուսնացընել կը խորհիմ, դեռ
անտեղեակ եմ այն ձեռքուն, բայց ահա կ'ըսկոիմ։

Եւ Մորսէրֆ բոնի ժպիատվ մը ոտք ելաւ, Տանկլարին
առնելը ակնածական խոնարհութիւն մը ըրաւ և ըստ։

— Պ. սեպուհ, որիսրդ Էօմէնի Տանկլար ձեր աղջկան
ձեռքը Ալպէր աը Մորսէրֆ գերակոմն որդույս խնդրելու
պատիւը ունիմ։

Բայց Տանկլար այս խօսքերը փոխանակ սիրով ընդունելու,
որուն Մորսէրֆ կը յուսար, յօնքը կնշուց, և առանց հրա-
տիրելու կոմսը որ նստի, ըստ որում ոտքի վրայ մնացեր էր։

— Պարոն կոմս, ըստ, ձեզ պատասխանելէս առաջ պէտք
է որ մասածեմ։

— Մտածել կ'ըսէք, կրկնեց Մորսէրֆ երթալով իւր զար-
մանքը աւելնալով, առաջին անդամ այս ամուսնութեան խօսքը
ընելնիս ութ տարի է, և այսչափ միջոցէն ՚ի վեր միթէ ժա-
մանակ չունեցա՞ք մտածելու։

— Պարոն կոմս, ըստ Տանկլար, ամեն օր այնպիսի բա-
ներ կը պատահէին որ մասածուած բան մը վերստին մտածե-
լու կ'ըստիոլեն։

— Ի՞նչպէս, հալցուց Մորսէրֆ, ձեր ըսածը չեմ հասկը-
նար, սեպուհ։

— Ըստ կ'ուղեմ, պարոն, թէ տասն և հինգ օրէ ՚ի վեր
նոր պարագաներ + + +

— Ի՞նչ ըսիք, ըստ Մորսէրֆ, արգեօք կատակերդու-
թիւն մը պիտի ներկայացընենք։

— Ի՞նչ կատակերդութիւն։

— Իմ ուղած ալ այն է։

— Այս, յայտնապէս իրարու միտքը հասկընանք։

- Մոնթե - Քրիսթոյ կոմսը տեսաք :
- Խիստ յաճախ կը տեսնեմ զինքը , ըստ Տանկլար իւր շաղիկին օձիքը շիտկելով , իմ բարեկամներէս մէկն է ան :
- Զեր վերջին տեսակցութեանց մէկուն մէջ անոր ըսկը էք թէ ես այս ամսւանութեան նկատմամբ մռացիուա և երկմիտ կ'երեիմ :
- Ստոյդ է :
- Բւրեմ աչա ես եկայ , ոչ երկմիտ եմ և ոչ մռացիուա : Յայտնի կը տեսնէք , քանզի ես եկած եմ ձեզի իմանցընելու որ ձեր խոսառումը չմոռնաք — :
- Տանկլար չպատասխանեց :
- Եյսպէս շուտով ձեր միտքը փոխեցիք , յաւելցոց Մորսէրֆ , և կամ զիս նուաստացընելով զբօնելու համար զիս դրզուցիք որ առաջարկութիւնն ընեմ — :
- Տանկլար հասկըցաւ որ եթէ խօսակցութիւնը սկսածին պէտ շարունակէ , գործը կրնայ իրեն համար զէշ չետեռութիւնն ունենալ :
- Պարսի կոմս , ըստ , իմ ըրած դպուշութեանս վրայ անշուշտ պիտի դպրմանաք , կը հասկընամ . հաւատացէք որ ամնէն առաջ ես կը վշտանամ և ոտքպողական սպարադանիրէ հարկադրեալ այսպէս ընելու պարտաւորեալ եմ :
- Պարագ խօսքեր են առոնք , սիրելիդ իմ պարոն , ըստ կոմսը , առաջին անդամ ձեզի հետ տեսութիւն ընող մը դուցէ կարենայ զոհ ըլլալ այդ խօսքերով , բայց Մորսէրֆ կոմսը առաջին անդամը չէ որ ձեզի հետ տեսութիւն կ'ընէ , և երբ իրեն պէտ մարդ մը ուրիշ մարդու հետ կը խօսի , անոր տուած խօսքը կը յիշեցընէ , և երբ իւր դիմացինը խօսքը դրժէ , ինքը իրաւունք ունի անոր փոխարէն պատճառը հարցընելու — :
- Տանկլար վատ մէկն եր , բայց չէր ուզեր այնպէս երեկլ :
- Մորսէրֆին խօսեցած կերպէն վերաւորուեցաէ :
- Ես ալ շեմ կրնար պատճառը ըսել , ըստ :
- Կ'ոչ ըսել կ'ուզէք :

— Ըստ կուզեմ թէ պատճառը ունիմ, բայց ըստը դըժուար է:

— Ես յառ ամֆայնիո գուք ալ կը հասկընաք, ըստ Մօրսէրփ, թէ ես չեմ կրնար ձեր լոռութեամբ զո՞յ ըլլալ. և ձեր այս ընթացքին մէջ միայն ոս յայտնի կ'երեի ինձ, որ գուք իմ խնամութիւնս կը միրժէք:

— Աչ, պարոն, ըստ Տանկլար, ես իմ որոշումս 'ի կատ կը թողում ե ոչ ուրիշ բան:

— Բայց կարծեմ չէք պահանջեր որ հանդարտութեամբ և նուաստութեամբ ձեր հաւանութեան սպասելով ձեր մասյին հաճութեան դերին ըլլամ:

— Աւրեմն, պարոն կոմս, եթէ չէք ուզեր սովասել, մեր խորհուրդը չեղածի պէս համարինք — :

Կոմսը զզջաց որ զործը շուտով չարեց, ինչպէս որ իւր դռուող և գիւրաղրդիո բնութիւնը կը պահանջեր:

Սակայն մտածելով որ այնպիսի պարագայի մէջ ինքը ծաղրելի պիսաի ըլլայ, արդէն սրահին դրան մօտեցեր եր մեկնելու համար, երբ իւր միտքը փախելով ետ դարձաւ:

Իւր ճակատին վրայէն բարկութեան ամպ մը անցեր եր, բայց վիրաւորեալ հպարտութեան տեղ՝ անորոշ անհանգըստութեան մը հետքը մեացեր եր հոն:

— Երկար աարիներէ 'ի վեր մնք զիրար կը ճանչնանք, սիրելիդ իմ Տանկլար, ըստ, և հետեասին կը պարտաւորինք իրարու ակնածութիւն ունենալ: ուէաք էք բացատրութիւն մը տալ ինձ, և ես զոնէ կուզեմ զիտնալ թէ ինչ դժբաղդ պարագայի մէջ իմ որդիս յանցաւոր դտնուած է, որուն համար գուք ձեր բարի դիտաւորութիւնները կը փոխէք:

— Գերակուսին անձնականին զէմ խօսք չունիմ, աչա այսաշի կրնամ ըսել ձեզ, պարոն, պատասխանեց Տանկլար՝ որ Մորսէրփին մեղմանալը տեսնելով աւելի ամբարտաւան կերպով կը վարուէք,

— Եւ որուն անձնականին զէմ է խօսքերնիդ — , հար-

յուց Մորսէրֆ այլայլեալ ձայնիւ , և իւր ճակատը դեղնուշ և լինը պատեց :

Տանկլար , որ անօր այլայլութիւնները աղէկ կը դիմէր սավարականէ զուրս համարձակութեամբ իւր նայուածքը անօր լրայ յաբեց :

— Շնորհակալ եղիք որ աւելի բացառութիւն չի մ' տար — , ըստ :

Զըլային սարսուս մը Մորսէրֆը կը յառաջը որ անտարա կոյս բարկութեան հետեւթիւնն էր :

— Ըստած նուուր բացառութիւնը պահանջելու իրաւունքը ունիմ , պատասխանեց Մորսէրֆ ինքինքը զսպելով . արդեօք տիկին աը Մորսէրֆի՞ դէմ բան մը ունիք . արդեօք հարստութիւնս անբաւական կ'երեի ձեղ , և կամ իմ զազափար ներս ձերինին հակառակ ըլլալով . . . :

— Ոչ , առոնցմէ և ոչ մէ կ'ա է պատճառը , ըստ Տանկլար + քանզի ատունք ամենը ճանչնալովս ձեզի հետ խօսք ըրած ըլլալուս համար՝ իմ ընթացքս աններելի պիտի ըլլար : Ոչ , ալ մի փնտուեք , ստուգ իւ կ'ամշնամ խղչի սյօնպիսի քննութիւնն մը ընելուս . աւելի չերկարնք . պայմանաժամ մը որոշնք , որ ոչ լուծում մ'է և ոչ խոստում : Արտորալու ոկտավ չունինք . աղջիկս տասն ու եօթը ատրեկան է և տղադ քսան և մէկ . մեր կեցած միջոցին՝ ժամանակը պիտի քալէ և դէպաքերը պիտի ներկայացընէ . առ ջի իրիկունը մութ երեցած առարկաները հետեւեալ առտու պայծառ կ'երեին . և երբեմն օրուան մը մէջ իրիստ ծանը զըսպարտութիւններ կ'լինան մարդու վրայ :

— Զըսպարտութիւններ ըստիք , պարոն , դոչեց Մորսէրֆ դէմքը կապարադոյնի զառնալով . զի՞ս կը զըսպարտեն :

— Պարոն իսմա + խօսքերը չպարզենք ըսի :

— Ուրեմն , պարոն , հանդարտութեամբ այդ մերժման պի համբերեմ :

— Ենձի համար աւելի անտանելի է այդ , պարոն . այն :

ինձի համար աւելի անտառելի է քան թէ ձեզի , ես կը յու սպիր ձեր խնամութեան պատիը ստանալու , և ետ եղած աւմաւսնութիւն մը միշտ աւելի ծանր է նշանուած աղջկան մը քան թէ աղուն :

— Ըստ աղէկ , պարոն , զոցենք ոյս խօսքերը — , ըստ Մորսէրֆի :

Եւ բարկութեամբ իւր ձեռնոցները Ճմոտկելով դուրս ելու : Տանկլար դիտեց որ Մորսէրֆ չհամարձակեր էր և ոչ անդամ մը հարցընելու թէ Տանկլարի խօսքը ետ ասնելու սլատառը ինքը Մորսէրֆն էր :

Երիկունը սեղանաւորին տունը բաղմաթիւ բարեկամներ դումարուեր էին , և ող . Գավալդանթի , որ միշտ տիկնանց սրահը մնացեր էր , ամենէն վերջու մեկնեցաւ :

Հետեւալ առոտ՝ Տանկլար արթնցած ժամանակը լրադիրները ուղեց , և անոնցմէ երեք կամ չորսը մէկ կողմէ դնելով՝ ԱՇՔ-ՔՐԵՎ-Լ անուն լրադիրը առաւ , որուն խմրադիրն էր ուղան :

Խոկոյն դօտին պատճեց , և լրադիրը բացաւ . Բարիզի լրոց վրայ արհամարհական նոյուածք մը շրջեց , և դանաղան լրոց հասնելով՝ չարամիտ ժպիտով մը հետեւալը կարդաց .

« Եանեայէն մէռ իւ քըշն » :

— Բարի , ըստ , աչա Ֆէրհան դնդասկետին վրայ յօդաւածի մը սկզբունքը , որ հաւանականարար տը Մորսէրֆի կոմսին բացատրութիւններ տալու հազէն պիտի աղատէ դիս — :

Դրեթէ այս միջոցներուն , այսինքն առոտուան ժամը ինը հնչած ժամանակի Ելպէր տը Մորսէրֆ սկզբաններ հաղած , բոլորովին կոչկուած , և յուղեալ կերպարանքով Շանդ-Էւլիդի տունը ներկայացաւ :

— Պ. կոմսը զրեթէ կէս ժամ առաջ դուրս ելու , ըստ դոնապանը :

— Պաթիսթէնը հետը տարամ , հարցուց Մորսէրֆ :

— Ոչ , պարոն զերակոմն :

— Աւքեմն Պաթիսթէնը կանչէ , խօսելիք ունիմ անոր — :

Դունապանը անձամբ դնաց սենեկապանը կանչըլու, և պահը ետքը անոր հետ վերադարձաւ:

— Քարեկամ, ըստ Ալպէր, ներէ, ուզեցի քեզ հարցը նել թէ տէրդ իրօք գուրս ելած է:

— Այս, պարոն, պատասխանեց Պաթիսթէն:

— Ինձի՞ համար ալ:

— Գիտեմ աղէկ թէ տէրս որչափ ուրախութեամբ ձեզ ընդունելութիւն կու տայ, ուստի դձեզ ուրիշներուն տեղը դնելէն պիտի զդուշանամ:

— Կարեւոր զործի մը համար անոր հետ պիտի խօսէի. կը կարծես որ ուշանայ վերադառնալու:

— Ոչ, հրամայեց որ իւր նախաձաշը ժամը տասին պատրաստ ըլլայ:

— Քարի, ես Ծանզ-Էլիզէ շրջան մը ընելու կ'երթամ, և ժամը տասին կը վերադառնամ. եթէ պարոն կոմսը ինձմէ առաջ գայ, կ'աղաւեմ զինքը որ սպասէ ինձ:

— Ծատ աղէկ, պարոն, ապահով եղիք որ ձեր հրամանը պիտի կատարուի:

Ալպէր վարձու ընուած կառքը կոմսին դրան առջին թողուց և ոտքով պտըտելու գնաց:

Վեօվ ըսուած ծառուղին առջեն անյնելու ատեն կոսէի դրան առջեւ կեցած ձիեր տեսաւ, զորոնք կոմսին ձիերուն նմանեցուց:

Խսկոյն անոնց մօտեցաւ, և զանոնք Ճանչնալէն ետե կառավարն ալ Ճանչցաւ:

— Պարոն կոմսը զնդաձդութեան մտաւ, հարցուց Մորուէրի անոր:

— Այս, պարոն —, պատասխանեց կառավարը:

Իրօք՝ Մորուէրի հոն մօտենալէն 'ի վեր քանի մը կանոնաւոր զնդաձդութիւններ լսուեցան:

Ուստի ներս մտաւ, և տեսաւ որ պարտիզակին մէջ սպասաւորը կ'ըսպասէր:

— Աերեցէք, ըստ սպասաւորը, պարոն դերակոմսը վայր՝ կեան մը կը բարեհաջի սպասել:

— Ի՞նչ պատճառաւ, Ֆիլիք, հարցուց Ալզէր, որ անոր յաձախորդներէն մէկն ըլլալով՝ այս դիմադրութեան վրայ կը զարմանար և պատճառը չէր հասկընար:

— Վասն զի այս միջոցիս զնդաձգութեան պարապող անձը բոլոր ասպարէզը իրեն պահած է, և ամենեին մարդու առջեւ զնդաձգութիւն չըներ:

— Ո՞չ իսկ քու առջեդ, Ֆիլիք:

— Կը տեսնէք, պարոն, ասպարէզին դուռը կ'ըսպասեմ:

— Իւր ատրճանակները ո՛վ կը լեցընէ,

— Իւր ծառան:

— Նուպիացի մը:

— Խաբշիլ մը:

— Ճիշդ տն է:

— Ռւրեմն կը Ճանչնաք այն պարոնը:

— Զան տեսնելու եկած եմ, իմ բարեկամու է:

— Ատ ուրիշ բան է. երթամ ուրեմն իմացընեմ — :

Եւ Ֆիլիք աւելին հետաքրքրութենէ զրդուեալ զնդաձգութեան ասպարէզը մտաւ:

Մանրերկրորդ մը ետքը Մօնթէ-Քրիսթօ դրան սեմոց վրայ երեցաւ:

— Ներեցէք ինձի որ ետենէդ մինչև հոս եկայ, սիրելիդ իմ կոմս, ըստ Ալզէր. բայց կ'ապահովեմ զձեղ որ ձեր ծառաները յանցանք չունին, ես միայն անխոհեմութեամբ եկայ: Չեր տունը դացի, ինձ ըսին թէ պտըտելու դացած էք, և ժամը ասսին պիտի վերադառնաք. ես ալ պտըտելու ելայ մինչեւ ժամը տասը ըլլալը, և պտըտելու ատենս՝ ձեր ձիերն ու կառքը տեսայ:

— Եր խօսքերը կը յուսադրեն զիս թէ ինձի հետ Ճաշելու եկած էք:

— Ամենեին, չնորհակալ եմ. այս ժամուս Ճաշել չեմ ու-

դեր, դուցէ աւելի ետքը ճաշենք, բայց հիմա կարեսը խօսք
մը ունիմ ձեզ ըստըու :

- Ի՞նչ կ'ըսէք :
- Քարեկամ, այսօր պիտի մենամարտիմ :
- Դո՞ւք և ի՞նչ պատճառաւ :
- Ես պիտի մենամարտիմ կ'ըսէմ :
- Աղէկ, կ'իմանամ. բայց ի՞նչ է պատճառը : Աենամարտը լու համար զանազան պատճառներ կ'ունենայ մարդ :
- Պատույ համար պիտի մենամարտիմ :
- Ա՛յ, կատակելու խնդիր մը չէ այդ :
- Այո՛, և ես ձեզմէ շնորհք մը խնդրելու եկած եմ :
- Ի՞նչ շնորհք :
- Որ իմ վկաս ըլլաք :
- Աւրեմն խնդիրը ծանր կերպարանք մը կ'առնու . Եկէք տունս երթանք և այսպիսի խօսք մը հօն կ'ընենք : Ալի, չուր բեր ինձի — :
- Կոմմը իւր թերանիքը վեր քաշեց և փռքը դաւիթին մէջ մտաւ, ուր գնդաձդութեան վարժուելու համար եկողները ձեռքերնին լուալու տովորութիւն ունին :
- Կերս մտէք քիչ մը, պարոն գերակոմն, ըսաւ Ֆիլիպ կամաց ձայնով, տարօրինակ բան մը պիտի տեսնէք — :
- Մորսէրֆ զնդաձդութեան ասսպարէզը մտաւ :
- Երկաթեայ տախտակին վրայ նշաններու տեղ խաղալու թղթեր փակցուած էին :
- Հեռուէն Մորսէրֆ կարծեց թէ ամբողջ խաղի թղթեր են անոնք . քանզի միաւորէն մինչև տասնաւորը կար :
- Կը տեսնեմ որ բէտէն խաղալու զբաղեր էք, ըսաւ Ալպէր:
- Ոչ, ըսաւ կոմմը, խաղալու թղթեր շինելու աշխատեցայ:
- Ի՞նչպէս :
- Զէք տեսներ որ անոնք միաւորներ և երկուքնոյներ են, և ես գնտակներով երեքնոց, չինողնոց, եօթնոց, ութնոց, իննոց և տասնոց շինեցի — :

Ելպէր անոնց մօտեցաւ :

Իրօք՝ գնտակները միաւորներուն և երկուքնոցներուն վեցյ կատարեաւ Ճիշդ զծերով և հաւասար հեռաւորութեամբ ծառ կեր բացեր էին և միւս նշանները ընելով մնացորդ թիւերը շիներ էին :

Երկաթ տախտակին մօտենալու ժամանակ Մորսէրֆ զետնէն երկու կամ երեք ծիծառներ զտեր էր, որոնք անխօհեմութեամբ կոմոին ատրճանակին առջեկն անցեր էին, և կոմու նոյն միջոցին զանոնք ալ սպաններ էր :

— Սառւդիւ հիանալի է, ըսաւ Մորսէրֆ :

— Ի՞նչ ընեմ, սիրելիք իմ դերակոմս, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ Ալիին բերած վարչամակովը սրբուելով, պէտք է որ պարապոյ ժամերս տնցընեմ. բայց եկէք ։ ձեզ կ'ըսպասեմ — ։

Միատեղ կոմոին կառքը հեծան, որ քանի մը վայրկենէն թիւ 30 տան առջեւ տարաւ զանոնք :

Մօնթէ-Քրիսթօ Մորսէրֆը իւր դահլիճը տանելով աթոռ մը ներկայացուց անոր :

Երկուքնին ալ նստան :

— Հիմա, ըսաւ կոմու, հանդարտ խօսինք :

— Կը տեսնէք որ ես բոլորովին հանդարտ եմ :

— Որո՞ւ հետ պիտի կուրիք :

— Պոշանին հետ :

— Ձեր բարեկամին հետ :

— Միշտ բարեկամի հետ մարդ կը մենամարտի :

— Գոնէ պատճառ մը ըլլաւ պէտք է :

— Անշուշա :

— Ի՞նչ ըրաւ ձեզ :

— Երէկ իրիկուան իւր լքաղըին մէջ յօդուած մը հրատարակած է . . . : Բայց ահա կարդացէք — ։

Ալոէր Մօնթէ-Քրիսթոյին լքաղիր մը ներկայացուց, որուն մէջ կարդաց :

« Եանեայէն մէջ կը դըե՞ն,

«Մինչեւ ցարդ շղիոցուած կամ գոնէ չըրատարակուած գէպքի մը վրայ ստոյդ տեղեկութիւններ ստացանք :

«Այս քաղաքը պաշտպանող բերդերը Տաճկաց ձեռքը մատնուեր են Գաղղիացի պաշտօնատարէ մը , որուն վրայ Թէրէ-տէլէնի Ալի-բաշան մնծ վստահութիւն ունէր և որուն անունը Փէրնան էր » :

— Բայց այս յօդուածին մէջ ձեզի գալող ի՞նչ կէտ կայ , Հարցուց Մօնթէ-Քրիսթօ : Ֆէրնան անունով պաշտօնատարէն Նանեայի բերդերուն մատնուիլը ձեզ ի՞նչ կը նկատէ :

— Մորսէրֆ կոմս Հայրս միրտութեան անուամբ Փէրնան կը կոչուի :

— Զեր Հայրը Ալի-բաշային ծառայութեան մէջ կը գըտնուէր :

— Այսինքն թէ Յունաց անկախութեանը Համար կը պատերազմէր , և աչս զրպարտութիւնը հոս է :

— Մատծենք քիչ մը , սիրելիդ իմ գերակոմս . Գաղղիոյ մէջ ով զիտէ թէ Փէրնան պաշտօնատարը նոյն Մորսէրֆ կոմսն է , և այս ժամաւ ով կը մոտածէ Եանեայի վրայ , որ կարծեմ 1822ին կամ 1823ին առնուեցաւ :

— Տեսէք անդամ մը ի՞նչ նենգամութիւն է . այսչափ ժամանակ անցնելէ ետքը այսօր մոռցուած գէպքերուն վրայ կը վերագառնան , որպէս զի այնպիսի դայթակղութիւն մը ձգեն , որով զուցէ կարենան համարումք զրկել զմեզ , Սակայն ես հօրս՝ անուան ժառանգն եմ , չեմ ուզեր որ անոր անուան վրայ կասկածանաց ստուերն անզ ամ մնայ : Պոշանին երկու վկաներ պիտի զրկեմ որ իւր հրատարակած յօդուածը յետս կոչէ :

— Պոշան իւր յօդուածը յետս չկոչեր :

— Այն ժամանակ պիտի մնամարտինք :

— Ոչ , պիտի շմենամարտիք , ըստ որում դուցէ պատասխանէ ձեզ թէ յունական բանակին մէջ Փէրնան անունով յիսնի չափ պաշտօնատարներ կային :

— Այդ պատասխանն ալ տայ՝ դարձեալ պիտի մենամարդունք . ո՛չ , կ'ուզեմ որ այս բիծը վերնայ . . . : Հայրս , որ այնպէս ազնիւ զինուոր մ'է և այնչափ երկելի ծառայութիւններ ըրած է . . . :

— Եւ կամ դուցէ այսպէս յօդուած մը հրատարակէ .

« Հաստատ կերպով մենք կը հաստատենք որ այս Ֆէրնանը Սորսէրֆ կոմսին հետ վերաբերութիւն չունի , որուն մկրատութեան անունը նոյնպէս Ֆէրնան է » :

— Այդքանով չեմ բաւականանար , կատարեալ և ամբողջ յետս կոչում մը կը պահանջեմ :

— Եւ ձեր վկաները պիտի զրկէք անոր :

— Այո՞ :

— Կը սիալիք :

— Ուրեմն ըսել կ'ուզէք թէ իմ ձեզմէ խնդրելու շնորհքու պիտի մերժէք :

— Աենամարտութեան վրայ իմ ունեցած նկատումս զիստէք , Հռոմի մէջ ձեզ ի հացուցի , կը յիշէք :

— Սակայն , սիրելիդ իմ կոմս , քիչ մը առաջ զձեղ այնպիսի զբաղման մէջ զտայ , որ այդ սկզբանց հետ շհամաձայնիք :

— Վասն զի , բարեկամ , ոկտք չէ երբէք ամենուն բըռնած ճամբէն դուրս ելնենք : Երբ մարդս խենթերու հետ կ'ապրի , պէտք է որ խենթերուն ուսումը սորվի . վայրկեանէ վայրկեան բորբոքեալ ուղեղ մը , առանց ինծի հետ կոուելու համար պատճառ մը ունենալու , ինչպէս որ դուք Պոշանին հետ կ'ուզէք կոուիլ , կընայ խելազարութեամբ մը զալ զիս զտնել , կամ իւր վկաները զրկել , և կամ հրապարակի մէջ զիս նախատել , այն ատեն ես ալ կ'ըստիպուիմ այն բորբոքեալ ուղեղը այրելու :

— Ուրեմն դուք ալ պիտի մենամարտիք :

— Անշուշտ :

- Աւրեմն իմ մենամարտիլս ինչու չէք ուզեր :
- Զբսի թէ պէտք չէք մենամարտիլ, այլ ըսել ուզեցի թէ մենամարտութիւնը ծանր խնդիր մ'է, և պէտք է մտածել :
- Հայրս նախատելու ժամանակ Պոշան մտածեց :
- Եթէ չմտածեց, և երբ ձեղ խոսառվանի այս բանս՝ պէտք չէ որ անոր թշնամանաք :
- Ա՛չ, սիրելիդ իմ կոմ, խիստ անյիշաչար կ'երեիք :
- Եւ դուք շատ խիստ կ'երեիք : Ենթադրենք թէ Աղէկ մաիկ ըրէք . ենթադրենք թէ Անշուշտ ըսածիս պիտի չնեղանաք :
- Մտիկ կ'ընեմ ձեզ :
- Ենթադրենք թէ պատմուած դէպքը Ճշմարիտ է
- Զաւակ մը իւր հօրը պատուոյն վրայ այսպիսի ենթադրութիւն մը ընդունել պէտք չէ :
- Ե՛չ, այնպիսի ժամանակի մէջ կ'ապրինք ուր ամեն բան կ'ընդունի մարդ :
- Ժամանակիս թերութիւնն է այդ :
- Միթէ զայն ուղղելու դիտաւորութիւնն ունիք :
- Այո՛, ինձի նկատած կէտին մէջ :
- Ա՛չ, բարեկամ, որչափ խիստ կ'երեիք :
- Ես այսպէս եմ :
- Բարի խրատները չէք ընդունիր :
- Ոչ, երբ բարեկամէ մը ուղղուին անռնք :
- Զիս ձեր բարեկամը կը կարծէք :
- Ա.յո՛ :
- Աւրեմն ձեր վկաները Պոշանին զրկելէն առաջ տեղեկացեք :
- Որմէ :
- Որմէ որ կ'ուզէք, Հայտէէն կրնաք տեղեկանալ :
- Կին մը այս զործերուն մէջ խառնեմ. Հայտէ ինչ կրնայ ընել :
- Կրնայ յայտնել ձեղ որ ուշ Մորսէրֆ կոմսը իւր հօրը

վատնութեան կամ մահուան ամսնեին մասնակից եղած չէ, և կամ կրնայ ձեզ այս խնդրոյն վրայ ձեր տարակոյնը փառատել, եթէ դիպուածով ձեր հայրը . . . :

— Արդէն ըսի ձեզ, սիրելիդ իմ կոմս, թէ այդպիսի ենք թագորութիւն մը չեմ ընդունիր:

— Ուրեմն այս միջօցը կը մերժէք:

— Այո՛, կը մերժեմ:

— Բոլորովին:

— Ուրեմն վերջին խրատ մը տամ ձեզ:

— Ծառ աղէկ, բայց վերջինը պիտի ըլլայ:

— 2էք ուզեր որ ըսեմ:

— Ընդ հակառակն՝ կուզեմ որ ըսէք:

— 2եր վկաները Պոշանին մի դրկէք:

— Ի՞նչպէս:

— Դուք անձամբ դացէք զինքը դտէք:

— Սովորութեան հակառակ է այդ:

— 2եր խնդիրն ալ հասարակ խնդիրներէն դուրս է:

— Եւ ինու ես անձամբ երթալ պէտք եմ, ըսէք:

— Վասն զի այս կերպով զործը ձեր և Պոշանին մէջ կը մնայ:

— Յայտնի խօսեցէք:

— Ծառ աղէկ, եթէ Պոշան յիտս կոչելու տրամադիր ըւլայ, սէտք է անոր աղատ կամքին թողուլ, յիտս կոչումը այս կերպով ալ իւր զործը կը կատարէ. եթէ ընդ հակառակն մերժէ, միշտ ժամանակ կ'ունենաք ձեր դաղսնեաց մէջ կրկու օտարական մտցընելու:

— Երկու օտարական պիտի չդրկեմ, այլ երկու բարեկամ:

— Այսօրուան բարեկամները երեկուան թշնամիներն են:

— Ինչե՛ր կ'ըսէք:

— Պոշան ասոր ապացոյց կրնայ ըլլալ:

— Ուրեմն . . . :

- Աւրեմն կ'առաջարկեմ որ խոհեմութեամբ վարուիք :
- Աւրեմն կը կարծէք որ ես անձամբ զոշանը երթալ պեսնել պէտք եմ :
- Այո :
- Առանձին . . երբ մարդու ինքնասիրոն թենէն բան մը պատահալ կ'ուզենք , անոր ո՞ր և է դպչելու կէտէն չեռու կենալ պէտք է :
- Կարծեմ թէ իրաւունք ունիք :
- Ա՛յ , ո՛րշափ ուրախ եմ :
- Աւրեմն առանձին կ'երթամ :
- Գացէք . . բայց աւելի աղէկ կ'ընէիք եթէ ամենաին չերթայիք :
- Անկարելի է այդ :
- Աւրեմն այնպէս ըրէք . . միշտ ձեր ընել ուզածէն լաւաղոյն է :
- Բայց այն ատեն , եթէ իմ ամեն նախազդուշութեանցս և բոնած ընթացքիս հակառակ մենամարտութիւն մը ունենամ , վկաս պիտի ըլլաք :
- Սիրելիդ իմ դերակոմս , ըսաւ Մօնթէ - Քրիսթօ խիստ ծանրութեամբ , անշուշտ տեսած էք որ ժամանակին և տեղույն համեմատ ձեզի մեծ ծառայութիւններ ըրի . . բայց ինձմէ ինդրած շնորհընիդ իմ կարողութեանս շրջանէն գուրս կ'ելնէ :
- Ի՞նչ պատճառաւ :
- Գուցէ օր մը իմանաք :
- Բայց չիմա :
- Զեր ներողամտութիւնը կը ինդրեմ իմ դաշտանապաշտութեանս համար :
- Ծատ աղէկ , ուրեմն ֆրանզը և Ծաթօ - Ռընօն կ'առնում :
- Աղէկ կ'ըլլայ , ֆրանզը և Ծաթօ - Ռընօն առէք :
- Բայց վերջապէս , եթէ մենամարտիմ , պիտի բարեհանձիք սուրի կամ ատրճանակի փոքր դաս մը տալու :

— Աչ, անկարելի է :

— Եղական մարդ մ'էք, ուրեմն ամենեին բանի մը խառնուիլ չէք ուզեր :

— Ամենեին և ոչ մէկ բանի :

— Ուրեմն գոցենք խօսքը, մնաք բարեաւ, կոմս :

— Երթաք բարեաւ, դերակոմս — :

Մորսէրֆ զ լիսարկը առնելով դուրս ելաւ :

Իւր բարկութիւնը կրցածին չափ զսպելով, կառքը մտաւ և Պոշանին տունը գնաց :

Պոշան իւր լրադրին զրասենեակը կը զտնուէր :

Ալպէր զինքը հոն տանել տուաւ. Պոշան մութ և փոշեւ սենեկի մը մէջն էր, ինչպէս են լրադրաց սենեակները իրենց հաստատուելէն 'ի վեր :

Ալպէր տը Մորսէրֆին դալուտը անոր իմացուցին :

Երկու անդամ անոր անունը կրկնել տուաւ, ետքը դարձեաւ աղէկ չասկընալով դոչեց .

— Ներս մաէք — :

Ալպէր ներս մտաւ. Պոշան դարմացման ձայն մը հանեց երբ իւր բարեկամը տեսաւ որ թղթի կոյսերուն մէջէն անցնելով, և ոչ միայն զաւիթին այլ և իւր դրասենեկին կարմիր քարերուն վրայ սփոռւած զանազան մեծութեամբ լրադիրներուն վրայ կոխելունելով կու զար :

— Այս կողմէն հրամայեցէք, այս կողմէն, սիրելիդ իմ Ալպէր, ըսաւ լրադրապետը ձեռքը երիտասարդին երկնցընելով, ո՞ր հովք զձեղ հոս բերաւ. արդեօք փոքր Բուսէին պէս կորսուեցաք, և կամ պարզապէս նախաճաշ ուզելու ելած էք: Ալոռ մը առէք և նստէք, ահա, հոն աթոռ մը կայ կռնկենիին քովը, որուն տերեները կը յիշեցընեն ինձ որ աշխարհիս մէջ եղած ամեն թերթերը թղթի թերթեր չեն:

— Պոշան, ըսաւ Ալպէր, ձեր լրադրին վրայ խօսելու ելած եմ:

— Դժուք, Մորսէրֆ, և ի՞նչ կը փափաքիք :

- Սիսակի մը ուղղութիւնը կը պահանջեմ։
 — Ի՞նչ ուղղութիւն, Ալպէր . բայց նստէք . բարեկամ։
 — Ընորհակալ եմ, պատասխանեց Ալպէր Երկրորդ անգամ և դլիսի թեթև նշանով մը։
 — Միաբերնիդ պարզեցէք, ի՞նչ ըսել կ'ուզէք։
 — Ընտանեացս մէկ անդամին պատուոյն արատ բերող դէպքի մը ուղղութիւնը կը խնդրեմ։
 — Կատակը թողուցեք, ըսաւ Պոշան զարմանքով մը . ի՞նչ դէպք . այդպիսի բան մը չկայ։
 — Եանեայի վրայ դրաւած դէպքը։
 — Եանեայի։
 — Այս, Եանեայի . ստուդիւ ի՞նչ պատճառաւ հոս գալս չիտնալ կը ձեւցընէք։
 — Պատռույս վրայ չեմ զիտեր . . . Պաթիսթ , երէկուան լրագիրը բեր , զուցեց Պոշան։
 — Հարկ չէ , իմս բերած եմ ձեզ —։
 Պոշան լիրտալով կարդաց .
 « Եանեայէն մեզ կը զրեն , ևս , ևս »։
 — Կը հասկընաք որ խնդիրը ծանր է , ըսաւ Մորսէրք երբ Պոշան յօդուածը լմիցուց։
 — Աւրեմն այս պաշտօնատարը ձեր ազգականն է , հարցուց խմբագիրը։
 — Այս, ըսաւ Ալպէր կարմրելով։
 — Ըսէք ուրեմն , ձեզ հաճելի բլլալու համար ի՞նչ կ'ուզէք որ ընեմ , ըսաւ Պոշան քաղցրութեամբ մը։
 — Կ'ուզեմ որ այս յօդուածը յետս կոչէք , սիրելիք իմ Պոշան —։
 Պոշան այնպիսի ուշագրութեամբ մը Ալպէրին երեսը նայեցաւ , որ սառւղիւ անոր հաճելի երկիւ ուզելը կը յայտնէր։
 — Այս յօդուածը երկար խօսելու պիտի պարտաւորէ զմեզ . ըստ որում միշտ ծանր բան է յետս կոչում ընելը : Կստէք , այս երեք կամ չորս տողերը վերստին պիտի կարդամ —։

Ալպէր նստաւ, և Պոշան իւր բարեկամին մեղադրած տուղերը առաջին անդամն աւելի մեծ ուշադրութեամբ կարդաց:

— Յայտնի կը տեսնէք, ըսաւ Ալպէր հաստատամտութեամբ և զբեթէ խստութեամբ մը, ընտանիքէս մէկը նախատուած է ձեր լրագրին մէջ, և ես յետս կոչում մը կը պահանջեմ:

— Կը պահանջէք . . . ըսիք:

— Այո, կը պահանջեմ:

— Ձերեցէք ըսեմ ձեզ որ դուք խօսք մտիկ ընել չէք ուղեր, սիրելիդ իմ Ալպէր:

— Ոչ, չեմ ուզեր, կրկնեց Ալպէր ոտք ելնելով. Երեկուան ձեր հրատարակած յօդուածին յետս կոչումը կը պահանջեմ և պիտի ընդունիմ: Դուք իմ բարեկամս էք, շարունակեց Ալպէր շուրթերը սեղմելով և տեսնելով որ Պոշան ալ իւր կողմէն իւր հպարտ զլուխը վեր վերցընելու կ'ըսկսէր. դուք իմ բարեկամս էք, և կը յուսամ թէ զիս ալ աղէկ կը ճանշնաք, ու այսպիսի պարագ այի մէջ իմ յամառութեանս պատճառը կը հասկընաք:

— Եթէ ես ձեր բարեկամն եմ, Մորսէրփ, ձեր խօսքերովը բարեկամութիւննիդ պիտի մոռցընել տաք ինձ . . . Բայց նեղանալը մէկդի թողունք, կամ զոնէ հիմա նեղանալու ժամանակը չէ . . . : Բարեկացած, դրզուած և վիրաւորուած կ'երեիք. ըսէք, Գէրնան կոչուած այդ ազդականը ո՞վ է:

— Իմ հայրս է և ոչ ուրիշ մէկը, ըսաւ Ալպէր, Պ. Գէրնան Մոնտէկօն, աը Մորսէրփ կոմսը, որ քսան և հինդ պատերազմի դաշտերու մէջ մանող հին զինուորական մ'է և ուրուն ազնիւ վերքերը աղքիւրի մէջ զումարուած պիղծ տիղմով աղտեղել կ'ուզեն:

— Ձեր հայրն է, ըսաւ Պոշան, ուրեմն տարբեր խնդիր է այդ. Հիմա կը հասկընամ ձեր բարկութեան պատճառը, սիրելիդ իմ Ալպէր . . . : Ուրեմն վերստին կարդանք . . . — :

Եւ այս անդամ ամեն բառին վրայ կենալով յօդուածը վերստին կարդաց:

— Բայց այս յօդուածին մէջ ուր տեսաք որ Ֆէրնան ձեռ
չայրն ըլլայ :

— Գրուած չէ : զիտեմ . բայց ուրիշ մարդիկ պիտի հաս-
կընան այնպէս ըլլալը : Այս պատճառաւ կ'ուղեմ որ յօդ-
ուածը ուղղուի :

Կ'ուղել խօսքին վրայ Պոշան Մորսէրֆին երեսը նայեցաւ ,
և ետքը դլուխը խոնարհելով՝ վայրկեան մը մտախորհ մնաց :

— Այս յօդուածը պիտի ուղղէք , այնպէս չէ , Պոշան ,
կրկնեց Մորսէրֆ աւելցած բայց միշտ կենդրոնացած բարկու-
թեամբ մը :

— Այո , ըսաւ Պոշան :

— Ուրտիս եմ որ խօսք կը հասկընաք :

— Բայց երբ ստոյդ իմանամ որ եղածը սուտ է :

— Ի՞նչպէս :

— Այո , դործը կը պահանջէ որ անոր վրայ ստոյդ տե-
ղեկութիւններ ստանամ , և ես այս բանիս պիտի աշխատիմ :

— Բայց տեղեկութիւն ստանալու ինչ հարկ կայ , ըսաւ
Ալգէր իւր սահմանէն գուրս ելնելով : Եթէ չէք հաւատար
որ հայրս է՝ շուտով ըսէք , իսկ եթէ կը հաւատաք՝ պէտք
է որ մենամարտինք :

Պոշան այնպիսի ժպիտով մը Ալգէրին երեսը նայեցաւ ,
որ իրեն յատուկ էր , և անով ամն կիրքերուն աօտիճանը
կը փորձէր :

— Պարոն , կրկնեց , եթէ ինձմէ մենամարտութիւն խնդրե-
լու եկած էք , պէտք էր 'ի սկզբան խօսէիք և ոչ բարեկա-
մական և ուրիշ ձանձրալի խօսքեր ընէիք , որոնք կէս ժամէ
'ի վեր համբերութեամբ մտիկ կ'ընեմ : Ուրեմն այդ խնդրոյն
վրայ պիտի խօսինք այսուհետեւ :

— Այո , եթէ անիրաւ զրպարտութիւնը յետս կոչէք :

— Կեցիք , մի սպառնաք , եթէ կը հաճիք , Պ . Ֆէրնան Մոն-
տէկո , գերակումս Մորսէրֆ . և իմ թշնամեացս սպառնալեացը
չեմ ներեր , ո՞րչափ ևս առաւել իմ բարեկամացս : Ուրեմն

կը պահանջէք որ Ֆէրնան դնդապետին յօդուածը ուղղեմ, որ պատույս վրայ կ'ըսեմ՝ զիսնալովս չըրատարակուեցաւ։

— Այո՛, կը պահանջեմ, ըստ Ալպէր, որուն զլուխը սկսաւ գառնալ։

— Եթէ ոչ պիտի մնամարտի՞նք, շարունակեց Պոշան նոյն սրտի հանդասութեամբ։

— Այո՛, կըկնեց Ալպէր ձայնը բարձրացընելով։

— Ուրեմն, ըստ Պոշան, ահա իմ պատասխանո, սիրելիդ իմ պարոն։ այս յօդուածը ես չըրատարակեցի, անոր վրայ ծանօթութիւն անդամ չունեի, բայց քանի որ դուք ինձ կը դիմէք, կը պարտաւորիմ ուշադրութիւնս անոր վրայ դարձընել, և պիտի ջանամ կամ սուտ հանել և կամ ստոյդը հաստատել։

— Պարոն, ըստ Ալպէր ոտք ելնելով, ուրեմն իմ վկաներս ձեզ զրկելու պատիւը պիտի ունենամ։ կրնաք անոնց շետ տեղը և զէնքը որոշել։

— Ճատ աղէկ, սիրելի պարոն։

— Եւ այս իրիկուն եթէ կը հաջիք, կամ առ առաւելն վաղը իրարու կը աեսնուինք։

— Ոչ, ոչ. պէտք եղած ժամանակը միայն պատրաստ եմ, և իմ կարծեօքս (ըստ որում ձեզմէ դրզուած ըլլալով՝ որոշելու իրաւունքը իմսէ) մնամարտելու ժամանակը եկած չէ գեռ։ Գիտեմ որ սրամարտութեան մէջ խիստ վարձ էք, ես ալ ըստ բաւականին վարժ եմ. զիտեմ որ վեց նշանէն երեքին կը յաջողվէ, ես ալ զրեթէ նոյն յաջողութիւնն ունիմ, զիտեմ որ մեր մնամարտութիւնը կատակ մը պիտի չըլլայ, ըստ որում դուք քաջ էք, ես ալ . . . ձեզմէ պակաս չեմ մնար, Հետեարար չեմ ուղեր առանց պատճառի սպաննել զձեղ կամ ձեզմէ սպաննուիլ. Հիմա կարդը իմսէ խընդիրը ճշդիւ քննելու։ Զիս սպաննելու չափ յամառութեամբ պիտի պնդէք որ այն յետս կռչումը ըլլայ, թէև ինչպէս ըսկ, դարձեալ կ'ըսեմ և կը հաստատեմ պատույս վրայ որ

այն յօդուածը տեսած չէի, և վերջապէս կ'իմացընեմ որ ձեզի պէս Տռն Ժաֆէթէ մը զատ ուրիշ մէկուն անկարելի է Քէրնան անունին տակը Պ. տը Մորսէրֆ կոմոը զուշակել:

— Անշուշո կը պահանջեմ:

— Ուրեմն, սիրելի պարոն, կը հաւանիմ որ իրարու պարանոցը կտրենք, սակայն երեք շաբաթ կ'ուզեմ. երեք շաբաթէն կամ պիտի ըսեմ. « Այո՛, յօդուածին պարունակութիւնը սուտ է եղեր և ես կ'ուղղեմ զայն ». և կամ « Այո՛, Ճշմարիտ է եղեր » : Եւ այն ատեն ձեր որոշման համեմատ սուրը պատեանէն կամ ատրանակը տուփէն կը հանեմ :

— Երեք շաբաթ, զոչեց Ալպէր. բայց երեք շաբաթը երեք դար է ինձի համար և մինչև այն ատենը մեր անունը պիտի անպատճուի:

— Եթէ բարեկամս ըլլայիք, « Համբերութիւն », բարեկամ » կ'ըսէի . բայց դուք թշնամի եղաք, և հիմա կ'ըսեմ. « Կմհ հմգս է, պարոն » :

— Ծատ աղէկ, թող երեք շաբաթէն ըլլայ, ըսաւ Մորսէրֆ . բայց մտածեցէք, երեք շաբաթէն անդին ոչ պայմանաժամ ունիք և ոչ փախստեան ձամբայ . . . :

— Պ. Ալպէր աը Մորսէրֆ, ըսաւ Պոշան նոյնպէս ոտք ելնելով, ասկէ երեք շաբաթէն այսինքն քսան և չորս օրէն կրնամ զձեզ պատւհաններէն դուրս նետել, և դուք այն ժամանակ սուսերով զիս սպաննելու աղտառութիւն ունիք . Այսօր օգոստոս ամսոյ 29ն է, սեպտեմբերի 21ին զիրար կը տեսնենք : Մինչեւ այն օրը իրարմէ հեռու շղթայուած երկու զամփուրու հաջումները իրարմէ խնայենք — :

Եւ Պոշան ծանրութեամբ երիտասարդը բարեկելով կոնակը անոր դարձուց և իւր տպադրատունը մտաւ :


Այն ատեն Ալպէր իւր նուրբ զաւազանով լրադիրներու կոյտին մեծ հարուածներ տալով իւր վրէժը առնելէն ետեւ՝ մեկնեցաւ, և մինչև կառքը մանելը երկու կամ երեք անդամ ապարանին դրան կողմը դարձաւ նայեցաւ :

Ալպէր տպեալ անմեղ և անզօր թզմերը ծեծելէն ետեւ
իւր կառքին ձիերը ծեծելու ատեն ծառուղւոյն մէջ Մորէլը
տեսաւ, որ 2ինական բաղանեաց աոջենէն կ'անցնէր և Սէն-
Մարթէնի կողմէն զալով Մատրէնի կողմը կ'երթար:
— Աչա երջանիկ մարդ մը —, ըստ Ալպէր հառաչելով
երիտասարդը այս անզամ սխալած չէր:


ՎԵՐՃ ՀՈՐՐՈՐԴ ՄԱՍԻՆ

ՅԱՆԿ ԳԼԽՈՅՑ

ԵՐԵՒ	5	
ՎԼՈՒԽ Ա.	ՀԵՇՈՒՏԻՐԸ	
Բ.	ՊԵՐՏՉՉՊԵՆԻ ՄԸ ԴԵՂՋԵԲԸ ՈՒՑՈՒ ԱՌԵՑ	
	ՆԵՐԸ ՃՆՁԵԼՈՒ ՀՆԱՐԺԸ	48
Գ.	ՈՒՐՈՒԵՎԱՆՆԵՐԸ	32
Դ.	ՃԱՇՅ	45
Ե.	ՄՈՒՐԵՑԿԵՆ	60
Զ.	ԸՄՈՒՄՆԵԿԱՆ ՑԵՍԵՐԸՆԸ	73
Ի.	ԸՄՈՒՄՆԵՐՔԱՆ ԽՈՐԳՈՒՐԴԸ	87
Լ.	ԽԵԳԵՆՈՐԻ ԳՈՐԾԱԿԱԼԻՆ ԴԱՀԼԻՄԸ	101
Թ.	ԸՄԸՆՆԵՑԻՆ ՊԱՐԱՀԱՆԴԻՆ ՄԸ	118
Ժ.	ՑԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ	129
ԺԱ.	ՊԱՐԵԿԱՆԴԻՆԸ	143
ԺԲ.	ՀԱՅՆ ՈՒ ԱՇ	156
ԺԳ.	ՑԻԿԻՆ ՑԸ ՍԵՆ-ՄԵՐԸՆ	162
ԺԻ.	ԽՈՍՑՈՒՄԸ	179
ԺԵ.	ՎԱԼԵՖՈՐԻ ՀՆՑԱՆՆԵՐԸ ՇԱԲԻՄԸ	220
ԺԶ.	ԱՐԵԱՆԵԳԻՐԸ	233
ԺԷ.	ԱՆՑՐԻՐ ԳԱՎԱԼԳԱՆԹԻ ՅԱԲԱՁԱԴՄՈՒՔ	250
ԺԲ.	ՀԱՅՏԻ	265
ԺԹ.	ԵԱՆԵԱՑԻՆ ՄԵԶ ԿԸ ԳՐԵ՞Ց	294







P. 14

Nº 5989